Թող բարի լինի քո երթը գալիք դարերում

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԻՄՆԱԴՐԻՐ ԵՎ ԽՄԲԱԳՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02

Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գինը՝ 1000 դրամ:

ՇԱԲԱԹ
28 ՄԱՅԻՍԻ 2011թ • № 10 (229)

www.syuniacyerkir.am

Զանգեզուրի թագն ես դու, Սիրտն ես, իմ Գորի՛ս



Լուսանկարը՝ Կ.Հովհաննիսյանի

Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Այդ մասին՝ 10-րդ էջում

141 տարի առաջ՝ 1870-ին, վաղնջական Գորիս գյուղի դիմաց՝ գետի աջափնյա հարթավայրում, հիմնադրվեց Գորիս քաղաքը, որ 1868-ին գավառամասի կենտրոնից դարձել էր Զանգեզուրի գավառակենտրոն:

Խմբագրական

Հայրենի տուն

«Սյունյաց երկիրը» նախորդ տարիներին հատուկ թողարկումներ է նվիրել Կապանին, Քաջարանին, Ագարակին. դրանք, առանց չափազանցության, շարունակում են սկզբնաղբյուրի դեր խաղալ այդ քաղաքների պատմությամբ զբաղվողների համար: 2011-ին այդպիսի մի համար էլ, ըստ մեր ծրագրի, կնվիրենք Արաքսի կիրճի մարգարիտին՝ Մեղրուն (բնորոշումը Սերո Խանզադյանինն է): Իսկ հիմա... Թերթի սույն համարը նվիրում ենք Գորիսին՝ քաղաքի հիմնադրման 140-ամյակի առիթով, որ լրացավ 2010-ին:

... Սերո Խանզադյանի գորիսյան տան պատին վիմագիր վկայություն կա առ այն, որ Ջագ նահապետը՝ Սիսակի սերնդից, ապրել է մ.թ.ա. 9-րդ դարում: Հենց այս Ջագ նահապետն է կառուցել Ջագեձորի (Հաբանդի) բերդը, ինչի մասին վկայում է մեր ամենաստուգապատում (Խորենացուց հետո) պատմիչը՝ Ստեփանոս Օրբելյանը: Հազարամյակների խորքից եկող (վկայում են հնագիտական նյութերը) Գորիսի պատմության մեջ շրջադարձային էր այդ իրադարձությունը: Այնպես որ՝ խոսքն այսօր առնվազն երեք հազար տարեկան Գորիսի մասին է: Սակայն նպատակ չունենք թերթային մեկ համարում զետեղել Գորիսի ողջ պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրեր: Այն, ինչ որ հանրահայտ է ու ընթերցողի սեղանին վաղուց դրված, ձգտեցինք հնարավորինս քիչ օգտագործել կամ չօգտագործել: Ձգտեցինք զերծ մնալ նաեւ մանրաթեմայնությունից: Միաժամանակ, պատմական որոշ իրադարձություններ, որոնք նշանակալից են եղել Գորիսի ու տարածաշրջանի համար, չէին կարող գոնե համառոտ տեղ չգտնել համարում: Կարեւոր համարեցինք սկզբնաղբյուրային նշանակության որոշ նյութերի ընդգրկումը:

Գորիսը հայոց աշխարհի այն բնակավայրերից է, որ եղել ու առայսօր մնում է գեղարվեստական գրականության առարկա, կերպարվեստի թեմա: Փորձեցինք բացել-վերծանել գրական Գորիս, երաժշտական Գորիս, գիտական Գորիս, մշակութային Գորիս երեւույթները:

Համարի նախապատրաստման ընթացքում նորովի փայլատակեց այն պատմագիրների վեհությունը, ովքեր դարեր ի վեր՝ սքանչելի Ստեփանոս Օրբելյանից հետո, անդրադարձել են տարածաշրջանի պատմությանը: Երիցս արձանագրում ենք՝ հայ արձակի մենավոր գագաթ Ակսել Բակունցը նաեւ իր երկրամասի, իր հայրենի տան անզուգական պատմագիրն է. խոսքը միայն «Կյորես» վիպակի մասին չէ: Իր երկրամասի յուրովի պատմագիրն է Սերո Խանզադյան արձակագիրը. վերընթերցե՛ք թեկուզեւ «Մատյան եղելությանց», «Հայրենապատում» բացառիկ ստեղծագործությունները եւ կհամոզվեք ասվածի մեջ: Ոչ ոք այս աշխարհում չի կարողացել ճշգրտորեն վերծանել, թարգմանել մեր քարերի, մեր քերծերի հավերժական զրույցն այնպես, ինչպես արել է Ամենայն հայոց աշուղ Աշոտը:

Շարունակությունը՝ էջ 40

«Սյունյաց երկիրը» շնորհակալություն է հայտնում Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին եւ Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյանին՝ թերթի սույն համարի տպագրությունը հովանավորելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՊՈՐԱ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՄԱՍՕՐԵԱՅԻ ՊԱՐԵՄԱՍԱՆԻՆ ԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԵՏՈՒՄ Ի ՍԿԶԲԱՆ ԱՅԺՄԱՆ ԱՄՍՈՒՄ
ՀԵՏՈՒՄ Ի ՍԿԶԲԱՆ ԱՅԺՄԱՆ ԱՄՍՈՒՄ
Հեռ.՝ (0285) 5 25 63 = (091) 45 00 47 (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

«Քաղաքն ուներ երկու անուն՝ Գորիս եւ Կյորես, երրորդ անունը՝ Կորիս - տալիս էր միայն մի մարդ...»

Մենք այստեղ պիտի ճախրենք ու մնանք...

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

.... Գեղամը.... գնաց արեւելյան հյուսիսում եղած մյուս լեռան հետեւի կողմը՝ մի ծովակի ափ: Նա շենացնում է ծովակի ափը, թողնում է այնտեղ բնակիչներ եւ իր անունով լեռը կոչում է Գեղ, իսկ շեները՝ Գեղարքունի, ինչպես կոչվում է նաեւ ծովը: Այստեղ նա ծնավ իր Սիսակ որդուն, որ մի սեգ ու թիկնավետ, վայելչակազմ, կորովախոս, գեղեցիկ աղեղնավոր էր: Նրան է տալիս իր ստացվածքի մեծ մասը եւ բազմաթիվ մարդիկ իրրեւ ծառա եւ նրա ժառանգություն ծովից դեպի արեւելք մինչեւ մի դաշտ, որտեղ Երասխը, սեպագած լեռները ճեղքելով, երկար ու նեղ ձորերով անցնելով, ահագին շառաչյունով թափվում է դաշտը: Սիսակը, այստեղ բնակվելով, իր բնակության սահմանները լցնում է շինականներով եւ աշխարհն իր անունով կոչում Սյունիք, բայց պարսիկներն ավելի ճիշտ կոչում են Սիսական: Վերջերը Վաղարշակ հայոց առաջին թագավորը՝ Պարթեւ ցեղից, գտնելով սրա սերունդներից անվանի մարդիկ, այս աշխարհին տեր է նշանակում, որ Սիսական ցեղն է:

«Հայոց պատմություն», ԺԲ գլուխ

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ

....Հանբարձ բերդ, որը Սիսակի նույն տոհմի Ջագ նահապետը շինեց մի գետի վրա եւ իր անունով Ձորը կոչեց Ջագեձոր, բերդն էլ Ջագեձորոր բերդ:

«Սյունիքի պատմություն»

Լուսանկարը Ա.Ավագյանի

- Առաջին գրավոր հիշատակությունը Գորայք անվանմամբ՝ տասը չափ հարկով, հիշատակված է Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» աշխատության մեջ՝ Սյունիքի տասներկու գավառների եկեղեցու հարկացուցակում՝ ըստ հին սահմանվածի՝ Ղաբանդ գավառի գյուղերի քվում:
- Միջին դարերում կարեւոր հանգույց էր Նախիջեւանից Ջանգեզուրով դեպի Արցախ եւ Մերձկասպյան տափաստաններ գնացող բանուկ ճանապարհի վրա:
- 1625թ. առաջին անգամ գործածվեց բնակավայրի ներկա գրելաձեւը
«Գրեցաւ սայ ի յերկիրս Ջագեձորու, ի գեւաղս որ կոչի Գորէս, ընդ հովանեաւ Ս.Գրիգորիս եւ Ս. Աստուածածնիս եւ Ս.Յակոբիս եւ Ս.Մարտիրոսիս, զի սոքա են մեզ բարեխօս, ի թվիս ՌԺԳ»:
Ջեռագրի հեղինակ՝ Բարսեղ երեց, պատվիրատու՝ Ռստակես, ծաղկող՝ Հովհաննես աբեղա:
Հեղինակը Գորիսում արտագրել է Սուրբ Գրիգոր Տաթեւացու «Գիրք հարցմանցը», ինչի առիթով եւ թողել է սույն հիշատակությունը:
- 1750-ական թվականներին Տաթեւի ընդարձակ մելիքությունից առաջացավ Գորիսի մելիքությունը: Գորիսը դարձավ մելիքանիստ:
- 19-րդ դարասկիզբ: Ջանգեզուրի ներկայիս տարածքը, այդ թվում՝ Գորիսը, կազմում էր Ղարաբաղի խանության մաս, իսկ վերջինս մտնում էր Պարսկական պետության մեջ:
- 1805թ. մայիսի 14-ին եւ մայիսի 21-ին ռուս-պարսկական պատերազմի արդյունքում կնքված Բյուրակչայի պայմանագրով Ջանգեզուրն անցավ Ռուսաստանի տիրապետության տակ: Գորիսը դարձավ Ռուսական կայսրության ռազմական: Ավելի ուշ այստեղ տեղակայվեց ռուսական բանակի 42-րդ եգերական գնդի երեք վաշտ:
- 1822թ. Ղարաբաղի խանության փոխարեն ստեղծվեց Ղարաբաղի պրովինցիա՝ կոմենդանտի գլխավորությամբ: Ջանգեզուրը՝ մելիքական բաժանումով, մտավ պրովինցիայի մեջ:
- 1840թ. ապրիլի 10-ին (սենատոր Ղանի մշակած օրենքով) Անդրկովկասում կատարվեց վարչական նոր բաժանում: Ղարաբաղի պրովինցիան վերածվեց Շուշու գավառի՝ Կասպիական մարզի կազմում: Ջանգեզուրի բոլոր մելիքությունները մտան Շուշու գավառի մեջ՝ որպես առանձին գավառամաս: Նոր գավառամասի կենտրոն հայտարարվեց Գորիս գյուղը:
- 1849թ. Ջանգեզուրի գավառամասը՝ Գորիս կենտրոնով, մտավ Երեւանի նահանգի մեջ:
- 1867թ. դեկտեմբերի 9-ին Ռուսաստանի կայսեր հրամանագրով ստեղծվեց Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգը: Նահանգային կենտրոնը՝ Ելիզավետպոլ: Նահանգի կազմում 1868թ. փետրվարի 25-ին կազմավորվեց Ջանգեզուրի գավառը: Գավառի կենտրոն հայտարարվեց Գորիսը: Գավառի մեջ ընդգրկվեցին բուն Ջանգեզուրը, Կապանը, Սիսիանը: Ջանգեզուր անվանումը տարածվեց բոլոր գավառամասերի վրա:
- 1885թ., ըստ Հայկական սովետական հանրագիտարանի, Գորիսը հոչակվեց քաղաք (Արեւելյան Հայաստանում այդ ժամանակ քաղաք էին նաեւ Երեւանը, Ալեքսանդրապոլը, Նոր Բայազետը):
- «Մինիստրների խորհրդի մարտի 4-ի բարձրագույն հաստատված վճռով Գորիս ավանը, որ Ջանգեզուր գավառի վարչական կենտրոնն էր, վերափոխված է գավառական քաղաքի՝ նույն անուններով, պայմանով, որ քաղաքի գծի մեջ եղած բոլոր հողերը մնան այն անձերի եւ հաստատությունների ձեռքին, որտեղ գտնվում էին առաջ՝ օրինական կարգով, եւ որ Գորիսում եղած բոլոր գյուղական դասակարգին պատկանող անձերը, եթե չուզեն գրվել քաղաքացի, օգտվեն իրենց նախկին իրավունքներից»:

«Մուրճ», 1904թ., №4

- 1917թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Թիֆլիսում կայացած հայ ազգային խորհրդաժողովում ստեղծվում է Հայոց ազգային խորհուրդ, որը ստանձնում է ազգային բոլոր գործերի գերագույն ղեկավարությունը: Հայոց ազգային խորհուրդն իր մասնաճյուղերն է ստեղծում բոլոր շրջաններում, այդ թվում՝ Ջանգեզուրում եւ Ղարաբաղում, որը միասնաբար կոչվում է Ջանգեզուր-Ղարաբաղի շրջանային խորհուրդ՝ Գորիս նստավայրով (շրջանային խորհուրդն իր հերթին բաժանվում է Ջանգեզուրի եւ Ղարաբաղի ազգային խորհուրդների):
- Հանգանակագեղարդյան 1-ին համագումարը՝ գումարված Տաթեւում, 1920թ. դեկտեմբերի 25-ին Ջանգեզուրը (Գորիս կենտրոնով) ժամանակավորապես հայտարարեց ինքնավար, մինչեւ քաղաքական հնարավորություն կունենա միանալ մայր երկրի՝ Հայաստանի հետ:
- Համագանգեզուրյան 2-րդ համագումարը՝ գումարված Տաթեւում, 1921թ. ապրիլի 26-ին «Ինքնավար լեռնաշխարհ ազատ Սյունիք» հայտարարեց անկախ պետություն եւ այն վերանվանեց Լեռնահայաստան, որի մեջ մտնում են Ջանգեզուրը, Վայոց ձորը, Լեռնային Ղարաբաղը: Գորիս քաղաքը հայտարարվեց Լեռնահայաստանի մայրաքաղաք: Այդ կացությունը շարունակվեց մինչեւ 1921թ. հունիսի 1-ը:
- 1921-30 թվականներին Գորիսը Հայկական ԽՍՀ Ջանգեզուրի գավառի կենտրոնն էր:
- 1930թ. սեպտեմբերի 9-ից մինչեւ 1995թ. դեկտեմբերի 5-ը Գորիսը համանուն շրջանի կենտրոնն էր:
- Շրջանային ենթակայության Գորիս քաղաքը 1970թ. դարձավ հանրապետական ենթակայության քաղաք: ■

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՊՈՐԱ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՄԱՍՕՐԵԱՅԻ ՊԱՐԵՄԱՍԱՆԻՆ ԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԵՏՈՒՄ Ի ՍԿԶԲԱՆ ԱՅԺՄԱՆ ԱՄՍՈՒՄ
ՀԵՏՈՒՄ Ի ՍԿԶԲԱՆ ԱՅԺՄԱՆ ԱՄՍՈՒՄ
Հեռ.՝ (0285) 5 25 63 = (091) 45 00 47 = (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru

ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

Հիմնադրումից 140 տարի անց

Տեղեկություններ քաղաքի ներկա կացության մասին

- Բնակչությունը 23200 է:
- Վարչական տարածքը 5030 հա է:
- Գտնվում է Վարարակն գետի հովտում՝ ծովի մակերեւույթից 1398մ բարձրության վրա:
- Գտնվում է երկու՝ Երեւան-Արցախ, Երեւան-Մեղրի-Պարսկաստան միջպետական մայրուղիների խաչմերուկում:
- Հեռավորությունը մայրաքաղաքից 231կմ է, մարզկենտրոնից՝ 67կմ:
- Տեղական ինքնակառավարման մարմիններն են (ինչպես հանրապետության մյուս համայնքներում) համայնքի ղեկավարը եւ համայնքի ավագանին՝ 15 հոգուց բաղկացած:
- Տարածաշրջանում կա 1073 պատմամարտարապետական հուշարձան:
- 12կմ հեռավորության վրա է գտնվում Սեւ լիճը (Իշխանա լիճը), որը ծովի մակերեւույթից բարձր է 2666մ, մակերեսը մոտ 2 քառ.կմ է:
- Համայնքում կա 2240 առանձնատուն՝ 113 հազար քառակուսի մետր տարածքով, եւ 112 բազմաբնակարան շենք: Գործում է մեկ համատիրություն՝ «Սանդի ձոր» անվամբ, որ ընդգրկում է երկու շենք (40 ընտանիք):
- Քաղաքն ունի չորս հիմնական, մեկ միջնակարգ, մեկ ավագ, մեկ հատուկ դպրոց: Դասընկերթական այդ դպրոցներում 2010-11 ուստարում սովորում է 2556 աշակերտ:
- Գործում է յոթ նախակրթական հաստատություն: 2010թ. հունվարի 1-ի դրությամբ նախակրթարաններ է հաճախում 700 երեխա:
- Համայնքում գործող պետական կրթական հաստատություններից են Գորիսի պետական համալսարանը, Գորիսի պետական քոլեջը, Գորիսի գյուղատնտեսական քոլեջը, Երեւանի կինոյի եւ թատրոնի պետական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղը: Կան նաեւ ոչ պետական կրթօջախներ, որոնցից խոշորը «Սյունիք» ինստիտուտն է:
- Համայնքում գործում են Արամ Սաթյանի, Շառլ Ազնավուրի անվան երաժշտական դպրոցները, Ալբերտ Օրդյանի անվան շախմատի դպրոցը, Գեւորգ Պարոնյանի անվան արվեստի դպրոցը, մանկապատանեական մարզադպրոցը, ֆուտբոլի մարզադաշտը:
- Քաղաքում է Վաղարշ Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնը:
- Գորիսից 36կմ հեռավորության վրա է գտնվում Տաթեւի վանքը:
- Քաղաքն ունի մշակույթի կենտրոն՝ Գուսան Աշոտի անունը կրող: Մշակույթի կենտրոնը ներառում է հետեւյալ ստորաբաժանումները՝ մշակույթի բաժին, գրադարանային բաժին՝ 110224 անուն գրքով, երկրագիտական թանգարան ու ֆիլմադարան, պատկերասրահ ու զբոսայգի:
- Քաղաքում գործում են Ակսել Բակունցի եւ Սերո Խանզադյանի տուն-թանգարանները, Գեղագիտության ազգային կենտրոնի Գորիսի մասնաճյուղը:
- Համայնքում գործում են «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, նորաստեղծ սրտաբանական կենտրոնը, «Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ-ն, «Սյունիք» ախտորոշիչ կենտրոնը:
- 1996 թվականից համայնքում գործում է ատամնաբուժական դարմանատուն, որտեղ իրականացվում է «երեխաներին անվճար բուժօգնություն» բարեգործական ծրագիրը, որը «Հովարդ Կարագոզյան» բժշկական բարեգործական հիմնադրամի հետ համատեղ իրականացնում է միմյանց 14 տարեկան երեխաների համար ատամնաբուժական եւ ակնաբուժական ծառայություններ:
- Գորիսում է տեղակայված ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչության մարզային կենտրոնը:
- Համայնքում գործում է բարեգործական երկու ճաշարան, որոնք 2011թ. հունվարի 1-ի դրությամբ ունեին 160 շահառու (սոցիալապես անապահով տարեցներ, անապահով հաշմանդամներ):
Առաջին ճաշարանը գործում է 1992 թվականից, կազմակերպիչն է «Համագործակցություն Հայաստան» ֆրանս-հայկական կազմակերպությունը: Երկրորդ ճաշարանը 2001-ից կազմակերպում է «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ն (2007-ից ծրագրի շարունակականությունն ապահովվում է քաղաքապետարանի համաֆինանսավորմամբ):
- Գորիսում է տեղակայված ՀՀ գյուղնախարարության սննդամթերքի անվտանգության եւ անասնաբուժական պետական տեսչության Սյունիքի մարզային կենտրոնը:
- 2011թ. հունվարի 1-ի դրությամբ Գորիսում կա 930 գործատու եւ անհատ ձեռներեց: Նույն ժամանակի դրությամբ քաղաքում կա 6832 հիմնական աշխատատեղ:
- Քաղաքի երեք խոշոր հրապարակներից մեկը կրում է Ակսել Բակունցի, երկրորդը՝ Մխիթար Սպարապետի, երրորդը՝ Սուրբ Գրիգոր Տաթեւացու անունը:
- Գորիսում են տեղակայված բանակային առաջին կորպուսի շտաբը եւ երկրի հարավարեւելյան սահմանների պաշտպանությունն իրականացնող զորամասերից մեկը, ինչպես եւ տարածաշրջանի կայազորի զինվորական դատախազությունը:
- Գորիսը 1989 թվականից Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի առաջնորդարանի նստավայրն է: Թեմի առաջնորդանիստ եկեղեցին է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Քաղաքում կան այլ սրբավայրեր եւս:
- Գորիսում է տեղակայված «Որոտանի հէկերի համակարգ» ՓԲ ընկերությունը, որին բաժին է ընկնում հանրապետությունում արտադրվող էլեկտրաէներգիայի 20.2%-ը, հիդրոէլեկտրաէներգիայի 50.6%-ը (տվյալները 2010թ. արդյունքներով): Անցած տարում ընկերությունն արտադրել է 1,311 մլրդ կվտ-ժամ էլէներգիա:
- Համայնքում տեղակայված ձեռնարկությունները, ըստ իրենց գործունեության տեսակի, ներառում են հետեւյալ հիմնական ոլորտները՝
1) էլէներգիայի արտադրություն,
2) կապիտալ շինարարություն,
3) ճանապարհաշինություն,
4) գյուղատնտեսություն,
5) գյուղմթերքների վերամշակում,
6) բնակչությանը սպասարկող ձեռնարկություններ,
7) շինարարական քարի մշակում,
8) մանրամեծածախ առեւտուր,
9) զբոսաշրջության ոլորտին ծառայությունների մատուցում,
10) բանկային ծառայություններ եւ այլն:
- Գորիսում 2010թ. գործող համեմատաբար խոշոր հարկատու կազմակերպություններն են («Որոտանի հէկերի համակարգ» ՓԲԸ-ից բացի) «Առանցք» ՍՊԸ-ն, «Ջանգեզուրտրանսշին» ԲԲԸ-ն, «Գորիսի ճՇՇ» ԲԲԸ-ն, «Ոսմար» ՍՊԸ-ն, «Գորիսի էՋՇ» ԲԲԸ-ն, «Հայկ-Ժոս» ՍՊԸ-ն, «Ս.Կ.Գազ» ՍՊԸ-ն, «Մրքանոր» ՍՊԸ-ն, տնտեսվարող այլ սուբյեկտներ:
- Քաղաքում գործում է արտակարգ իրավիճակների կառավարման կետ:
- Քաղաքում գործում են «Ջանգեզուր», «Բան ու գործ» թերթերը, «Լաստ» հեռուստաընկերությունը:
- Քաղաքից 10կմ հեռավորության վրա է գտնվում օդանավակայանը:
- Գորիսի մերձակայքում է տեղաբաշխված «Տրանսգազ» ՍՊ ընկերության գծային շահագործման տարածաշրջանային կենտրոնը («Հայռուսգազարդ» ՓԲ ընկերության համակարգում է):
- Քաղաքում գործում է ֆինանսաբանկային հաստատությունների ցանց: Բանկային կառույցներից են «Արդշինինվեստբանկի» մասնաճյուղը, «Հայէկոնոմբանկի» մասնաճյուղը, «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ Գորիսի մասնաճյուղը, «Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի մասնաճյուղը:
- Գորիսի ջրամատակարարումն իրականացվում է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի Հարավային մասնաճյուղի միջոցով: Քաղաքը վայրկյանում ստանում է 350-400 լիտր ջուր: Քաղաքը խմելու ջուր է ստանում հիմնականում երկու՝ Ակներ եւ Մուխուրթոյան ջրաղբյուրներից:
- Քաղաքի 321հա ոռոգման հողերից 50հա-ն ոռոգում է «Որոտան» ջրօգտագործողների ընկերությունը՝ Քարահուճքի ջրամբարի եւ Վարարակ գետի ջրերով: Այդ ընկերության տնօրինության տակ է տարածաշրջանի 35կմ-ոց մայր ջրատարը՝ եզակի հիդրոտեխնիկական կառույցներով:
- Գորիսում է գտնվում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներից մեկը՝ Գորիսի բանտը:
- Գորիս քաղաքում կա հյուրանոցների ցանց: Ուշագրավ են «Օլիմպիա», «Միրհավ», «Մինա», «Եղեւնուտ», «Կյորես» հյուրանոցները:
- Գորիսում է գտնվում Արմենտելի Հարավային տարածքային կենտրոնը:
- Գորիս քաղաքում գործում են (բացի նշված կառույցներից) հանրապետական գրեթե բոլոր գերատեսչությունների տեղական (տարածաշրջանային) կառույցները: ■

Գորիսի մուտքը խորհրդանշող հուշակոթող: Մեր լեռնաշխարհի բրգաձեւ ժայռերին նմանվող նամուշը խորհրդանշում է անառիկ բերդ, արտահայտում է գորիսեցու արարող ոգին, Հայ առաքելական եկեղեցու եւ Մեսրոպյան գրերի անանց նշանակությունը մեր անցած եւ անցնելիք ճանապարհին: Կառուցվել է 1999-2001 թվականներին: Նախագծի հեղինակը եւ կառույցի ճարտարապետը Սեւադա Ջաքարյանն է: Նախաձեռնող եւ պատվիրատու՝ Սուրեն Խաչատրյան:

Լուսանկարը Ա.Ավագյանի

Սյունյաց աշխարհ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԱՌԻՆ՝ թ.ԿՊՈՒՏ, ԵՇՈՒՌՅԱՆ,20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

2010-Ը ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ ԷՐ ԳՈՐԻՍՈՒՄ

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի խոսքը հոբելյանի կապակցությամբ

Հոբելյանական տարի է Սյունյաց հնամենի հողում. Գորիս քաղաքը բոլորում է հիմնադրման 140-ամյակը:

Նշանակալից տոնի առթիվ ամենաջերմ ողջույնս ու շնորհավորանքս եմ հղում բոլոր գորիսեցիներին, մեր ողջ ժողովրդին, մաղթում ամենքին անձնական երջանկություն եւ հաջողություններ:

Գորիս քաղաքի հիմնադրումը՝ որպես հազարամյակների խորքից եկող Գորայք-Կյորեսի շարունակություն, պատմական անհրաժեշտություն էր՝ թելադրված 19-րդ դարի վարչաքաղաքական-տնտեսական զարգացումներով: Դեռեւս վաղ միջնադարում իր պաշտպանական նշանակությամբ հռչակված Չագեծորի (Հաբանդի) բերդով, հաղորդակցության միջազգային ուղիների հանգուցակետի բացառիկ կարգավիճակով, մարդկանց արարչագործությամբ եւ հերոսական պահվածքով, հոգեւոր խոր արմատներով Գորիսը պատմության բոլոր փուլերում անուրանալի դեր է խաղացել հայոց ինքնիշխանության, հայոց արժանապատվության պահպանման սրբազան գործերում: 1700-ականներից մելիքանիստ Գորիսը 19-րդ դարակեսիծ գավառամասի կենտրոն էր, 1868թ.՝ նորակազմ Զանգեզուրի գավառակենտրոն, 1920-21թթ.՝ Ինքնավար Սյունիքի եւ Լեռնահայաստանի մայրաքաղաք, ավելի ուշ՝ տարածաշրջանի կենտրոն եւ Սյունյաց աշխարհի հոգեւոր կենտրոն: Նման կարգավիճակը Գորիսին առաջադրել է պատմական առաքելություն, որն արժանապատվորեմ է իրականացվել դարերի ընթացքում:

Գորիսը իր պատմական առաքելությունը պատշաճորեն կատարեց նաեւ Արցախյան հերոսամարտի եւ հայոց անկախ պետականության վերականգնման շրջանում: Միայն 173 գորիսեցի այդ ընթացքում իրենց կյանքը դրեցին Հայրենիքի փրկության զոհասեղանին, որոնց ամմեռ հիշատակի առջեւ խոնարհիում եմ երիցս:

Այսօր էլ ակնառու է Գորիսի դերակատարությունը մեր նոր հանրապետության տնտեսական-քաղաքական, հոգեւոր-մշակութային ու կրթական կյանքում, մեր ազգային ավանդույթների պահպանման գործում:

Քաղաքն իր ներկա պերճաշուք տեսքը ձեռք է բերել գորիսեցիների ճախորդ բոլոր սերունդների աշխատանքի, քաղաքաշինական մտքի, մեծ սիրո եւ նվիրումի շնորհիվ: Զարմանալի վարպետությամբ այստեղ զուգորդվել են ազգային բազմադարյա ճարտարապետության հիանալի ավանդույթներն ու քաղաքաշինության ժամանակակից նվաճումները: Տնտեսական դժվարին մեր օրերում անգամ լսվում է քաղաքաշինության հեւքը Գորիսի բոլոր թաղամասերում՝ աննախադեպ ծավալների հասած ճաճապարհաշինությունից մինչեւ սոցիալական նշանակության նոր օբյեկտների կառուցում, ինչը եւս մեկ վկայություն է քաղաքի ու տարածքի հանդեպ հանրապետության կառավարության ուշադրության: Ասվածի մեկ այլ եւ գորեղ հավաստումն է Տաթեւի անզուգական ճոպանուղու կառուցումը, որ գործարկվեց այսօր, որը նոր փուլ է սկզբնավորում տարածաշրջանի զարգացման համար:

Երբ թերթում ենք Գորիս քաղաքի հիմնադրման, կառուցման պատմությունը, մտովի հիշում ենք բոլոր նշանավորների անունները, ովքեր տարբեր ժամանակներում վճռական դեր են խաղացել քաղաքի հիմնադրման, կառուցման եւ զարգացման գործերում: Նրանց անվանացանկը հաճելիորեն ծավալուն է, եւ ըստ էության, հնարավոր չէ բոլորի անունը հիշատակել հիմա: Սակայն չեմ կարող չհիշատակել 18-19-րդ դարերում Գորիսի մելիքական գերդաստանի՝ Մելիք-Յուսեֆյանների տոհմանունը, որի ներկայացուցիչների արարումների շնորհիվ Գորիսը բարձրացավ ու տեսանելի դարձավ Ռուսական կայսրության կենտրոնից անգամ: Չեմ կարող չիիշել բազմաթիվ մեր գավառապետերին եւ հատկապես Ստարացկի գավառապետին, որոնց ավանը Գորիսի քաղաքաշինության մեջ առայսօր տեսանելի է: Գորիսեցիներիս խոնարհումն եմ բերում բոլոր ճարտարապետներին՝ առաջին չափագրումներին իրականացրած Զանուշյանից ու Խաչենկոյից մինչեւ մերօրյա ճարտարապետներ ու շինարարներ:

Գորիսը, սակայն, աշխարհին ճանաչելի դարձավ գրչության եւ մշակույթի անկրկնելի կենտրոնների՝ հայրենի անզուգական վարպետ Ակսել Բակուցնցով, հայ արձակի երեւելի Սերո Խանզադյանով, մեր լեռնաշխարհի հավերժական երգիչ Գուսան Աշոտով, որոնց անվանը բոլոր գորիսեցիների երախտագիտությունն ու հարգանքն են մատուցում:

Գորիս քաղաքի հիմնադրման 140-ամյակին նվիրված հանդիսությունը համընկավ Սուրբ Գրիգոր Տաթեւացու հուշարձանի բացման արարողությանը: Գրիգոր Տաթեւացու հուշարձանը երբեւէ պետք է հառներ Գորիսի կենտրոնում: Եվ մեծագույն պատիվ է ժամանակակիցներիս համար, որ հենց մեզ վիճակվեց այդ խնդրի լուծումը, ինչի համար իմ շնորհակալությունն եմ հայտնում հատկապես քանդակագործ Նարեկ Օրդյանին ու ճարտարապետ Սեւադա Զաքարյանին: Վստահ եմ, որ Գրիգոր Տաթեւացու անունը կրող այս հրապարակը, որտեղ արդեն հառնում է նրա հուշարձանը, կդառնա գորիսեցիների սիրելի ժամադրավայրը: Վստահ եմ նաեւ, որ Տաթեւացու քարե ներկայությանն առնչվելիս ամեն անգամ յուրաքանչյուրիս մեջ նորովի կարթնանա մեր պետության, Հայ առաքելական եկեղեցու հանդեպ մեր որդիական սիրո ամենաջերմ զգացմունքները:

Գորիսի հոբելյանի առիթով քաղիցս հիշել եմ Մեծ Գուսանի պատվիրանն ամենքիս՝ «Հոգանք վրեշ մրեր ճշխարար ես ծորան»: Այդ պատգամն այժմեսկզբ է նաեւ այսօր, ինչը կյանքի կոչելու դեպքում միայն կարող ենք Գորիսը սերունդներին ավանդել ավելի շեն, ավելի վեհաշուք:

Մեր իղձերի իրականացման գլխավոր երաշխիքը եղել է եւ կա հայոց վերածնված պետականությունը: Ուրեմնեւ՝ լիմենք տեղը եւ արժանապատիվ քաղաքացիս մեր երկրի:

Վերստին շնորհավորում եմ բոլոր գորիսեցիներին քաղաքի հոբելյանի առթիվ եւ յուրաքանչյուրին մաղթում ամենայն բարիք:

Շնորհավոր տոնդ, Գորիս:

Թող բարի լիմի քո երթը գալիքում:

16 հոկտեմբերի 2010թ.

Լուսանկարը՝ Կ.Հովհաննիսյանի

Սուրբ Գրիգոր Տաթեւացու հուշակոթողը, 2010թ.: Քանդակագործ՝ Նարեկ Օրդյան, ճարտարապետ ու նախագծի հեղինակ՝ Սեւադա Զաքարյան, պատվիրատու ու նախաձեռնող՝ Սուրեն Խաչատրյան:

Նշվեց քաղաքի հիմնադրման 140-ամյակը

2010 թվականի հոկտեմբերի 16-ին նշվեց Գորիսի հիմնադրման 140-ամյակը: Սյունյաց աշխարհի այս ոստանի տարիքը դարերով է հաշվվում, բայց միայն 19-րդ դարի պատմական եւ աշխարհաքաղաքական իրողություններով պայմանավորված՝ բնակավայրին շնորհվեց քաղաքի կարգավիճակ:

Աշնանային այդ օրը քաղաքում տոնական շուրջ կար եւ խիղդ ու աշխուժություն մանուկների, ովքեր մեծ ոգեւորությամբ էին հարազատ քաղաքի անվանումը վանկարկում: Անկախության փողոցում հին ու բարի ժամանակների նման ավանդական հյուրասիրության սեղաններ էին բացվել: Ազգագրական պարերով հանդես էր գալիս Քաջաթաղի պարի վետերանների հանդեսը, իսկ քաղաքային պատկերասրահի դիմացի մայթը վերածվել էր բացօթյա պատկերասրահի. ցուցադրաբերում գորիսյան թեմաներով գեղանկարներ էին եւ հմուտ ձեռքերով պատրաստված աշխատանքներ: Կեսօրին մոտ Գորիսի երկնքում հայտնվեց հանրապետության ճախագահին տեղափոխող ուղղաթիռը, ինչը նշան էր այն բանի, որ տոնակատարությունը շուտով վճռական փուլ կտեղափոխվի:

Անկախության եւ Գարեգին Նժդեհի փողոցների խաչմերուկից հանրապետության ճախագահ Սերժ Սարգսյանն ու նրան ուղեկցող պատվիրակությունը քայլերթով իջան դեպի քաղաքի կենտրոն՝ շնորհավորելով եւ բարին մաղթելով գորիսեցիներին: «Պասաժի» հարեւանությամբ իրենց «հարբերությունները» էին պարզում» պատանի շախմատիստները, հանրապետության ճախագաին մոտեցավ խաղատախտակներից մեկին եւ սկսված պարտիան ավարտին հասցրեց: Իսկ Մխիթար Սպարապետի անվան հրապարակում վերագործարկվեց քաղաքի շատրվանը, որի հարեւանությամբ «Դավիթբեկյան ուխտեր» հասարակական կազմակերպությունը հայոց եռագույն դրոշի գույների ծեւավորմամբ մի տորթ էր տեղադրել, որը կտրելու պատիվը վերապահվեց Սերժ Սարգսյանին:

Իսկ օրվա գլխավոր միջոցառումը Գրիգոր Տաթեւացու անվան հրապարակում էր, որտեղ տեղի ունեցավ մեծ փիլիսոփա, մանրանկարիչ, մանկավարժ եւ աստվածաբան Գրիգոր Տաթեւացու հուշարձանի բացման արարողությունը: Արժանին մատուցվեց հուշարձանի քանդակագործ Նարեկ Օրդյանին եւ ճախագծի հեղինակ, ճարտարապետ Սեւադա Զաքարյանին, քարագործ վարպետներին եւ հուշարձանի հովանավորու ճախածեռնող Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին: Հուշարձանի բացման պատիվը վերապահվեց Սեւադա Զաքարյանին եւ Սյունյաց թեմի փոխառաջնորդ Զավեն աբեղա Յազիջյանին, որն էլ հանդես եկավ օրհնանքի խոսքով՝ մասնավորապես նշելով. **«Այս արձանն այսօր բերում է այն շուկը, որ սյունեցին եւ մասնավորապես գորիսեցին գուրգուրել ու փայփայել է իր սրտի խորքում: Այսօր, այս պայծառ օրը Սյունյաց երկիրը հպարտանում է Գորիս փոքրիկ, բայց չնաշխարհիկ քաղաքով, այսօր երկնքի մեջ ոչ թե արկեր են պայթում, այլ եկեղեցու զանգեր են ղողանջում, աղոթքն ու խունկն են հորդում բուրվառից, ինչպես փիլիսոփան կասեր. «Այսօր ես սիրում եմ, չեմ մոռանում երեկը, չեմ վախենում վաղվանից, քանզի ներկա սերնդին մեր ժառանգությունն ենք տալիս այն, ինչը ժառանգեցինք ու կրկնապատկեցինք մեր պատմության ընթացքում»:**

Շնորհավորանքի իր խոսքում Սյունիքի մարզպետը պատմական էքսկուրս կատարեց՝ վերոհիշելով Գորիս քաղաքի կառուցման նախաձեռնողիրներին, իսկ Գրիգոր Տաթեւացու հուշարձանի բացման առիթով նշեց. **«Գրիգոր Տաթեւացու քարե ներկայությունը բոլորիս համար ոգեւորիչ է, ինչը նաեւ հայ պետականության եւ Հայ առաքելական եկեղեցու հանդեպ հարգանքի արտահայտություն է եւ նոր ձեռնարկումների սկիզբ: Շնորհավորում եմ բոլորիդ, հաջողություններ մաղթում եւ ցանկանում, որ քաղաքը լավ պահեք»:**

Բարեմաղթանքի խոսքերից հետո հանրապետության ճախագահը ծաղիկներ դրեց հուշարձանի պատվանդանին: Տոնական Գորիս էիմ եկել նաեւ ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտում անցկացվող Լրագրողների համահայկական հինգերորդ հավաքի մասնակիցները: Երկրի ղեկավարը Գորիսի դրամատիկական թատրոնում հանդիպեց սփյուռքից եկած լրագրողներին:

Գորիս քաղաքի հիմնադրման 140-ամյակին նվիրված տոնակատարության օրը նշանավորվեց եւս մի իրադարձությամբ՝ հանդիսավորությամբ նշվեց «Զանգեզուր» սրտաբանական կենտրոնի կառուցման աշխատանքների ավարտը: Աշխատանքային այցի շրջանակներում Ս.Սարգսյանը եղավ նորակառույց առողջապահական այդ հիմնարկում: «Հայաստան» համահայկական հիմնադրամի օրգանի շրջանակներում կատարված ընդունելու նպատակով Գորիս էր ժամանել բարերարների, բարձրաստիճան պաշտոնյաների եւ իշխրերի մեծ պատվիրակությունը: Սրտաբանական կենտրոնը կառուցվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի՝ Ֆրանսիայի տեղական մարմնի հովանավորությամբ. Մարսելի «Հայաստան-Ֆրանսիա» առողջապահական միության եւ Ֆրանսիայի Բուշ Դու-Ռոն նահանգի վարչակազմի աջակցությամբ: Օրագրի իրականացմանը հարյուր հազար դոլլարով աջակցել է նաեւ Լիբանանի վարչապետ Սաադ Հարիրիին: «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Ալա Վարդանյանը լրագրողների հետ զրույցում տեղեկացրեց, որ օրագրի արժեքը 132 միլիոն դրամ է, բուժհաստատությունը կհամալրվի նաեւ մեկ միլիոն եվրո արժողությամբ բուժսարքավորումներով: Մնում է ավելացնել, որ սրտաբանական կենտրոնը սպասարկելու է ինչպես Սյունիքի մարզի, այնպես էլ Արցախի բնակչությանը:

Քաղաքի հիմնադրման օրվան նվիրված տոնակատարությունը եզրափակվեց տոնական համերգով եւ հրավառությամբ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԱՌԻՆ՝ թ.ԿՊՈՒՏ, ԵՇՈՒՌՅԱՆ,20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru
Սյունյաց աշխարհ

2010-Ը ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ ԷՐ ԳՈՐԻՍՈՒՄ

Լուսանկարը՝ Դ.Գեւորգյանի

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի եւ նրան ուղեկցող պատվիրակության քայլերթը Անկախության փողոցով

Լուսանկարը՝ Դ.Գեւորգյանի

սարակական կազմակերպությունը հայոց եռագույն դրոշի գույների ծեւավորմամբ մի տորթ էր տեղադրել, որը կտրելու պատիվը վերապահվեց Սերժ Սարգսյանին:

Իսկ օրվա գլխավոր միջոցառումը Գրիգոր Տաթեւացու անվան հրապարակում էր, որտեղ տեղի ունեցավ մեծ փիլիսոփա, մանրանկարիչ, մանկավարժ եւ աստվածաբան Գրիգոր Տաթեւացու հուշարձանի բացման արարողությունը: Արժանին մատուցվեց հուշարձանի քանդակագործ Նարեկ Օրդյանին եւ ճախագծի հեղինակ, ճարտարապետ Սեւադա Զաքարյանին, քարագործ վարպետներին եւ հուշարձանի հովանավորու ճախածեռնող Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին: Հուշարձանի բացման պատիվը վերապահվեց Սեւադա Զաքարյանին եւ Սյունյաց թեմի փոխառաջնորդ Զավեն աբեղա Յազիջյանին, որն էլ հանդես եկավ օրհնանքի խոսքով՝ մասնավորապես նշելով. **«Այս արձանն այսօր բերում է այն շուկը, որ սյունեցին եւ մասնավորապես գորիսեցին գուրգուրել ու փայփայել է իր սրտի խորքում: Այսօր, այս պայծառ օրը Սյունյաց երկիրը հպարտանում է Գորիս փոքրիկ, բայց չնաշխարհիկ քաղաքով, այսօր երկնքի մեջ ոչ թե արկեր են պայթում, այլ եկեղեցու զանգեր են ղողանջում, աղոթքն ու խունկն են հորդում բուրվառից, ինչպես փիլիսոփան կասեր. «Այսօր ես սիրում եմ, չեմ մոռանում երեկը, չեմ վախենում վաղվանից, քանզի ներկա սերնդին մեր ժառանգությունն ենք տալիս այն, ինչը ժառանգեցինք ու կրկնապատկեցինք մեր պատմության ընթացքում»:**

Շնորհավորանքի իր խոսքում Սյունիքի մարզպետը պատմական էքսկուրս կատարեց՝ վերոհիշելով Գորիս քաղաքի կառուցման նախաձեռնողիրներին, իսկ Գրիգոր Տաթեւացու հուշարձանի բացման առիթով նշեց. **«Գրիգոր Տաթեւացու քարե ներկայությունը բոլորիս համար ոգեւորիչ է, ինչը նաեւ հայ պետականության եւ Հայ առաքելական եկեղեցու հանդեպ հարգանքի արտահայտություն է եւ նոր ձեռնարկումների սկիզբ: Շնորհավորում եմ բոլորիդ, հաջողություններ մաղթում եւ ցանկանում, որ քաղաքը լավ պահեք»:**

Բարեմաղթանքի խոսքերից հետո հանրապետության ճախագահը ծաղիկներ դրեց հուշարձանի պատվանդանին: Տոնական Գորիս էիմ եկել նաեւ ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտում անցկացվող Լրագրողների համահայկական հինգերորդ հավաքի մասնակիցները: Երկրի ղեկավարը Գորիսի դրամատիկական թատրոնում հանդիպեց սփյուռքից եկած լրագրողներին:

Գորիս քաղաքի հիմնադրման 140-ամյակին նվիրված տոնակատարության օրը նշանավորվեց եւս մի իրադարձությամբ՝ հանդիսավորությամբ նշվեց «Զանգեզուր» սրտաբանական կենտրոնի կառուցման աշխատանքների ավարտը: Աշխատանքային այցի շրջանակներում Ս.Սարգսյանը եղավ նորակառույց առողջապահական այդ հիմնարկում: «Հայաստան» համահայկական հիմնադրամի օրգանի շրջանակներում կատարված ընդունելու նպատակով Գորիս էր ժամանել բարերարների, բարձրաստիճան պաշտոնյաների եւ իշխրերի մեծ պատվիրակությունը: Սրտաբանական կենտրոնը կառուցվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի՝ Ֆրանսիայի տեղական մարմնի հովանավորությամբ. Մարսելի «Հայաստան-Ֆրանսիա» առողջապահական միության եւ Ֆրանսիայի Բուշ Դու-Ռոն նահանգի վարչակազմի աջակցությամբ: Օրագրի իրականացմանը հարյուր հազար դոլլարով աջակցել է նաեւ Լիբանանի վարչապետ Սաադ Հարիրիին: «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Ալա Վարդանյանը լրագրողների հետ զրույցում տեղեկացրեց, որ օրագրի արժեքը 132 միլիոն դրամ է, բուժհաստատությունը կհամալրվի նաեւ մեկ միլիոն եվրո արժողությամբ բուժսարքավորումներով: Մնում է ավելացնել, որ սրտաբանական կենտրոնը սպասարկելու է ինչպես Սյունիքի մարզի, այնպես էլ Արցախի բնակչությանը:

Քաղաքի հիմնադրման օրվան նվիրված տոնակատարությունը եզրափակվեց տոնական համերգով եւ հրավառությամբ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

ՆԵԼՍՈՆ ՈՍԿԱՆՅԱՆ.

«2010-ը Գորիսի բազմադարյա պատմության ուշագրավ մի էջը դարձավ»

– Պարոն Ոսկանյան, 2010 թվականը հոբելյանական էր Գորիսի համար. լրացավ քաղաքի հիմնադրման 140-ամյակը: Քանիցս, անշուշտ, խոսք եք ասել այդ առիթով: Հիմա, երբ ավարտվում է տարին, կուզենայիք լսել Ձեր շնորհավորանքի ու բարեմաղթանքի խոսքը:

– Իսկապես տարին հոբելյանական էր, եւ այդ կապակցությամբ անկեղծորեն շնորհավորում եմ գորիսեցիներին, բոլորին մաղթում երջանկություն, հաջողություններ: Թող լիմի այնպես, որ մենք Գորիսը գալիք սերունդներին փոխանցենք ավելի բարեկարգ, ավելի գեղեցիկ, ավելի քիչ խնդիրներով: Եթե քաղաքի հիմնադրումը սկսել ենք 140 տարի առաջ կամ մի քիչ շուտ, ապա բնականությունը եղել է մինչեւ այդ՝ հազարամյակներ շարունակ: Մեր խնդիրն է անել այնպես, որ Գորիսի այդ երթն անվախան լիմի ու արժանապատիվ:

– Փորձենք ամփոփել 2010-ը: Ի՞նչ ուշագրավ արձանագրումներ եղան տարվա ընթացքում քաղաքի հիմնադրման հոբելյանի առիթով:

– 2010 թվականը, հանդված եմ, գորիսեցիների հիշողության մեջ կմնա միայն դրականորեն: Կազմակերպվեցին բազմաթիվ մշակութային, մարզական, գիտական միջոցառումներ: Լույս աշխարհ եկան նորանոր ուսումնասիրություններ, հոդվածներ՝ Գորիսի պատմությանն առնչվող: Քաղաքի նոր եւ նորագույն պատմության որոշ դրվագներ ճշտվեցին, արժեւորվեցին: Ծնվեցին արվեստի նոր գործեր, գրական ստեղծագործություններ: Հոբելյանական միջոցառումների գագաթը, իհարկե, հանաբանդաքային տոնախմբությունն էր, որին մասնակցեց Հայաստանի Հանրապետության նախագահը: Բայց միայն միջոցառումներով չէ, որ նշանավորվեց տարին: Քաղաքում բազմաթիվ հարցեր լուծվեցին բարեկարգման, քաղաքաշինական առումով: Մասնավորապես, ավարտին հասցվեց հիվանդանոցի վերկառուցումը, որը, անշուշտ, որակական նոր աստիճանի կհասցնի տարածաշրջանի բնակչության բուժսպասարկումը: Շահագործման հանձնվեց սրտաբանական կենտրոնը, որը նոր էջ է բացում շրջանի առողջապահության պատմության մեջ: Կառուցվեց Սուրբ Գրիգոր Տաթեւացու հուշարձանը: Դա ոչ միայն ազգային մեր մեծերից մեկի քարեղեն ներկայության վերադարձն էր, այլեւ հաճելի մի բաղադրիչ, որ ավելացավ քաղաքի կենտրոնի ճարտարապետական դեմքին: Որոշակիորեն բարելավվեցին Մխիթար Սպարապետի անվան հրապարակն ու հրապարակի մերձակայքը: Աննախադեպ աշխատանքներ կատարվեցին ճանապարհաշինության ոլորտում: Ի վերջո գործարկվեց Տաթեւի ճոպանուղին, որը նոր լիքք կհաղորդի գբոսաշրջությանը՝ տարածաշրջանի զարգացման հիմնարար ուղղություններից մեկին: Մենք նաեւ փորձեցինք ստեղծել քաղաքի խորհրդանիշները՝ օրհներգը, դրոշն ու գինանշանը: Դրանք շուտով վերջնական տեսքի կբերվեն, եւ կներկայացնենք ավագանու հաստատմանը: Այնպես որ 2010-ը Գորիսի բազմադարյա պատմության ուշագրավ եւ անջնջելի մի էջը դարձավ:

– Ի՞նչ խնդիրներ կցանկանայիք լուծված տեսնել տասը տարի հետո, երբ կնշվի քաղաքի հիմնադրման 150-ամյակը:

– Անցնող տարին ակտիվ լինելու պատճառներ ուներ՝ քաղաքապետի ընտրությունն էր, քաղաքի հոբելյանն էր, Տաթեւի վերականգնման ծրագրի մեկնարկն էր: Բայց պիտի ասեմ՝ առաջիկայում նույնպես հանգստանալու, արվածով բավարարվելու հիմքեր չունենք: Քաղաքի առջեւ ծառացած են բազմաթիվ հարցեր, որոնք եւ քաղաքապետարանից, եւ մարզպետարանից կպահանջեն հետեւողական աշխատանք: Այդ խնդիրներն արտացոլված են համայնքի 2009-12թթ. զարգացման ծրագրում, իմ նախընտրական ծրագրում, կառավարության 2009թ. արտագնա նիստի որոշումներում եւ այլ փաստաթղթերում:

Ի՞նչ խնդիրներ կցանկանայի լուծված տեսնել տասը տարի հետո. հետաքրքիր հարց է:

Վարարակն գետի հուսի սանհատարական ներկա վիճակն այլեւս հանդուրժել չի կարելի: Կուզեմայի լուծված տեսնել քաղաքի կոյուղագծի եւ մաքրման կայանի կառուցման խնդիրը: Կուզեմայի լուծված տեսնել մարզաբազաների պրոբլեմը: Կուզեմայի, որ համայնքի երիտասարդությունը վաղվա օրվա իր ծրագրերը կպահեր Որդիի հետ, որ բուիը կամ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո նա մեզ մոտ համապատասխան աշխատանք գտներ, որ գորիսեցին երբեւէ իր բախտը չփնտրեր օտար ափերում, որ Գորիսն ավելի գրավիչ միջավայր լիներ բիզնեսի համար... Սրանք, ի դեպ, երազանք չեն սոսկ: Սրանք ոչ էլ մաղթանք են գուտ՝ առաջիկա տարիների մեր ընթացքի համար: Սրանք կոնկրետ խնդիրներ են, որոնց լուծմանը պիտի ձգտենք համառորեն եւ հետեւողականորեն: Եվ պիտի ձգտենք միասին՝ ամենքս մեր տեղում, ամենքս մեր կարողությունների չափով: Ուրեմն՝ բոլորիս քաջառողջություն, բոլորիս կամք եւ վճռականություն, որ կարողանանք արժանապատիվ տերը լինել հազարամյակների խորքից եկող մեր ոստանին՝ Գորայք-Կյորեսս-Գորիսին:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
25 դեկտեմբերի 2010թ.

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Գորիսի վերածումը վարչական կենտրոնի եւ քաղաքի հիմնադրումը

19-րդ դարասկզբին Զանգեզուրի ներկայիս տարածքը կազմում էր Ղարաբաղի խանության մի մասը, իսկ վերջինս մտնում էր Պարսկական պետության մեջ: 1805 թվականին ռուս-պարսկական պատերազմի ժամանակ, Ղարաբաղի խանությունն իրեն ճանաչեց Պարսկաստանից անկախ եւ Ռուսաստանի հետ միացած: Այս փաստը իրավական վավերացում ստացավ 1813թ. Գյուլիստանի դաշնագրությամբ: Փաստորեն, նշված ժամանակաշրջանից մեր երկրամասը մտավ ռուսական հովանու ներքո:

Ռուսաստանի կողմից նվաճված երկրամասում շարունակում էր կիրառվել խանական հին վարչակարգը: Ղարաբաղի խանության մաս կազմող Զանգեզուրը՝ որպես իշխող վարչաձեւ, տվյալ ժամանակաշրջանում մելիքական բաժանում ուներ: Մահալի գլուխ կանգնած էին մելիքները: Գորիսի շրջանի ներկայիս տարածքը հիմնականում միավորված էր Տաթեւի մելիքության մեջ: Մելիքի նստավայրը Տաթեւն էր: Քննարկվող ժամանակաշրջանում մելիքության ղեկավարը (միհրաշի հազարապետ տիտղոսով) Մելիք Պողոսն էր: Մելիքական այս տունն առաջացել է Օրբելյաններից: Տան վերջին ներկայացուցիչը Խուդաբախշ բեկն էր, որը 1931 թվականին մահացավ Տաթեւում: Տաթեւի մելիքությունը դարասկզբին հիմնականում հայաբնակ էր: 1823թ. այն Զանգեզուրի մելիքությունների մեջ ամենամեծն էր՝ 1685 ծուխ, 24 գյուղ, 16 ձմեռանոց: Մելիքության առանձին գյուղեր կամ գյուղախմբեր ուներ իրենց մասնավոր մելիքական տները: Կային նաեւ հզոր մելիքներ, որոնք անմիջապես կապված էին խանի հետ եւ հաճախ ոչ պակաս ազդեցություն ուներ: Տաթեւի մելիքությունում այդպիսի խոշոր կալվածատերեր էին Ռոստամ բեկը Կորճիձորում, Խնձաձախում, Ռոստամ բեկի որդի Ազատ բեկը Տեղում, Ռոստամ բեկի մայրը Վերիշենում, Եռաբլրի սարահարթում, Բեգլար բեկը քրդական վայրերում: Ինչպես նշեցինք, կային նաեւ մասնավոր մելիքություններ, որոնք կախման մեջ չէին մահալի տիրոջից: Այդպիսիներից էին Խնձորեսկ եւ Գորիս գյուղերը: Այդ գյուղերում ոչ թե քյոխվան, քեթխուդան էր ղեկավարում, այլ տեղական մելիքը: Գորիսի մելիքն էր Հարությունը՝ Յուսեինյան տոհմից: Ավանդույթի համաձայն այս գերդաստանը սկիզբ է առնում առեւտրական Լալայից: Վերջինիս թոռանը՝ Օհանին, գորիսեցիները Ղարաբաղի խանի համաձայնությամբ, կարգել էին իրենց եւ հարեւան գյուղերի մելիք (Ե.Լալայան, Զանգեզուր, էջ 8-14):

Գոյություն ունեցող այս կարգերը որոշ փոփոխությունների ենթարկվեցին դարի երկրորդ տասնամյակի սկզբին: 1822թ. Ղարաբաղից դուրս վռնդվեց խանը, որը պարսկական ծագում ուներ եւ ընդունելի էր ռուսական հպատակություն: Խանության փոխարեն ստեղծվեց Ղարաբաղի պրովինցիա: Խանին փոխարինեց կոմենդանատը: Զանգեզուրը մնաց իր մելիքական բաժանմամբ:

Մելիքները շարունակում էին պետական ֆունկցիաներ իրականացնել: Սիեւնույն ժամանակ փոփոխության ենթարկվեցին մելիքությունների, որոնց թվում եւ Տաթեւի մելիքության սահմանները: Ընդարձակ այդ մահալից առանձնացվեց արեւելյան հատվածը՝ Զանգեզուրի մելիքությունը, որի կենտրոնը դարձավ Գորիս գյուղը: Այս կացությունը տեւեց մինչեւ 1840 թվականը: Դրությունը հինգողին փոխվեց 1840թ. ապրիլի 10-ին կայսեր կողմից հաստատված, սենատոր Ղանի մշակած օրենքի հրապարակումից հետո, որով Անդրկովկասում մտցվեց քաղաքացիական նոր վարչություն եւ վարչական նոր բաժանում: Ղարաբաղի պրովինցիան վերածվեց Շուշու գավառի, որն էլ մտավ Կասպիական մարզի մեջ: Զանգեզուրի բոլոր մելիքությունները մտան Շուշու գավառի մեջ որպես առանձին գավառաձա: Գավառապետի նստավայրը Շուշին էր, գավառամասի տեղապետի նստավայրը Գորիս գյուղը:

Սենատոր Ղանի օրենքը կիրարկումից 9 տարի հետո՝ 1849 թվականին, Զանգեզուրի գավառամասը՝ Գորիս կենտրոնով, մտավ երեւանի նահանգի մեջ: 1868թ. Անդրկովկասում վարչատարածքային նոր բարեփոխումներ կատարվեցին: Կազմակերպվեց Գանձակի նահանգը, որը հետագայում վերանվանվեց Ելիզավետպոլի նահանգ: Նոր նահանգի մեջ մտավ Շուշու գավառը: Նահանգի կազմում առաջին անգամ, որպես ինքնուրույն միավոր, կազմավորվեց Զանգեզուրի գավառը՝ Գորիս կենտրոնով: Վերջինիս մեջ ընդգրկվեցին բուն Զանգեզուրը, Կապանը, Սիսիանը: Եվ քանի որ նորաստեղծ գավառի կենտրոն հայտարարվեց բուն Զանգեզուրի կենտրոնը, ուստի Զանգեզուր անվանումը տարածվեց բոլոր գավառամասերի վրա: Այդ ժամանակվանից Գորիսին վիճակված էր կատարելու պատմական նոր առաքելություն:

Որո՞նք էին Գորիսը գավառային կենտրոն դարձնելու պատճառները: Նախ 19-րդ դարասկզբին Գորիս գյուղն առաջավոր ռազմական էր պարսկական սահմանազլխի մոտ: Այստեղ էր գտնվում 42-րդ եգերական գնդի երեք վաշտ երկու թնդանոթով: Այնուհետեւ Ռուսական կայսրության կողմից նվաճվելուց դեռ շատ առաջ Գորիսը սկսել էր բարձրանալ որպես կարեւոր, միջազգային ճանապարհների հանգույց: Գորիսով, ինչպես ներկայումս, արեւմուտքից արեւելք անցնում էր ճանապարհ: Դեռեւս վաղ ժամանակներից այդ ճանապարհով տեղափոխվում էր Նախիջեւանի բարեր աղը: Աղի ճանապարհն այս կետում հատվում էր հարավից հյուսիս ձգվող այլ ճանապարհի, որը գալիս էր Մեղրուց, Տաթեւից, Սատանայի կամրջով, Եռաբլրի սարահարթով հասնում էր Գորիս: Հարավից ձգվող այս ճանապարհն առանձնակի կարեւորություն էր ձեռք բերել 14-րդ դարի կեսերին: Դրանով Պարսկաստանից, Հնդկաստանից ապրանքներ հին փոխադրվում Շամախի, որտեղից էլ՝ Ռուսաստան: Այդ ժամանակ էր, որ Հարժիսից 3կմ հյուսիս-արեւմուտք կառուցվեց քարվանասար: Քարվանասարս կար նաեւ ճանապարհի հանգուցակետում՝ Գորիսում: Թուրքմենչայի դաշնագրությունից հետո (1828թ.), երբ Երեւանի ու Նախիջեւանի խանությունները միացվեցին Ռուսաստանին, մեծ նշանակություն ստացավ Շուշուց Գորիս, Բռնակոթ, Սիսիան, Նախիջեւան տանող ճանապարհը, որը ճանաչված էր Թիֆլիսից Թավրիզ տանող ամենակարճ ճանապարհ: 1869-1877թթ. կառուցվեց Շուշի-Գորիս ճանապարհը:

Երկու խոսք այդ ժամանակվա Գորիս գյուղի մասին: Բնակավայրը Զանգեզուրի գյուղերից մեկն էր Վարարակնի ձախ ափին: Ինչպես հիշատակում են ակնատեսները, գյուղը շատ նման էր Զանգեզուրի ձորաշեն գյուղերին: Այնտեղ ձորը լայնանալով մի անհարթ գոգավորություն է ստեղծում, որտեղ կոնաձեւ բերդեր են բարձրանում, իսկ եռաբլրի սարահարթից մոլեգնող հողմերը չեն թափանցում ներս: Բնության բազմազան տեսարանները, մաքուր օդը, սառնորակ ջրերը բնակության շատ հարմար պայմաններ էին ստեղծում: Շենը բաղկացած էր ժայռափոր կառուցվածքներից եւ նրանց կցված գլխատներից:

«...Այս արհետական քարայրներն էին կազմել մելիքաքիստ Գորիս գյուղը, որի աղքատ դասակարգը դարձյալ շարունակում էր այդպիսի բնակարաններ կտրել իր համար: Գյուղի կենտրոնում գտնվում էր հին, հասարակ եկեղեցին, իսկ սրա մոտ Մելիք Յուսեինյանների ապարքարը», – այսպես է Գորիս գյուղը նկարագրել բանահավաք Երվանդ Լալայանը (նշված աշխատության 27-րդ էջ): Հինմեկնում սրանք էին պատճառները, նախապայմանները, որ Գորիսը դարձավ մելիքության, ապա գավառամասի եւ գավառի կենտրոն:

Պատմական նոր առաքելությունը, որ վիճակվեց Գորիսին, ազդակ հանդիսացավ գյուղի բնույթը փոխելու համար: Հաստատվող նոր վարչական ձեւն իր հետ բերում էր թեեւ փոքրաթիվ, բայց ազդեցիկ քաղաքացիական ու զինվորական պաշտոնեություն, որը հանդես էր գալիս բնակարանային, կենցաղային սեփական պահանջներով: Կառավարությունը, դեռեւս մելիքական ժամանակներից, այստեղ հարկադրաբար պահում էր զորամասեր: Սենատոր Ղանի օրենքի գործադրումից հետո շատացան դատական, ոստիկանական պաշտոնյաները, կանոնավորվում էր ֆինանսական ծառայությունը, կարգի էր բերվում փոստ-հեռագրատուները: Ընդլայնվում էր պետական ապարատը: Մինչդեռ գյուղը, սեղմված նեղ տարածությունով, հնարավորություն չէր ընձեռում բազմազան պետական հինմարկեր-ների, արագ զարգացող առեւտրական օբյեկտների, պահեստարանների ծավալման համար: Կյանքն առաջ էր բերել աղը: Աղի ճանապարհն այս կետում հատվում էր հարավից հյուսիս ձգվող այլ ճանապարհի, որը գալիս էր Մեղրուց, Տաթեւից, Սատանայի կամրջով, Եռաբլրի սարահարթով հասնում էր Գորիս: Հարավից ձգվող այս ճանապարհն առանձնակի կարեւորություն էր ձեռք բերել 14-րդ դարի կեսերին: Դրանով Պարսկաստանից, Հնդկաստանից ապրանքներ հին փոխադրվում Շամախի, որտեղից էլ՝ Ռուսաստան: Այդ ժամանակ էր, որ Հարժիսից 3կմ հյուսիս-արեւմուտք կառուցվեց քարվանասար: Քարվանասարս կար նաեւ ճանապարհի հանգուցակետում՝ Գորիսում: Թուրքմենչայի դաշնագրությունից հետո (1828թ.), երբ Երեւանի ու Նախիջեւանի խանությունները միացվեցին Ռուսաստանին, մեծ նշանակություն ստացավ Շուշուց Գորիս, Բռնակոթ, Սիսիան, Նախիջեւան տանող ճանապարհը, որը ճանաչված էր Թիֆլիսից Թավրիզ տանող ամենակարճ ճանապարհ: 1869-1877թթ. կառուցվեց Շուշի-Գորիս ճանապարհը:

Երկու խոսք այդ ժամանակվա Գորիս գյուղի մասին: Բնակավայրը Զանգեզուրի գյուղերից մեկն էր Վարարակնի ձախ ափին: Ինչպես հիշատակում են ակնատեսները, գյուղը շատ նման էր Զանգեզուրի ձորաշեն գյուղերին: Այնտեղ ձորը լայնանալով մի անհարթ գոգավորություն է ստեղծում, որտեղ կոնաձեւ բերդեր են բարձրանում, իսկ եռաբլրի սարահարթից մոլեգնող հողմերը չեն թափանցում ներս: Բնության բազմազան տեսարանները, մաքուր օդը, սառնորակ ջրերը բնակության շատ հարմար պայմաններ էին ստեղծում: Շենը բաղկացած էր ժայռափոր կառուցվածքներից եւ նրանց կցված գլխատներից:

«...Այս արհետական քարայրներն էին կազմել մելիքաքիստ Գորիս գյուղը, որի աղքատ դասակարգը դարձյալ շարունակում էր այդպիսի բնակարաններ

ՀԵՌԱՍԻՐԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ «ՍՅՈՒՆԻՔԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՍԱՀՄԱՆՈՒՄ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԹԱՂԱԹԱՅԻՆ
ՀԱՍՑԵ՝ թ.ԿՈՂԲ., ԵՂԵՓՆԻՑԻ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գորիսը հին քաղաքի ճարտարապետության լավագույն օրինակ է Հայաստանում

Գորիսի ճարտարապետության ավանդույթների, նրան բնորոշ գծերի, քաղաքի այսօրվա ճարտարապետական տեսքի եւ քաղաքաշինական խնդիրների մասին է զրույցը երկարամյա ճարտարապետ Սեւադա Զաքարյանի հետ:



– Պարո՛ն Զաքարյան, Գորիսը ՀՀ քաղաքների մեջ առանձնանում է իր ուրույն քաղաքաշինական տեսքով. ի՞նչ առանձնահատկություններ են բնորոշ Գորիսի ճարտարապետությանը:

– Իհարկե, եթե պտտվես Հայաստանի բոլոր քաղաքներով ու գաս Գորիս, ամենքդապես աչքի կզարնի, որ այն յուրօրինակ ճարտարապետություն ունեցող քաղաք է: Շատ ավանդական գծեր ունի այստեղի ճարտարապետությունը. օգտագործված է տեղական քարը, այդ քարի՝ իրար մեջ հանգուցված («բարքաշ» ենք ասում) շարվածքը զուտ գորիսյան է, այն հետաքրքիր ձեւ է տալիս պատին, երբ համակցում են սրբատաշ քարի հետ: Քաղաքը յուրահատուկ է նաեւ իր կառուցվածքով: Իրար հատող երկայնական եւ լայնական փողոցների լուծումը հնարավորություն է տվել մարդկանց ապրելու համար բացառապես լավ պայմաններ ստեղծել: Առանձնատները պարտադիր ունեցել են բակեր, այգիներ: Հաճախ են շրջանառում այն վարկածը, թե քաղաքի գլխավոր հատակագծի հեղինակը գերմանացի է եղել: Դա սխալ եմ համարում: Ուղղակի, այդ ժամանակ Զանգեզուրի գավառը Ռուսաստանի կազմի մեջ էր մտնում, եւ ռուսները Գորիս-Շուշի-Եվլախ ճանապարհի հիմ կառուցում, որը ռազմավարական նշանակության ճանապարհ էր: Երկրաբաշխը (գեոդեզիստ) գերմանացի էր, նա է նշահարել Գորիսի փողոցները, այսինքն՝ նա ոչ թե հատակագծի հեղինակը, այլ հողաչափ է եղել:

Մասնավոր տների հին՝ 1880-ականների նախագծեր են ձեռքս ընկել՝ չհնական տուշով մոմլաթե թղթի վրա արված, որոնց տակ ստորագրել են ռուսի ազգանունով ինչ-որ գնդապետ եւ պարտադիր մի հայ: Ուստի ենթադրում եմ, որ նախագծողները զինվորական ինժեներներ են եղել: Ավանդական այդ նախագծերով կառուցվել են երկհարկանի կամ մեկուկեսհարկանի տներ: Այսինքն՝ քաղաքը հայ ճարտարապետության ծնունդ է՝ ռուսների միջամտությամբ: Նման հատակագծային սխեմաս ընդունված է եղել հռոմեական եւ ռուսական քաղաքաշինության մեջ, այնպես որ դա գերմանացու հետ կապելը ճիշտ չէ:

Ինչեւէ, Գորիսը՝ իբրեւ գավառի կենտրոն, չէր կարող արդեն հին ժայռափոր տներում մնալ, բնական է՝ նոր քաղաք պիտի կառուցվեր, եւ այն կառուցվել է լայն փողոցներով, մայթերով, բարեկարգ տներով. բնակվայրը գրավեց Վարարակի գետի աջակողմյան տափարակները, որոնք ազատ էին եւ հիմնականում իբրեւ դաշտավայր էին ծառայում Գորիս գյուղի համար:

– Այդ ժամանակ բնակելի տներից զատ այլ կառույցներ նախատեսվա՞ծ էին:

– Այո՛, նախ նշեմ, որ բոլոր արհեստավորների տների առաջին հարկերը ծառայում էին իբրեւ արհեստանոցներ: Քաղաքն ուներ պասսաժ՝ խոշոր առեւտրի կենտրոն, որը կառուցվել էր փայատիրական ճանապարհով եւ մինչ այժմ էլ պահպանվում է, վերջերս վերականգնվել է: Կառույցը՝ իբրեւ հին ճարտարապետության նմուշ, հուշարձանային արժեք ունի:

– Ի՞նչ է արվել Գորիսի ավանդական ճարտարապետությունը պահպանելու համար:

– Հայտնեմ, որ 1982 թվականին հուշարձանների պահպանության վարչությունում մշակվեց Գորիս քաղաքի՝ որպես արգելոց-քաղաքի պահպանման նախագիծ: Այն քննարկվեց Գորիսս քաղաքում: Սահմանագծվեց մի հատված, որտեղ նոր կառուցապատումն արգելվում էր, քաղաքաշինական որոշակի սահմանափակումներ մտան: Փաստաթուղթը ճարտարապետների միությունում հավանություն գտավ, ներկայացվեց քաղաքաշինության նախարարություն, բայց տեղի իշխանություններն արգելեցին դրա ընդունումը: Բանն այն է, որ խորհրդային տարիներին քաղաքում կառուցապատման համար նոր հողատարածքներ չէին տալիս, ձգտում էին տեղավորվել արդեն եղածում, եւ ցավոք, 1974թ. Գորիսի նոր գլխավոր հատակագծով հին երկհարկանի անհատական տները քանդում էին եւ տեղը տուֆակերտ հինգհարկանի շենքեր կառուցում: Իմ գալուց՝ 1983-ից հետո Վանքի տափի 4.4 հեկտարը հասցնելով 8.8 հա-ի՝ այդ ողջ տարածքը հատկացրեցինք կառուցապատմանը: Շատ մեծ դժվարությամբ հասանք նրան, որ դադարեցին քանդել արժեք ներկայացնող հին տները:

– Բայց, փաստորեն, չհաջողվե՞ց խուսափել կորուստներից:

– Այո՛, եւ այսօր քաղաքի մեջ կան կառույցներ, որոնք խորթ են տեղի քաղաքաշինական ավանդույթներին, շեղված են ավանդական այդ ճարտարապետությունից, որով կառուցվել է Գորիսը: Իսկ քաղաքը երկրորդ հատակագիծ ունեցել էր 1946 թվականին, հեղինակը՝ ճարտարապետ Խոյեցյանը, շարունակել էր առաջինի սկզբունքները՝ երկարությամբ ձգվող փողոցները շարունակելով դեպի հյուսիս-արեւմուտք, լայնական փողոցները՝ դեպի հարավ-արեւմուտք: Երրորդ հատակագիծը, ինչպես նշեցի, ընդունվեց 1974-ին:

Խորհրդային տարիների կոպիտ սխալներից մեկն էլ այն է եղել, որ քաղաքի կենտրոնում տեղավորել են որոշ գործարաններ, քաղաքը հին Գորիսից՝ գետի ձախակողմյան մասից, կտրվել է, նախապես եղած օրգանական շարունակությունը չի պահպանվել:

– Անկախության տարիներին քաղաքն ունեցա՞վ նոր հատակագիծ:

– Անկախությունից հետո՝ 1993թ., նոր գլխավոր հատակագիծ ունեցանք, ըստ որի՝ քաղաքը պիտի տեղափոխվեր Երեւան տանող ճանապարհի տափարակը: Բայց այն այդպես էլ մնաց թղթի վրա: Այսօր գործող, այսպես կոչված, հատակագիծն արդեն դասական առումով ոչ թե հատակագիծ է, այլ զոտիավորման նախագիծ: Այսինքն՝ նշվում է՝ որտեղ ինչ տիպի շինարարություն պիտի արվի: Եվ դրանով են հիմա առաջնորդվում քաղաքային իշխանությունները:

– Ինչքա՞ն է եղել քաղաքի տարածքը ամենաառաջին նախագծով, եւ ինչքա՞ն է այն հիմա:

– Այն ժամանակ Գորիսը մոտ 200հա տարածք հագիվ գրաված լինի, հիմա այն մոտ 700հա տարածք է զբաղեցնում. նկատի ունեմ զուտ քաղաքը՝ առանց այլ հողատարածքների՝ արոտավայրերի, դաշտավայրերի:

– Պարո՛ն Զաքարյան, ի՞նչ մնաց Գորիսում ժողովրդական ճարտարապետությունից, որո՞նք են այժմվա քաղաքի ամենահին կառույցները:

– Դրանք 19-րդ դարի վերջին կառուցված քաղաքի հիմնական փողոցներն են՝ այսօրվա Գուսան Աշոտի փողոցն է, Մ.Մաշտոցի փողոցը, Գ.Նաթեւացու փողոցի հին տներն են, այդ փողոցների տները հիմնականում մինչեւ 1860-70-ականները կառուցված տներ են, հասնում են մինչեւ 1910-ականները: Հին կառույց է, օրինակ, Օրիորդաց դպրոցի շենքը, որը հետո դարձավ միկրոշարժիչ գործարանի հանրակացարանը:

– Իսկ մասնավոր տների համար ինչքա՞ն հողատարածք է այն ժամանակ հատկացվել:

– Հատկացվել է 900քմ մինչեւ 1800քմ հող:

– Տներն արտաքինից նման են. միատեսակ նախագի՞ծ է պարտադրվել, թե՞ մարդիկ են ձախընտրել նման տներ կառուցել:

– Իհարկե, արտաքինից թվում է, թե բոլորը նման են միմյանց, բայց իրականում տարբեր են: Բոլորին հատուկ ընդհանուր գիծը շարվածքն է, շինմասյուռը: Բացի դրանից՝ նմանությունը բնական է: Վարպետներն արդեն հնտացել են եւ նոր տուն կառուցելիս կրկնել հին շենքերի կառուցման ժամանակ տվյորածը: Այդ տները լավագույնն են, որ պահպանվել են Հայաստանում՝ իբրեւ ժողովրդական ճարտարապետության նմուշներ: Դրանցով է Գորիսն առանձնանում՝ եւ իր հատակագծային լուծումով, եւ այդ առանձնատներով ու կառուցապատման հին շնչով: Դրսից է շատ հեշտ գալիս ուսանողներ ուսումնասիրելու Գորիսը՝ որպես հին քաղաքի ճարտարապետության լավագույն օրինակ, եւ բոլոր մասնագետներն էլ կարծիք են հայտնում, որ Գորիսն իր կառուցվածքային առանձնահատկություններով յուրահատուկ քաղաք է ողջ հանրապետությունում:

– Իսկ հետագայում՝ խորհրդային տարիներին, մասնավոր տներ նախագծելիս որքանո՞վ են ճարտարապետները պահպանել ժողովրդական ճարտարապետության ավանդույթները:

– Մի շրջան կար՝ Հայրենական մեծ պատերազմից հետո, երբ որոնճադիրները, վարպետներն են համատարած որոշել, թե տունն ինչպիսին պետք է լինի՝ երկու սենյակ հետեւելի, մի պատշգամբ առջեւում: Պարզունակ լուծում էր, եւ երկար տարիներ այդպիսի տիպային նախագծեր են տվել բոլորին: Երբ ես եկա այստեղ աշխատելու, սկսեցինք այդ շարվածքի տեսակը պահպանելով, ժամանակակից մարդու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելով՝ տներ կառուցել: Չէինք հետեւում գործող չափերին, մինչդեռ այդ ժամանակ խորհրդային չափանիշներով շատ խիստ սահմանափակումներ կային, որոնցում հնարավոր չէր տեղավորվել, ստիպված էինք ավելի մեծ տների նախագծեր անել, որովհետեւ այնքան անհարմարավետ են եղել ճախկինները, որ ժամանակ առ ժամանակ սեփականատերերը ստիպված են եղել կցակառույցներ ավելացնել: Եվ արդեն սկսեցինք հաշվի առնել ընտանիքի կազմը, ենթադրվեցին պահանջվող քանակը, եւ այնպիսի նախագծերով կառուցել, որ տունը հարմարավետ լինի, կցակառույցների կարիք չլինի:

Տասնյակ տներ այդպես կառուցելուց հետո հանրապետությունում խոսում էին, որ Գորիսում հետաքրքիր տներ են կառուցվում: Մի օր էլ Կարեն Դեմիրճյանը եկավ, մի քանի տուն ցույց տվեցինք, մի տան էլ ցանելով՝ հարցրեց քաղխորհրդի նախագահին՝ Գրիշա Մանուչարյանին՝ խորհրդային նորմերը չգիտե՞ք, որ այսպիսի տներ եք կառուցում: Պատասխանեց, որ ուղղակի հարմար տներ եք ուզում կառուցել: Դեմիրճյանն ասաց՝ գիշտ եք անում, այդպես էլ շարունակեք:

Ինչ վերաբերում է զանգվածային շինարարությանը, բարձրահարկերի կառուցման ժամանակ արդեն տեղի ավանդական քարը հնարավոր չէր կառուցել, դա կազդեր սեյսմակայունության վրա:

– Դարպասների կամարատիպ ձեւը նո՞ւյնպես գորիսյան ավանդույթներից է:

– Մեկ էլ Շուշիում եմ հին հայկական կառույցներում նման կամարներ տեսել, որոնք հետո, ցավոք, չպահպանվեցին: Տները Գորիսում երկու դարպաս են ունեցել. փոքրը մարդկանց համար էր, մեծով կառք, ձի են տարել: Հետո սկսեցին ուղղակյուն դարպասներ սարքել՝ մեծը՝ մեքենաների համար: Իմ գալուց հետո նորից փոխեցինք ձեւը եւ սկսեցինք կամարաձեւ դարպասներ կառուցել:

– Իսկ այժմ նոր կառույցներ նախագծելիս որքանո՞վ են պահպանվում գորիսյան ճարտարապետության ավանդույթները: Քաղաքը պահպանվա՞ծ է իր դեմքը:

– Չէի ասի, թե ավանդույթները շարունակվում են, հիմա ժամանակակից շատ այլ շինանյութեր են օգտագործում: Հեղինակներին թվում է, թե դա ավելի հետաքրքիր է, նոր խոսք ճարտարապետության մեջ... Ինքս հակված եմ ավանդույթները պահպանելուն: Քաղաքն իր ճարտարապետական դեմքը պիտի պահի, եւ ցանկալի է, որ նոր շինություններ կառուցելիս նախագծողները դա հաշվի առնեն: Կարելի է հարմարավետ տներ կառուցել, բայց արտաքին տեսքում, դեկորներում պահպանել ավանդական տարրերը: Մի քիչ ավելի երիտասարդներն ուզում են նոր խոսք ասել, բայց միշտ չէ, որ դա հաջողվում է:

– Ո՞րն է հիմա համարվում քաղաքի կենտրոնը:

– 1974թ. գլխավոր հատակագծով ճախատեսված էր, որ քաղաքը երկրորդ հասարակական կենտրոնը պիտի ունենա: Իսկ առաջինը հին պատմական քաղաքի հասարակական կենտրոնն է, որտեղ գտնվում է պասսաժը, շուկան, հասարակական կենտրոնում այսօր երկու հրապարակ ունենք՝ Մխիթար Սպարապետի եւ Գրիգոր Տաթեւացու: Երկրորդը ճախատեսված էր Վանքի տափ բաղամասի դիմաց, ինչն իրականություն չդարձավ: Հիմա էլ գոտիավորմամբ ճախագծով նոր կենտրոն ճախատեսված է: Հասարակական կենտրոնը փողոցների շարք է, որտեղ գտնվում են հիմնական հասարակական շենքերը, առեւտրի կետերը: Տեսեք, քաղաքն այսօր բավականին երկարել ու ձգվել է դեպի Վերիշեն, հին հասարակական կենտրոնն արդեն նոր բաղամասերի բնակիչների համար շատ հեռու է: Այսինքն՝ երկրորդ հասարակական կենտրոնը, իրոք, քաղաքաշինական խնդիր է Գորիսի համար:

– Պարո՛ն Զաքարյան, բացի վերը նշվածից, որո՞նք եք համարում այսօրվա Գորիսի քաղաքաշինական, ճարտարապետական հիմնական խնդիրները:

– Նախ՝ պահպանել հին ավանդական ճարտարապետությունը դարերի ընթացքում կառուցվածը, չքանդել հին արժեքավոր շենքերը, շատ զգույշ լինել յուրաքանչյուր նոր կառույցի համար նախագիծ պատրաստելիս, միայն պատվիրատուի ու ճարտարապետի քմահաճույքները չէ, որ պիտի որոշիչ լինեն:

Մեր ամենալուրջ խնդիրներից է միջավայրի պահպանությունը. վարարակի գետն այսօր կոյուղու գիծ է դարձել, կեղտաջրերը գետն են թափվում. քաղաքաշինական լուրջ խնդիր է Գորիսի կոյուղու գլխավոր կոլեկտորի եւ քաղաքի խաչմերուկներում կարգավորվեր երթեւեկությունը, լուսացույցներ տեղադրվեին, վերականգնվեր քաղաքի գիշերային լուսավորությունը, մայթերը կարգի բերվեին...

Նախանձով եմ նայում այլ քաղաքներում տեղադրված բազում քանդակներին, հուշարձաններին. Գորիսում նաեւ դա է պակասում, ցանկալի կլիներ, որ քաղաքում տեղադրված արվեստի գործեր շատ լինեին:

Եվ, ի վերջո, լավ կլիներ, որ քաղաքի միջով չանցներ Իրան-Հայաստան մայրուղին, լիներ շրջանցող ճանապարհ: Շատ նեղվիկ այդ փողոցով ծանր բեռնատարներ են անցնում. եւ քաղաքի գիշերային հանգիստն է խաթարվում, եւ վթարներն են շատ, եւ փողոցի տերը են ճաքճքում...

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԵՌԱՍԻՐԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ «ՍՅՈՒՆԻՔԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՍԱՀՄԱՆՈՒՄ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԹԱՂԱԹԱՅԻՆ
ՀԱՍՑԵ՝ թ.ԿՈՂԲ., ԵՂԵՓՆԻՑԻ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը»

Հատված Ն.Պապուխյանի համանուն գրքից

Ցարական իշխանության ժամանակ առանձնապես մեծ էր կարեւոր ճանապարհների հանգուցակետում գտնվող Գորիս քաղաքի դերը իբրեւ Զանգեզուր գավառի առեւտրական եւ վարչական կենտրոն: Նրան էին ենթարկվում Հայկական ՍՍՀ Սիսիանի, Գորիսի, Ղափանի եւ Սեղրու շրջանները, ինչպես նաեւ Ադրբեջանական ՍՍՀ Լաչինի շրջանի մի մասը, սակայն նրա առեւտրական կապերի տարածման շառավիղն անհամեմատ մեծ էր:

Մինչ քաղաք դառնալը Գորիսը (պատմական Ջագեձորը, իսկ ժողովրդի բարբառով Կյորեսը կամ Շեմը) եղել է Զանգեզուրի մեծ գյուղերից մեկը Որոտանի վտակ Գորիս գետի ձախափնյա մասում: Քաղաքի հիմնադրման աշխատանքներն սկսվել են 1850 թվականին, սակայն շինարարական եւ հատակագծման աշխատանքները հիմնավոր ու կազմակերպված բնույթ են ստացել 1870 թվականին՝ Ստեփանոսի գավառապետի ժամանակ, Սանուչար բեկ Մելիք-Յուսեփեանյանի գործունեությամբ: Գորիսը պաշտոնապես քաղաք դարձավ XIX դարի 80-ական թվականների վերջերին: Նրա զարգացման համար մեծ նշանակություն է ունեցել Լեռնակոկլիսկաստան ճանապարհաշինության զարգացումը, մասնավորապես Շուշի-Գորիս ճանապարհի շինարարությունը 1869-1877 թվականներին:

Քաղաքում առաջին հերթին բնակարանում հատատեց ունեցող դասակարգը: Ստեղծվեց առանձնատներով, վարչական եւ առեւտրական շենքերով կազմված քաղաքի կենտրոնական մասը որոշակի հատակագծով եւ առաջադիմական բարեկարգումով: Հասարակության սոցիալական շերտավորումը խիստ որոշակի կերպով անդրադարձավ քաղաքի կառուցապատման եւ ճարտարապետական դիմագծի վրա: Հասարակական խմբավորումները բնակվել են տարբեր փողոցներում եւ քաղամասերում: Աշխատավոր խավը առավելապես բնակվել է գետափնյա փողոցի շրջակայքում կամ վարձակալել է նկուղայնի հարկերը: 20-րդ դարի սկզբի քաղաքում 3146 բնակիչ է եղել, որոնք զբաղվել են երկրագործությամբ, այգեգործությամբ ու առեւտրով: Շուկան առանձնապես կենդանացել է, երբ սար գնացող թուրքերն անցել են ավանով:

Կայսրության մեջ շինարարական-ճարտարապետական աշխատանքների կատարման օրենքներն ու իրականացման ձեւը կարելի է վերագրել նաեւ Գորիսին. միայն թե պետք է նկատի ունենալ, որ վերջինս եճարակվել է Եղիզավետպոլի պետական հիմնարկներին եւ բացի դրանից՝ այստեղ ճարտարապետության մեջ սկզբից եւեթ մասնագիտական ստեղծագործությունն եակա դեռ է կատարել: Այնուամենայնիվ շատ բնակելի շենքեր կառուցվել են առանց նախագծի, ուստիեւ զուտ ժողովրդական ստեղծագործություններ են: Այդ մասին ուշագրավ վկայությունները են Ադրբեջանական ՍՍՀ կենտրոնական արխիվում պահպանվող Եղիզավետպոլյան նահանգական վարչության շինարարական բաժանմունքի փաստաթղթերը: Այդ փաստաթղթերի մեջ Գորիս քաղաքին վերաբերող նախագծերի կողքին կան առանձին շենքերի չափագրություններ, որոնց վրա մակագրված է, թե նրանք չնայած կառուցվել են առանց նախագծի, այնուամենայնիվ, համապատասխանում են քաղաքի համար առաջադրվող շինարարական պահանջներին: Քաղաքի ճարտարապետության մեջ Զանգեզուրի ժողովրդական ավանդական գծերն այնքան ակնբախ են ներկայանում, որ անհնար է անջատել այն ժողովրդի ստեղծագործական ժառանգությունից: Բացի դրանից համեմատելով շենքերի նախագծերը կառույցների հետ զգալի տարբերություն ենք գտնում: Վարպետները ստեղծագործական մոտեցումով են կառուցել շենքի տարբեր մասերը, մանավանդ հարդարաքնին վերաբերող մասերամասնությունները:

Արխիվային փաստաթղթերից երեւում է, որ նշահարման աշխատանքներ են կատարել գավառական հիմնեներներ Խարչենկոն եւ Կոշլովը, իսկ հետագայում շինարարական աշխատանքները ղեկավարել է իմժեներ Զաձուշյանը:

* * *

Զախափնյաս ավերակների ներկա վիճակը, ինչպես նաեւ մի շարք աղբյուրներ տեղեկություն են տալիս այն մասին, որ Շեմը բաղկացած է եղել ժայռափոր կառուցվածքներից եւ ժամանակի ընթացքում նրանց կցված, ինչպես նաեւ աստիճանաձեւ կառուցված գլխաշերների համակառույցներից: Խիտ կառուցապատումով եւ ոուտումուռ ճամփաներով կազմված այս մեքիքանիստ գյուղի անշնչ ուխտատեղիներից բացի կենտրոնում եղել է մի հասարակ հին եկեղեցի, իսկ նրա մոտ Մելիք Յուսեփնյանների նախկին ապարանքը: Շեմն ունեցել է նաեւ իր իջեւանատները:

Արդի քաղաքի տեղում, այսինքն՝ հովտի աջափնյա մասում բնակելի շենքեր չեն եղել: Այստեղ է տեղավորվել գավառի առեւտրական կենտրոնը հանդիսացող համբավավոր շուկան: Այդ հին շուկայում եղել են կերպասավաճառներ, ներկարարներ, հաններ կարողներ, պայտարներ եւ այլոց գետնամած խանութները: Շուկայի հրապարակով է անցել գյուղից դեպի խոտհարքները եւ արոտները տանող հին ճանապարհը:

Սկզբից եւեթ քաղաքի կառուցապատման սխեմաս հասարակ ուղղանկյուն ցանց է եղել: աշխարհի կողմերի նկատմամբ փոքր-ինչ շեղ ուղղություն ունեցող փողոցներով ու նրանց միջեւ հյուսիս-արեւմուտքից հարավ-արեւելք ձգվող կանոնավոր ուղղանկյուն քաղամասերով: Վերջինիներս մասնատված են զույգ առ զույգ կցունով շարք կազմած, հավասար մեծությամբ (յուրաքանչյուրը 400 քառ. սաժեն) հողամասերի, որոնցից յուրաքանչյուրում մեկ շենք է նախատեսվել: Նախագծերում համարակալված են եղել ոչ միայն քաղամասերը, այլեւ յուրաքանչյուր հողամաս: Ամենամեծ քաղամասերն ունեցել են տասներկու հողամաս, իսկ ամենափոքրերը՝ չորս: Թաղամասերի կառուցապատման այս կանոնավորությունը փոքր-ինչ խախտվել է հետագայում կառուցապատման խտացմամբ, բայց փողոցների ցանցը մնացել է նույնը: Քաղաքը նեղ ու երկար հատակագծով ձգվում է ոչ շատ լայն հովտի մեջ՝ իջնելով մոտավորապես հյուսիսից հարավ: 20-րդ դարի սկզբերին գցված են եղել հինգ երկայնական եւ հինգ լայնական փոխհատվող բարեկարգ փողոցներ: Երկայնական ուղղությամբ ձգված երկու փողոց ունեցել են 21, մնացածը՝ 17 մետր լայնություն: Նշահարողները եճարկվել են Ռուսաստանում 1742 թվականից գոյություն ունեցող հրամանին, որով Մոսկվայի փողոցների լայնությունը սահմանված է եղել 8 սաժեն: 1752 թվականին այդ չափերը փոխվել են մինչեւ 10 սաժեն, որը մոտավորապես կազմում է 21 մետր:

Քաղաքի հատակագծային վիճակը պայմանավորված էր հատկապես շուկայի գոյությամբ, որը կառուցապատման ցանցի կենտրոնում «նավթի պահեստներից մինչեւ Մաթեւոս բեյի տուն, այնտեղից դրուժինայի զորանոցը եւ հայոց եկեղեցին մի ամբողջություն էր, մի ամբողջական շուկա, որ կենտրոնն էր Զանգեզուրի ընդարձակ գավառի՝ Սեւանա լճից հարավ, մինչեւ Արաքս»: Այս շուկայի հյուսիսային ծայրը հին շուկան էր, իսկ նրա շարունակությունը կազմող հրապարակում բազմաթիվ խանութներ եւ արհեստանոցներ են եղել, որոնց մեջ աչքի են ընկել պասսաժի խանութները: Այս ընդարձակ վաճառատեղիք էր հորդում իսանոիճաղանց ամբոխը «յոթ ճանապարհով, նա հոսում էր դավաբարխանայի, քաղաքային ինքնավարության, դատարանի, ոստիկանական վարչության, հարկային տեսչի, պետական գանձարանի եւ սուբահանոցի նախկին կալանատան յոթ դարպասներից, որոնք բացվում էին շուկայի վրա»: Այստեղ է գտնվել նաեւ քաղաքային այգին, իսկ քաղաքի եզրին գտերի մեջ թափվող գյուղական մի հորդահոս աղբյուր է եղել, որի ջուրը քաղաքից մեկ կմ հյուսիս գտնվող քարաշեմ վանքի մոտից է բերվել: Հետզհետե քաղաքը ավելի ու ավելի բարեկարգ տեսք է ստացել, փողոցներն ու մայթերը սալարկվել են ու կանաչապատվել:

Գորիսի քաղամասերի կանաչ այգիներով ծածկված տարածությունը քարակերտ շենքերի ու բարձր ցանկապատերի մի շղթայով է պարուրված: Փողոցները մայթված են, կանաչապատված, մայթերի եզրերով անցնում են ոռոգման ջրերի առուները: Շենքերը իրենց բակային պատշգամբերի եւ լանջավոր ծածկերի հետ ուղղանկյուն հատակագծով պրիզմատիկ ծավալներ ունեն, որոնք երկարությամբ դրված են փողոցներին՝ «ուղղահայաց, հողամասի բարձր մասում: Տները նեղ ճակատներով դեպի փողոց ուղղելու այս սկզբունքը թելադրված է փողոցների խաչմերուկների միջեւ ընկած հատվածներում ըստ հնարավորին ավելի շատ շենքեր տեղավորելու, լավագույն կողմնորոշումն ապահովելու եւ տվյալ հողամասի մեջ ճանապարհաձեռ բակերի ավելի մեծ տարածություն ստեղծելու անհրաժեշտությամբ: Բակերը շենքերի միջեւ ընկած տարածություններն են, որոնք պարսապատ են փողոցների կողմից եւ վերջինիս հետ հաղորդակցվում են կամարակապ դարպասներով: Դրանք չեն խճողված օժանդակ կառույցներով, որոնք բակում անենշան տեղ են գրավում: Գետափնյա «հին ճանապարհի» տները միհարկանի են՝ իր տարբերության քաղաքամիջի շենքերի, որոնց մեծ մասը մեկ եւ կես կամ երկու հարկանի է: Այստեղի հողամասերը նույնպես սահմանվել են 400 քառ. սաժեն, բայց ժամանակի ընթացքում կառուցապատումը խտացել է:

Այսպիսով՝ քաղաքաստեղծման առաջին տասնամյակներին բնակավայրը մեծ չի եղել եւ տարածվել է շուկայի ընդարձակ տարածության շուրջը՝ կենտրոնում ունենալով առեւտրական, վարչահասարակական շենքեր: Փողոցների կանոնավոր ուղղանկյուն ցանցը շենքերի լավագույն կողմնորոշումն ապահովելու նպատակով է ստեղծվել: Այն աստիճանաբար տարածվել է դեպի հյուսիս նույն սխեմայով: Այժմյան քաղաքը մի քանի անգամ մեծ է հնից, նրա կառուցապատման մեջ զգալի բարեփոխումներ են կատարված:

1972թ.

Ռուսապտանի կայսրերը

Նրանց գահակալության տարիներին Գորիսի կյանքում տեղի ունեցան շրջադարձային իրադարձություններ:

Ալեքսանդր I 1801-1825թթ.

1805թ. Ռուս-պարսկական պատերազմի արդյունքում կնքված պայմանագրով Զանգեզուրը, այդ թվում Գորիսը, անցավ Ռուսաստանի տիրապետության ներքո:
1813թ. Գյուլիստանի պայմանագրով այդ իրողությունը նոր վավերացում ստացավ:

Նիկոլայ I 1825-1855թթ.

1828թ. Թուրքմենչայի պայմանագրով նոր վավերացում ստացավ Զանգեզուրը (Գորիսը) Ռուսական կայսրության բաղկացուցիչ մաս լինելու իրողությունը:
1840թ. Շուշու գավառի կազմում առաջին անգամ ստեղծվեց Զանգեզուրի գավառամասը՝ Գորիս կենտրոնով:

Ալեքսանդր II 1855-1881թթ.

1867թ. դեկտեմբերի 9-ին ստեղծվեց Ելիզավետպոլի նահանգը, որի կազմում 1868թ. փետրվարի 25-ին կազմավորվեց Զանգեզուրի գավառը Գորիս կենտրոնով:

Նիկոլայ II 1894-1917թթ.

1904թ. մարտի 4-ին Միհիտարեների խորհրդի որոշմամբ Գորիսը հռչակվեց քաղաք:

Ա.Բակունցի տուն-թանգարանը Գորիսում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ «ՍՅՈՒՆԻՔԻ ՍԵՓԱԿԱՆ ՍԵՐՄԱՅԻ» ԱՄՍԱԹԵՐԹ-ՊԱՏԿԵՐԱՆԱՅԻՆ ԵՎԱԹԵՐԹ
Հիմնադիր՝ Բ.Պողոսյան, Ընդհանուր տարեգրությունը՝ 2032
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 00 47 (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ՀՈԳԵՎՈՐ

Սյունյաց աշխարհի հնօրյա եւ նորօրյա հոգեւոր կենտրոնը

Սյունյաց թեմ

Հայաստանյայց առաքելական եկեղեցու Սյունյաց թեմը վերակազմավորվել է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգսյանի 1996-ի մայիսի 30-ի կոնդակով: Առաջնորդանիստը՝ Գորիսի Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Մինչեւ 2010թ. դեկտեմբերի 10-ն ընդգրկում էր ՀՀ Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերը:

Մինչ այդ, 1988-ին Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա.Պալեյյանի կոնդակով Զանգեզուրի տարածաշրջանում ստեղծվել էր Սյունյաց թեմ: Առաջին առաջնորդն էր Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանը (1988-93):

Սյունյաց թեմը Հայ առաքելական եկեղեցու հնագույն եւ ամենաճաշակավոր եպիսկոպոսական աթոռոներից է (ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ հիմնել է Գրիգոր Ա Լուսավորիչը): Սյունիքը Հայաստանի ներկա եպիսկոպոսական աթոռների թվում միակն է, որ միջնադարում մետրոպոլիտության կարգավիճակ է ունեցել (տես Սյունյաց մետրոպոլիտություն): Սյունյաց եպիսկոպոսությունը միջնադարում մեկն էր այն չորս աթոռոներից, առանց որոնց համածայնության օրինական չէր հանվում Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությունը: Սյունյաց աթոռի պատմության վերաբերյալ տեղեկություններն ավելի ամբողջական են շնորհիվ մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի Պատմության եւ հարուստ մատենագիր ու վիմագիր սկզբնաղբյուրների: Սյունյաց թեմը Հայ առաքելական եկեղեցու պատմության մեջ մեծ դեր է կատարել ոչ միայն ճվիրապետական հանակարգում իր ունեցած առանձնահատուկ դիրքի շնորհիվ, այլեւ որպես վարդապետական կենտրոն:

Սյունյաց թեմի տարածքում գտնվող Թանահատի (Վդ.), Սյունի (VIIդ.), Տաթեւի (IX-XVIIդդ.), Խոտաներգ (IX-XIդդ.), Յաղոց քար (X-XIդդ.), Արատեսի (XIդ.), Հերմոնի (X-XVIIդդ.), Թանահտ (XIIIդ.) վանքերը, Բղենո Նորավանքը (X-XIդդ.), Գնդեվանքը (Xդ.), Որոտնավանքը (XIդ.), Վահանավանքը (X-XIդդ.), Նորավանքը (XIII-XIVդդ.), Գլաձորի համալսարանը (XIIIդ.), Սյունյաց Մեծ անապատը, Շատիկ վանքը, Տաթեւի մեծ անապատը (երեքն էլ՝ XVIդ.) հայ միջնադարյան եկեղեցական, կրթական, մշակութային կյանքի ջահակիրներ են եղել: Սյունյաց թեմի գործող վանքերոն ու եկեղեցիներն են Գորիսի Ս. Գրիգոր Լուսավորիչը, Վայքի Ս. Տրդատը, Մալիշ-կայի Ս. Աննան, Մարտիրոս գյուղի Ս. Հակոբը, Թառաթումբ գյուղի Ս. Հովհաննեսը, Եղեգնաձորի Ս. Աստվածածինը, Գլաձորի Ս. Խաչը, Տաթեւի վանքը, Տաթեւ գյուղի Ս. Ստեփանոսը, Վերիշենի Ս. Նորակնունքը, Մեղրիի Ս. Աստվածածինը, Ս. Հովհաննեսը, Սիսիանի Ս. Հովհաննեսը, Արեգնի Ս. Աստվածածինը, Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոցը, Գեղանուշ գյուղի Ս. Հռիփսիմեն, Ծավ գյուղի Ս. Գեւորգը, Նորավանքը, Գնդեվանքը: Թեմի տարածքում՝ Գորիսում, Սիսիանում, Եղեգնաձորում, գործում են կիրակնօրյա դպրոցներ, հիմնվել է քարոզչ-մշակութային կենտրոն: Գորիսում Մայր աթոռի Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոնը բացել է ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, գործում են եկեղեցական երգչախմբեր: Սյունյաց թեմն ունի բարեգործական ճաշարաններ, զոհված ազատամարտիկների երեխաների համար գործում է «Սիրաանույշ» բարեգործական ճամբարը:

Լուսավորիչ եկեղեցի

8-րդ դարի վերջերից Տաթեւի վանական համալիրը դարձել է Սյունյաց եպիսկոպոսության աթոռանիստ: 906թ. կառուցվել է վանքի Պողոս-Պետրոս մայր տաճարը, 1067թ.՝ Սբ. Աստվածածին դամբարան-եկեղեցին, 1295թ. Սբ. Գրիգոր եկեղեցին: 1390-1435թթ. Տաթեւի վանքում գործել է Տաթեւի նշանավոր համալսարանը եւ մաճրանկարչության ու գրչության դպրոցը: Այստեղ է գտնվում հայ մեծանուն փիլիսոփա, աստվածաբան Գրիգոր Տաթեւացու դամբարանը: 20-րդ դարի վերջերին վանքի տարածքում եւ շրջակայքում իրականացվել են շինարարական եւ վերականգնողական աշխատանքներ: Վանքը ներկայումս հիմնականում վերականգնված է եւ Սյունյաց թեմի հոգեւոր կենտրոնն է:

Տաթեւի վանք: ...Այստեղ է բացվելու դրախտի դուռը բոլոր այն մեղավորների համար, որոնք հավատով դիմելու են սրան:

Սյունյաց թեմի առաջնորդն է Աբրահամ եպիսկոպոս Սկրտչյանը (1993-ից):

Գրկ. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986: Մկրտչյան Ա., էջեր Սյունյաց աթոռի պատմությունից, Ս. Էջմիածին, 1995: Մաթեւոսյան Կ., Հայաստանի թեմերը (պատմություն եւ արդիականություն), «Էջմիածին», 1998, №2-3:

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հայրապետական հնօրյա նշություն

Հայրապետական այսու հնօրիությամբ որոշում ենք.

ա/ Սյունյաց Թեմում հոգեւոր կյանքի վերակազմակերպման եւ հոգեւոր առաքելության արդյունավետ իրականացման համար առանձնացնել Սյունյաց Թեմի կազմում Սյունիքի մարզը եւ ստեղծել փոխառաջնորդություն:

բ/ Սույն տնօրինությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

Հոկտեմբեր 11.2005թ., ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հայրապետական այսու տնօրինությամբ Հոգ.Տ.Արգար վարդապետ Հովակիմյանին տարվույս դեկտեմբերի 23-ին ազատում ենք Սյունյաց Թեմի Սյունիքի Փոխառաջնորդի պարտականություններից եւ ծառայության կոչում կանգնայի Հայոց թեմում՝ ընդ իշխանությամբ Թեմական Առաջնորդի:

Հոգ.Տ.Յավեն աբեղա Յազիչյանին տարվույս դեկտեմբերի 23-ից նշանակում ենք Սյունյաց Թեմում՝ որպես Սյունիքի Փոխառաջնորդ՝ ազատելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ինտերնետային բաժնում ստանձնած պարտականություններից:

21 դեկտեմբերի 2009թ., ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հայրապետական սրբատառ կոնդակով հիմնվեցին երկու նոր թեմեր

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ Հայրապետական սրբատառ կոնդակով դեկտեմբերի 10-ին Հայաստանում հիմնվել են երկու նոր թեմեր՝ Վայոց թեմը եւ Սավուշի թեմը:

Հայրապետական կոնդակում մասնավորապես ասվում է.

«Գոհություն եւ փառք ենք մատուցում Բարձրյալ Տիրոջը, որ Իր ամենախնամ օրհնության ներքո զորացնում եւ պայծառացնում է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին՝ տերունապատվեր սպասավորությամբ հովվելու մեր ժողովրդին եւ առաջնորդելու Աստվածճանաչության ճշմարիտ ճանապարհով: Մեր Եկեղեցու դարավոր առաքելությունն արդյունավորվել է հոգեւոր-կանոնական նախանձախնդիր ծառայությամբ, բարեպաշտ ժողովրդի հավատավոր ընթացքով, նոր թեմերի եւ համայնքների հիմնումով, եկեղեցական-վարչական կառույցների ազգաշահ գործունեությամբ:

Այսօր, երբ Հայրենի մեր երկրում վեր են հառնում խոնարհված աղոթավայրերը, կառուցվում են նոր եկեղեցիներ, ստեղծվել են նոր համայնքներ ու ծուխեր, հրամայական է դառնում նաեւ եկեղեցավարչական նոր կառույցների հաստատումը: Մեր Սուրբ Եկեղեցու տերունապատվեր առաքելության արգասավորման, եկեղեցավարչական գործունեության առավել լավ կազմակերպման, հոգեւոր սպասավորների ծառայության կանոնակարգման եւ տարածքային վերատեսչությունը արդյունավոր իրականացնելու համար Հայրապետական այսու Կոնդակով Վայոց ձորի մարզի եկեղեցական համայնքներն առանձնացնում ենք Սյունյաց թեմի կազմից, Տավուշի մարզի եկեղեցական համայնքները՝ Գուգարաց թեմի կազմից եւ հոչակում ենք ստեղծումը Վայոց թեմի՝ առաջնորդանիստ եղեգնաձոր քաղաքով, եւ Տավուշի թեմի՝ առաջնորդանիստ Իջեւան քաղաքով»:

Վայոց թեմի առաջնորդի պաշտոնում ծառայության է կոչվել Տ. Աբրահամ եպիսկոպոս Սկրտչյանը՝ ազատվելով Սյունյաց թեմի առաջնորդի պաշտոնից: Սյունյաց թեմի Սյունիքի փոխառաջնորդ Տ. Յավեն աբեղա Յազիչյանը, ազատվելով իր պաշտոնից, նշանակվել է նույն թեմի Առաջնորդական տեղապահ: Իսկ Գուգարաց թեմի Տավուշի փոխառաջնորդ Տ. Թորգոմ վարդապետ Տոնիկյանը ծառայության է կոչվել Տավուշի թեմում որպես Առաջնորդական տեղապահ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին 15 դեկտեմբերի 2010թ.

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին

1897թ. Գորիսում սկսել է գործել ռուսական եկեղեցին, որի լուսակարը մեզ չիաջողվեց գտնել: Եկեղեցին քանդվեց 1926 թվականին: Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է 1897-1904թթ.: Ըստ բաւավոր տեղեկությունների՝ եկեղեցու կառուցումը ղեկավարել է Տիգրան Պողոսյան անուն-ազգանունով մի իտալահայ:

Կառուցման նախաձեռնողները եղել են Մելիք Յուսեֆոյանները: Ժողովրդական հիշողության մեջ պահպանվում են նույնիսկ շինարար վարպետների անունները՝ Հայրապետ, Ալեքսան, Դանիել, Մելիք-Օհանյան եղբայրներ, Հայրապետ Խուրշուդյան, Գրիգոր Տոռոզյան, Հարություն (Աթուն) Քաթանյան եւ այլք:

Եկեղեցին օծվել եւ բացվել է 1904 թվականին:

Այս եկեղեցում է կատարվել Գարեգին Նժդեհի գրոհյան պսակի արարողությունը:

1922 թվականին՝ եկեղեցու փակվելու պահին, քահանա եղել է Տեր Խորեն Մելիք Դաղայանը:

Նորանկախ պետականության հաստատման առաջին իսկ օրերից հարց դրվեց՝ եկեղեցին իր նպատակին ծառայեցնելու: Քաղաքապետ Սուրեն Խաչատրյանի եւ Սյունյաց թեմի ջանքերով ու նախաձեռնությամբ, քաղաքի գլխավոր ճարտարապետ Սեւադա Ջաքարյանի նախագծով 1995թ. սկսվեցին վերակառուցման աշխատանքները: Կառուցվեցին գմբեթը, թմբուկը, գեղարդը, ինչպես նաեւ խորանը, սուրբ սեղանը, մկրտելու նոր ավազանը:

1997թ. հոկտեմբերի 25-ին մեծ հանդիսավորությամբ տեղի ունեցան խաչի օծումն ու տեղադրումը:

1997 թվական, դեկտեմբերի 20: Պատմական հիշարժան տարեթիվ Սյունիքի մարզի՝ առավելապես Գորիս քաղաքի համար: Ժողովրդական տոնախմբության վերածված օրը նշանավորվեց քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու նորոգմամբ, հանդիսավոր պատարագով եւ օծման արարողությամբ՝ Սյունյաց թեմի առաջնորդ Աբրահամ եպիսկոպոս Սկրտչյանի ներկայությամբ:

Պատարագեց Արարատյան թեմի առաջնորդ Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսյանը: Խաչի օծման արարողությունը կատարվեց Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի կողմից:

Տեղի ունեցան պսակի եւ մկրտության արարողություններ:

Եկեղեցու վերաբացմանը ներկա էին ՀՀ վարչապետ Ռոբերտ Քոչարյանը, սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը եւ պաշտոնական այլ անձինք:

Շնորհավորանքի ջերմ ելույթներով հանդես եկան Սյունիքի մազպետ Սուրեն Աբրահամյանը, Գորիսի քաղաքապետ Սուրեն Խաչատրյանը: ■

Հայրապետական հնօրյա նշություն

Հայրապետական այսու հնօրիությամբ որոշում ենք.

ա/ Սյունյաց Թեմում հոգեւոր կյանքի վերակազմակերպման եւ հոգեւոր առաքելության արդյունավետ իրականացման համար առանձնացնել Սյունյաց Թեմի կազմում Սյունիքի մարզը եւ ստեղծել փոխառաջնորդություն:

բ/ Սույն տնօրինությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

Հոկտեմբեր 11.2005թ., ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հայրապետական այսու տնօրինությամբ Հոգ.Տ.Արգար վարդապետ Հովակիմյանին տարվույս դեկտեմբերի 23-ին ազատում ենք Սյունյաց Թեմի Սյունիքի Փոխառաջնորդի պարտականություններից եւ ծառայության կոչում կանգնայի Հայոց թեմում՝ ընդ իշխանությամբ Թեմական Առաջնորդի:

Հոգ.Տ.Յավեն աբեղա Յազիչյանին տարվույս դեկտեմբերի 23-ից նշանակում ենք Սյունյաց Թեմում՝ որպես Սյունիքի Փոխառաջնորդ՝ ազատելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ինտերնետային բաժնում ստանձնած պարտականություններից:

21 դեկտեմբերի 2009թ., ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ «ՍՅՈՒՆԻՔԻ ՍԵՓԱԿԱՆ ՍԵՐՄԱՅԻ» ԱՄՍԱԹԵՐԹ-ՊԱՏԿԵՐԱՆԱՅԻՆ ԵՎԱԹԵՐԹ
Հիմնադիր՝ Բ.Պողոսյան, Ընդհանուր տարեգրությունը՝ 2032
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 00 47 = (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru
Սյունյաց երկիր

ՀՈԳԵՎՈՐ

Վազգեն Առաջինի եւ Գարեգին Երկրորդի այցը Տաթեւ

1989 թվականի ապրիլի 21-29-ը Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի հրավերով Հայաստան էր եկել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Երկրորդը: Այդ ընթացքում նրանք այցելեցին Եղեգնաձոր, Սիսիան, Գորիս, իսկ ապրիլի 27-ին՝ Տաթեւ:

Ազգային զարթոնք

1989 թվականի ապրիլ: Ազգային զարթոնքի մի նոր փուլ էր սկսվում: Մեր ժողովուրդը նախապատրաստվում էր նշելու Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության 74-րդ տարին: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի հրավերով այդ օրերին Հայաստան էր ժամանել նաեւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Երկրորդը:

Երկու կաթողիկոսները միասիր ապրիլի 24-ին եղան Ծիծեռնակաբերդում, իրենց աղոթքը մատուցեցին 1.5 միլիոն նահատակների հոգու խաղաղության համար, էջմիածնի մայր տաճարում սրբազան պատարագ մատուցեցին եւ մասնակցեցին մյուս միջոցառումներին:

Վեհափառը ցանկություն է հայտնում Գարեգին կաթողիկոսի հետ այցելել Տաթեւ:

Դա պատահական իրադրություն էր, քանի որ հայ կաթողիկոսներից վերջինը խրիմյան Հայրիկն էր այցելել Զանգեզուր դեռ դարասկզբին՝ 1903թ.: Արդեն նույնիսկ հողմահարվել է այն հուշայուղը, որ Տաթեւ տանող ճանապարհի ձախ եզրին՝ Հալիձորից քիչ ներքեւ, կանգնեցրել են երախտապարտ սյունեցիները՝ այդ այցը հավերժացնելու, սերունդներին հաղորդելու նպատակով:

Ուրախվեցինք տարի հետո պետք է կրկնվեր այդ պատմական իրողությունը, միայն մի տարբերությամբ: Այս անգամ արդեն Սյունյաց լեռնաշխարհի այցի պետք է գային երկու կաթողիկոսները միասին:

Մյուս կողմից էլ նրանց այցն ուներ նաեւ հոգեբանական նշանակություն: Ժողովուրդը ներքին մղումով, կարծես թե այդպիսի այց էր ուզում, ուզում էր տեսնել ազգի գործիչներին, լսել նրանց խոսքը, առնել խորհուրդ:

...Հյուրերը Սիսիանի սահմանագլուխ հասան ժամը 14-ի սահմաններում, որտեղ բարձրացված են Զանգեզուրի մուտքի դարպասները:

Այստեղից սկսվում եւ այստեղ է վերջանում Սյունիքը:

Որոտանի լեռնանցքի այդ հատվածը ծովի մակերեւույթից գտնվում է 2344 մետր բարձրության վրա: Այստեղից ավելի հաճելի է դիտել Սիսիանը: Շրջանը համարյա ափիդ մեջ է:

Թվում է, թե տաղանդաշատ Համո Սահյանը հենց այստեղ՝ այս բարձրության վրա է թղթին հանձնել իր գողտրիկ բանաստեղծության հետեւյալ տողերը.

Այստեղ սարեր կան սարերի վրա,
Եվ ձորերի մեջ ձորեր կան ձքիմ:
Ազգային տարազով աղջիկներն աղ
ու հացով են դիմավորում նրանց:

Ուխտագնացությանը մասնակցում էին Մայր տաճարի լուսարարապետ Հուսիկ արքեպիսկոպոս Սաֆարյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանը: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Երկրորդին ընկերակցում էին Տաթեւ արքեպիսկոպոս Սարգսյանը, Մեսրոպ արքեպիսկոպոս Աշջյանը, Սուրեն եպիսկոպոս Քաթարոյանը, Բաբկեն աբեղա Չարյանը, Կիլիկիո կաթողիկոսության ազգային կենտրոնական վարչության անդամներ Երվանդ Փամբուկյանը եւ Ոսկեբերան Արզումանյանը:

Հյուրերի հետ էր նաեւ ամերիկահայ մեծահարուստ Վահագն Հովհաննյանը՝ իր տիկնոջ հետ:

...Կես ժամ հետո շքախումբը շրջկենտրոնի եկեղեցում էր: Շատերն առաջին անգամ էին տեսնում այդ հոյակերտ տաճարը: Զարմանում ես, թե մեր նախնիներն այսքան հեռու, աշխարհից այսքան կտրված այս վայրում VI-VII դարերում ինչպես են կարողացել կերտել այդ կառույցը: Այն քիչ բաները էր տարբերվում էջմիածնի սուրբ Հռիփսիմե տաճարից:

Վեհափառները մտան եկեղեցի: Քիչ հետո բարձրախոսից ամբողջ շրջապատում տարածվեց երկու հովվապետների աղոթքը.

«Մարդասեր Աստված, Ստեղծիչ տիեզերանց եւ Դատավոր արդար, տուր աշխարհիս խաղաղություն եւ ի մարդիկ հաճություն...»:

Հոգեւոր հայրերը Սուրբ էջմիածնի եւ Գարեգին Երկրորդի խաչերն են նվիրում երեխաներին, զրուցում նրանց հետ, «ստուգում» նրանց հոգեւոր գիտելիքները: Հենց եկեղեցում, շնորհալի երեխաների ուժերով կազմակերպվել էր ազգային երգի խմբակ:

...Սյունյաց թեմի առաջնորդ Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանի խոսքից հետո հանդես եկան երկու կաթողիկոսները: Առաջինը խոսեց Վազգեն Առաջինը.

– Այստեղից վաղը կգնամ Տաթեւի վանք: Եվ իրապես հիացած եմ ձեր հայրենի աշխարհով:

Հպարտ կարող եք լինել ձեր լեռներով, ձեր աղոթատեղով, ձեր հաջողություններով, հաջողություններ, որոնք նկատելի են թե՛ գյուղատնտեսության, թե՛ արդյունաբերության, թե՛ շինարարության եւ թե՛ մշակույթի բնագավառներում: Այստեղ տեսնում եմ մեծ թվով աշակերտներ: Հավատացած եմ, որ նրանք կդառնան մեր սերնդի արժանավոր հաջորդները:

...Եվ այս բնության գրկում հիշեցի մի հին պատմություն: Ասված, երբ ստեղծեց աշխարհը, պատրաստվում էր բաժանել երկրագունդը ըստ ազգությունների: Լուր ուղարկեց, որ գան բոլոր ազգերը եւ այս աշխարհից վերցնեն իրենց բաժինը: Եկան ֆրանսիացիք, գերմանացիք, ռուսները եւ այլն: Ասված իր առատաձեռնությամբ բոլորին հող տվեց: Երբ արդեն երկրագունդի ամբողջ մակերեսը բաժանված էր, Ասված ցանկացավ հանգստանալ: Հանկարծ հեռվից մի աղմուկ բարձրացավ: Ինչ-որ մարդիկ են գալիս: Ասված զարմացավ, թե ովքեր են այսքան ուշացումով գալիս: Եկան: Ասված հարցնում է.

– Դուք ո՞վ եք:

Նրանք ասում են.

– Մենք հայեր ենք: Ինչ-որ պատճառով ուշացանք: Ներող եղեք: Եկանք, որպեսզի մեր բաժինը տաք:

Այդժամ Ասված պատասխանեց.

– Սիրելի զավակներս, ես այլեւս բաժանելու բան չունեմ: Ի՞նչ անեմ:

Քիչ մտածելուց հետո խղճահարված ավելացրեց.

– Լավ, հայերիդ կտամ այն բաժինը, որ պահել էի ինձ համար:

Այդ պատմառով է, որ Հայաստանը կոչվում է «Երկիր դրախտավայր»:

Դեպի Տաթեւ

...Հաջորդ առավոտյան հյուրերը մեկնեցին Տաթեւ:

Ճանապարհին այցելեցին նախնադարյան բնակատեղին՝ «Զորաքարերը»:

Հուշայուն այցի առթիվ

...Կաթողիկոսների այցից հետո սիսիանցիների մեջ միտք ծագեց. հավերժացնել, պատմությանը հանձնել այդ ուխտագնացությունը: Չէ՞ որ Խրիմյան Հայրիկի այցն ավելի շուտ հիշվում է այդ առթիվ տեղադրված հուշայուսնով: Սիսիանի մասնագետները սկսեցին աշխատել նախագծի վրա: Ընդունվեց ինքնուսվարպետ Վաղինակ Վարդանյանի նախագիծը:

Սյունյաց հոգեւոր թեմի առաջնորդ Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանն առաջարկեց միհչեւ սկսելը այն ցույց տալ Վեհափառին: Այդպես էլ արվեց:

Վեհարանում կաթողիկոսը ջերմ ընդունեց:

Բացեց հուշայան գծագիրը: Սկսեց ուշադիր զննել այն: Գլխով հավանության նշան արեց:

– Հաջողված է:

Հետո հայացքը թեքեց գծագրից եւ ասաց.

– Բարձրությունը ինչքան ուզում եք արեք, բայց կանեք այնպես, որ Տաթեւ այցի առթիվ Խրիմյան Հայրիկի հուշայսյունից բարձր չլինի:

Ուղիղ հինգ ամիս հետո՝ սեպտեմբերի 26-ին, տեղի ունեցավ հուշայսյան բացումը, որին մասնակցելու էին եկել նաեւ Ռումինիայի եւ Բուլղարիայի հայոց միացյալ թեմի առաջնորդ Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը, Նյույորքից՝ Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանը, Սյունյաց թեմի Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանը, Սերովբե աբեղա Իսախանյանը, հոգեւոր եւ աշխարհիկ այլ անձինք:

Բացման խոսքից հետո ելույթներ ունեցան Սյունյաց թեմի առաջնորդ Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանը, Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը: Վերջինս իր ելույթում մասնավորապես նշեց.

«Ես կկարծեմ, որ այս տխուր, այս ալեկոծ օրերում Ամենայն Հայոց կաթողիկոսի միակ մխիթարանքը պիտի ըլլա Սյունյաց աշխարհի այս պարգեւը՝ իր ծննդյան, իր գահակալության տարեդարձներուն առիթով: Այս հուշարձանը Սյունյաց աշխարհի բազմաթիվ, բազմահազար հուշարձաններու կողքին անդրանիկ հուշարձանն է մեր աղետեն՝ երկրաշարժեն հետո՝ որպես կենդանության, պայծառության եւ հավերժության խորհրդանիշ»:

...Հուշայուսը բացվում է: Նրա գագաթին ամրացված է արնակարմիր խաչը՝ որպես խորհրդանիշ հայ ժողովրդի հերոսական պատմության, հայոց հավատքի հավերժության: Հուշայան վրա արձանագրված է. «Երախտապարտ սիսիանցիներս կանգնեցրինք այս հուշայսյունն ի նշանավորումն հայրապետական օրհնաբեր այցելության Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի՝ ընկերակցությամբ Գարեգին Բ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի

Ի թվին հայոց «ՌՆԼԸ»:

Հենգել Առաքելյան, 1991թ.


Խրիմյան Հայրիկ

Հայ առաքելական եկեղեցու 125-րդ կաթողիկոս (Ամենայն Հայոց կաթողիկոս է օծվել 1893-ի սեպտեմբերի 26-ին): Վերջին անգամ Գորիս է այցելել թվականին:

Խրիմյան Հայրիկի այցը Տաթեւ

Տաթեւի հոգեւոր կյանքում նշանակալից երեւույթ էր Հայոց Հայրիկի՝ կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցի Խրիմյանի (կաթողիկոս՝ 1892-1907թթ.) 1903թ. այցը Տաթեւ: Անաջին անգամ չէր, որ Հայոց կաթողիկոսն այցելուում էր Սյունիք, բայց Խրիմյան Հայրիկի փառքը ժողովրդի մեջ անհնախադեպ էր, եւ նա Գորիսում արժանանում է ամենաջերմ ընդունելության, կատարում է Մեսրոպ արքեպիսկոպոսի խնդրանքը եւ այցելում նրա ծննդեղեն, ճաշակում նրա մոր եփած կուլուկը: Յուրաքանչյուր ընթացքում մայրը խնդրում է, որ Խրիմյան Հայրիկը որդուն լավ նայի՝ ձեռքն իր որդու վրա պահի: Մայրական այդ խնդրանքին Հայրիկը պատասխանում է հուսալորով. «Քո որդին այնքան բարձր է կանգնած, որ իմ ձեռքը նրա գլխին չի հասնի»: Խրիմյան Հայրիկի՝ Տաթեւ այցելության հիշատակին ճանապարհին՝ Հալիձորի անտառում, կանգնեցված է մի հատնտ հուշաքար (լուսանարում): Հուշաքարի վրա արձանագրված է. «Հալիձորցի: Խաչս յիշատակ Հայոց Հայրիկ ՏՏ կաթողիկոսի 1903թ. Խրիմյան Հայրիկի ՍԲ Տաթեւ: Աստուած ողորմած լինի»:

Ամենայն հայոց կաթողիկոսները Գորիսում

Գարեգին Բ

Ծայրագույն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց: Հայ առաքելական եկեղեցու 132-րդ կաթողիկոս 1999-ից: Վերջին անգամ Գորիս է այցելել 2010 թվականի հոկտեմբերի 16-ին:

Գարեգին Ա

Հայ առաքելական եկեղեցու 131-րդ կաթողիկոս (1995-1999թթ.): Վերջին անգամ Գորիս է այցելել 1997 թվականի դեկտեմբերի 20-ին, իսկ 2001թ. մասնակցել է Կապանի Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու նավակատիքին:

Վազգեն Ա

Հայ առաքելական եկեղեցու 130-րդ կաթողիկոս (1955-1995թթ.), ՀՀ ազգային հերոս: Վերջին անգամ Գորիս է այցելել 1989 թվականին:

Գորիս են այցելել Հովհաննես Ե Դրախանակերտցի կաթողիկոսը (906թ.) եւ Ամենայն հայոց կաթողիկոս (1734-ից) Աբրահամ Կրետացին 1736 թվականին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԴԱՍՏԱՊԱՆԻ «ՀԱՅՈՒՄ» ՄՇԱԿՈՒՅԹ
ԱՄՍԱԹԵՐԹ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՍՑԷ՝ թ.ԿՊՈՒՍ, ԵՐԵՎԱՆ-0010, 20/32
ՀԵՌԱԽՕՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Այսուհետ աշխարհ» ՍՊԸ ■

№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Գորիսի բարբառը. ներածություն

Հատված Ա.Մարգարյանի «Գորիսի բարբառը» աշխատությունից

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Գորիսի բարբառը պատկանում է ում ճյուղին եւ հայերենի ներկայումս կենդանի ու մեծ հարաբերում ընդգրկող բարբառներից է. խոսվում է Գորիսի շրջանի բոլոր գյուղերում ու Գորիս քաղաքում, ինչպես նաեւ հարեւան Սիսիանի ու Ղափանի շրջանների սահմանամերձ որոշ գյուղերում: Ուրեմնեւ՝ Գորիսի բարբառը խիստ տեղայնացված բարբառ է ու գտնվում է որոշակի աշխարհագրական միջավայրում: Այն հաղնկնում է պատմական Այուձայց աշխարհի Հաբանդ գավառին՝ ներառնելով նաեւ այնպիսի բնակավայրեր, որոնք պատկանել են մերձակա Ծղուկ(ք) կամ Բաղք գավառներին: Այդ մասին մեզ հավաստի տեղեկություններ է հաղորդում 13-դդ դարի ներհուն պատմիչ Ստեփանոս Օրբելյանը: Իր «Պատմություն նահանգին Սիսական» նշանավոր գրքում ներկայացրած Տաթեւի վանքին տրվող հարկի հին ցուցակում («ըստ հին սահմանին») նա Հաբանդի գավառի համար հիշատակում է 59 գյուղ, որոնցից 8ը՝ Խնձորեսկ, Տեղ, Գորու(>Կորու), Գորայք («Գորիս), Խոտ, Հալէ («Հալիծոր), Խոնածախ («Խնածախ), Շնոյ հերք («Շինուհայր), այսօր էլ գոյություն ունեն Գորիսի շրջանում: Բացի դրանից, Ծղուկք եւ Բաղք գավառներին պատկանող գյուղերի շարքում Ստ.Օրբելյանը հիշատակում է նաեւ այնպիսի գյուղեր, որոնց մի մասը Տաթեւ, Հարժիք («Յայցի, նոր անվանումով՝ Հարժիս), Քարուլց (= Քարահանից), Շոռնոխոյ (= Շոնուխու), այսօր նույնպես Գորիսի շրջանի մեջ է մտնում, իսկ մյուս մասը թեեւ գտնվում է Սիսիանի (Լոր, Բռնակոթ, Բռուլիք=Բռնուլիս եւ այլն) կամ Ղափանի (Սաճնավաբ = Տանձավերդ) շրջաններում, բայց խոսում է դարձյալ Գորիսի բարբառով: Այս բոլորը մի կողմից եթե նույն այդ բարբառի ընդգրկած պատմական սահմաններն են տեղաբաշխ ու ուրվագծում, ապա մյուս կողմից նրա հնագույն կյանքը ու գոյությունն են հավաստում: Գորիսի բարբառը հայերենի հեռավոր ժամանակներից եկող բարբառներից է, որի հիմնական բնորոշում էլ հանդիսացել է Այուձայց աշխարհի Հաբանդ գավառը՝ դրան սահմանակից Ծղուկք ու Բաղք գավառների մեջ մտնող մի շարք բնակավայրերով: Այստեղից չպետք է եզրակացնել, թե դեռեւս վաղ շրջանում Գորիսի բարբառը կտրված է եղել շրջակա գավառների ու վայրերի խոսվածքներից եւ փոխադարձ հարաբերության ու նեղդրոնության մեջ չի գտնվել նրանց հետ:

Ամենեւին. Այուձիքը, ինչպես հայտնի է, տարբեր ժամանակներում տարբեր տարածություններ ընդգրկմամբ սահմանակցվել է Այրարատ, Վասպուրական, Արցախ, Ուտիք եւ Գուգարք աշխարհներին: Բայց թե աշխարհագրորեն եւ թե՛ տնտեսական-հասարակական կյանքի տեսակետից նա առավել սերտ ու ամմիջական կապեր ու շփումներ է ունեցել Այրարատի եւ հատկապես Արցախի (Ղարաբաղի) հետ: Դա էլ բնականաբար ու անխուսափելիորեն իր համապատասխան արտացոլումն է գտել այն «լեզուների» մեջ, որոնցով վաղ ժամանակներում խոսել են Սյունիքի, Արցախի եւ Այրարատի բնակիչները: Այս հանգամանքով են պայմանավորված, անշուշտ, մի կողմից Արցախի (Ղարաբաղի), մյուս կողմից Արարատյան բարբառների եղեւնամած լեզվական այն բազմաբնույթ ընդհանրություններն ու աղերսները, որ արտահայտված ենք տեսնում նրանց թե հնչյունական, թե ձեւաբանական եւ թե բառապաշարային համակարգերի մեջ: Տվյալ դեպքում, սակայն, չպետք է անտեսել պատմական մի քանի իրողություններ, առաջին՝ այն, որ հայոց լեզվի բնականոն զարգացման ընթացքում եւ նրան զուգընթաց համապատասխան կերպարանափոխություններ են կրել նաեւ նշված երեք աշխարհների ժողովուրդների խոսվածքները կամ բարբառները: Երկրորդ այն, որ Սյունիքը եւս ոչ Հայաստանի հետ միասին բազմցս ենթարկվել է օտար նվաճողների, մոնղոլաթաթարական ու թուրքական բարբարոսների ասպատակություններին, մի համեմատատ ամենամեծ ընդհանրությունները է երեւան բերում հեռց դրանց (գլխավորապես Ղարաբաղի) նկատմամբ: Այսքանից ինքնըստինքյան հետեւում է, որ Գորիսի բարբառը իր ընդգրկած որոշակի սահմաններով, պատմական Սյունիքի լեզվի կամ բարբառի օրգանական շարունակությունն է եւ, իբրեւ այդպիսին, ոչ թե ստորադասվում է Ղարաբաղի կամ Արարատյան բարբառին, այլ ունի տեղական բարբառներին բնորոշ իր յուրահատուկ հնչյունական համակարգը, բառային ֆոնդն ու քերակաբական կառուցվածքը եւ ամենայն իրավամբ էլ մի ինքնուրույն ու ինքնատիպ բարբառ է:

***

Գորիսի բարբառը սովորաբար Ղարաբաղի բարբառի մեջ է առնվել եւ դիտվել իբրեւ դրա ենթաբարբառներից մեկը: Նման մոտեցման համար հիմք են ծառայել այն մեծ ընդհանրությունները, որ իրոք գոյություն ունեն այդ երկու բարբառների միջեւ: Սակայն դրանք միաժամանակ երեւան են հանում նաեւ մի շարք էական տարբերություններ, որոնք դրսեւորվում են թե՛ հնչյունական, թե ձեւաբանական եւ թե՛ բառապաշարային համակարգերի մեջ: Այդ բոլորի քննությունն ու լուսաբանությունը պատմական բարբառագիտության բուն խնդիրը համարելով՝ մենք այստեղ կբավարարվենք միայն նշելով որոշ տարբերություններ: Գորիսի եւ Ղարաբաղի բարբառների իրարից ամենից առաջ զգալապես տարբերվում են հնչյունական-հնչյութաբանական մի շարք իրողություններով.

ա) Կատարված ուսումնասիրությունների համապատասխան Ղարաբաղի բարբառը ունի 10-14 ձայնավոր հնչյուններ՝ ա, ա, է, ը է, ի, օ, ու, օ, ու, այլեւ՝ ա, ը, ը, ի՝ իսկ Գորիսի բարբառը դրանցից միայն ճանաչում է հնձ՝ ա, ա, ա, օ, օ, ու, ու, է, ի, ը:

բ) Ղարաբաղի բարբառում կան երկբարբառներ, որոնց թիվը 3-ից (էյ, օյ, ուա) հասցվում է 7-ի (ըէ//ըէ, ըի, ըօ, ուէ, ուի, ոււ, օը), մինչդեռ Գորիսի բարբառում դրանք իսպառ բացակայում են:

գ) Ղարաբաղի բարբառը հարուստ է քմայիՀ գ (օր.՝ գուրգ/գիրկ, տեգ\\տեգ/տիկ), կ (օր. կօղ/գող, կալ/գալ), ք (օր. ծաք՝ի/ծագեւ, ըրիք՝նակ/արեգակ, քըրէք<քրիք), հ (օր. ըրիհնակ< արեգակն), այլեւ՝ դ (հանդ/անդ), լ ((լու/լու, ծիլի-ածելի), ծ (կածակ\\կյածակ/կայծակ) եւ այլն բաղաձայն հնչյուններով, այնինչ Գորիսի բարբառում դրանցից առկա են եւ իբրեւ հնչյունույթեր եւ ընբռնվում միայն գ,յ-ն, կ,յ-ն ու ք,յ-ն, որոնք գործածության են ելդրտներ են ընդգրկում եւ բառի բոլոր դիրքերում չէ, որ հանդես են գալիս:

դ) Չայնավորները շատ հաճախ կրում են տարբեր տեսակի փոփոխություններ. հմմտ. պէնգ-պան (բան), պէդց-պարց (բարձ), տէրտակ-տարտակ (դատարկ), ծեղաց-ցաղաց (<ջրաղաց), մագ-մագ (մագ), բառքառ (<թառ), ամըէս-ամիս (ամիս), պամըէր-պամիր (պամիր), խըսամըէ-խըսնամի (<խմամի), սամըէ-սամի (<սամի), տէղէմ-տէղին (դեղիՀ), ծաղէգ-ծաղիկ (ծաղիկ), վէգ-վիգ (</վիգ), կօրէ-կարի (գարի), մուռք-մէք (<մնք), վըէսկէ-վօսկի\|վէսկի (<ոսկի) եւ այլն եւ այլն:

Գորիսի բարբառը Ղարաբաղի բարբառից տարբերվում է նաեւ ձեւաբաանական մի շարք իրողություններով. այսպես.

ա) Եթե Ղարաբաղի բարբառում բառերի խորք է նման դեբբայաձեւը, եւ դրա փոխարեն այն գործ է ածում սովորական ապառնի դերբայը, ինչպես՝ խոսալու վէմ…, խոսալու վի…, լըսէլու վէմ. լըսէլու վի… եւ այլն (տե՛ս $ 292):

ե) Եթե Ղարաբաղի բարբառում «եմ» օժանդակ բայը սովորաբար ըմ, ըս, ա, ընք, ըք, ըն, ի, իր, ար, ինք, իք, ին, ապա Գորիսի բարբառում սովորաբար է մ, ես, ա\|ա, է(ն) ք, ք, էն, ի, իր, էր, ի(ն)ք, իք, ին ձեւերով է հանդես գալիս (տե՛ս $ 304) :

զ) Եթե Ղարաբաղի բարբառում հարկադրական եղանակը հաճախ կազմվում է պիտի (պիտիվ) եղանակիչի նաեւ բէդմա\|պէտմա, պէդմա ձեւերով, ապա Գորիսի բարբառում այն ընդհանրապես կազմվում է կամ պիտի\|պէտի, կամ պէտէ, պէտես, պէտի-պէտէ(ն)ք, պէտեք, պէտէն, պիտի… պէտի(ն)ք… եղանակիչներով (տե՛ս $ 311):

է) Եթե Ղարաբաղի բարբառը արգելական հրամայականի համար գործածում է ետադաս մըբէ-մըքք (մըքռաաա

ՀԵՌԱՄԻՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՍՅՈՒՆԻՔԻ ՍԵՐՄԱՐԿ» ԱՌԱՔԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ-ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
Գնագին՝ թանգարան, ՀԱՅԱՍՏԱՆ, 2003թ.
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

Միջազգային

Գորիսը՝ Պարտավ-Դվին եւ Թավրիզ-Պարտավ ճանապարհների հանգուցակետ

Հայաստանի պատմության ատլաս, Ա մաս, էջ 65: Սրվար գծով շեշտված են 10-11-րդ դարերի ճանապարհները՝ Գորիսով անցնող:

Լուսանկարը՝ Գարեգին Հարությունյանի

Գորիսի քարավանատներից մեկը Ծակերի ձորի եւ Ղաթրինի ձորի արանքում:

Լուսանկարը՝ Վարդան Միհրայանի

Հին Հարժիքի կամուրջը Որոտան գետի վրա, 14-րդ դար, Տաթեւը Պարտավ-Դվին մայրուղուն միացնող ճանապարհ:

Լուսանկարը՝ Սերգո Տոնոյանի

Քարվանսարա Հարժիսի մերձակայքում՝ Պարտավ-Դվին ճանապարհի վրա (14-րդ դար):

1900-ական թվականներ, Գորիսի շուկայի մոտ: Լուսանկարը տրամադրել է Գորիսի երկրագիտական թանգարանը:

Ցից քարը՝ Հարժիսի մոտակայքում՝ Պարտավ-Դվին ճանապարհի վրա:

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԵՌԱՄԻՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՍՅՈՒՆԻՔԻ ՍԵՐՄԱՐԿ» ԱՌԱՔԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ-ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
Գնագին՝ թանգարան, ՀԱՅԱՍՏԱՆ, 2003թ.
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մի քանի տեղանունների ծագման մասին

Տեղանունների պատմաաշխարհագրական բառարաններից բացի՝ մեծ կարեւորություն են ներկայացնում նաեւ լեզվաբանական-ստուգաբանական բնույթի բառարանները, որոնց ստեղծման ուղղությամբ, սակայն, մեզանում դեռեւս բավարար աշխատանք չի կատարված: Դա բացատրվում է, անշուշտ, օբյեկտիվ ու սուբյեկտիվ դժվարություններով ու բարդություններով:
Տեղանունների լեզվաբանական-ստուգաբանական լիարժեք բառարան, հասկանալի է, կարող է ստեղծել միայն այնպիսի մեծ կարողությունների տեր ստուգաբան-լեզվաբանը, ինչպիսին, ասենք, Հր.Աճառյանն էր: Այստեղ էլ նշենք, որ ինքը՝ Աճառյանը, կյանքի վերջին տարիներին ձեռնամուխ էր եղել հենց նման բառարան ստեղծելու գործին, բայց մահը թույլ չտվեց իրագործելու այդ նվիրական ծրագիրը, եւ այդպիսով շատ ու շատ բաներ մեզ համար մութ ու անհայտ մնացին...
Բայց սա էլ, իհարկե, ավելի առաջնահերթ է դարձնում խնդիրը եւ պահանջ առաջադրում, թերեւս հանրական ու միասնական ուժերով զբաղվելու հայոց տեղանունների ստուգաբանությամբ եւ ըստ կարելվույն բացատրելու նրանց ծագումը, որ, անշուշտ, ոչ միայն գիտական-լեզվաբանական, այլեւ պատմական, աշխարհագրական, ազգագրական եւ այլ արժեք ու կարեւորություն է ներկայացնում: Այդ նկատառումով սույն հոդվածում փորձ ենք անում պարզաբանել մի քանի տեղանունների ծագումը, որոնք Հայկական ՍՍՀ Գորիսի շրջանին են վերաբերում:

1. ԳՈՐԻՍ

Գորիս տեղանվան, որով ներկայումս կոչվում են Հայկական ՍՍՀ Գորիսի շրջանը, դրա կենտրոնը Գորիս քաղաքը, հին Գորիս գյուղը եւ Որոտան գետի վտակներից մեկը (իմա՝ Վարարակը), ծագման մասին այլատեսակ կարծիքներ են հայտնվել:

«Հայկական սովետական հանրագիտարանի» հավաստմամբ՝ «Գորիսը որոշ ուսումնասիրողներ կապում են Ստեփանոս Օրբելյանի (XIII դար) հիշատակած Գորու եւ Գորայք գյուղերի անուանների, ոմանք էլ՝ այժմյան Գորիսից 2 կմ արմ. գտնվող Կյուփեր կոչված վայրի հետ»: Դա այդպես են ներկայացնում նաեւ աշխարհագրագետներ Հ.Ղ.Գրգեարյանը եւ Ն.Մ.Հարությունյանը՝ նշելով միաժամանակ, որ Գորիս քաղաքն իր «անվանումը ստացել է (Վարարակ) գետի ձախ ափին գտնվող Գորիս (Հին Գորիս, Կյորես) գյուղից»:

«Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարանի» հեղինակակից Ստ. Մելիք Բախշյանն էլ գտնում է, որ «Գորիս անունը չի ստուգաբանված: Ժողովուրդն (՞) այն երբեմն (sic) բխեցնում է ռուսերեն «гора» (լեռ) բառից, որ սխալ է»: Գորիս տեղանվան մասին նաեւ այն կարծիքն է հայտնվել, որ առաջ է եղել «Գորայք նախավոր ձեւի՝ Գորայս հայցականից Գորէս> Կյորէս (=Գորիս) միանգամայն օրինաչափական հնչյունափոխական ընթացքով»:

Այսպիսով՝ Գորիս տեղանվան ծագման մասին հայտնվել են մեծ մասամբ ժողովրդական ստուգաբանության բնույթ կրող կարծիքներ:

Արդ՝ ինչի՞ց է առաջ եկել Գորիս տեղանունը, եւ ո՞րն է եղել նրա նախավոր ձեւը: Փաստերը ցույց են տալիս, որ Գորիս տեղանունը կապվում է իսկապես XIII դարի նշանավոր պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» (= «Սյունիքի պատմություն») գրքում հիշատակված Գորայք գյուղի անվան հետ եւ այլ բան չէ, քան հենց դրա Գորայս հայցականի հնչյունափոխական արտահայտությունը:

Դա հաստատվում է նախ պատմական իրողությամբ: Ստեփանոս Օրբելյանը Սյունիքի 12 գավառների եկեղեցու հարկացուցակում Գորայքը ներկայացնում է իբրեւ ներկայիս Գորիսի շրջանին համընկնող Հաբանդ գավառի 59 գյուղերից մեկը, որը եւ Տաթեւի վանքին 10 բեռ հարկ է վճարել:

Այսպիսով պարզ է, որ Հաբանդ գավառը (ներկայիս Գորիսի շրջանը) XIII դարում ունեցել է Գորայք անունով գյուղ, որը ոչ թե ոչնչացել է հետագայում, այլ գնալով աճել է ու մեծացել: Գորայք տեղանվան Գորայս ձեւից Գորիս անվանման ծագումը հաստատվում է նաեւ լեզվաբանորեն. Գորիսի բարբառին հատուկ հնչյունափոխական այն օրենքով, ըստ որի՝ բառասկզբի Գ ձայնեղը խլանում եւ Կ-ի կամ Կյ-ի, իսկ բառամիջում այ երկբարբառը է-ի (հմմտ. գալ>կալ>||կյալ\, գարի>կարի | Կյարի, գաւաթ > կավաթ || կյավաթ, գող>կօղ || Կյօղ, գոմ>կում// կյում…հայր>հէր, հայս>հէս, եղբայր>խախէր, տղայք>տղէք || տղէրք...) է վերածվում, Գորայս հայցականից առաջ է եկել Կորէս (<Կօրէս || Կյօրէս) ձեւը, որը եւ հանդիպում է դեռեւս XVII դարում «ՎէՏտարանի մը հիշատակարանի մեջ», ուր գրված է «Ի յերկիրս Չագաձոր, ի գեօղս որ կոչի Կորէս, կը յիշուին Ս. Գրիգոր եւ Ս. Աստուածածին եկեղեցիներ. 1667»:

Այնուհետեւ Գորայք տեղանվան Գորայս հայցականից առաջ եկած նույն այդ Կորէս (>Կօրէս || Կյօրէս) ձեւն ընդհանուր տարածում է գտնում եւ ժողովրդի բերանում կիրառվում մինչեւ այսօր: Այսքանով, սակայն, ամեն ինչ չի ավարտվում. Կորէս (>Կօրէս || Կյօրէս) ժողովրդաբարբառային ձեւը ուշ ժամանակներում (XIX դարում) բառասկզբի խուլ կ-ն ձայնեղ գ-ով, իսկ է-ն էլ ի-ով փոխարինվելով առաջ է բերում Գորիս անվանումը, որ գործ է ածվում գրական խոսքում, ինչպես որ դա մատնանշել է Ակսել Բակունցը «Կյորես» հիսաքանչ ստեղծագործության մեջ:

Այսպիսով, որ Գորիս (<Գորէս<Կորէս) տեղանունն առաջ է եկել Գորայք տեղանվան Գորայս հայցականի ձեւից, ոչ մի կասկած չի հարուցում: Հայերենում քիչ չեն այն դեպքերը, երբ ոչ միայն հասարակ, այլեւ հատուկ անունների հոգնակի հայցականը ինքնուրույն բառային-բառույթային արժեք է ստանում եւ գործածվում իբրեւ բառի ուղիղ ձեւ. հմմտ., օրինակ, չորք-չորս, դուրք-դուրս, հոգք-հոգս…, Բնունիք-Բնունիս, Մասիք-Մասիս, Հարժիք-Հարժիս, Վարդենիք-Վարդենիս եւ այլն:

Այսքանից հետո մնում է պատասխանել մի այլ հարցի. ինչի՞ց է առաջ եկել Գորիս անվան համար հիմք ծառայած նախավոր՝ Գորայք տեղանունը: Պետք է ենթադրել, որ դա, ածանցավոր (գորայ+ք) բառ է, մի ամբողջական տոհմի (գորաների) անվանում է եղել եւ ժամանակի ընթացքում վերագրվել է այն տեղին, որտեղ նրան պատկանող մարդիկ են բնակվել: Սա էլ, ի դեպ, ցույց է տալիս, որ պատմական փաստերին դեմ են գնացել եւ սխալ են վարվել այն մարմինները, որոնք Սիսիանի շրջանի բարձրադիր գյուղերից մեկը (ճախկին Բազարչայը) Գորայք են անվանել:

2. ՋԱՆԳԵԶՈՒՐ

Ջանգեզուր անվանք, ինչպես հայտնի է, կոչվում է Հայաստանի այն բնաշխարհը, որը «իր մեջ ընդգրկում է ՀՍՍՀ Գորիսի, Դափանի, Մեղրու եւ Սիսիանի վարչական շրջանները»: Աշխարհագրական մեծ տարածքի վերաբերող այդ տեղանվան ծագումը ստույգ պարզ չէ, եւ նրա մասին նույնպես տարբեր կարծիքներ են հայտնվել: «Ջանգեզուր տեղանունն, – տեղեկացնում է Հայկական սովետական հանրագիտարանը, – ավանդաբար ստուգաբանել են կապելով հայկական Չագիկ նահապետի տիրույթ Չագեծորի կամ Չագկաձորի («Չագերի ձոր») անվան ձեւափոխումների կամ հինավուրց մի վանքի վիթխարի զանգի ուժեղ ձայնի ստեղծած տպավորության հետ: Ջանգեզուրը համարվել է նաեւ մ.թ.ա. VII դ. այստեղ ներխուժած սկյութացիների (սակերի) անվան փոփոխված ձեւ (սակ-ձագ-Չագեձոր-Ջանգեզուր)»:

Ջանգեզուր տեղանվան, որ հանդիպում է մի շարք Ջանկեզոր, Ջանկեազուր, Ջանկէզուր, Ջանկիզուր, Զէնգեզուր եւ այլն ձեւերով, ծագմանն անդրադարձել են որոշ հետազոտողներ ու բառարանագիրներ:

Ջանգեզուր տեղանվան ծագման հարցով առաջինը զբաղվել է Ղեւոնդ Ալիշանը, իր «Սիսական» պատկառազդու աշխատության մեջ հայտնելով այն կարծիքը, որ Ջանգեզուր տեղանունը այլ բան չէ, քան Սյունյաց Չագ(իկ) նահապետի անվանը կազմված Չագաձոր || Չագեձոր տեղանվան աղավաղված ձեւը, որը եւ առաջ է եկել ուշ ժամանակներում: Այսպես նա գրում է. «Ջանկեազօր կամ Ջանկիզուր անան, յորոյ անուն գաւառս, յայտ առնէ զՉագեձորն հին…», եւ. «Երբ եւ յումմէ կարգեցաւ սա ի գլխաւորս ի շէնս կողմանցս եւ էառ կոչումն Ջանկեազօր, յաւուրս իշխանութեան Պարսից եւ Թաթարաց, ոչ ունիմ ասել»:

Ղ.Ալիշանի կարծիքը հավանական է համարել նախ ազգագրագետ Երվանդ Լալայանը: Նշելով, որ «Ջանգեզուր» անունն, ըստ Հայր Ալիշանի, ծագել է Չագեձոր անվան աղավաղումից, իսկ սա՝ Չագ նահապետի անունից», նա, սակայն, կարծում է, թե «Չագեձոր խոսքն էլ հառաջացել է ոչ թե Չագ նահապետի, այլ «ծակերի ձոր» անունից, որովհետեւ այժմս էլ, Գորիսից քիչ բարձր գտնվող ձորը, ուր եղել է ամենահին բնակությունը, կոչվում է «ծակերի ձոր», այդտեղ գտնվող բազմաթիվ «ծակեր»-արհեստական քարայրի պատճառով»:

Բառարանագիր Սուքիաս էփրիկյանը, հիշատակելով այս կարծիքը, ավելի հիմնավոր է տասխանել մի այլ հարցի. ինչի՞ց է առաջ եկել Գորիս անվան համար հիմք ծառայած նախավոր՝ Գորայք տեղանունը: Պետք է ենթադրել, որ դա, ածանցավոր (գորայ+ք) բառ է, մի ամբողջական տոհմի (գորաների) անվանում է եղել եւ ժամանակի ընթացքում վերագրվել է այն տեղին, որտեղ նրան պատկանող մարդիկ են բնակվել: Սա էլ, ի դեպ, ցույց է տալիս, որ պատմական փաստերին դեմ են գնացել եւ սխալ են վարվել այն մարմինները, որոնք Սիսիանի շրջանի բարձրադիր գյուղերից մեկը (ճախկին Բազարչայը) Գորայք են անվանել:

2. ՋԱՆԳԵԶՈՒՐ

Ջանգեզուր անվանք, ինչպես հայտնի է, կոչվում է Հայաստանի այն բնաշխարհը, որը «իր մեջ ընդգրկում է ՀՍՍՀ Գորիսի, Դափանի, Մեղրու եւ Սիսիանի վարչական շրջանները»: Աշխարհագրական մեծ տարածքի վերաբերող այդ տեղանվան ծագումը ստույգ պարզ չէ, եւ նրա մասին նույնպես տարբեր կարծիքներ են հայտնվել: «Ջանգեզուր տեղանունն, – տեղեկացնում է Հայկական սովետական հանրագիտարանը, – ավանդաբար ստուգաբանել են կապելով հայկական Չագիկ նահապետի տիրույթ Չագեձորի կամ Չագկաձորի («Չագերի ձոր») անվան ձեւափոխումների կամ հինավուրց մի վանքի վիթխարի զանգի ուժեղ ձայնի ստեղծած տպավորության հետ: Ջանգեզուրը համարվել է նաեւ մ.թ.ա. VII դ. այստեղ ներխուժած սկյութացիների (սակերի) անվան փոփոխված ձեւ (սակ-ձագ-Չագեձոր-Ջանգեզուր)»:

Ջանգեզուր տեղանվան, որ հանդիպում է մի շարք Ջանկեզոր, Ջանկեազուր, Ջանկէզուր, Ջանկիզուր, Զէնգեզուր եւ այլն ձեւերով, ծագմանն անդրադարձել են որոշ հետազոտողներ ու բառարանագիրներ:

Ջանգեզուր տեղանվան ծագման հարցով առաջինը զբաղվել է Ղեւոնդ Ալիշանը, իր «Սիսական» պատկառազդու աշխատության մեջ հայտնելով այն կարծիքը, որ Ջանգեզուր տեղանունը այլ բան չէ, քան Սյունյաց Չագ(իկ) նահապետի անվանը կազմված Չագաձոր || Չագեձոր տեղանվան աղավաղված ձեւը, որը եւ առաջ է եկել ուշ ժամանակներում: Այսպես նա գրում է. «Ջանկեազօր կամ Ջանկիզուր անան, յորոյ անուն գաւառս, յայտ առնէ զՉագեձորն հին…», եւ. «Երբ եւ յումմէ կարգեցաւ սա ի գլխաւորս ի շէնս կողմանցս եւ էառ կոչումն Ջանկեազօր, յաւուրս իշխանութեան Պարսից եւ Թաթարաց, ոչ ունիմ ասել»:

Ղ.Ալիշանի կարծիքը հավանական է համարել նախ ազգագրագետ Երվանդ Լալայանը: Նշելով, որ «Ջանգեզուր» անունն, ըստ Հայր Ալիշանի, ծագել է Չագեձոր անվան աղավաղումից, իսկ սա՝ Չագ նահապետի անունից», նա, սակայն, կարծում է, թե «Չագեձոր խոսքն էլ հառաջացել է ոչ թե Չագ նահապետի, այլ «ծակերի ձոր» անունից, որովհետեւ այժմս էլ, Գորիսից քիչ բարձր գտնվող ձորը, ուր եղել է ամենահին բնակությունը, կոչվում է «ծակերի ձոր», այդտեղ գտնվող բազմաթիվ «ծակեր»-արհեստական քարայրի պատճառով»:

Բառարանագիր Սուքիաս էփրիկյանը, հիշատակելով այս կարծիքը, ավելի հիմնավոր է

ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄԻ ՍՅՈՒՆԻՔԻ ՓՈԽԱՌԱՋՆՈՐԴ ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ.ՋԱՎԵՆ ԱԲԵՂԱ ՅԱՋԻՉՅԱՆԻ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ 140-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Սիրելի՞ բարեպաշտ ժողովուրդ, Սյունյաց Թեմի Սյունիքի Փոխառաջնորդությունից Գորիս քաղաքի 140-ամյակի ուրախաշատ առիթով ողջունում ենք ձեզ, սիրելի՞ գորիսեցիներ ու Գորիս քաղաքի բոլոր նվիրյալ հայորդիներ, եւ հղում ենք ձեզ Մեր օրհնությունն ու բարեմաղթանքները:

Մեր ժողովրդի դժվարին պատմության դարավոր փորձությունների մեջ Գորիսը եղել է ամուր խարիսխ եւ հաղթանակի ուղի՝ հայ եւ քրիստոնյա մնալու, ապրելու եւ վերածնվելու համար: Այս տարի տոնախմբում ենք Սյունյաց աշխարհում հպարտ ու չնաչխարհիկ Գորիսի 140-ամյակը, հայկական զորագնդերի անցած փառավոր ուղու, մեր զորահրամանատարների, հերոսների, գորիսեցու հայրենասիրության ու նվիրումի փառապսած հիշատակներով, որոնց ոգին մեր օրերում վերածնվեց մեր ժողովրդի սրտում՝ հաղթանակելով Արցախյան ազատամարտում եւ հաստատելով մեր ժողովրդի ազատ ու խաղաղ ապրելու ձգտումն ու կամքը: Մեր Եկեղեցին օրհնել է Հայրենիքի պաշտպանների ճանապարհը, քանզի վասն Հայրենյաց պատերազմը սուրբ է ու նվիրական:

Սիրելիներ՞ր, բոլոր ժամանակների գերագույն ձգտումն ու նպատակը, գերագույն ջանքը պիտի լինի, որպեսզի հաղթանակող մնան մարդասիրությունը, իրավունքն ու արդարությունը՝ ընդդեմ ատելության ու թշնամության, ահաբեկչության ու պատերազմի եւ այլ չարիքների, որոնք տեղ ունեն գրի մեր իրականության մեջ:

Քաղաքակրթության առաջընթացի, լուսավորության դարում մեր ժողովուրդը հույս ունի գտնել ամձի ապահովություն եւ խաղաղ ու ստեղծագործ կյանքի պայմաններ: Գորիս քաղաքի՞ Տաթեւացու անունը կրող հրապարակում վեր խոյացած եռամեծար Վարդապետի՝ Սուրբ Գրիգոր Տաթեւացու արձանը՞ քարե ու անշարժ վկան է այս խոսքերի:

Ի խորոց սրտի աղօթք ու մաղթանք ենք բարձրացնում երկինք, որ Բարձրյալն Աստված խաղաղության մեջ պահպանի եւ օրհնի Սյունյաց երկիրը եւ աշխարհը հանայն:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալի Մէնք. ամէն:

Օրհնութեամբ՞

16 հոկտեմբերի, 2010թ.

ՀԵՌԱՄԻՐ ԵՎ ՏԵՂԱՏԱՐԱԾ «ՍՅՈՒՆԻՔԻ ՍԵՐԱՍՆԴԻ ԱՇԽԱՐՀԱՅՈՒՆ» ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՎ ԽՄԲԱԳՐԻ
Գնումը՝ թանկագին, ընտրությամբ 20/32
Հեռախոս՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

Գորիսի անցյալը՝ լուսանկարներում

Պատմական լուսանկարների մրցույթ՝ անցկացված թերթի սույն համարի նախապատրաստման առիթով: Ընթերցողների արձագանքի հիման վրա կորոշվի լավագույն լուսանկարը:

Գորիս, 1928թ.: *Լուսանկարը տրամադրել է Կապանի երկրագիտական թանգարանի աշխատակից Սրմինե Հովհաննիսյանը:*

«...Իմ ստացած խոշոր դրամական նուէրով կառուցել եմ... Ջանգեզուրի գլխավոր Գորիս քաղաքում խիստ մեծ եռյարկանի դպրոցական շինություն....» (Մեսրոպ Մագիստրոս Տեր Մովսիսյան): 1910-ական թվականներին կառուցված այս շենքը, որում հետագայում գործել է նաեւ Գորիսի թատրոնը, քանդվել է 1968թ. երկրաշարժից հետո՝ տեղում ներկայիս հյուրանոցը կառուցելու համար: *Լուսանկարը տրամադրել է Գորիսի երկրագիտական թանգարանը:*

1943թ., Հարություն Քաթանյանը (Քթանին Աթունը) եւ աշխղեկ Սմբատ Մինասյանը (ձախից) կառուցում են Յոթն աղբյուր հուշարձանը: *Լուսանկարը տրամադրել է Գորիսի երկրագիտական թանգարանը:*

Գորիսի մուտքն ազդարարող նախկին շինությունը, 1986թ.: Նախագծի հեղինակ՝ Սեւադա Ջաքարյան: Նախաձեռնող՝ Ռոբերտ Ալեքսանյան (ՀԿԿ Գորիսի շրջկոմի 1-ին քարտուղար 1982-90թթ.): *Լուսանկարը՝ Սմբատ Տոռոյանի:*

Գորիս, 1900-ական թվականներ: Կովալյովսկայա փողոցը (ներկայումս՝ Գուսան Աշոտի փողոց): *Լուսանկարը տրամադրել է Կամո Հովհաննիսյանը:*

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԵՌԱՄԻՐ ԵՎ ՏԵՂԱՏԱՐԱԾ «ՍՅՈՒՆԻՔԻ ՍԵՐԱՍՆԴԻ ԱՇԽԱՐՀԱՅՈՒՆ» ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՎ ԽՄԲԱԳՐԻ
Գնումը՝ թանկագին, ընտրությամբ 20/32
Հեռախոս՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru
Սյունյաց աշխարհ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գրական Գորիս

Գրական Գորիս հասկացությունն ուշ շրջանի ձեւակերպում է, երբ Գորիսը դարձավ շեն ու բարգավաճ քաղաք՝ իր մտավորականներով, արվեստագետներով եւ գրողներով: Գրական Գորիսին նախորդել է գրական Սյունիքը: Նախ՝ անդրադառնանք գրական Սյունիքին, այնուհետեւ՝ գրական Գորիսին:

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր «Հայոց լեզու եւ գրականություն» գիտամեթոդական ամսագրի գլխավոր խմբագիր

Գրական Սյունիքը հայ միջնադարում ունի իր հաստատուն տեղը եւ հայ արվեստն ու գիտությունը հարստացել է գեղարվեստական գրականությամբ, փիլիսոփայական, դավանաբանական, աստվածաբանական աշխատություններով, թարգմանություններով, ծաղկում ձեռագրերով եւ մանրանկարչությամբ:

Գրական-մշակութային Սյունիքի արմատները հասնում են նախաքրիստոնեական շրջան: Ուշագրավ են հատկապես 5-7 հազար տարի առաջ արված ժայռապատկերները, Սյունիքի հնագույն բնակիչների՝ շուրջ 2000 քարաբեկորների վրա վեմը 1-6 մմ խորությամբ քերելու կամ փորելու միջոցով արված պատկերները, որոնց ժողովուրդն անվանում է «իծագրեր» (այսինքն՝ այծագրեր=այծապատկերներ), փսված են Մեծ Իշխանասար լեռան արեւմտյան փեշերին՝ Ուղտասար կոչվող հնավայրում: Ժայռապատկերները գտնվում են ծովի մակերեւույթից 3300մ բարձրության վրա: Սյունիքի հնաբնակները, ըստ էության, ժայռապատկերներն ընտրել են որպես ապագա սերունդներին հաղորդվելու հուսալի միջոց: Դրանցում ուրվագծվում են երկրածասի բնակիչների կյանքն ու խոհերը:

Նախաքրիստոնեական շրջանում Սյունիքում զարգացած էր գուսանական արվեստը: Մի կողմ թողնենք փաստը, որ Գողթնը տեւական ժամանակ Սյունյաց աշխարհի գավառներից էր, որտեղ ծնված երգերը մեր բանահյուսության հիմքն են: Սյունիքում գուսանական արվեստի առկայության մասին կարելի է դատողություն անել խորենացու «Հայոց պատմություն»-ից: 2-րդ դարում Սյունյաց նահապետ Բակուր իշխանի կազմակերպած խնջույքում հանդես եկող վարձակ Նազեճիկի մասին է գրել Պատմահայրը: Նազեճիկը չափազանց գեղեցիկ էր եւ երգում էր «ձեռամբ», որ նշանակում է ձեռքերով պարել: Խրախճանքին պարուհիներ եւ նվագողներ են հրավիրվել: Այս պատմությունն է դարձել Դ.Վարուժանի «Հարճը» պոեմի հեմքը: Այսօր էլ Նազեճիկ անունն է կրում Հայաստանի թատերական բարձրագույն մրցանակը:

Գրական Սյունիքը բուռն զարգացում ապրեց քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց եւ մասնավորապես գրերի գյուտից հետո:

5-րդ դարը հայ մշակույթի պատմության մեջ ընդունված է կոչել նաեւ Թարգմանչաց դար: Սյունյաց դպրոցը մեծ դեր խաղաց թարգմանական արվեստի բնագավառում: Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ՝ «Հայոց մեջ նախաթոռ վարդապետությունը եւ գրքերի մեկնության ու թարգմանության իրավունքը միայն սրանց շնորհվեցին Սուրբ Սահակի եւ երանելի վարդապետ Մեսրոպի Պատմահայր Մովսես Խորենացիին Սյունիքի ծնունդ է: Ըստ ակադեմիկոս Ս.Մալխասյանի՝ «Ավելի հավանական է կարծել, թե նա ծնված է Սյունիքի Հաբանդ գավառի Խորեա անունով փոքր գյուղում, որը հիշում է Օրբելյանը 13-րդ դարի վերջում»: Սա, իհարկե, սոսկ վարկած է:

Սյունիքի հոգեւոր-մշակութային կյանքում նոր փուլ է սկսվում Մեսրոպ Մաշտոցի Սյունիք այցելություններից հետո: Այդ գործին են լծվում նրա սյունեցի աշակերտները, որոնցից հիշարժան են Անանիա Սյունեցին (Անանիա Թարգմանիչը) եւ Բենիամին Երեցը:

Անանիա (Անանիաս) Սյունեցին հայ առաջին թարգմանիչներից է, գործակցել է Մաշտոցին եղանակից գիրն ստեղծելիս: Ձեռնադրվել է եպիսկոպոս եւ Սյունյաց թեմը ղեկավարել 414-456 թթ.: Աջակցել է Մաշտոցին՝ Սյունիքում առաջին դպրոցները հիմնադրելու գործում: Մասնակցել է Արտաշատի հայտնի ժողովին (449 թ.) եւ ստորագրել պարսից զորապետ Միհրներսեհին ուղարկված պատասխան նամակը: Նրան են վերագրում «Յաղագս Յովհաննու Մկրտչի» եւ «Յոթ խորհուրդ Յովհաննու Մարգարեի» ճառերը, հույն մատենագիրներ Փիլոնի ու Իրենիոսի գործերի թարգմանությունները:

Բենիամին Երեցը Մեսրոպ Մաշտոցի հանձնարարությամբ գլխավորել է Սյունյաց աշխարհի լուսավորման գործը. «Նա [Մաշտոցը] կանչեց Բենիամին անունով մի շնորհալի թարգմանիչի, որին անմիջապես արձակեց Սյունիքի տեր երիտասարդ Վասակը, իր Անանիա եպիսկոպոսի միջոցով, որոնց [օգնությամբ] նա նշանագրեր ստեղծեց գարգարացիների այն կոկորդածայն, կոշտ, խժական, կոպիտ լեզվի համար» (Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ ԾԴ): Իսկ Ստեփանոս Օրբելյանը գրում է, որ երբ Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի ձեռքով Սյունիքում սկզբնավորվեց հայ դպրությունը, իսկ Անանիան էլ դարձավ Սյունյաց մետրոպոլիտ, վերջինս Սյունյաց դպրոցների ղեկավար նշանակեց իր դասընկեր Բենիամինին: Դրանից հետո Անանիան վերցնում է Բենիամինին եւ գնում Աղվանք, որտեղ նրանք զբաղվում են աղվանական գրերի ստեղծման եւ դպրոցների բացման առաքելությամբ:

Իսկ հինս ժամանակագրական հաջորդականությամբ եւ ընդհանուր ուրվագծերով անդրադառնանք գրական Սյունիքը ներկայացնող մյուս նշանավոր անուններին:

Ստեփանոս Սյունեցի Առաջին. ծնվելու եւ մահվան տարեթվերն անհայտ են: 5-րդ դարի հայ բանաստեղծ-երաժիշտ է: Ամենայն հավանականությամբ Սահակ-Մեսրոպյան կրտսեր աշակերտներից է: Հայկական շարակնոցում պահպանվել է նրա գրչին պատկանող 80 երգ՝ ութ շարքով (յուրաքանչյուր ձայնեղանակում տասական երգ): Հազվագյուտ գեղեցկությամբ աչքի ընկնող այդ երգերը կոչվում են «Հարության ավագ օրհնություններ»: Զուտ գեղարվեստական արժանիքներն են խոհականությունը, ապրումների անկեղծությունն ու արտահայտության անմիջականությունը: Ստեղծագործությունը կրում է հեղինակային անհատականության վառ կնիք:

Պետրոս Քերթող Սյունեցու ծննդյան թվականն անհայտ է, մահացել է մոտավորապես 558թ.: 547-556թթ. Սյունյաց թեմի առաջնորդն էր: Որպես թարգմանիչ, հռետոր ու փիլիսոփա՝ նրան բարձր է գնահատել Ստեփանոս Օրբելյանը (տես՝ գլ. ԼԲ եւ այլն): Համարվել է Մովսես Խորենացու աշակերտը: Մասնակցել է Դվինի 554թ. ժողովին: Օրբելյանի վկայությամբ՝ գրել է բազմաթիվ գործեր, զբաղվել թարգմանական աշխատանքով: Նրա մատենագիտական աշխատություններից հատվածներ են պահպանվել Կաղանկատվացու եւ Օրբելյանի գրքերում: Նրա շատ տեկնությունները, ճառեր ու ներբողներ համարվում են կորած: Պահպանվել են «Յաղագս հաւատոյ», «Յարցմունք յաղագս մարմնաւորութեանն տեառն զամացանք Վաչագանի Աղուանից իշխանի ընդ Պետրոս Սիւնեաց եպիսկոպոսի եւ իմաստասիրի», «Հարցումն Վաչագանայ իշխանի եւ պատասխան Պետրոսի Սիւնեաց վերադիտողի» երկերը, որոնք հայոց եկեղեցու սուրբերի՝ Գրիգոր Լուսավորիչի, Հռիփսիմեի, Շողակաթի եւ մյուս նահատակների որմնանկարներին:

Պատկերամարտության արմատները Բյուզանդիայում էին (4-9-րդ դարեր): Այդ պայքարն առավել սուր է արտահայտվել 8-9-րդ դարերում: Սրբապատկերների պաշտամունքը Բյուզանդիայում վերականգնել է հայազգի ինքնակալուհի Թեոդորան (842-856): Պատկերամարտությունը տարածվել է նաեւ եվրոպական այլ երկրներում եւ ընկալվել որպես Վերածննդի դարաշրջանի նախապատրաստական փուլ: Հայոց եկեղեցին մերժում էր ոչ միայն պատկերամարտությունը, այլեւ պատկերապաշտությունը եւ ընդունում իր պատկերահարգությունը:

Մովսես Քերթող: Սյունիքի մետրոպոլիտն էր 722-729 թթ.: Հայտնի է որպես խոշոր քերական, ինչպես նաեւ հոգեւոր երգերի հեղինակ ու թարգմանիչ: Ն.Ադոնցը Մովսես Քերթողին դնում է հույն քերական Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» աշխատության նշանավոր մեկնիչների շարքում: Մովսես Քերթող իր մեկնության մեջ անդրադարձել է հայերենի հնչյունաբանությանը, դասակարգել խոսքի մասերը: Վերլուծել է նաեւ հոլովների, հոլովումների, բառաբարդման եւ քերականության այլ ոլորտներին առնչվող հարցեր:

Ստեփանոս Սյունեցի Երկրորդ (մոտ 660/670 - 735) ծնվել է Գվինում: Ծննդյան ստույգ թվականը հայտնի չէ, ենթադրաբար 660-670թթ. միջեւ: Նրա մասին բավականաչափ հարուստ տեղեկություններ է թողել Ստեփանոս Օրբելյանը («Սյունիքի պատմություն», Երեւան, 1986թ., էջ 147-168): Այս եւ այլ աղբյուրներից տեղեկանում ենք, որ Ստեփանոս Սյունեցին եղել է Գվինի ավագ քահանա Սահակի որդին: Կրթությունն ստացել է հայոց կաթողիկոսարանում, «սաստիկ խստակեցությամբ» ճգնել է Սաթեհյաց վանքում: Այստեղ նա կազմել է «Տերունական տոնեցի լուսաբանիչ եւ նահատակների հիշատակարան» գիրքը, որը հայտնի է «Տոնական» (701թ.) անվամբ: Դավանաբանական վեճեր է մղել երկաբնակության հետեւող Սմբատ Բագրատունու դեմ, որի տիտղոսն էր Հայաստանի ասպետ:

Այնուհետեւ նա իր գործունեությունը շարունակել է Սյունիքում, որտեղ աշակերտել է Մովսես եպիսկոպոսին: Կրթության եւ հմացությունների պակասը լրացրել է Հռոմում, Աթենքում, Կոստանդնուպոլսում: Միաժամանակ զբաղվել է թարգմանական գործունեությամբ: Դավանաբանական հարցերով նրան ընդունել եւ զրուցել է Բյուզանդիայի ինքնակալը: Վերջինս նրան շատ բարձր է գնահատել: 728թ. ձեռնադրվել է Սյունյաց թեմի առաջնորդ՝ մետրոպոլիտ: Սյունյաց 20-րդ թեմակալն էր: Նա սպանվել է անառակ մի կնոջ ձեռքով, որին քարոզի ժամանակ ճախատինքի էր ենթարկել: Դեպքը տեղի էր ունեցել 735թ. Մոգ քաղաքում: Թաղվել է Թանահատի վանքում:

10-րդ դարում գրվել է Ստեփանոս Սյունեցու ընդարձակ վարքը, որի բնագիրը թեեւ չի պահպանվել, բայց մեզ է հասել կաղանկատվացու, Գանձակեցու, Այրիվանեցու եւ Օրբելյանի միջոցով: Օրբելյանը նրան մեծարում է «Սիւն երկնի, խարիսխ

Շարունակությունը՝ էջ 18

Սյունյաց աշխարհ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՊՈՐԱ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՕՐԵԱ
ԱՌԱՋՆՈՐԴ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎԱԿՈՒՄՈՎ
ՀԱՍՑԷ՝ ք.ԳԱՓԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 00 47 (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գրական Գորիս

Սկիզբը՝ էջ 17

հաւատոյ» խոսքերով:

Գրել է շարականներ, սաղմոսներ, մեկնություններ, դավանաբանական տարատեսակ երկեր: «Ծննդոց» եւ «Յոբ» գրքերի մեկնությունները չեն պահպանվել: Հայտնի են հետեւյալ աշխատությունները՝ «Հորից Աւետարանաց մեկնութիւն», «Պատմաք եւ թելադրութիւն առաջին տեսլեանն Եզեկիէլի», «Մեկնութիւն Դանիէլի», «Մեկնութիւն ժամանակագրութեան», «Պատմառ հիմնարկութեան Սրբոյ եկեղեցւոյ», «Վասն անապատանութեան մարմնոյն Քրիստոսի», «Վասն հաւատոյ դաւանութեան» եւ այլն: Նրա գրչին են պատկանում Գրիգոնիսիոս Թրպայացու «Արուեստ քերականի» երկի մեկնությունը:

Բավականին շատ են Սյունեցու թարգմանական գործերը, որոնցից են Կեղծ Գրիգոնիսիոս Արիսպագացու «Յաղագս եկեղեցական եւ երկնային քահանայութեանց» (712), Կյուրեղ Ալեքսանդրացու «Գիրք պարապմանց» (715), Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» (717), Գրիգոր Նյուսացու «Յաղագս կազմութեան մարդոյ» (719), Գեորգիոս Պիսիդեսի «Յաղագս Վեցաւրեայ արարչութեան» եւ այլն:

Այս շարքը լրացնում է Օրբելյանը. «Նրա նշանավոր գրվածքները ուրիշ մեկնիչների գործերի մեջ փայլում են պայծառ ջահի նման: Գրեց նաեւ բազմաթիվ ճառեր. ութ եղանակները բաժանեց, կարգեց, շարեց Հարության օրհնությունները, որպես «անդաստան հոգեւոր եւ համապայծառ ծաղիկ», որը «Հոգեհոս անձրեւէն՝ հովանաւորեալ ի քեզ// Պտղաբերեցեր ի Հաւրե…»: Նա է «Հաստատութիւն երկնի եւ երկրի,// Կենդանութեանց բաշխող»:

Բանաստեղծությունը կազմված է տասը տնից, որոնք բոլորն էլ ավարտվում են միեւնույն կրկներգով. «Օրհնեալ ես դու ի կանայս// Բերկրեալ Տիրամայր եւ կոյս…»:

Ստեփանոս Օրբելյանը (1250/1260 - 1303) Օրբելյանների հայտնի տոհմից էր, որ Սյունիքում իշխանական դիրք ուներ 12-15-րդ դարերում: Նա եղել է հոգեւոր գործիչ, Սյունիքի մետրոպոլիտ, կառուցել ու վերաբառուցել է եկեղեցիներ: Հայոց մատենագրության մեջ նա առավել հոչակված է իր «Սյունիքի պատմություն» («Պատմութիւն նահանգին Սիսական») աշխատությամբ: Հայտնի է նաեւ «Ժամանակագրութիւն» աշխատությամբ, որն ավարտվում է հոր մահվան թվականով (1290), ինչպես նաեւ «Ոդբ ի Սուրբ Կաթուղիկեն» պոեմով:

Կենսագրական հիմնական տվյալների աղբյուրն ինքն է: Ինչպես Համիկոնյանների, այնպես եւ նրանց տոհմը սերել է ճենաց աշխարհից: Ճենաստանից նրանք հեռացել են ճենբրավար արքայի մահից հետո: Օրբելյան ազգանունն առաջացել է Օրբեք ամրոցից, որտեղ ճենաստանից հետո հաստատվել են նրա ճախիները՝ Օրբեք-Օրբուլ-Օրբել-Օրբելյան (Օրբելի):

Օրբելյանի ճախիներն ապրել են վրաստանում, երկրում եղել են երկրորդը եւ իրենց ձեռքում պահել սպարապետությունը: Այդպես եղել է թե վրաց առաջին թագավոր Փառնավազի օրոք (Ք. ծ. ա. 337-302) եւ թե Դավիթ Շինարարի (1089-1125): Օրբելյանները թագահիրեր են տվել վրաց գահին:

Ստեփանոսի պապը Սյունիքի կուսակալ Լիպարիտ Օրբելյանն էր, հայրը՝ Տարսայիճը, իշխանաց իշխան էր, ճահանգի կուսակալ, աթաբեկ, ռազմաքաղաքական նշանավոր գործիչ: Տարսայիճը Լիպարիտի հինգ որդիներից կրտսերն էր: Նա ինը անգամ ճակատամարտ է վարել ու հաղթել: Դրա համար գնահատվել է Հալավու եւ Արղուն խաների կողմից եւ արժանացել բարձրագույն պարգեւի՝ «Ոսկե բարձի»: Նշանավոր դեմքեր էին նաեւ Տարսայիճի եղբայրները՝ Ելիկումը, Սմբատը, որոնք արժանացել են մոնղոլ խաների վստահությանը եւ հավասարակշիռ վիճակում պահել երկիրը: Նրանք բոլորը թաղված են Նորավանքի տոհմական դամբարանում:

Ստեփանոսի մայրը՝ Արուզ խաթունը, արաբ էր, որը քրիստոնեություն է ընդունում եւ դառնում երեւելի հավատացյալ:

Ստեփանոս Օրբելյանը կրթություն ստացել է Տաթեւի վանքում: Եղել է դպիր, սարկավագ: Նորավանքում ձեռնադրվել է քահանա: Կրթություն շարունակել է Գլաձորում՝ աշակերտելով Ներսես Մշեցուն: Դարձել է վարդապետ:

Եպիսկոպոս ձեռնադրվելու համար հայր նրան ուղարկում է Կիլիկիա, արժանանում է բարձր ընդունելության, հանդիպում Լեւոն Գ թագավորին, առաջարկում են հայոց կաթողիկոսության աթոռը: Նա չի համաձայնվում. եպիսկոպոս ձեռնադրվելով՝ հռչակվում է Սյունյաց մետրոպոլիտ, հայրապետի առաջին աթոռակալ եւ մեծարաքնեերով 1287թ. վերադառնում: Ներկայանում է Արղուն խանին, որն իր հերթին հաստատում է նրա մետրոպոլիտությունը:

Օրբելյանը միավորել է Սյունյաց թեմը, հաստատել խաղաղություն, նպաստել մատենագրության ծավալմանը, տաճարների վերանորոգմանը եւ պայքարել արեւմտյան ազդեցությունների, հատկապես քաղկեդոնականության դեմ:

Վախճանվել է ադիների ու լարդի բորբոքումից եւ թաղվել Նորավանքում:

«Սյունիքի պատմությունը» շարադրել է Ղազան խաձի օրոք՝ 1299թ.: Օրբելյանը շարունակել է հայոց նախարարական տների (առանձին ազիաթիների) պատմագրության ավանդույթը՝ օրինակ ունենալով Հռփիսե Մամիկոնյանի «Տարոնի պատմություն»-ը, Թովմա Արծրունու «Արծրունյաց տան պատմություն»-ը եւ համանման այլ աշխատանքներ:

Նախադիր խոսքում իր գործը համարում է «Սիսական տան քաղաքաբար պատմությունների շարադրանքք», «Նախնիների հիշատակարան», «Հիշատակաց մատյան»: Պատմիչն իր խոսքն սկսում է իմաստախոսությամբ. «Բոլոր գոյացությունների սկիզբն Աստված է, բոլոր բարիքների սկիզբը՝ սերը, բոլոր շնորհների սկիզբը՝ խոհականությունը»: Ըստ նրա՝ մարդը, չարի եւ բարու «սաղմն ընդունելով մտքի արգանդում «…», ջանում է ծնել ու գլուխ բերել բաղձալին»: Այս մուտքով նա բացատրում է պատմություն գրելու դրդապատճառները: Վաղուց է նա մտածել գրելու «փառահեղ ու աստվածաբնակ Սյունիքի» մասին, այո՛, բայց Սյունիքի ստուգաբանությունը թերեւս գալիս է սյուն բառից՝ տեղանքին բնորոշ քարե սյուներից: Օրբելյանն օգտագործում է երկրի անվանման բոլոր հնարավոր ձեւերը՝ Սյունիք, Սիսական, Սյունյաց աշխարհ, Սյունյաց տուն եւ այլն: Իսկ նահապետ Սիսակը Հայկի սերունդից Գեղամի որդին էր, որի անունից էլ՝ Սիսականը:

Սյունիքը եղել է Հայաստանի 15 աշխարհներից 9-որը եւ ունեցել իր գավառները՝ թվով 12՝ Ծղուկ, Վայոց ձոր, Գեղարքունի, Սոտք, Աղահեծ («որ այժմ կոչվում է Քաջաթաղ կամ Խոժոռաբերդ»), Հաբանդ, Բաղք (Աճեն), Կովսական (Գրհամ), Արեւիք (Տաշտոն, Մեղրի), Ջորք (Կապան), Երնջակ, Գողթն, Ճահուկ: Այնուհետեւ թվարկվում են ամառիկ բերդերը: Պատմիչն ամեն ինչ ներկայացնում է առասպելախառն պատմություններով, հիշատակում տեղերի հետ կապված ժողովրդական զրույցները: Պատմական դեպքերի հաջորդականության մեջ նա գիտակցաբար չի պահպանել ժամանակագրությունը եւ խնդրում է դա իրենից չպահանջել՝ «Չհետեւեցինք ժամանակագրական հաջորդականության»:

Դեռեւս Տրդատ Մեծի ժամանակներում Սյունյաց իշխաններն արքունիքում եղել են առաջինների շարքում, թագավորության մեջ որպես երկրորդաներ՝ երկրորդը, իսկ Սյունիքի եպիսկոպոսը նստում էր Գրիգոր Լուսավորչի կողքին՝ աջից յոթերորդը:

Դրվագ առ դրվագ հյուսվում է Սյունիքի պատմությունը, իրար են հաջորդում պատմական հայտնի դեպքեր ու իրադարձություններ, տեսնում ենք իշխանական եւ հոգեւոր առաջնորդների, նրանց գործունեությունը: Տեղ-տեղ պատմիչի գրիչը դառնում է բանաստեղծորեն ճեղքելված.

«Սրտին գործարաքի բուռն բաղձանքը դրդում է միտքս՝ իմ այս շարադրանքի մեջ հոմերական քերթողությամբ ստեղծագործել, հորինել ելեւէջուն գեղեցիկ տողեր, հյուսել ախորժալուր զովեստներ…»:

Օրբելյանը բնականորեն չի սահմանափակվում Սյունիքում կատարվող իրադարձություններով, որովհետեւ ամեն ինչ պայմանավորված էր երկրի պատմությամբ: Այդ անհրաժեշտությամբ անդրադառնում է Բագրատունիների թագավորության ստեղծմանը (885), «անիծյալ» Յուսուփի հարձակումներին Հայաստանի վրա, սուլթան Ձալալեդդինի արշավանքներին, թաթար-մոնղոլների պատմությանը եւ այլն:

Գրքի Կ եւ ԿԶ գլուխներում անդրադառնում է իր տոհմաբանությանը, որպես հայրենասեր գործիչներ մեծարում հորն ու հորեղբայրներին:

Գիրքը ավարտվում է հիշատակարանով, որի մեջ օրհնություն, պատիվ ու երկրպագություն է տալիս Աստծուն իր այս գործն ավարտին հասցնելու համար: Օրբելյանն իրականացրել է իր առջեւ դրած խնդիրը՝ ստեղծելով Սյունիքի քննական եւ ամբողջական պատմություն: Պատմագիտական երկ լինելով՝ այն ունի նաեւ գեղարվեստական արժանիքներ՝ պատմական կերպարները կերտված են գեղարվեստորեն, առկա է դիպաշար, խոսքն առասպելախառն է, լեզուն՝ պատկերավոր:

Օրբելյանի գեղարվեստական ճախարիությունները առավել լավ արտահայտվեցին «Ոդբ ի Սուրբ Կաթուղիկեն» պոեմում՝ գրված 1300թ.: Հեղինվանը ոդբուն է «արքայուհի» Կաթուղիկեն՝ էջմիածնի Սայր տաճարը:

Արարատյան դաշտից «բարձրագուժ եւ ահագին» ձայն է լսվում: Այդ ձայնի վրա հավաքվում է ժողովուրդը, շտապում վաղարշապատ եւ տեսնում արքայուհին «Մերկ, խայտառակ ի բաթրոնին»: Սայր տաճարը, լծօգտվելն շատ ու շատ սերունդներ:

Հոփիսե (Հռիփսիմե) Որոտնեցին (1315-1386) ժամանակին հայտնի էր նաեւ Կախիկ մականունով: Ծնվել է Սյունիքի Որոտնած գավառի Վաղարդի գյուղում: Նա Սյունյաց մեծ իշխան Իվաճեի որդին էր: Գլաձոր համալսարանում աշակերտել է Եսայի Նչեցուն: Զբաղվել է մանկավարժական եւ գիտական գործունեությամբ: Հետագա տարիներին նրան տեսնում ենք Դարանաղյաց գավառում, իսկ կյանքի վերջին տարիներին՝ Տաթեւի եւ Ապրակուրնիի վանքերում: Նա Տաթեւի համալսարանի եւ Ապրակուրնիի վանական դպրոցի հիմնադիրն է: Մահացել է 71 տարեկանում եւ թաղվել Երնջակի Սուրբ Գեւորգ վանքում:

Որոտնեցին հայտնի է որպես փիլիսոփա, աստվածաբան, հոգեւոր եւ քաղաքական գործիչ: Նա հռչակված ուսուցչապետ էր եւ թողել է գիտուն աշակերտների մի քանի սերունդներ:

Համախոհների հետ մեկտեղ պայքարել է կաթոլիկ եկեղեցու դեմ, որն ամբողջ միջնադարում փորձում էր իրեն ենթարկել հայոց եկեղեցին:

Նրա աշակերտներից էր Գրիգոր Տաթեւացին, որն էլ գրի է առել նրա դասախոսությունները: Դրանք հիմնականում փիլիսոփայական աշխատություններ են՝ ելմիրված Արիստոտելի, Փիլոն Ալեքսանդրացու եւ Պորփյուրի աշխատությունների վերլուծությամբ: Նրա հանար ամեն ինչի սկիզբ Աստված էր. այդ գաղափարախոսությունն էլ իշխում է նրա աշխատությունների, հատկապես աստվածաբանական-դավանաբանական երկերի, նաեւ ճառերի ու քարոզների մեջ: Նա քարոզել է հոգու անմահության գաղափարը, ըստ որի՝ մարդու մահվանից հետո ապրում է նրա հոգին:

Որոտնեցին մնալու հետք է թողել նաեւ իմացաբանության եւ տրամաբանության մեջ:

Մատենադարանում պահվում է նրա փիլիսոփայական աշխատությունների ժողովածուն (ձեռագիր 4268): 1956թ. հրատարակվել են նրա հետեւյալ աշխատությունները՝ «Յովհաննու Որոտնեցւոյ հաւաքեալ ի բանից իմաստասիրաց», «Վերլուծութիւն «Ստորագրութեանց» Արիստոտէլի», «Հաւմառաւտ վերլուծութիւն Պորփիւրի դժուարալուծից»:

Գրիգոր Տաթեւացին (1346-1409) եղել է մեծահռչակ հոգեւոր գործիչ, փիլիսոփա եւ ուսուցիչ: Նրա «Գիրք հարցմանց» աշխատությունն ունի երկու տարբերակ՝ փոքր (1387) եւ մեծ (1397), տպագրվել է 1729-ին Կոստանդնուպոլսում: «Գիրք քարոզութեան»-ը (1407) կազմված է երկու հատորից՝ «Ձմերան հատոր», «Ամարաւ հատոր», որոնք եւս 1740-1741 թթ. տպագրվել են Կոստանդնուպոլսում: Հետագայում նա գրել է այլ քարոզներ, որոնց թիվը հասնում է 400-ի: Դրանք ելիրվում են կրոնական տոներին եւ պատվիրանների բարոյական նշանակությանը: Ունեն գրական լուրջ արժեք:

«Գիրք հարցմանց»-ը հարց ու պատասխանի ձեւով լուսաբանում է կրոնական հարցեր: Խոսում է աղանդների մասին՝ հավատացյալներին ցույց տալով ճշմարիտ ճանապարհը:

Տաթեւացու գրչին է պատկանում նաեւ «Ոսկեփորիկ» (1401) ժողովածուն, որը եւս կրոնական հարցերի պատասխաններ ու բացատրություններ է պարունակում: Քանի որ Սուրբ Երրորդությունը ոսկու արժեք ուներ քրիստոնեության համար, այստեղից էլ գրքի «Ոսկեփորիկ» վերնագիրը:

Տաթեւացին գրել է նաեւ կրոնական (Սաղմոսների, Երգ երգոցի, Առակաց, Հոբի, Մատեթոսի եւ Հովհաննու ավետարանների), փիլիսոփայական (Արիստոտել, Պորփյուր, Դավիթ Անհաղթ) եւ այլ աշխատությունների մեկնություններ: Նա շարունակեալ է իր ուսուցչի՝ Հովհան Որոտնեցու ավանդույթները:

Առաքել Սյունեցին (1350/1360 - 1430) եղել է բանաստեղծ, գիտնական, մանկավարժ: Գրիգոր Տաթեւացու քրոջ որդին էր եւ որպես Տաթեւի համալսարանի ուսուցչապետ շարունակել է թե Տաթեւացու, թե Որոտնեցու ավանդույթները: Ծողոպ է բանվանկին հարուստ ժառանգություն, զբաղվել է գրչությամբ արվեստով: Առավել հայտնի է նրա «Աղամգիրք» պոեմը:

Առաքել Սյունեցու կյանքի եւ ստեղծագործության տարիները զուգադիպ են Լենկ Թեմուրի անայացնող արշավանքներին:

«Աղամգիրք»-երն ստեղծվել են 1401-1403թթ.: Դրանք չորսն են, որոնցից յուրաքանչյուրն ունի իր հիշատակարանը: Ա գրքի հիշատակարանում հիշում է ծնողներին՝ հորը՝ Դավիթ, մորը՝ Մելիք, եղբորը՝ Բարսեղ (եղել է քահանա), բոլորն էլ հանգայալ: Հիշատակարաններում Սյունեցին անդրադառնում է նաեւ «ճգնավգեաց» «դասասաց» մեծ վարդապետին՝ Գրիգոր Տաթեւացուն, որի «հրամմաեաւ» է գրել է «Աղամգիրք»-ը: Նրան բնորոշում է այս տողերով. «Բաբունապետ յոյժ պանծալի,// Ծով հմաստից ծաւալք շնորհի,// Ի նոյն շնորհէ մասն ինչ առի,// Զոտառաւորքս շարագրեցի»:

Սյունեցու գրական ժառանգությունից հրատարակվել են «Լուծմունք յաղագս Սամմանաց Դաւթի Անյաղթ փիլիսոփայի», «Քերթուածներ», «Դրախտագիրք», «Մեկնութիւն քերականին», «Սահմանադրութիւն դաստիարակութեան նորածնեալ մանկանց» երկերը: «Աղամգիրք»-ը 1721, 1799 թվականներին հրատարակվել է Կոստանդնուպոլսում, 1907-ին՝ Վենետիկում, 1989-ին՝ Երեւանում, սրանց ձեռագրերը պահվում են Երեւանի, Երուսաղեմի, Վենետիկի մատենադարաններում:

«Աղամգիրք»-ը, ըստ հեղինակի, պարունակում է «Բանք հարմարաւկանք եւ պատմութիւնք պատշաճաւորք յաղագս ճախմեացն Աղամայ եւ Եվայի»:

Շարադրանքի համար ստեղծել է թեթեւ տողաչափ՝ 8=4+4, յուրաքանչյուր քառատող ունի իր հանգը, պատումը բավականին շարժուն է եւ արագ:

Սյունեցին ամեն ինչ սկսում է աշխարհի արարչությունից: Աստված հողից ստեղծում է Աղամին, ապա Աղամի կողից ստեղծում է Եվային: Աստծու արարչության դեմ միավորվում են չար ուժերը, որպեսզի խորտակեն առաջին մարդուն: Չարի ճախապատճառներն են՝ բանասարկությունը, ճախանձը, օձը, չար լեզուն, Եվայի անհանճար միտքը, որը դաշինքի մեջ է մտնում օձի հետ: Օձը նրա միտքը կախարդում է եւ խելքից հանում: Եվան ուտում է խնձորը, հանդուցում Աղամին, որ նա էլ ուտի: Հաջորդ պահին Աղամը փոշմանում է, բայց արդեն ուշ էր: Ահավոր գալվից նա ողբ է ասում ու վայ կանչում. «Վա՛յ այն ատուրն, որ ես ստեղծայ,// Վա՛յ այն ժամին, որ խաբեցայ…»:

Այնուհետեւ դրախտից արտաքսված Աղամի առջեւ կանգնում են անեղ դատաստանի ու դժոխքի տանջանքների պատկերները: Գեհենի կրակների մեջ Աղամն ավելի հստակ է տեսնում իր գլխին եկած փորձանքը:

Այնուհետեւ պատողությունները եւ անում չար ուժի մասին, պարզում նրա որտեղից է նրա լինելը: Ըստ նրա՝ չարի դեմ բարին է, որի մարմնավորումը մարդն է. «Մարդու ատաղեր է արարչիդ,// Տիպ եւ նըմանՀ յոյժ հրաշագիմ…»:

Հաջորդում է Աստծու եւ Աղամի երկխոսությունը: Աստված հարցեր է տալիս դրախտից վտարվելու մասին, իսկ Աղամը պատասխանում է: Զրույցին խառնվում է Եվան: Պոռնկն ստանում է թատերգական կառուցվածք: Աղամն ու Եվան խոստովանում են, որ խաբվել են: Տերը խոսում է նաեւ օձի հետ: Գործողություններին, որպես գործող անձ միջամտում է նաեւ հեղինակը՝ «Մեք ասենք»: Աստված Աղամի եւ Եվայի համար ապրելու նոր կարգ է սահմանում. «Եվ դու, պատճառ չարեցդդ կին,// Դաղըն ցաւաւք ծնանիս զորդոյն»: Իսկ Աղամի առջեւ դրախտի ծառերի փոխարեն փուշ տատասկ են բուսնում, եւ նա դատապարտվում է ծանր հոգսի. «Զհաց քո ուտես քրտամաք ի լի»:

Այդուհետեւ դրախտը նրանց համար մնում է որպես երանելի հիշողություն:

Աղամն իր կողի ողբն է անում: Քանի կողն իրենն էր, Աղամն անմահ էր, կողից եկավ ստեղծվեց, եւ աշխարհի իմացավ, թե ինչ է մահը: Եվայի հանդեպ բանաստեղծի վրդովմունքը հասնում է ճախատիճի:

Վերջին գլուխներում բանաստեղծը կերպավորում եւ փառաբանում է Քրիստոսին:

«Աղամգիրք»-ը, ինչպես ակնարկեցինք, բաղկացած է չորս գրքից: Առաջինը, որին անդրադարձանք, ծավալուն շարադրանք է: Նույն մոտիվը նա անընդհատ բացում ու զարգացնում է նորովի: Աստվածաշնչյան առասպելը բացահայտվում է ոչ միայն հիմնական խորհրդանիշներով, այլեւ բովանդակային խորքով: Կան կերպարներ, բնավորություններ. Աղամի եւ Եվայի մեղքի խորքում Աստծու եւ սատանայի պայքարն է: Աղամն ու Եվան պետք է փորձության ենթարկվեին, որպեսզի ավելի խոր կապվեին իրենց ստեղծողին եւ հայցեին նրա ողորմածությունը:

«Աղամգիրք» Ա-ին հաջորդում են Բ-ն, Գ-ն եւ Դ-ն, որոնցում այլ տողաչափի ու ծավալի մեջ արծարծվում է նույն նյութը:

Աղամի եւ Եվայի դիպաշարը բազմիցս արծարծվել է համաշխարհային կերպարվեստի ու գրականության մեջ: Դեռ պետք է գրվեին Ջոն Միլթոնի (1608-1674) «Դրախտ կորուսյալ» եւ «Վերադարձված դրախտ» գործերը: Աղամասատումի այս ճանապարհին հայ գրականությունը եւս, հաճնիս Առաքել Սյունեցու, ասաց իր խոսքը:

Գրական Սյունիքի այսպիսի բարձր արժեքներով է ներկայանում նոր ժամանակներին, ուստի ոչ միայն տեղային, այլեւ համազգային նշանակության եւ որպես այդպիսին էլ ծանրակշիռ ավանդույթները փոխանցում է գրական Գորիսին: Միջնադարը շարունակվում է նոր ժամանակների մեջ:

Եթե գրական Սյունիքի շրջանակներում ամբողջ Սյունյաց աշխարհն էր, ապա գրական Գորիս ասելով՝ պետք է հասկանանք Գորիս քաղաքը եւ Գորիսի շրջանի գյուղերը:

Գրական Գորիսը ժամանակագրական հերթականությամբ ներկայացնում են Աբան, Ուսուբոզլին (Մարգիս Պետրոսյան), Կառնիկ Ղազարյանը, Ակսել Բակունցը, Արամ Շահենը, Գուսան Աշուղը, Գաբրիել Արեւյանը, Գարեգին Սեւունցը, Սերո Խանգադյանը, Սուրեն Այվազյանը, Շողիկ Սաֆյանը, Շմավոն Հովսեփյանը, Ալբերտ Բսաքանյանը, Էդվարդ Զոհրաբյանը եւ ուրիշներ:

19-րդ դարի 60-ական թվականներից վարչական կենտրոն Գորիսը ժամանակի ընթացքում դարձավ նաեւ գրական-մշակութային կենտրոն: Այսօր Գորիսում գործում է գրողների միությանն մասնաճյուղ, որը դեկավարում է արձակագիր եւ բանաստեղծ Արկադի Ծատուրյանը, պետական (Սիմոնյան, Կիմ Աղաբեկյան եւ շատ ուրիշներ):

Աբան (Աբա Սայիլյան, 1852-1942 թթ.) ծնվել է Քարաշեն գյուղում, եղել է աշուղ, հորիներ է խրատական, երգիծական բանաստեղծություններ եւ սազը ձեռքին երգել շուրջ 60 տարի: Նրա հորիված երգերից առավել հայտնի է «Զորավար Անդրանիկը»: Եղել է ԽՍՀՄ գրողների միության անդամ 1939-ից, երբ աշուղներին մեծ արտոնություններ տվեցին գնդակահարված կամ աքսորված գրողների հաշվին:

Ուսուբոզլին (Սարգիս Հովսեփի Պետրոսյան, 1859-1928թթ.) ծնվել է Խնձորեսկ գյուղում: 1893-ին Թիֆլիսում հրատարակել է «Եղգար բնարը» բանաստեղծությունների գիրքը, ավելի ուշ՝ 1913-ին, լույս է ընծայել «Պատմական փշրանքներ» ուշագրավ գործը, որտեղ անդրադարձեր կան իր ծննդավայրի եւ Հաբանդ գավառի պատմական անցքերի շուրջ, ինչպես նաեւ անցած դարերին վերաբերող փաստագրական արտացոլումներ՝ սեփական մեկնաբանություններով:

Թաքսյունցին (1867-1927)՝ Տաթեւիկ Սազանդարյանի պապը, գուսան էր, երգեր է հորիներ եւ կատարել բառով: Այստեղից է ծածկանունը՝ Թաք-Սյունի: Հայտնի են «Սյունեցու կյանքից», «Լսեք, ո՜վ սիրելիք», «Քոխվաա մեծ խալխին», «Օրը մեկին» եւ այլ երգեր: Նրա որդին՝ Տիգրան Սազանդարյանը (Տաթեւիկի հայրը), եղել է բանաստեղծ, գրել է Լեռնահայաստանի օրհներգը:

Եղիա Հայրապետյանը (1883-1996) ծնվել Տեղ գյուղում, սովորել Շուշիի թեմական եւ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցներում: 1918թ. որապա անցել միմիայն ստեղծագործական աշխատանքի:

Բակունցը գրականություն մտավ գորիսյան տպավորություններով, որոնք նախ՝ արտացոլեց ակնարկների մեջ («Գավառական նամակներ»), «Մեր գյուղերում»), այնուհետեւ՝ պատմվածքների:

«Սթանոթ» (1927) ժողովածուն մի նոր խոսք էր հայ արձակի մեջ: Գրականություն մտավ մի նոր բնաշխարհ, կերպարների մի նոր աշխարհ: Դա հենց Գորիսն է՝ իր գյուղական ու քաղաքային կերպարներով, մարդկային նկարագրերով ու հոգեբանությամբ: Բակունցը դրանով ցանկացավ ասել, որ ժամանակակից գրականություն կարելի է ստեղծել ոչ միայն մեծ քաղաքների նյութով, այլեւ անհայտության մեջ կորած գյուղերի վարք ու բարքի ու մարդկանց կերպավորումով: Վերամբարձ գաղափարական ճառերին Բակունցը հակադրեց բուն երկրին ու բուն երկրի մարդու ճակատագիրը:

Այս մտայնությունը խորացավ Բակունցի պատմվածքների մյուս ժողովածուներում՝ «Սպիտակ ձին» (1929), «Սեւ ցելերի սերմնացանը» (1933), «Անձրեւը» (1935):

Բակունցի պատմվածքների յուրահատկությունը դրանց խիստ տեղայնության մեջ է, ինչն էլ իր հետ բերում է մարդկային կերպարների, բնաշխարհի, կենցաղի, բարբառի տեղային շունչ ու երանգ: Մեծը (համամարդկայինը) Բակունցը որոնում է փոքրի (անենաչ թվացող մարդկանց) մեջ: Իսկ իրականում մեծն ու փոքրը նրա համար նշանակություն չունեն, որովհետեւ մեծը միաժամանակ փոքր է, փոքրը՝ միաժամանակ մեծ:

Բակունցը՝ որպես գրող, եզակի է, որովհետեւ գտավ գորիսյան բնաշխարհի ու միջավայրի գրական լեզուն: Բնության հավերժական շնչառության հանգստությունն ու հանդարտությունը կան անգամ նրա ողբերգական լուսում ունեցող գործերում, ասես անտառում քամուց մի ծառ տապալվեց, կայծակը խփեց ժայռին, կամ որսորդի գնդակը դիպավ միրհավին:

Այս ամենով Բակունցը նաեւ տեղային գուսերգանի խոշոր գեղանկարիչ է, ինչն իր դեպքում արտահայտվում է բառանկարով: Այդպես նա ստեղծեց Հայաստանի իր նկարաշարը, որոնք նրա պատմվածքներն են: Բառի ու նկարագրության մեջ երեւում է գույնը, գիծը, շարժումը:

Խորքում արվեստը միասնական է՝ բառը, գույնը, հնչյունը գալիս են նույն ակունքից եւ միայն արտահայտվելիս ընդունում տարբեր ձեւեր՝ որպես բառի արվեստ, գույնի արվեստ, հնչյունի արվեստ: Բակունցի ստեղծագործության մեջ այդ ամենը շատ միասնական է, որովհետեւ նրա բառի (խոսքի) մեջ ոչ միայն գույնն է, այլեւ մեղեդին եւ հատկապես այն հատվածներում, որտեղ հերոսները խոսում են բարբառով: Այստեղ ծայնն ինքնին մեղեդի է, որն ունի իր յուրահատուկ երանգը, հնչեղությունը, շեշտադրումն ու կշռույթը:

Բակունցը որսաց բնության հանր շարժումների լեզուն, այդպես արեւն է բարձրանում զենիթ, բողբոջն է ծիլ տալիս, քարաքարսն է ածուռ, եւ թռչունն ու կենդանին իրենց կյանքն են ապրում: Այդպես է ապրում նաեւ գորիսյան բնաշխարհի մարդը, որի համար իր կյանքն իր լեռնաշխարհում ոչ թե խոսք է՝ որպես գրույց, այլ ներկայացում՝ ինքն իր հետ, ինքն իր մեջ, նաեւ ինքն իր համար: Համենայնդեպս, այդպես է իր հերոսներին տեսել Բակունցը, որովհետեւ ինքն էլ նրանցից մեկն էր, որն ուզում էր չկորցնել ամենաթանկը՝ իր իրականությունն եւ իր խոսքի հարազատությունը՝ որպես արյունակցական կապ:

Շարունակությունը՝ էջ 20

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՊՈՐԱ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՕՐԵԱ
ԱՌԱՋՆՈՐԴ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎԱԿՈՒՄՈՎ
ՀԱՍՑԷ՝ ք.ԳԱՓԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 00 47 = (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru

Սյունյաց աշխարհ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(ձեռագիր 4268): 1956թ. հրատարակվել են նրա հետեւյալ աշխատությունները՝ «Յովհաննու Որոտնեցւոյ հաւաքեալ ի բանից իմաստասիրաց», «Վերլուծութիւն «Ստորագրութեանց» Արիստոտէլի», «Հաւմառաւտ վերլուծութիւն Պորփիւրի դժուարալուծից»:

Գրիգոր Տաթեւացին (1346-1409) եղել է մեծահռչակ հոգեւոր գործիչ, փիլիսոփա եւ ուսուցիչ: Նրա «Գիրք հարցմանց» աշխատությունն ունի երկու տարբերակ՝ փոքր (1387) եւ մեծ (1397), տպագրվել է 1729-ին Կոստանդնուպոլսում: «Գիրք քարոզութեան»-ը (1407) կազմված է երկու հատորից՝ «Ձմերան հատոր», «Ամարաւ հատոր», որոնք եւս 1740-1741 թթ. տպագրվել են Կոստանդնուպոլսում: Հետագայում նա գրել է այլ քարոզներ, որոնց թիվը հասնում է 400-ի: Դրանք ելիրվում են կրոնական տոներին եւ պատվիրանների բարոյական նշանակությանը: Ունեն գրական լուրջ արժեք:

«Գիրք հարցմանց»-ը հարց ու պատասխանի ձեւով լուսաբանում է կրոնական հարցեր: Խոսում է աղանդների մասին՝ հավատացյալներին ցույց տալով ճշմարիտ ճանապարհը:

Տաթեւացու գրչին է պատկանում նաեւ «Ոսկեփորիկ» (1401) ժողովածուն, որը եւս կրոնական հարցերի պատասխաններ ու բացատրություններ է պարունակում: Քանի որ Սուրբ Երրորդությունը ոսկու արժեք ուներ քրիստոնեության համար, այստեղից էլ գրքի «Ոսկեփորիկ» վերնագիրը:

Տաթեւացին գրել է նաեւ կրոնական (Սաղմոսների, Երգ երգոցի, Առակաց, Հոբի, Մատեթոսի եւ Հովհաննու ավետարանների), փիլիսոփայական (Արիստոտել, Պորփյուր, Դավիթ Անհաղթ) եւ այլ աշխատությունների մեկնություններ: Նա շարունակեալ է իր ուսուցչի՝ Հովհան Որոտնեցու ավանդույթները:

Առաքել Սյունեցին (1350/1360 - 1430) եղել է բանաստեղծ, գիտնական, մանկավարժ: Գրիգոր Տաթեւացու քրոջ որդին էր եւ որպես Տաթեւի համալսարանի ուսուցչապետ շարունակել է թե Տաթեւացու, թե Որոտնեցու ավանդույթները: Ծողոպ է բանվանկին հարուստ ժառանգություն, զբաղվել է գրչությամբ արվեստով: Առավել հայտնի է նրա «Աղամգիրք» պոեմը:

Առաքել Սյունեցու կյանքի եւ ստեղծագործության տարիները զուգադիպ են Լենկ Թեմուրի անայացնող արշավանքներին:

«Աղամգիրք»-երն ստեղծվել են 1401-1403թթ.: Դրանք չորսն են, որոնցից յուրաքանչյուրն ունի իր հիշատակարանը: Ա գրքի հիշատակարանում հիշում է

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գրական Գորիս

Սկիզբը՝ էջ 19

Գորիսյան կյանքի համապատկերը նա ներկայացրեց «Կյորես» (1936) վիպակում: Հիմ ու նոր Գորիսը, հին ու նոր ժամանակների բարքերը, քաղաքային կյանքի ամբողջական նկարագիրը մի նոր երանգ հաղորդեցին նրա ստեղծագործությանը: «Կյորես»-ում Բակունցը հիշատակում ու բնութագրում է շուրջ 150 հերոսի, որոնց մեջ կան գլխավորներ, երկրորդականներ, լրացյալներ, բայց վիպակի գլխավոր հերոսը հենց Գորիսն է՝ որպես քաղաք, որպես հին ու նոր գորիսեցիների վեճերի ու հաշտության հանդիսավայր: Չարենցը, որպես գլխավոր հերոս կերտեց իր ծննդավայր Կարսը, Սահարին՝ իր ծննդավայր Վանը («Մանկություն», «Պատանեկություն», հետագայում «Այրվող այգեստաններ»), Բակունցը՝ իր ծննդավայր Գորիսը: Հանձին Բակունցի Գորիսն ստացավ գրական անձնագիր:

Բակունցը գնում էր գրական հերոսացման. արձակի նրբագեղ ձեւերից նա անցավ վիպակների եւ վեպերի: Գեղարվեստական գրականություն ստեղծելու հետ մեկտեղ նա նաեւ գրական գործիչ էր, մասնակցում էր գրական բանավեճերի, եւ լույսերեր ունենում համագումարներում, մշակում գեղարվեստի զարգացման տեսական սկզբունքները, Չարենցի, Սահարու, Արմենի հետ մեկտեղ «Նոյեմբեր» խմբակցության գաղափարական դիրքերից պայքար մղում պրոլետարական գրողների ապագայնիզմ ու հակագրական գործունեության դեմ… Այդ ճանապարհին էլ նա ճահատակվեց: Նա սկզբունքի մարդ էր, արվեստի իսկական գործիչ եւ որպես այդպիսին՝ իսկական հերոս, որը զոհ գնաց անհավասար կռվում: Այդպիսիներն ավելի են, քան սոսկ գրողը, որովհետեւ բարձր գրականությունը դարձնում են պայքարի միջոց՝ հանուն ճշմարտության, հանուն ազգային եւ համամարդկային արժեքների: Հերոսների կյանքը թռիչքի մեջ է ընդհատվում, բայց նրանց չապրած տարիները եւս նույն հերոսական կյանքի շարունակությունն են: Դա մի սխրալի սերունդ էր, որի ներկայացուցիչներն ապրած տարիներին իսկ արդեն դասականներ էին եւ նրանց մեջ Սկսել Բակունցը՝ Սյունյաց աշխարհի գրական քարտեզագիրը, բանահավաքը, ամտեճագիրը, տաղասացն ու քնարերգուն:

Արամ Շահենը (Արամ Հայրյան, 1906-1991) ծնվել է Խնձորեսկ գյուղում: Աշխատել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթում (1926-1930), պետհրատում (1934-1938), «Խորհրդային գրականություն» ամսագրի խմբագրի տեղակալ (1938-1940): Դասավանդել է Խ.Ա-բովյանի անվան մանկավարժական ինստիտուտում (1938-ից): 1954-ին լույս է տեսել նրա «Երեք պատմվածք» գիրքը:

Գորիսյան կյանքի հաջորդ նշանավոր երգիչը Գուսան Աշտոն է (Աշոտ Դաղալյան, 1907-1989): Նա ծնվել է Գորիսում: Մանուկ տարիներին որպես գառնաքաղ չափել է հայրենի բնաշխարհի սարերն ու ձորերը եւ սրինգը ձեռքին նվագել գառների համար: Սրինգը շուտով դառնում է քամանչա, եւ 1928-ից նա զբաղվում է գուսանական արվեստով: 1958-ին նա ընդունվել է ԽՍՀՄ գրողների միության անդամ: 1967-ին արժանիորեն ստացել է Հայաստանի ժողովրդական արտիստի կոչում: Լույս են տեսել նրա «Աշուղական երգեր» (1946), «Գուսանի սերը» (1955, 1958), «Սիրո կրակներ» (1971), «Սրտի նվագներ» (1979), «Ծովաստղիկա» (1982) ժողովածուները:

Գուսանը գորիսյան բնանկարի ու բնաշխարհի անբաժան մասն էր թե՛ իր մարդկային կերպարով եւ թե՛ իր անգուգական արվեստով: Հատկապես բացառիկ են «Սյունյաց սաղեր», «Ծովաստղիկա», «Պախրա», «Հով սարեր, մով սարեր», «Սարի սիրուն յար», «Յար առանց քեզ», «Սերս վանքում Տաթեւի», «Գուսանն էն է»: Այս երգերի մեջ խոսքն ու մեղեդին ներդաշնակորեն ձուլված են իրար: Խոսքը մեղեդի է, մեղեդին՝ խոսք: Այդ անեն ունեն բնաշխարհիկ մաքրությունն, հեռու են օտար ազդեցություններից: Այդ մեղեդուն մեջ սարերի սյուքն է, արքայուրների կարկաչը, վերծիգ սյուների անհողդողդ ամրությունը, պախրայի կանչը, լեռնապանջերից ծորերին ցայող քարափների երգը, թռչունների դայլայլը, կաքավի շաղ-կղան…եվ անենամկարեւորը՝ այդ մեղեդու մեջ սիրո կարոտակեզ հառաչն է, մարդկային հոգու ծայնը, ապրումների նուրբ ու խոր աշխարհը:

Աշոտի երգերը վաղուց մեր ժողովրդի հոգեւոր գանձարանում են եւ իրենց անփոխարինելի տեղն ունեն ժամանակակից հայ մարդու հոգեկերտվածքի ձեւավորման գործում: Դրանք իսկական հոգու երգեր են, որոնք ոչ միայն լսում ես, այլեւ ապրում:

Աշոտը 20-րդ դարում հաստատուն պահեց հայ գուսանական-աշուղական արվեստը եւ դարձավ Սայաթ-Նովայի, Ջիվանու, Շերամի լավագույն ավանդույթների կրողն ու շարունակողը:

Գորիսում նրան բոլորը հիշում են Գուսան անունով: Սում եմ՝ Գուսանը, բառ է, որով մարմնավորում են եւ նրա մարդկային կերպարը, եւ նրա արվեստը:

Եւ ինքս տարիներ առաջ առիթ ունեցել եմ Սերո Խանզադյանի եւ Վարդգես Պետրոսյանի հետ Գորիսում հյուրընկալվելու նրա եւ նրա կնոջ երգի ու խոսքի հոգեշաի միջավայրում: Վեհացնող, մաքրագործող մի բանկ զգացում է մնացել այդ հանդիպումից:

Գարեգին Սեւունցը (Գարեգին Սեւիի Գրիգորյան, 1911-1969) ծնվել է Խնձորեսկում: Բարձրագույց կրթություն է ստացել Մոսկվայի համալսարանի կենսաբանական բաժանմունքում, սովորել ուսումնաօդային եւ սպայական դասընթացներում: Աշխատել է Բաքվի հայ մանուլում՝ «Կոմունիստ», «Խորհրդային գրող»: Ծառայել է խորհրդային բանակում: 1945-ից մշտական բնակություն է հաստատել Երեւանում: Եղել է «Պիոներ» ամսագրի գլխավոր խմբագիրը (1946-1952), արտասահմանյան երկրների հետ բարեկամության ու մշակութային կապի հայկական ընկերության նախագահը (1952-1954), Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար (1954-1959): Պարգեւատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի երկու շքանշանով:

Սեւունցի առաջին պատմվածքը լույս է տեսել 1928-ին: Այնուհետեւ մեկը մյուսի հետեւից տպագրվել են նրա պատմվածքների ժողովածուները, վիպակներն ու վեպերը՝ «Դեպի երկիր» (1935), «Ծովախորշում» (1938), «Վիշապասարի աղջիկը» (1945), «Առաջին շարք» (1947), «Ազատության պողոտա» (1947): Նրան հատկապես մեծ հռչակ բերեցին իրականում կյանքի պատկերները: Առաջին գիրքը վերնագրված էր «Իրականաց նոթեր» (1949), որի մեջ պարսկական կյանքի իրական տպավորություններն էին: Դրան հաջորդեց «Թեհրան» երկհատոր վեպը, որն ունեցավ մի քանի հրատարակություն (1952, 1953, 1945, 1973): 1954-ին հրատարակությունն իրականացվեց Բեյրութում: Սա ժամանակի ամենաընթերցվող գրքերից էր: Ընթերցողին հատկապես գրավում էին կենդանի ու հետաքրքրաշարժ դիպաշարը, արտասահմանի կյանքը: Հաջողություն ունեցավ նաեւ «Գեղիներ» (1958) վեպը՝ պատերազմական տարիների կյանքի մարտամասներով եւ դարձյալ հետաքրքրաշարժ դիպաշարով: Սեւունցի գոչիկ բնորոշ էր ակնարկային պարզությունը: Պատահական չեն նրա «Դանուբից Գանգես» (1957), «Վիետնամի գարուն» (1960) գրքերի ծնունդը, որոնք ճամփորդական նոթեր ու տպավորություններ են: Այն տարիներին այսպիսի գրքերը ընթերցողներ էին գրավում: Լույս է տեսել նաեւ նրա «Երկեր»-ի հինգհատորյա ժողովածուն (1963-1965թթ.): Հետամուտ տպագրվել են «Պետական գաղտնիք» (1967), «Կյանքը թեւերի վրա» (1984) եւ պատմվածքների ու վիպակների երկու ժողովածու՝ «Չիկա» (1968), «Այն օրերին» (1979):

Գաբրիել Արեւանը (Ալավերդյան, 1914-1968) ծնվել է Քարահունջ գյուղում: 1940-ին ավարտել է Երեւանի պետական հանվսարանի բաճանմուսանց ինքը: Խմբագրել է «Ղոնձի հանար» (Կապան, 1938-1945, 1954-1956), «Բանվոր» (Գյումրի, 1951-1953) թերթերը: Կյանքի վերջին տարիներին աշխատել է Երեւանի ռադիոկոմիտեում (1956-1968):

Արեւանն արձակագիր էր, արժանացել էր Ա.Իսահակյանի դրվատանքին, որ էլ նրա Ալավերդյան ազգանունը դարձրել է Արեւյան: Առաջին գիրքը «Որոնումներ գետնի տակ» (1949) վիպակն է: Նրա ճախասիրությունը գյուղի եւ քաղաքի արդյունաբերական վերկառուցումն է: Այդ գրական հակումների արգասիք են նրա ակնարկները, պատմվածքերն ու վիպակները:

Ակնարկների գրքերն են «Կթվորուհի Աղավնին» (1958՝ ճվիրված Նոր Կողբ գյուղի կոլտնտեսական Աղավնի Գրիգորյանին, «Վազի եւ հողի վարպետը» (1959՝ ճվիրված Քաղցրաշեն գյուղի բրիգադավար Սողոմոն Սարգսյանին, «Լավագույն կյանքի համար» (1961՝ ճվիրված Հոկտեմբեր գյուղի կոլտնտեսության նախագահ Սուրեն Խաչատրյանին, «Ժրաջան հովիվը» (1963՝ ճվիրված Վարդենիսի շրջանի մի անասնապահի: Ակնարկներ են նաեւ նրա «Ուրալյան տպավորություններ» (1951), «Ցորենաբլուր» (1958), «Հանքաշխարհ» (1959), «Հարուստ հեկտարի ետուգիաստներ» (1960), «Լեհական տեքստիլ կոմբինատում» (1961): Սրանք ըստ էության ժամանակի իրական պատկերն են. լավ թե վատ ունեն աշխատանքային ոգեւորության ամենեւին էլ ոչ երկրորդական պահեր: Այս ակնարկներից էլ ծնունդ են առել նրա «Հարուստ երակ» (1959) վիպակը եւ «Ասք ժամանակի» (1968), «Վերածնունդ» (1977) գրքերը:

Այսպիսի գրողները հանեստ ներկայությունեներ են գրական աշխարհի հավակնոտ միջավայրում:

Սերո Խանզադյանը (1915-1998) գորիսյան ծագումով այն հանրահայտ գրողներից մեկն է, որն ամբողջ կյանքում հավատարիմ մնաց իր բնաշխարհին ու բնաշխարհի մարդկանց եւ որպես գրող հաստատեց իր տեղը 20-րդ դարի երկրորդ կեսի հայ գրականության մեջ:

Ծնվել է Գորիսում, ավարտել տեղի մանկավարժական տեխնիկումը, 1934-1941թթ. ուսուցչություն է արել Տաթեւ, Խնձածխ, Յայջի (Հարժիս) գյուղերում, 1941-1945թթ. մասնակցել է Երկրորդ համաշխարհային պատերազմին: Հետագա տարիներին զբաղվել է ստեղծագործական աշխատանքով:

Արժանացել է բազմաթիվ կոչումների, մրցանակների ու պարգեւների՝ Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ (1974), Հայաստանի պետական մրցանակի դափնեկիր (1977), Սոցիալիստական աշխատանքի հերոս (1984), Հայաստանի աշխարհագրական ընկերության պատվավոր անդամ (1985), Երեւանի պատվավոր քաղաքացի (1985): Պարգեւատրվել է Լենինի, Հայրենական պատերազմի առաջին եւ երկրորդ աստիճանների, Կարմիր աստղի, Աշխատանքային կարմիր դրոշի (2) եւ Պատվո նշան շքանշաններով: Ընտրվել է Հայաստանի (1980-1985, 1985-1990) եւ ԽՍՀՄ (1989-1991) Գերագույն խորհրդի պատգամավոր:

Սերո Խանզադյանը գրականություն մտավ կյանքից: Նրա աչքի առջեւ էր թե երկրի գյուղատնտեսական ու արդյունաբերական վերակառուցումը, թե պատմությունը՝ անցյալի էջերով ու նոր ժամանակների պատերազմական տարիների հերոսացումներով եւ թե՛ բնաշխարհը՝ աշխարհագրությամբ, բնակավայրերով ու սովորույթներով: Սա շատ մեծ ընդգրկում է, որ մարմնավորվեց նրա վեպերում, վիպակներում, պատմվածքներում եւ «Հայրենապատում»-ի հատորներում, որի տպագրությունն սկսվեց 1980 թվականին:

Առաջին պատմվածքը՝ «Չոր տափը», լույս է տեսել 1933-ին Գորիսի «Կարմիր Ձանգեզուր» թերթում: «Հայրենի վտակներ» (1940) ժողովածուի մեջ տպագրվել են նրա բաաստեղծությունները: Առաջին գիրքը «Մեր գնդի մարդիկ» վեպն է, որ լույս տեսավ 1950 թվականին: Մինչ այդ կազմել եւ լույս էր ընծայել եւս մի գիրք՝ բանահյուսական նյութերի ժողովածու, որի մեջ փառաբանվում էին նոր կյանքը եւ նոր կյանքի կառուցողները՝ երկրի ղեկավարի գլխավորությամբ («Գուսանական ժողովրդական երգեր», 1949): Այնուհետեւ լույս են տեսել հետեւյալ գրքերը՝ «Հողը», (վեպ, հհ. 1-2, 1954-1955, 1957), «Որոտանի կիրճում» (պատմվածքներ, 1954, 1956), «Լալ Համազ» (պատմվածքներ, 1955), «Կարմիր շուշաններ» (պատմվածքներ, 1958), «Քարանձավի բնակիչները» (վիպակ, 1959, 1979), «Մխիթար սպարապետ» (պատմվեպ, 1961, 1962, 1963, 1962-ին՝ նաեւ Բեյրութում), «Կորած արահետներ» (պատմվածքներ, 1964), «Քաջարան» (վեպ, 1965), «Այրված տունը» (պատմվածք, 1965), «Մատյան եղելությանց» (վեպ, 1966), «Անծրեւից հետո» (վիպակներ, 1969), «Ինչո՞ւ, ինչո՞ւ» (պատմվածքներ, հեքիաթներ, 1970), «Երեք տարի 291օր», «Ռազմաճակատային օրագիր» (1972), «Սեւանի լուսաբացը» (վեպ, 1974), «Խոսեք, Հայաստանի լեռներ» (վեպ, 1976, 1980), «Վվանդատուն» (հեքիաթներ, առակներ, զրույցներ, 1976), «ԹագուհիՀայոց» (վեպ, 1978), «1971, ամառ» (պատմվածքներ, վիպակներ, 1979), «Արաքսը պտտորվում է» (վեպ, 1985), «Ինչպես հիշում եմ: Հուշեր» (1988), «Անդրանիկ» (1989), «Շուշի» (1991), «Գարեգին Նժդեհ» (1993): Ավելացնենք, որ գրել է նաեւ «Սահում Որոտանցի» (1938) թատերգությունը՝ Յուրաբերդի գյուղացիների ապստամբության մասին (10-րդ դար), բեմադրվել է 1940-ին: Այս ընթացքում նա լույս է ընծայել նաեւ երկերի երկու ժողովածու՝ 5 հատորով (1967-1970) եւ վեց հատորով (1981-1983): Նրա երկերը թարգմանվել են ռուսերեն, ուկրաիներեն, պարսկերեն, անգլերեն, գերմաներեն, արաբերեն, բուլղարերեն, էստոներեն եւ ԽՍՀՄ ժողովուրդների տարբեր լեզուներով: Առանձնահատուկ են Ս.Խանզադյանի պատմական վեպերը, որոնց ժամանակային ընդգրկումն ամբողջ հայոց պատմությունն է՝ սկսած Ք.ծ.ա. 14-րդ դարից («Թագուհի Հայոց»), մինչեւ 20-րդ դարը («Անդրանիկ», «Նժդեհ»):

Պատմավեպերի շարքում առանձնանում է «Մխիթար սպարապետը»: Այն յուրովի շարունակում է Ռաֆֆու «Դավիթ Բեկ»-ը՝ պատկերելով 18-րդ դարի առաջին տասնամյակներին հայոց ոգու արթնացումը եւ պայքարը երկրի ազկախության համար: Խանզադյանի վեպն ունի ճիշտ կառուցված դիպաշար, հերոսները կերպավորված են, գրված է հուզմունքով եւ ժամանակի լավ իմացությամբ: Վեպի հիման վրա ստեղծվել է «Դուստ աստղ» (1978) կինոնկարը:

«Խոսեք, Հայաստանի լեռներ» վեպի նյութը երգնկայի խաներյան ճակատագիրն է, ավելի որոշակի՝ Կաթան գյուղը ու գյուղում ծավալվող դեպքերը՝ թուրքական խուժան, կոտորած, դիմադրություն եւ բռնագաղթ: Դեպքերն ընդգրկում են 1915-1921թթ.՝ պատմական հայրենիքի կորուստ եւ նորաստեղծ հայոց պետություն: Խանզադյանի գրեթե բոլոր վեպերն ունեն պատմական հիմք: Այդպիսիք են եւ «Երեք տարի 291 օր», եւ «Քաջարան» վեպերը: Դեռեւս «Մեր գնդի մարդիկ» վեպում Խանզադյանն արդեն վիպական հյուսվածքի մեջ էր ներքաշել իր պատերազմական տպավորությունները: Նույն այդ տպավորությունները օրագրային անմիջական գրառումների տեսքով հյուսել են նրա «Երեք տարի 291 օր» վեպը, որն ամբողջովին հիքնակենսագրական է: Շարադրանքն սկսվում է 17 տարեկանում կամավոր բանակ մեկնող գավառական քաղաքի ուսուցչի կենսագրությունից եւ ավարտվում հաղթող բանակի գինվորի իմաստնացած փորձով: Անմիջական տպավորություններն ու շատ չմանրամասնվող պատումը վեպին հաղորդում են զգացմունքայնություն, նաեւ ներքին զարգացում: Վեպի հերոսները, հեղինակից բացի, նրա հետ պատերազմի դժվարին ճանապարհն անցած մարդիկ են (Սախնով, Շուրա): Ստրհանաբար կուտակվում է հոգեբանական մի լարվածություն, որը հետեւանք է հազարավոր մահերի, դժվարությունների եւ հաղթանակի սպասումի:

Պատերազմի դաշտում հեշտ չեն գրվել նաեւ օրագրի էջերը: Պահ է եկել, որ քիչ է մնացել, որ հեղինակը դրանք պատոր ու դեն նետի: Բայց մնացել-պահպանվել են՝ պատմելու պատերազմի, մահվան ու հաղթանակի մասին եւ հիմք դառնալու այս վեպի ստեղծման համար: «Քաջարան» վեպում հետպատերազմյան տարիների տնտեսական վերազինումն է՝ Քաջարան քաղաքի կառուցումով եւ պղնձամոլիբդենային կոմբինատի գործարկումով: Վեպում կան սոցիալ – հոգեբանական կարգի տարբեր անցումներ՝ նախկին գյուղացին աստիճանաբար անցնում է քաղաքային կյանքի, կյանքի արդյունաբերական վերակառուցման հետ վերափոխվում են նաեւ մարդիկ: Վիպական այս տարածությունը բացում է հերոսների բարոյական բախման լայն տեսադաշտ:

Այս մտայնությունը որքանով որ գեղարվեստորեն հաղթահարվեց «Քաջարան»-ում, նույնքան ձախողվեց «Սեւանի լուսաբաց»-ը վեպում՝ նվիրված Արփա-Սեւան ջրատարի շինարարությանը: Հիմնական թերությունը նյութի ընկալման եւ կերպարների կերտման սխեմատիզմն էր:

Խանզադյանի լավագույն ստեղծագործություններից մեկը «Մատյան եղելությանց» վեպն է: Հերոսը նվիրված է հեղինակին: Հեղինակի ու իր հերոսի աչքի առջեւով գալիս անցնում են փոքրիկ քաղաքի, ըստ ակնարկների՝ հեղինակի ծննդավայր Գորիսի մարդիկ: Նրանք երեւում են իրենց կյանքի պատմությունների, կենցաղով, փոխադարձ հարաբերություններով: Ճել Ավանը փողոց մաքրող է: Նրա աչքի առաջ է ամբողջ քաղաքը: Լուռ ու մունջ նա իր գործին է, բայց աչքը շատ բան է տեսնում, եւ խիղճը շատերի գնահատական է տալիս՝ դրսեւորելով իր համակրանքներն ու հակակրանքները: Ըստ այդմ էլ ձեւավորվում է կառուցվածքը՝ առանձին բաղերում գրված ապրող մարդկանց որոշակի պատմությունների շուրջ համախմբելով հերոսների դիմանկարները:

Այդ ընթացքում ձեւավորվում է եւ հեռց իր՝ ճել Ավանի կերպարը, որը ողբերգական ճակատագրի տեր մի մարդ է: Սովից եւ պատերազմում գոհվել են նրա հինգ որդիները, անձնական ցավը ծանր տանելով՝ նա անչար ու բարի աչքով է նայում մարդկանց, քանի որ ժողովրդական իմաստության կրող է: Գլխավոր հերոսի եւ քաղաքային կերպարների մարդկային պատմությունների շաղախով գրողն ստեղծում է քաղաքի ամբողջական պատկերը՝ կենցաղից ու բարոյական հարցադրումներից մինչեւ սոցիալ–տնտեսական խնդիրներ:

Վեպի հիման վրա ստեղծվել է հեռուստաբեմադրություն (1966):

Ս.Խանզադյանի ստեղծագործությունը եղել է հայ քննադատության ուշադրության ոլորտում: Գրախոսվել են նրա գրքերը, գրվել են հոդվածներ, ստեղծվել են մեծագրություններ (Գ. Հայրյան, Թ.Պետրոսյան), կազմվել է նրա մատենագիտությունը (1992): Հիմա ժամանակն է՝ կազմելու նրա մասին հիշողությունների գիրք:

Սերո Խանզադյանի ամբողջ արձակը ժամանակի գաղափարական հարցադրումների արձագանքն է եւ, որպես այդպիսին, կպահպանի իր պատմական նշանակությունը:

Սուրեն Այվազյանը (1915-1981) ծնվել է Խնձորեսկում: 1934-ին ավարտել է Գորիսի մանկավարժական տեխնիկումը եւ որպես ուսուցիչ աշխատել Խնածախ եւ Տեղ գյուղերում: 1942-ին ավարտել է Բաքվի հանվսարանի բանահրական բաժանմունքի հայկական բաժինը: 1942-1945 թթ. մասնակցել է երկրորդ համաշխարհային պատերազմին: Պատերազմից հետո աշխատել է «Կոմունիստ» թերթի խմբագրությունում: 1953-ից բնակություն է հաստատել Երեւանում:

Ս. Այվազյանն արձակագիր էր, գրել է պատմվածքներ, վիպակներ, վեպեր, մանրապատումներ: Տպագրվել են հետեւյալ գրքերը՝ «Անավարտ գորգը» (պատմվածքներ, 1947), «Խորանձորցիք» (պատմվածքներ, 1951), «Լեռնցիներ» (վեպ, 1955), «Խիղճը» (պատմվածքներ, 1957), «Տուր ձեռքդ, կյանք» (վիպակ, պատմվածքներ), «Անշեջ կրակների կղզին» (վիպակ, պատմվածքներ, 1960), «Տուր ձեռքդ, կյանք» (2-րդ մաս, 1961), «Հովիվը» (պատմվածք, 1963), «Բարի առավոտ» (վեպ, 1964), «Ջրաղացի ճանապարհին» (պատմվածք, 1964), «Ճակատագիրն հայոց» (վեպ, 1966), «Բարձունքի վրա» (պատմվածք, 1970), «Կա եւ ետմահու կյանք» (վիպակներ, պատմվածքներ, 1971), «Գարունս ծյուների տակ» (մանրապատումներ, 1972), «Առավոտ լուսո» (վեպ, 1976), «Խնձորեսկ» (վեպ, 1982), «Սաուր, հե՛յ Սաուր…» (վիպակ, 1985):

Այվազյանը գրականություն բերեց թե՛ իր բնաշխարհի ու հատկապես ծննդավայր Խնձորեսկի կյանքն ու կենցաղը, թե՛ ժամանակակից կյանքը, թե՛ պատմական անցյալը:

17-18-րդ դարերի ազատագրական պայքարն առանձնահատուկ տեղ ունի հայ պատմվիպասանության մեջ, ինչն արտահայտվել է նաեւ Այվազյանի «Ճակատագիրն հայոց» եւ «Առավոտ լուսո» վեպերում: Առաջինում ազգային գործիչ Իսրայել Օրու, երկրորդում՝ մեծագույց լուսավորիչ, նոր ժամանակների ազգային ոգու վերածնունդի խոշորագույն ներկայացուցիչ Խաչատուր Աբովյանի կյանքի ու գործունեության պատկերումով գեղարվեստորեն յուրացվում է հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների պատմությունը: Օրին, Եվրոպայից գալով Ռուսաստան եւ բանակցելով Պետրոս Մեծի հետ, Աբովյանը՝ իր ամբողջ գործունեությամբ ջանում էին օգտակար լինել իրենց ժողովրդին՝ նրա փրկության հույսը կապելով հյուսիսի հզոր հարեւանի հետ: Հայացքի այս ուղղությունը պայմանավորված էր պարսկաթուրքական ծանր ճնշումներով, ինչն էլ ժողովրդի մեջ բորբոքել էր ազատագրական պայքարի բոցը: Վեպերը հարուստ են 17-18-րդ դարերի արեւելքի ու արեւմուտքի դիվանագիտական հարաբերությունների պատմությամբ, հայ եւ հարեւան ժողովուրդների կենցաղի, սովորությունների նկարագրություններով: Ամենակարեւորը՝ կերտվել են հայ հերոսներ՝ պատմական հոգեբանության թանձր նստվածքով:

Շողիկ Սաֆյանը (1916-1995) եւս ծնվել է Խնձորեսկում: Նա Գարեգին Սեւունցի կինն էր: 1939-ին ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության բաժանմունքը: 1941-1945թթ. աշխատել է տեղի «Կոմունիստ» թերթի խմբագրությունում: 1946-ից բնակություն է հաստատել Երեւանում: Աշխատել է «Ավանգարդ» թերթում, Հայպետհրատում, գրողների միությունում:

Սաֆյանը բանաստեղծուհի էր: Տպագրվել են նրա «Կարոտի երգեր» (1947), «Ամենալավ վվերը» (1949), «Մեր երգը» (1953) բանաստեղծությունների եւ «Մի հին հեքիաթ է սա» (1963, 1977) մանրապատումների ժողովածուները: Սաֆյանը բանաստեղծական այն սերունդի ներկայացուցիչներից է, որի մեջ էին Հ. Սայադը, Պ. Սեւակը, Վ. Դավթյանը, Մ. Մարգարյանը եւ ուրիշներ: Նրա պոետզիայի բնորոշ է ահա այդ սերունդի զգացական ու գաղափարական աշխարհը, ինչն արտահայտվել է քնարական բանաստեղծությունների մեջ: Նա նաեւ բարգմանիչ է. հայերեն է թարգմանել Ռուդաքիի քառյակները, ճապոնացի Սեիտե Մացումոտոյի «Ստորջրյա հոսանք» վիպակը, Մայն Ռիդի «Հարավային Աֆրիկայի խորքերում» երկը, բազմաթիվ ռուս, ինչպես նաեւ նորվեգացի, ուկրաինացի, նաեւ բարգմանիչ, ռազախ, վրացի եւ այլազգի գրողների երկեր: Նա հայերեն է թարգմանել նաեւ ռուսագիր հայ գրողներ Գեորգի Խոլոպովի (Գեւորգ Խալափյան), Ռիչի Գոստյանի եւ Պետրոնի Ամատունու արձակ ստեղծագործությունները:

Շմավոն Հովսեփյանը (1926-2002թթ.) ծնվել է Խնձորեսկում: Հայտնի է որպես առակագիր, երգիծաբան: Գրել է առակների հինգ ժողովածու:

Ալբերտ Իսաջանյանը (1937-1983) ծնվել է Գորիսի շրջանի Հալիձոր գյուղում: 16 տարեկանում էլեկտրասյունից ընկել, վնասվել եւ գամվել է անկողնուն: Դրսեկ կարգով ավարտել է Քարահունջի միջնակարգ դպրոցը:

Խորտակվել էր նրա կյանքը, եւ նա փրկությունը գտել է պոեզիայի մեջ: Տպագրվել է «Ավանգարդ»-ում, ժամանակի գյուս գերթերում եւ հանդեսներում: Լույս է ընծայել բանաստեղծությունների երկու ժողովածու՝ «Ծաղկե կամուրջ» (1965), «Ծաղիկ իմ հեռավոր» (1977) եւ «Ոչ, հայրիկ, ես մեծ բան եմ կորցրել» (1971) վիպակը:

Նա գրում էր իր մահվան մասին, իր հետ կատարված ծանր ողբերգության մասին, թղթին էր հանձնում իր թանկ ապրումները՝ փորձելով չչարանալ իր հանդեպ այդքան դաժան գտնված կյանքի հանդեպ: Գրելը նրա համար ապրել էր եւ կյանքի շարունակությունն:

Էդվարդ Ջոհրաբյանը (1937-2009) ծնվել է Բարձրավան գյուղում: Կիրովականի մանկավարժական ինստիտուտի ավարտական կուրսից տեղափոխվել է Մոսկվա եւ ուսանել բարձրագույց կուսակցական դպրոցի լրագրության բաժնում (հասարակական գիտությունների ակադեմիա): Երկար տարիներ եղել է գրողների միության Սյունիքի մասնաճյուղի նախագահը: Աշխատել է շրջանային եւ հանրապետական մամուլում, Արմենգոնա գործակալությունում, հինմարդել եւ խմբագրել է Սյունիքի գրողների միության «Սյունիք» գրական-մշակութային թերթը, կատարել է «Տաթեւ» ամսագրի գլխավոր խմբագրի տեղակալի պարտականությունները, եղել է «Մշակ» թերթի հինմարդիր խմբագիրը, աշխատել որպես Գորիսի քաղաքային մշակույթի բաժնի վարիչ: Հայրուռուս գրական կապերի զարգացմանը նպաստելու համար ՌԴ «Ազգային փառք» բարեգործական հինմարդամի կողմից պարգեւատրվել է ՌԴ Ոսկե աստղ շքանշանով: Բանակային ծառայության տարիներին Է.Ջոհրաբյանը եղել է Օդեսայի ԲԵԿ ֆուտբոլային թիմի դարպասապահը, դարձել սպորտի վարպետ: Արժանացել է Ակսել Բակունցի գրական մրցանակի (1993): Գորիսի պատվավոր քաղաքացի էր (2007):

Հրատարակել է պատմվածքներ, վիպակներ, ակնարկներ, որոնք զետեղված են հետեւյալ գրքերում՝ «Որոտանի որդիները» (1974), «Բողբոջները չբացվեցին» (1978), «Խորածածի մարդիկ» (1983), «Ամենքը մի աշխարի ուեն» (1985), «Յոլաներեր» (1988), «Հավերժություն» (1990), «Նրանք չվերադարձան մարտից» (հհ. 1-2, 1995-1997), «Սյունյաց սարեր» (Ս. Ջիլիզարյանի հեղինակակցությամբ, 1997), «Տառապած վրձնի լույսը» (Մարտին Ջիլիզարյանի հեղինակակցությամբ, 1997), «Վերո Խանզադյան» (Մարտին Ջիլիզարյանի հեղինակակցությամբ, 1997), «Ջիեր» (1998, 2000), «Սվանդապատում» (2000, 2002), «Օրբելյաններ» (Կոնստանդին Օրբելյան, 2000), «Լեռնաշխարհի լույսերի հնձանը» (Տաթեւեի մասին, 2000), «Ինքս ինձ հետ» (մանրապատումներ, 2002), «Խնձորեսկ» (2003), «Օրացույց» (կազմել է մանկական բանաստեղծություններով, 2003), «Հիմ ջրաղացի նովելը» (2003), «Գուսան Աշոտ» (2004), «Պատմություններ Անդրանիկի մասին» (2004), «Գորիսի ժողովրդական բանահյուսություն» (2004), «Մեծ ճանապարհի որբերը» (2005), «Ազոյաններ», «Հնչպես մի լեռ խուստուփ», «Նշանավոր գրականագետ, թատերագետը» (Կամո Արզումանյանի մասին, 2005), «Գրական Սյունիք» (կազմել է ժողովածու, 2005), «Իմ Վանկիկ Սաաթյանը» (2005), «Գորիս» (հանրագիտություն, 2005), «Կեսդարյա նվիրում» (Վիրաբույժ Հմայակ Գրիգորյանի մասին, 2007), «Այսպես «հանիպեցի» Բակունցին» (2008): Է.Ջոհրաբյանը կատարել է նաեւ բարգմանություններ Ա.Տիշկովից, Գ.Կարապետյանից, խմբագրել է բազմաթիվ գրքեր:

Թողել է մեկ տասնյակից ավելի անտիպ երկեր: Նրա գրական հարուստ եւ բազմակողմանի ժառանգության մասին մենագրություն է գրում գրող, լրագրող Վանիկ Սաաթյանը:

Արկադի Ծատուրյանը ծնվել է 1937թ. Խնձորեսկում: Ավարտել է Երեւանի Խ. Աբովյանի անվան պե-

Շարունակությունը՝ էջ 74

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ակսել Բակունցի հուշարձանը Գորիսում (1965թ., քանդակագործ՝ ՀՀ ժողովրդական նկարիչ Գրիգոր Բառալյան)

ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆ

ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Շարունակվում է Շենի Հին կռիվը...

Գորիսն ու գորիսեցիները Բակունցի ստեղծագործություններում

ԿԻՄ ԱՂԱԲԵԿՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Բակունցը, ինչպես ճշմարիտ եւ բնատուր տաղանդ ունեցող գրողները, մեծ գրականություն է մտնում ծննդավայրից:

Հենց ծննդավայրում է կազմավորվում նրա հոգեկերտվածքը, ուղղորդվում միտքն ու մտածումը, խմորվում ստեղծագործող անհատի ասելիքի բաղադրությունը, մարդկային խառնվածքն ու ճկարագիրը:

Մանկության տարիներից հայրենի եզերքում ունեցած շփումները, ստացած տպավորությունները, հուշերն ու հիշատակները, դեպքերն ու դիպվածները, կոշտ ու կոպիտ, նուրբ ու փափուկ հարաբերությունները, ստացած դասերն ու լսած զրույցները մեծ հետք են թողնում նրա ներաշխարհում:

Այս որակները հետագայում ամրապայվում են ճեմարանական միջավայրում:

Պատանի Բակունցի զգայությունների աշխարհում բացվում են նոր պատուհաններ:

Մանկության տարիների տպավորություններն ու նոր գիտելիքները, պատեղազմական տարիներին՝ Կարիճից մինչեւ Սարդարապատ անցած ճանապարհի, եւ ապա՝ քաղաքական վայրիվերումների փոր-ձառությունները տիրական ազդեցություն են թողնում երիտասարդ մարդու հոգեկերտվածքի վրա:

Այս ամենը վարար հոսքերով ներծծվում է նրա ոգու ու արյան մեջ, այնպես, ինչպես սեւ ցելերն են կլլանում եւ իրենց մեջ պահում խոնավությունը՝ առատ բերք ապահովելու երաշխիքով, ինչպես լեռնալանջին, կամ մեծ անտառից գատված հանդամիջյան ճամփեզրին վեհորեն կանգնած միայնակ կաղնին, հաղթահարելով հողի կարծրությունը, խորացնում է արմատները՝ սաղարթների ստվերում հանդի մշակներին հանգիստ պարգեւելու համար:

Բակունցը մեր արձակի այդ միայնակ կաղնին է, սեւ ցելերի անօրինական ոչ քաջարի սերմնացանը, որ իր գրական հերկերում ցանում է սիրո ու բարության, առաքինության ու ճկիրտների, հույզերի ու զգացումների, թրթռացող ապրումների ծփացող գունեխաղերով, լույսերով ու ջերմությամբ շաղախված սերմեր:

Ջարմանալի այդ պայծառ մարդը, ինչպես իր ստեղծագործությամբ, այնպես էլ քաղաքացիական նկարագրով, մարդկային խառնվածքով, մանավանդ իրականության եւ իրադարձությունների նուրբ ու հիմնարար ընկալումներով, լուրջ ու հավասարակշռված վարքաբանությամբ, իր սերերով ու մտահոգություններով էլ առանձնանում է իրրեւ խոշոր ու խորապես ինքնատիպ անհատականություն, ափեափ լցված անշեղ հայեցիությամբ: Նա Ժողովրդի կեցության ու կացության, կարոտների ու ձգտումների, նրա մշակույթի ամփոփոնող գրողն է: Ավելի ստույգ՝ իր ցավն ու տառապանքը, սերն ու կարոտը բխում են ժողովրդական ոգու ներքին շերտերից:

Այս երեւույթն աներկբայորեն նկատելի է նույնիսկ նրա անկրկնելի բնապատկերների մեջ, որոնք շնչում են հայերեն եւ առավել խտացնում մեծ գրողի՝ մարդու նկատմամբ դրսեւորած սերն ու կարեկցանքը:

Սեփական փորձով գիտեմ՝ ընթրցողն ամեն անգամ Բակունցի էջերից դուրս է գալիս հարստացած, մաքրագործված ու նորացված եւ ամեն անգամ զգում, վերապրում գրողի տագնապները ու մտահոգությունները. «... Ուզում եմ, որ այս անզարդ տողերը մնան այնքան, որքան կմնա մեր քարափը»: Տագնապներն ու մտահոգություններն իրական էին, ցանկությունը՝ խմորված մեծ հավատով:

Իհքը գիտեր իր մեծությունը, հավատում էր քարափի ու ժողովրդի հավերժությանը: Համատարած երկյուղի ու վախի մեջ ժողովուրդը սրբությամբ պահեց իր պայծառ առաջին հերթին պետք է ճանաչել հեղհեղակին, նրա սերերի եւ մտահոգությունների աշխարհը: Այդ պառագայում հասկանալի կդառնա, որ ոչ միայն անարդար, այլեւ ուղղակի մոլորություն է մեծ գրողին «գյուղագիր» համարել: Բակունցը լայն ընդգրկումների հեղինակ է:

Ճշմարիտ է՝ տիրապետողը գյուղական միջավայրն է, բայց նա գրում է մարդու ճակատագրի, սոցիալ-քաղաքական, բարոյահոգեբանական փլուզումների մասին, լայնորեն բացում նրա զգայությունների աշխարհը, հայտնաբերում զարմանալի ուրախությամբ պահեց իր պայծառ ոգեղեցկություններ, ցաւի մի ուրիշ հնչերանգով:

Բակունցի բոլոր երկերին էլ հատուկ են, այս դեպքում, կյորեսեցու կենսափիլիսոփայությունը, լեզվամտածողությունը, կյորեսերենի հմայքը, ազգային ոգու հավընդհանուր կոփվածքը:

Նույնիսկ կիրճերն ու լեռնապատկերները, քերծերն ու քարափները, անդունդ գլորվող քարերի արձագանքները, գետերի սառնությունն ու գահավիժման ձայները, թանձր լռությունն ու չասված խոսքերը, դաշտանկարներն ու քարքարոտ կածանները, փոշեպատ ճամփաները որ խոսում են կյորեսավարի:

Պարզապես պետք է ընդգծել, որ Բակունցի գրականության ատաղձը, նրա հիմնական ակունքը իր հայրենի եզերքն է:

Մեծ գրողը կարողանում է մասի մեջ տեսնել ամբողջը, միրո մի համբույրի մեջ տեսնել մարդկային երջանկությունը, մի կաթիլ արցունքի մեջ տեսնել մերժված հոգիների տրտմությունն ու տխրությունը:

Բակունցը նույնացել է իր բնաշխարհի եւ այնտեղ ապրող մարդկանց հետ, իսկ այդ բնաշխարհը բոլորովին էլ գավառ չէ, այլ ամբողջական հայրենիք է՝ իր փլուզումներով, բանկագիհ կորուստներով, վիճակների անորոշությամբ, երկրի բախտով ապրող մարդկացով:

Բակունցի «Կյորեսեականում» լսվում է ոչ միայն եզերքի, այլեւ ամբողջ Հայաստան աշխարհի վերջին մի հարգ:

Վերոհիշյալ «փոքրիկ ֆելիետոնը» գրողի հեռագնա ճանապարհի առաջին քայլն էր, եւ քայլն արված էր՝ մեծամիտ եւ հավակնոտ, հասարակությունն այլասերող, նույն հասարակության տակաքը մերանող քաղքենիության դեմ:

Նկատենք, որ քաղաքագլխի պաշտոնը զբաղեցրած Սաթվեիչը ֆելիետոնի էջերում այնպիսի ճշմարտացիությամբ եւ մեծ վարպետությամբ է ներկայացվում, որ կատարյալ գրական կերպարի տպավորությունն է թողնում: Այսօր էլ նրանք կան, եւ այդ իրենց «անհայտությամբ հայտնի» պաշտոնամոլներին կարելի է հանդիպել ամենուր: «Փոքրիկ ֆելիետոնին» հաջորդեցին փոքրիկ պատմվածքներ, գրական պատկերներ, ակնարկներ, որոնք ակնհայտորեն խոսում էին Բակունցի բնական տաղանդի եւ ստեղծագործական կարելիությունների մասին:

Առաջին «փայլուն ապագա խոստացող» երիտասարդ գրողին նկատեց Առաջին Հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանը:

Բայց, դժբախտաբար, նրան չհաջողվեց իրականացնել Բակունցին եվրոպական կամ ամերիկյան կրթությամբ տալու իր իսկ բուռն ցանկությունը (Այդ մասին տես՝ Սիմոն Վրացյան «Հին թղթեր նոր պատմության համար» գիրքը, Բեյրութ, 1962թ.):

Բակունցի գրական ճշմարիտ, հանրագումարային վկայությունն է «Կյորես» վիպակը, որին հասնելու ճանապարհն անցնում է տարաբնույթ պատումների միջով:

Այս առումով գրական ճշմարիտ, հանրագումարային վկայություն է «Կյորես» վիպակը, որին հասնելու ճանապարհն անցնում է տարաբնույթ պատումների միջով:

Վերոհիշյալ «Հյուսիսային ծանր» գրքում Սաթվեիչի ելույթում գրեթե բոլոր գրական-գեղագիտական հարցերն են դրվում, բայց դրանց մեջ ամենաարդիականն, անշուշտ, Բակունցի գրական-գեղագիտական հայացքներն են:

Գրքի հեղինակը, Գ.Ասատրյանը, գրում է. «Ինչպես գիտենք, Բակունցի գրական-գեղագիտական հայացքներն ամենաուշագրավ եւ ամենաարդիական հարցերն են, որոնք դրվեցին գրքի մեջ: Դրանք ոչ միայն գրական-գեղագիտական, այլեւ ազգային-հասարակական, մարդասիրական, բարոյական, ինչպես նաեւ գեղեցկության, գեղարվեստի, գրականության, գրողի ստեղծագործության, գրողի եւ ժամանակի, գրողի եւ ազգի, գրողի եւ ազգային մշակույթի, գրողի եւ ազգային ավանդույթների, գրողի եւ ազգային ինքնության, գրողի եւ ազգային հոգեբանության, գրողի եւ ազգային հոգեկերտվածքի, գրողի եւ ազգային ոգեղեն հարստության, գրողի եւ ազգային ոգեղեն հարստացման, գրողի եւ ազգային ոգեղեն հարստացման ուղիների, գրողի եւ ազգային ոգեղեն հարստացման ուղիների ... մասին»:

Գրքի հեղինակը, Գ.Ասատրյանը, գրում է. «Ինչպես գիտենք, Բակունցի գրական-գեղագիտական հայացքներն ամենաուշագրավ եւ ամենաարդիական հարցերն են, որոնք դրվեցին գրքի մեջ: Դրանք ոչ միայն գրական-գեղագիտական, այլեւ ազգային-հասարակական, մարդասիրական, բարոյական, ինչպես նաեւ գեղեցկության, գեղարվեստի, գրականության, գրողի եւ ժամանակի, գրողի եւ ազգի, գրողի եւ ազգային մշակույթի, գրողի եւ ազգային ավանդույթների, գրողի եւ ազգային ինքնության, գրողի եւ ազգային հոգեբանության, գրողի եւ ազգային հոգեկերտվածքի, գրողի եւ ազգային ոգեղեն հարստության, գրողի եւ ազգային ոգեղեն հարստացման, գրողի եւ ազգային ոգեղեն հարստացման ուղիների ... մասին»:

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Քաղաք, նրանց հետեւեցին ուրիշները: Գյուղն ունեզրկվեց, գյուղացին դարձավ վարձու աշխատող, մանր առեւտրական, պարտքերի դիմաց վաճառքի հանեց ամբողջ ունեցվածքը:

«Քաղաքը մեծացավ: Յունբաթի ծորում, Միջին մահլայում, Գյունեյ թաղում մնացին հացթուխներ, գզրար կանայք, լվացարարներ, գորգագործ պառավներ, անտառից շալակով ուրիշի համար ցախ բերող մարդիկ, սրա-նրա դռանը օրահաց աշխատող աղջիկներ եւ մանուկներ, որոնց ամենամեծ հոգվանքը քաղաքում օրնիբուն լվացք անող մոր վերադարձն էր, գոգնոցի ծալքում պահած հանեղ պատառը:

Այսպես հալվեց ծորի գյուղի աստղը»:

Այս ակնարկային պատումի մեջ գրողը Յունմբաթի ծոր էր եկել պետական հանձնառությամբ՝ ժողով գումարել, հանգել երբեմնի շեն ու մարդաշատ գյուղում ապրող տանջահար մնացորդաց՝ փնտրել նոր գյուղատեղ:

Բայց մեծ գրողն իրականության խորունկ դիտարկումներով, համակող սիրով ու թանձր թախիծով առավել տեսանելի է դարձնում երեւույթի հեռագնա ողբերգականությունը:

Հազար թելերով, հոգով ու մարմնով իր հանդ ու հողին հարազատացած մարդուն հանում են իր միջավայրից, խաթարում բնական զարգացման ընթացքը: Մարդը դադարում է գյուղացի լինելուց, բայց եւ քաղաքացի էլ չի դառնում:

Կնշանակի, որ մարդու քաղաքացիական կարգավիճակի մեջ առաջ է գալիս մառախլապատ մի անորոշություն, որից դուրս գալու ուղիներ չկան:

Երբեմն մի բառով, դիպուկ մի արտահայտությամբ գրողն ուղղակի տեսանելի է դարձնում կտրուկ պարտադրանքներով եւ կոպիտ միջամտություններով գյուղում կատարվող գործողությունների դաժան ընթացքը եւ ավելի քան տխուր հետեւանքները:

Մարդիկ հեռանում են, գյուղը դատարկվում է. «Այսպես էր սկսում իր չուն վաչկատուն ցեղն անցած դարերում»:

Դատարկվող գյուղի ավերակների վրա իջնում է ամայի տխրություն: Կյորես-գորիսյան տարեգրության ստուգապատում էջերից է «Յունմբաթի ծորը», որով ընդհանրացվում է նաեւ Միջին մահլայի եւ Գյունեյ թաղի, ասել է, թե Շենի ամայացումը:

Բնակավայրերի այս կարգի փլուզումները առավելում են դարերով համակարգված բարքերն ու սովորությունները, փոխվում է մարդը՝ աշխատանքի, հող ու հանդի, վար ու ցանքսի, արտի ու արոտի նկատմամբ ունեցած իր խորապես բնական վերաբերմունքով: Մարդը կտրվում, հեռանում է բնությունից՝ կորստի մատնելով մի ողջ մշակույթ:

Սա է, որ մեծ ցավ է պատճառում գրողին՝ թանձրացնելով նրա տխրությունն ու կարեկցանքը նույն մարդու նկատմամբ:

«Բրուտի տղան» պատմվածքում արդեն որոշակիորեն զգացվում են ատտիճանաբար կոշտացող, մի տեսակ արագություն հավաքող սոցիալ-բարոյական, քաղաքացիական հարաբերությունները:

Վաճառականների, խանութպանների, պաշտոնյաների երեխաները խորթանում են անգամ իրենց պատանեկության ընկերներից, իրենց պապերի լեզվից ու երգերից:

«Ամառ երեկոները սպիտակ շորերով աղջիկներ ու տղաներ գալիս են ու քարափի վրա նստում: Նրանք նվագում են մանդոլին, կիթառ, նրանք երգում են ռուսերեն, ապա բարձր ծիծաղում են, եւ ծորի բարաձավներում նրանց առույգ ծիծաղն արձագանք է տալիս ահավոր կերպով, ասես ծորը քրքջում է նրանց հիմարության հանդեպ», – նկատում է գրողը:

Քաղաքենին թանձր սահմանագիծ է քաշել, օտարացել երեկվա ընկերներից, հայրենական բարքերից ու սովորություններից, կորցրել տոհմիկ առաքինությունները:

Անճանաչելի են դարձել երեկվա դաստաբերները՝ Սոնան, Սաշոն...

Մենք կարող ենք վկայակոչել այլ պատմվածքներ, որոնց պատկերային համակարգում, հեղինակային միջամտությունների, հավելյալ բացատրությունների, տողերի եւ բառերի ենթատեքստում, խոսուն լռության մեջ հասունանում է «Կյորես» վիպակի գաղափարն ու գրելու գրական-կենսական անհրաժեշտությունը:

Բակունցը ձգտում է փրկել «մոռացության խավար խորքում սուզվող» Կյորեսը եւ կյորեսեցիներին եւ նրանց վարքն ու բարքը հանգրել նոր ձեւավորվող հասարակական ու քաղաքական հարաբերությունների բարոյահոգեբանական մթնոլորտի հետ: Մեծ գրողը իր ելույթներում եւ պատմվածքներում մի անգամ չէ, որ խոսել է գրողի դերի եւ գրականության նշանակության մասին:

Գրողը իր ժամանակի պատմիչն է, հասարակաց դրուեւորած վարք ու բարքի, կենցաղի, լայն առումով ազգային կյանքի եւ ժամանակի անմիջնորդ վկան: Մեծ գրողը աշխատում է այդ տագնապաշատ եւ անհանգիստ օրերի մեջ ստատիճանաբար ահագնացող մակընթացության ու տեղատվության հորձանքից փրկել ժողովրդական կյանքն ու մարդկային հարաբերությունները կանոնակարգող այն բնականորեն ձեւավորված որակները, որոնցով կերպարվում է հասարակությունը դարեր ի վեր:

Նոր ձեւավորվող քաղաքային հարաբերություններն աղավաղում, ախտահարում են նաեւ կյորեսեցիներին:

Նահանջում է Կյորեսը, նահանջում է կյորեսեցին, նահանջում են բնաշխարհի բարքերն ու սովորությունները եւ դրանցով համակարգված Կյորեսի քաղաքակրթությունը: Իսկ այդ քաղաքակրթությունն հրապես մերաճված է մարդու եւ հողի նախատնես դաշնությամբ, հանդ ու հողի ինքնատիպ բույրերով, լույսով ու ջերմությամբ, կարեկցանքով ու գթասրտությամբ, խղճով ու սիրով, ինքնաբավ աշխատանքով, ընտանի դարձած դժվարությունքերով, տոհմիկ առաքինություններով, տոհմիկ դաստիարակությամբ, մարդասիրությամբ, անխախտ ու անդավաճան բարեկամությամբ...

Որակներ, որոնք հատուկ են կյորեսեցիներին, եւ որոնք ուղեկցել են մեծ գրողին՝ սկսած նրա վաղ մանկությունից: «Իրբեւ վաղեմի պատմագիր՝ դողացող ձեռքերով ես գրում եմ իմ պատմության վերջին էջերը: Հարկավոր է պատրույգը բարձրացել, եւ մինչեւ ձեթը հատնի, ավարտել անկրկնելի օրերի պատմությունը» («Բրուտի տղան»):

Պահի այսօրինակ զգացումը պայմանավորված է ինչպես պատանեկական տարիների հուշերը փրկելու քաղցորությամբ, այնպես էլ անցյալի եւ իր ապրած օրերի գեղարվեստական վավերացման անհրաժեշտության գրողական մտահոգությամբ:

Նա ուղղակի լսում էր հողի ձայնը, զգում այդ հողի վրա օր օրի ահագնացող խժժդությունների տագնապը:

Զգզգանկն ավանդների ու մեծ բարոյականությունը, բնաշխարհիկ սովորությունները ու տոհմիկ դաստիարակությունը ճեղքեր են տալիս, եւ այդ ճեղքերից ծլում են օտարամոլության, ասել է թե ինքնանվաստացման, ինքնաուրացման պատուհերն ու ախտերը՝ ինքնին զորացնելով դրսեւ գաղափարախոսությունը: Այս որոմի կրողը քաղքենին էր, որի վրա հենվելով հին ու նոր մովրդվնեերը գայթակղիչ խոստումներով, կեղծ հոգատարությամբ, փաթեթավորված հրահանգավորումներով, ատիճանաբար կրծում են տոհմածառի արմատները... Ստեղծում ճահճային, ահ ու սարսափի մի մթնոլորտ, որտեղ պարտվում, զոհաբերվում են ազնիվ հոգիները:

Մեծ գրողն շտապում էր «մինչեւ ձեթի հատնելը» ամբողջացնել իր ասելիքը, մի բան, որ վիճակված չէր նրան:

Նրա տարածը, անշուշտ, ավելի շատ էր, քան թողածը: Բայց եւ այնպես, Բակունցը հիմնավորապես տվեց իր ժամանակի անհարդախ վկայությունը, իրականության մեջ ծավալվող դեպքերի, իրադարձությունների, դրանց հեռագնա զարգացումների խճճվածքում հուսահատ պայքարի ելած բնության ազատ որդիների կռիվը քաղքենու դեմ:

Եվ գրվեց «Կյորեսը»:

Թվում է՝ բոլորովին էլ պատահական չէ, որ «Կյորեսը» առաջին անգամ լույս տեսավ «Եղբայրության ընկերգենիներ» երկի հետ մի գրքով եւ վերջինիս խորագրով, 1936-ին:

Ամերկրա է, որ այդ երկու երկերի միասնական հրատարակության գործում որոշակի դերակատարություն է ունեցել մոտալուտ տագնապների ներքին զգացողությունը:

Եվ սակայն նկատենք՝ «Եղբայրության ընկերգենիներ»-ում գրողը պատկերում է 1919-20թթ. իրադարձությունները, պատերազմական օրերի դրամատիկ անցքերը, ծանոթ իրականության մեջ մարդկանց ներհոգեկան ու մտային դեգերումները, սրամիտ հորինումներով դժվար կենցաղը տանելի դարձնող տխուր կամ այն խնդրի նկատմամբ:

Բակունցը եւ սիրում, եւ կարեկցում էր նրանց:

Մի անգամ էլ ուզում ենք շեշտել այս զարմանալի մարդու եւ գրողի, բնատուր տաղանդի գրականության նկատմամբ ունեցած անգիջում հավատարմությունը: Նա չարտոնեց պարտադրել իրեն ընթացիկ կյանքի «հերոսական առօրյայի», շողշողուն ապագայի «հաղթական» տեսլականը: Նա իր նկարագրած իրականությունը չաղավաղեց հանձնարարված պատվիրանների պտղորությամբ:

Նրա առաջ կանգնած էր հազար ու մի հոգսերի խճճվածքում մոլորված եւ ելքեր փնտրող մարդը՝ իր ապրած դրամայով, ճակատագրի դառնությամբ:

Ընդհանուր աղմկարարության մեջ Բակունցը համարում էր, որ գրականության զարգացման ճշմարիտ ուղին վերադարձն է «....դեպի ժողովրդական ստեղծագործության իսկական ու նոր արմատները»:

Այսինքն՝ պետք է զգալ եւ ճանաչել ժողովրդական այն աշխարհզգացությունը, որով կյանքի է կոչվել նրա գրական, մշակութային ժառանգությունը:

Այս ելակետային դրույթ է ընկած նրա գրական կերպավորման հիմքում:

Ինչպես գրողի, այնպես էլ նրա ստեղծած կերպարների կյանքը մշտապես եղել է, Հակոբ Օշականի խոսքերով ասած, «կշռույթին տակ իր ցեղին խոր օրենքներու»:

Ստովի հիշեմք այս գծի վրա Բակունցի շքեղաշուք կերպարները եւ դրանց շարքում մեծ կյորեսեցու՝ Աքա ապոր կոթողային, անխոցելի կերպարը՝ Շուղանց քարատակի ամենաերեւելի, ամենահեղինակամայրերի ողբ, որ «լսելով նրանց, թվում է, թե մոլորվել եք մի անտակ ձորում եւ ուր էլ գնաք բարձր ժայռեր են եւ փրկության դուռ չկա»: Բայց «...այդպիսի ողբ չասաց Աքա ապերը»:

Աքա ապոր ողբն ամբողջական մի ասք է, մի զարմանալի, ողբերգական պատում, որ գալիս է դարերի խորքից, ներառում նոր ժամանակները, վերաձուլ էպիկական մի համածուլվածքի՝ մարդու անցած ճանապարհի եւ գալիք տագնապների շողարձակումով:

«Այդ ողբ չէր, այլ ահավոր բողոք կապույտ երկնքին, բողոք, որին ձայնակցում էր ձմեռվա քնից զարթնող բնությունը եւ քարե արծիվը, որ երգի աղմուկից դուրս էր թռել, – քարե արծիվն իր թեւերի վրա տանում էր մարդու բողոքը մահի դեմ»:

Մտքի հուսահատ դեգերումները, զգայությունների աշխարհում խմորվող բախումները ու բռնկումները, պահի ծանրությունն ու միտոիկ ապրումները ծերունկում մղում են մեծակությանը:

«Գեղեզմանատնից Աքա ապերը գնաց Խուռտուիի ծորը...»: Բնությանն մեջ ամեն գոյություն զբաղված է իր գործով.

– Փա՞ռք քեզ, որ ամեն բան կարգին սարքել ես, մինչեւ անգամ մժեղին էլ անտես չես արել... -Ո՞ւմ հետ էր խոսում Աքա ապերը՝ Աստծո՞ռ, որ ապրում էր Խուռտուիի ծորի արխաջում, – հիմ թթենո՞ւ հետ, որի փչալում գուցե ապրում է այն հոգին, որ Աքա ապրո նման սպիտակամորուս ծերուկի է եւ տրեխներ է հագնում եւ մինչեւ անգամ արխալուղի գրպանում պղնձե բռնոթաման ունի: Ո՞ւմ հետ էր խոսում Աքա ապերը, – ինքն էլ չգիտեր...:

Սա հուսահատության այն պահն է, որ պարզապես անտանելի է դարձնում ապրելը, փորը երես է դարձնում կյանքից եւ ապավինում Գեղագույց ուժին: Այս երեւույթը, ընդհանրապես, ծանր նստվածք է թողել հայոց միստիցիզմի վրա:

Աքա ապերը ուղղակի հարաբերության մեջ է մտնում Աստծո կամ այն գերբնական ոգու հետ, որ կանոնակարգում է աշխարհի գործերը: Այլ կերպ չի լինի, որովհետեւ նա իրեն պատասխանատու է զգում Ժողովրդի առաջ:

– Մա՞ի էիր բաժանում, – արժանի մարդու տայիր...

Հրեն Գիշումց պառավը երկու տարի աղատ-պաղատում է՝ հոգին առնես... Հապա դու կույր էիր, քո ձեռքն ինչպես բարձրացավ անմեղ փոքրիկ տղայի վրա: Հիմա ես ինչ պատասխան տամ խալխին: Առաջից սուր, հետեւից դանակ, եւ մարդիկ հավատում են նրան. «ցորեն լեզու էր, որ նման էր ցորեն հացի»: Նա, իսկապես, հույսով ու հավատով կերակրում էր հասարակությանը:

Բայց եղավ ամենասարսափելին:

Երբ ապրելու, սովահարությունից փրկվելու հույսն այնքան մոտիկ էր, երեւում էին «մուգ կանաչ դաղձի առաջին թփերը», «... Երեք օրում մեկը մյուսի հետեւից մեռան հինգ երեխա, որից երկուսը մի տմից էին»:

Հեղինակային ճկարագրության մեջ էպիկական պատումի ուժը լիցքավորվում է մի նոր շնչառությամբ, որ թվում է՝ անցնում ես դարերի միջով:

Աքա ապերը «այն լեռնեցի ծերունիներից է, որոնք... շատ անգամ են նայել մահի երեսին», անցել բազմաթիվ փորձությունների, ահերի ու սարսափների, «քրատված եւ արնաշաղախ» դիակների միջով «առանց արցունքի եւ հուզմունքի», «բայց մի փոքր երեխայի լաց կարող էր նրանց հուզել»: Տանը սուգ բարձրացավ: Թշվառ մայրը ողբում, աղերսում էր արեւին՝ «կյանք տալ սառած մանուկներին»:

Սա ողբկերույս մոր ողբ է, հայ մայրերի ողբ, որ «լսելով նրանց, թվում է, թե մոլորվել եք մի անտակ ձորում եւ ուր էլ գնաք բարձր ժայռեր են եւ փրկության դուռ չկա»: Բայց «...այդպիսի ողբ չասաց Աքա ապերը»:

Ի՞նչ է ուզում ասել հեղինակը՝ ինչպես գրեցինք, գրականության նկատմամբ ունեցած անգիջում հավատարմությունը: Նա չարտոնեց պարտադրել իրեն ընթացիկ կյանքի «հերոսական առօրյայի», շողշողուն ապագայի «հաղթական» տեսլականը: Նա իր նկարագրած իրականությունը չաղավաղեց հանձնարարված պատվիրանների պտղորությամբ:

Նրա առաջ կանգնած էր հազար ու մի հոգսերի խճճվածքում մոլորված եւ ելքեր փնտրող մարդը՝ իր ապրած դրամայով, ճակատագրի դառնությամբ:

Ընդհանուր աղմկարարության մեջ Բակունցը համարում էր, որ գրականության զարգացման ճշմարիտ ուղին վերադարձն է «....դեպի ժողովրդական ստեղծագործության իսկական ու նոր արմատները»:

Այսինքն՝ պետք է զգալ եւ ճանաչել ժողովրդական այն աշխարհզգացությունը, որով կյանքի է կոչվել նրա գրական, մշակութային ժառանգությունը:

Այս ելակետային դրույթ է ընկած նրա գրական կերպավորման հիմքում:

Ինչպես գրողի, այնպես էլ նրա ստեղծած կերպարների կյանքը մշտապես եղել է, Հակոբ Օշականի խոսքերով ասած, «կշռույթին տակ իր ցեղին խոր օրենքներու»:

Ստովի հիշեմք այս գծի վրա Բակունցի շքեղաշուք կերպարները եւ դրանց շարքում մեծ կյորեսեցու՝ Աքա ապոր կոթողային, անխոցելի կերպարը՝ Շուղանց քարատակի ամենաերեւելի, ամենահեղինակամայրերի ողբ, որ «լսելով նրանց, թվում է, թե մոլորվել եք մի անտակ ձորում եւ ուր էլ գնաք բարձր ժայռեր են եւ փրկության դուռ չկա»: Բայց «...այդպիսի ողբ չասաց Աքա ապերը»:

Աքա ապոր ողբն ամբողջական մի ասք է, մի զարմանալի, ողբերգական պատում, որ գալիս է դարերի խորքից, ներառում նոր ժամանակները, վերաձուլ էպիկական մի համածուլվածքի՝ մարդու անցած ճանապարհի եւ գալիք տագնապների շողարձակումով:

Նրա առաջ կանգնած էր հազար ու մի հոգսերի խճճվածքում մոլորված եւ ելքեր փնտրող մարդը՝ իր ապրած դրամայով, ճակատագրի դառնությամբ:

Ընդհանուր աղմկարարության մեջ Բակունցը համարում էր, որ գրականության զարգացման ճշմարիտ ուղին վերադարձն է «....դեպի ժողովրդական ստեղծագործության իսկական ու նոր արմատները»:

Այսինքն՝ պետք է զգալ եւ ճանաչել ժողովրդական այն աշխարհզգացությունը, որով կյանքի է կոչվել նրա գրական, մշակութային ժառանգությունը:

Այս ելակետային դրույթ է ընկած նրա գրական կերպավորման հիմքում:

Ինչպես գրողի, այնպես էլ նրա ստեղծած կերպարների կյանքը մշտապես եղել է, Հակոբ Օշականի խոսքերով ասած, «կշռույթին տակ իր ցեղին խոր օրենքներու»:

Ստովի հիշեմք այս գծի վրա Բակունցի շքեղաշուք կերպարները եւ դրանց շարքում մեծ կյորեսեցու՝ Աքա ապոր կոթողային, անխոցելի կերպարը՝ Շուղանց քարատակի ամենաերեւելի, ամենահեղինակամայրերի ողբ, որ «լսելով նրանց, թվում է, թե մոլորվել եք մի անտակ ձորում եւ ուր էլ գնաք բարձր ժայռեր են եւ փրկության դուռ չկա»: Բայց «...այդպիսի ողբ չասաց Աքա ապերը»:

Աքա ապոր ողբն ամբողջական մի ասք է, մի զարմանալի, ողբերգական պատում, որ գալիս է դարերի խորքից, ներառում նոր ժամանակները, վերաձուլ էպիկական մի համածուլվածքի՝ մարդու անցած ճանապարհի եւ գալիք տագնապների շողարձակումով:

«Այդ ողբ չէր, այլ ահավոր բողոք կապույտ երկնքին, բողոք, որին ձայնակցում էր ձմեռվա քնից զարթնող բնությունը եւ քարե արծիվը, որ երգի աղմուկից դուրս էր թռել, – քարե արծիվն իր թեւերի վրա տանում էր մարդու բողոքը մահի դեմ»:

Մտքի հուսահատ դեգերումները, զգայությունների աշխարհում խմորվող բախումները ու բռնկումները, պահի ծանրությունն ու միտոիկ ապրումները ծերունկում մղում են մեծակությանը:

«Գեղեզմանատնից Աքա ապերը գնաց Խուռտուիի ծորը...»: Բնությանն մեջ ամեն գոյություն զբաղված է իր գործով.

– Փա՞ռք քեզ, որ ամեն բան կարգին սարքել ես, մինչեւ անգամ մժեղին էլ անտես չես արել... -Ո՞ւմ հետ էր խոսում Աքա ապերը՝ Աստծո՞ռ, որ ապրում էր Խուռտուիի ծորի արխաջում, – հիմ թթենո՞ւ հետ, որի փչալում գուցե ապրում է այն հոգին, որ Աքա ապրո նման սպիտակամորուս ծերուկի է եւ տրեխներ է հագնում եւ մինչեւ անգամ արխալուղի գրպանում պղնձե բռնոթաման ունի: Ո՞ւմ հետ էր խոսում Աքա ապերը, – ինքն էլ չգիտեր...:

Սա հուսահատության այն պահն է, որ պարզապես անտանելի է դարձնում ապրելը, փորը երես է դարձնում կյանքից եւ ապավինում Գեղագույց ուժին: Այս երեւույթը, ընդհանրապես, ծանր նստվածք է թողել հայոց միստիցիզմի վրա:

Աքա ապերը ուղղակի հարաբերության մեջ է մտնում Աստծո կամ այն գերբնական ոգու հետ, որ կանոնակարգում է աշխարհի գործերը: Այլ կերպ չի լինի, որովհետեւ նա իրեն պատասխանատու է զգում Ժողովրդի առաջ:

– Մա՞ի էիր բաժանում, – արժանի մարդու տայիր...

Հրեն Գիշումց պառավը երկու տարի աղատ-պաղատում է՝ հոգին առնես... Հապա դու կույր էիր, քո ձեռքն ինչպես բարձրացավ անմեղ փոքրիկ տղայի վրա: Հիմա ես ինչ պատասխան տամ խալխին: Առաջից սուր, հետեւից դանակ, եւ մարդիկ հավատում են նրան. «ցորեն լեզու էր, որ նման էր ցորեն հացի»: Նա, իսկապես, հույսով ու հավատով կերակրում էր հասարակությանը:

Բայց եղավ ամենասարսափելին:

Երբ ապրելու, սովահարությունից փրկվելու հույսն այնքան մոտիկ էր, երեւում էին «մուգ կանաչ դաղձի առաջին թփերը», «... Երեք օրում մեկը մյուսի հետեւից մեռան հինգ երեխա, որից երկուսը մի տմից էին»:

Հեղինակային ճկարագրության մեջ էպիկական պատումի ուժը լիցքավորվում է մի նոր շնչառությամբ, որ թվում է՝ անցնում ես դարերի միջով:

Աքա ապերը «այն լեռնեցի ծերունիներից է, որոնք... շատ անգամ են նայել մահի երեսին», անցել բազմաթիվ փորձությունների, ահերի ու սարսափների, «քրատված եւ արնաշաղախ» դիակների միջով «առանց արցունքի եւ հուզմունքի», «բայց մի փոքր երեխայի լաց կարող էր նրանց հուզել»: Տանը սուգ բարձրացավ: Թշվառ մայրը ողբում, աղերսում էր արեւին՝ «կյանք տալ սառած մանուկներին»:

Սա ողբկերույս մոր ողբ է, հայ մայրերի ողբ, որ «լսելով նրանց, թվում է, թե մոլորվել եք մի անտակ ձորում եւ ուր էլ գնաք բարձր ժայռեր են եւ փրկության դուռ չկա»: Բայց «...այդպիսի ողբ չասաց Աքա ապերը»:

Աքա ապոր ող

ՀԵՌԱՓԱՐԻՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ «ՍՅՈՒՆԻՔ» ՍՏԵՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՍԱՍՆԵՏԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ քաղաք, ՇԱՐԺԱՅԻՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Շարունակվում է Շենի Հին կռիվը...

Գորիսն ու գորիսեցիները Բակունցի ստեղծագործություններում

Սկիզբը՝ էջ 23

Ձիհվորներն ու գյուղացիները հարձակվել էին Մելքումովների հացի հորերի վրա, բայց հորերը դատարկ էին: Աթա ապերը հանդարտեցնում է խռովահույզ սովյալներին, հորդորում, որ նրանց բռնած ճանապարհը սխալ է:

Դեռ Շուղանց քարատակում էր նա Անդոյնին ու նրա նման ջահելներին խորհուրդ տալիս «ծռել» միայն խառնակչության տանող իրենց ճանապարհը: Ճիշտ ուղին սրտի, սիրո եւ միասնության ու աշխատանքի ճանապարհն է «մարդու մարդ դարձնողը»: «Աշխատեք է՛», դուք էլ աշխատեք մելքումովների նման դիզեք», – խորհուրդ էր տալիս Աթա ապերը:

Եվ սակայն տիրող քար լռության մեջ մարդիկ «օտար թվացին Աթա ապորը, ինչպես օտար ազգի մարդիկ»:

Տանը «Օջախի առաջ Աթա ապերը միտք էր անում հին օրերից մինչեւ ներկան, նրան թվում էր, թե իր ամբողջ կյանքը եղել է մի արեւ ճանապարհ ծաղիկների մեջ, սառն աղբյուրների երկրում, որտեղ լեռնալանջին կարմրում է մորին, ծորտերում՝ մոշը, եւ երբ կովերը տուն են գալիս, կաթը ցողի նման կաթկթում է ծաղիկների վրա»: Հեքնաբաղդության այս գեղեցիկ վերապրումը նորից պղտորվում է, երբ նա «մտքով գնում է Ցուրտ աղբյուր»:

Աղբյուրը եւ ընդհանրապես «Շահ յուրդի տախտեր» կորցրել են ոչ միայն նախկին գրավչությունը, այլեւ աշխատավոր մարդուն վարձահատույց լինելու հպարտությունը:

Որտե՞ղ է, սակայն, չարիքի ակունքը, որտե՞ղ է թաղված կովազանության հունգը:

«Աթա ապերը պտտվում է գետահովտի շուրջը, որտեղ փռված ընկած էր քաղաքը: Ամեն ինչ այնտեղից եկավ»: Քիչ վերեւում մեծբերված Աթա ապոր մտորումների մեջ եղած կասկածահարույց հարցակաղմերն այստեղ արդեն որոշակիանում են:

Իր ապրած կյանքի գեղեցկությունը ստվերվում է գալիքի մռայլ պատկերներով:

Նրա մահվան ցանկությունն օրինության մխիթարիչ գույներով է շաղախված, ու ազոթքի մրմունջներով այդ խառնակ աշխարհից պատվով հեռանալու բնական ցանկությամբ. «…Աթա…. Դու էն ժամանակ պիտի մեռնեիր, որ ոչ կռիվ կար, ոչ սով կար: ….Դու միայն կիմանայիր, որ աշխարհում թողել ես ցուտ աղբյուրներ, ծաղկած սարեր եւ ախպեր մարդիկ….

Շա՜տ ես ապրել, Աթա…»:

Ծերության շեմին հասած մարդը հաճախ է վերհիշում, վերապրում իր անցած կյանքը եւ երազում կյանքից հեռանալ, ժողովրդի լեզվով ասած «չորս ոտի աչքով»:

Միեղչռեռ նա զգում է գունաթափված բնության անանձ տխրությունն ու տկարացած, արմատներից հեռացած կովազան մարդկանց բերած աղետները, որոնք ծանրացնում են Աթա ապոր տառապանքները, փակում դրանցից դուրս գալու ուղիները:

Եվ գրողը հանճարեղ ներքնատեսությամբ շարադրում է հերթապես դրվագը, որն էլ պայմանավորում է այս գարմանալի ասքապատումի խորագիրը:

Աթա ապերը եւ Օրուջը ծանոթ ու ճանաչ մարդիկ են, միասին հաց են կտրել, ուրախ օրեր են անցկացրել նույն սուփիի վրա, հոգսեր ու դժվարություններ են կիսել: Բարեկամություն է ստեղծվել ընտանիքների միջեւ, գնալ-գալ ունեն: Աթա ապերը գիտի հարեւան Ժողովրդի հետ ունեցած բարեկամության գինը: Ժողովուրդները հարատեւում են բարեկամությամբ, նեղության պահին իրար օգնելով:

Թուրք Օրուջն էլ սովահար ընտանիք ունի: Նա ապավինել է Աթա ապորը եւ եկել օգնություն խնդրելու:

Աշտակում շփումները վերաճում են Ժողովրդական մի հնքնատիպ դիվանագիտության, դառնում համակեցության կերպ, հարաբերվելու բարոյական նորմ, որ, սակայն, խաթարվում են օտար խաղերի խծճվածքում:

Մենք անդրադարձանք գորդի կողմից մեծ վարպետությամբ դասդասված այն դրվագներին, որոնց միջով անցավ Աթա ապերը, բայց իր էությամբ ամենուր մնաց նույնը:

Ասել է՝ ոչ թե հերոսն աճում է գրական տեքստի էջերում կատարվող դեպքերի ազդեցությամբ, այլ գրական տեքստում արձանագրվում են նրա մարդկային առաքինությունները ու խիղճը, ցավն ու կարեկցանքը, զայրույթն ու զարմանքը:

Բոլոր պարագաներում գրողը բացահայտում է այդ խորապես բնաշխարհիկ մարդու մտածումների ուղղությունը, կենսաիիլիտոհայության ակունքները՝ հյուսվարված Ժողովրդական-համազգային հարստացող խաբեբա ու թալանչի, «նրանք մարդ պլկկող ազգից են…» եւ եթե… «նրանք հայ լինեն, ես հայությունից դուրս կգամ…»:

Կյորես-Գորիս հակամարտությունը տարածվում է ամենուր, նույնիսկ նրանց ուխտատեղիներն առանձին էին: «….Նույնիսկ քահանաները չէին կարողանում հաշտեցնել նրանց: Ծաղրով, ծիծաղով կյորեսեցիք քշում էին բուլկի ուտողներին: Նրանց համար մեղք էր պղծված շուրթերով սրբատեղում աղոթք մրմնջալը կամ սուրբ քարը համբուրելը, եւ կյորեսեցի մի պառավ նրանց աղջիկների հետեւից շպրտում էր «Հոդս գլխիդ, տեսնես բուլվարում քաձիսին ես պաչաչել, էլ սուրբը քեզ հի՞նչ անի...»:

Գրողը դրվագ առ դրվագ ցույց է տալիս Կյորեսի կործանման դաժան ու դժվարին ընթացքը:

«Կյորեսը մեռնում էր, ինչպես մեռնում էր Խուռուռի ձորի վերջին կաղնին, «Ամրուդ էր սուզվում հողագործների ազգը», իսկ նրա զայրացած ու զարմացած որդիները՝ հիասթափված ու հուսալքված, թողնում են պապենական հողը եւ գնում բախտ որոնելու ուրիշ հորիզոններում: Երկիրը դատարկվում էր իր աշխատավոր զավակներից: «….Հողը հողագործի ձեռքից գնում էր, եւ այդ ամխուսափելի էր, ինչպես մահը, ինչպես արեւի մայրամուտը….»: Բայց դեռ կային մարդիկ, որ մի թաթրտացող հասարակական կյանք: Պարտադրված քաղաքակրթությունները առաջնորդվելը միշտ էլ ժողովրդին տարել է խեղճության եւ թշվառության, բարքերի ապականության, վարակել հնքնատարացման մանրէներով, ապաբորոյականացրել տոհմիկ առաքինությունները, նվաստացրել ու նսեմացրել մարդուն, խարխլել մարդ-բնությունն, մարդ-աշխատանք կապի ամբողջականությունը… մարդուն խորթացրել հայրենիքիցն, արտամղել պանդխտության:

Օտար քաղաքակրթության առաջին եւ հավատարիմ սպասարկուն քաղքենիությունն է, որ հանուն փողի ու փափկակենցաղ բարեկեցության վաճառում է հեռանում է հայրենական ակունքներից, հրաժարվում մայրենի լեզվից ու բարքերից: Նա, կորցնելով ազգային նկարագիրն ու ծախսելով հոգին, կազմալուծում է դիմադրողականության ոգին ու պայքարի կորովը:

Այս եւ ազգային կյանքը նմանօրինակ պտտերից մաքրեազերծելու խորհուրդ ունի «Կյորես» վիպակը, որ գրվել է երեկ, բայց գիրքն է այսօրվա եւ գիրքն է վաղվա, որովհետեւ, չնայած Կյորեսը պարտվել է, բայց Գորիսի դեմ ունեցած նրա հին կռիվը դեռ շարունակվում է:

Կյորեսը ազգային արժեքների կրողն է, որոնց շուրջ կարող են համախմբվել երկատված ազգի հատեղիք ուղիղ գծով մինչեւ Մաթեւոս բեյի տունը, ապա մինչեւ Դրոժժիգաի գորանոցը եւ հայոց եկեղեցին»:

Շուկայում եռում է կյանքը, աշխույժ առեւտուր, հանդիպումներ, զրույցներ, նայվածքներ, խաբեբայություններ, հոչակավոր վաճառատներ…

«Կանչ, աղմուկ, շների կլանչոց»… միտք, որ «հասնում է մինչեւ Սեղրաբերդ», բայց «երբեմն հանկարծ լռում են, ինչպես ճնճղուկների երամը, երբ գետնի երեսով անցնում է անգղի ստվերը»: Սա այն դեպքում, երբ հրապարակով անցնում են ոստիկանները ու գինվորական ջոկատները:

Կյորեսը մշտապես այդ ստվերի տակ է, եւ պատահական չէ, որ մեջբերված նախադասությունը նույն էջի վրա կրկնում է՝ ընդգծելով Կյորեսի անպաշտպանվածությունը:

Այս ընդհանուր միտորից անմասն է Պասաժը՝ նեներոնական շուկայի զարգը: Այստեղ հիմնականում քաղքենին էր, եւ այստեղ չէր կարող հայտնվել սովորական մարդը, նրան անմիջապես դուրս էին շպրտում:

Պասաժում չէր վաճառվում տեղական ապրանք, այնտեղ գնորդնեը բեյեր էին ու չինովնիկ մեծամեծերը:

Պասաժում ամեն ինչ ազնիվ էր եւ ազնվացեղ, այնտեղ ուուեռեն էին խոսում, նույնիսկ նրանք, որ չգիտեին այդ լեզուն:

«Լյուդմիլա Լվովնան եւ բժիշկ Տիկրան Պետոիվիչի կինը՝ Սառա Կասպարովան, նաեւ մի փոքրիկ շնիկ՝ կապույտ ժապավենով»: Խոսքը գնում է Ամպիրը, Մուգամին Մկրտիչը դառավ Նիկիտա… Քեզ փա՞ռք Աստված…»

Լյուդմիլան, Պետոյիչը, Կասպարովնան, Նիկիտիչը, բոլորն էլ այդ փոքրիկ շան կարգավիճակում են եւ բաժանում են շնիկի կենսուրախ ճակատագիրը:

Նրանք հեռացել են իրենց արմատներից եւ կորցրել իրենց տեսակի ազնվությունը: Բակունցի հումորը միածալ չէ, այն ունի շերտեր, որոնք հավատում են մեծ գրողի վերաբերմունքը Կյորեսի եւ Գորիսի նկատմամբ:

Հպանցիկ, բայց մնայուն տպավորություն թողնող հեգնանքն ու երգիծանքը բացում են քաղքենիական ճահճում գունաթափված, բարոախավալ, բնավորություն դարձող մի արատավոր սովորություն, որ հատուկ լինելով այդ խավի համար, միաժամանակ այլասիրության եւ ինքնաօտարացման բացիլներ են տարածում հասարակական կյանքում:

Բակունցն անընդհատ խտացնում է նյութը, բացում հոգսերի ու կարտուռությունների մեջ մոլորված մարդկանց ապրելակերպի եւ չինովնիկի մեծամեծերի վայելքի լկտիությամբ հանդդրված նոր տարածքներ:

Բացվող առավոտների հետ բացվում էին մսավաճառների խանութները: Առավոտ կանուխ թարմ մսի հոտ առած անտեր շների հետ խառնված՝ մարդիկ վխտում են խանութների առաջ: Նրանք «….միս չէին առնում, այլ փորոտիք, աղիքներ, ոտքեր եւ գլուխ»:

Քիչ հետո գալիս են պաշտոնյաները՝ մեծ ու փոքր չինովնիկները, Ներսես բեյը եւ ինքը՝ նաքարապետ Մաթեւոս բեյը՝ իրենց սպասավորների հետ:

Իրարահաջորդ մանրամասները ցուցադրում են քաղքենիական կյանքի տարաբնույթ տեսարաններ՝ առաջ բերելով զայրույթ ու զարմանք, հիասթափություն ու կարեկցանք:

Իսկապես, «Այդ ի՞նչ էր կատարվում քեզ հետ, իմ հայրենի քաղաք»:

Վերջին բեյերի մուտքը ամմիջապես փոխում է խանութներում ընթացող աշխատանքի ռիթմը, վաճառակալները ստրկահամ վերաբերմունքը, նրանց կախվածության գինը չինովնիկներից, որ փոխիմաստուցվում է՝ «Դու՝ ինձ, ես՝ քեզ» բառնաձեւի լուռ համաձայնությամբ:

Գրողը բացում է փակ դարպասների դռները, մտնում տուն ու խոհանոց եւ ամենայն մանրամասնությամբ ներկայացնում բեյական ընտանիքների քաղքենիական կենցաղավարությունը, բամբասանքներով, ճախանձով, անիմաստ մրցակցությամբ թուսվորված ապրելու նրանց կեսակպերազը:

Գրողի ամենատես հայացքի առաջ բացվում է այդ ընտանիքների մեծ ու փոքր անդամների հոգեւոր աղքատության խորշակված դաշտանկարը, լսելի դարձնում նրանց տաղտկալի ու ձանձրալի զրույցները, ընտանեկան դաստիարակության խաբկանքի կիսածայծ շշուկները եւ …կանանց դավաճանության անառակ պատմությունները:

Բարաքում կայիմ շներ, որոնք «իրենց վարքն ու բնավորությունը նմանեցնում էին տերերին»:

Նրանք տերերի հանար թիկնապահներ եւ գործընկերներ էին:

«Խանկար բեյի Ֆիդնառ շունը, որ տիրոջ հետեւից գնում էր գյուղերը հավ հավաքելու, այսինքն՝ աչքին ընկած հավը կուլ էր տալիս ու մնում էր անպատիժ, կարծես թագավորական խարոջ հավքող էր»: Այսպիսին են բեյերի շները: Նրանք էլ բեյերի նման քնում էին «հետեւեսոյա քնով… եւ նույնիսկ քնի մեջ պուֆ էին անում»: Պատկերն իր լրումին է հասնում «Այուլայց ճահկարիության հին եւ գալիք ժամանակների մասին» Պավլի բեյի ունեցած մտորումներով եւ Ավետիսի ընտանիքի եւ նրա աղջիկներին ամուսնացնելու զվարթ ու տխուր պատմություններով:

Իսկ բե՞վ էր Ավետիսը, ի՞նչ տառապանքների միջով էր անցել, ի՞նչ ճամփով է հասել Գորիս, ոչ ոք չգիտեր:

Չգիտեին ոչ թե եւ ոչ միայն, որ «Գորիսում ի՞նչեր մարդկանց մասին երկար չեն խոսում», այլեւ որ բացարձակապես անտարբեր էին հայրենիքի բախտի ու ճակատագրի նկատմամբ:

Այդ հարսանիքները տեղի էին ունենում տուն-տեղից, հանդ ու հոդից, վար ու ցանքից կտրված եւ Հին ճանապարհի վրա ապրող կյորեսեցիների տիրական ներկայությամբ:

Փոխվել էր վերջիններիս վարքն ու բարքը: Նրանք «աղ ու հացի եղբայրներ էին» եւ դարձել են խրախճանքների ու գինարբուքների փրահարներ եւ շարունակում էին Հին կռիվը, բայց հիշեցնելով ոչ թե Ղաթրիկի Աղալոյի ուժեղ, պարտադրող ու խիստ ազդեցիկ, այլ Գյուրջի Օբիհ թույլ ու վախվորած ժամանակները:

Վիպակի վերջին դրվագները մի յուրօրինակ ամփոփում են, որտեղ գրողն առավել որոշակի է դարձնում ասելիքի ներքին հոսանքները, Գորիսի երկսեռ հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտը:

«Գորիսում կային տեսակետ ունեցող տիկիններ», որոնց զրույցներն սկսում էին տարաբնույթ թթուների եւ մուրաբաների համ ու հոտի մասին տեղեկատվությամբ եւ ավարտվում փեսացուի եւ հարսնացուի շուրջ հանգատրաստից հյուսվող բամբասանքներով:

Այսպիսի դատարկ եւ անիմաստ զրույցներով էին զբաղվում «հոգեւոր շահերից» զուրկ «Գորիսի բնակչությունը» եւ առավելապես բեյերը: «Նրանք հոգի չունեին, որ հոգեւոր շահեր ունենային»:

Հոգեւոր շահերից զուրկ այս միջավայրում, հայրենի հողի վրա, հայրենի քաղաքում արհամարհվում, աղավաղվում են բարքերն ու սովորությունները, աղավաղվում է լեզուն, նսեմանում ու ծաղրվում, քամահրվում եւ ազգային արժեքներ:

Անհեռատես ու նյութապաշտ, «հոգեւոր շահերից» զուրկ բեյերից խորապես տարբերվում է Պավլի բեյ Օրբելյանը, տագնապաշտ է նրա հոգին, եւ նրա մտքերն անընդհատ պտտվում են ռուսացող Զանգեզուրի շուրջ, որի դեմն առնելու միակ պատնեշը «Այուլայց ճախարարության վերականգնումն է»: Հանընդհանուր անտարբերության մեջ նա միակն է, որ օթեւան է տալիս Ավետիսի ընտանիքին: Սեփական զորությունն ապահովելու համար նա քարոզում է հայտներին՝ ամուսնանալ միայն հայ աղջիկների հետ: Տեղի է ունենում երեկ եւ այսօր շատ տարածված մի սովորական դեպք, որ իր մատյանում արձանագրում է Պավլի բեյ Օրբելյանը. «Արյունարբու եւ գազանաբարո ավազակներ, ազգով թուրք եւ դարբա-մամադ ցեղից գինված՝ հարձակվեցան ուխտավորաց վրա», բայց կյորեսեցիները «Միահամուռ արշավելով դարբաղաշ արին ավազակերաց…»: Այսքանից հետո Պավլի բեյ Օրբելյանը հատուկ իմացնել է տալիս, որ «…գավառամասի պրիստավվն Վոսկրեսենսկի, ազգով ռուս, հուլամավորել է վերոհիշյալ դարբա-մամադ ավազակաբարո ցեղին եւ ինքն է մեծ կաշառու եւ հայատյաց…»:

Ահա թե պատմության եւ պատմություն դարձող կենդանի օրերի ներկայությունը, ինչպես Հին Գորիսի հանդեսներում եւ մարդաշատ հրապարակներում, ինչպես Գորիսի հարեւան գյուղերում, ինչպես Գորիսի ամենուր, բայց վերին խավը չունի այս գիտակցությունը, որի բացակայությունն էլ երգիծական պատմությունի հաղորդում է ցավի ու մորմոքի, անատ տխրությամբ շամանդաղված, ողբերգական շեշտադրումներով ընդգծված անանց տպավորություն:

«Գորիս քաղաքի միջուկը, այսպես ասած պարուսկայությունը կազմում էին վաճառականները եւ պետական պաշտոնյաները՝ դյուքանդարները եւ մեծամեծները, ինչպես կասեր Աթա ապերը: Նրանք էին բուն օտարականները, որոնց դեմ կռվում էին իսկական Կյորեսը եւ նրա միջնաբերդը՝ Շենը»:

Յուրաքանչյուր դրվագ սկսվում է քննարկվող նյութի հարիր նախադրությամբ եւ ապա մանրամասնորեն քննվում առաջադրված խնդիրը:

Ովքե՞ր են այդ վաճառականները, պետական պաշտոնյաները, որոնց դեմ կռվում է Կյորեսը: Գորիսի ընդարձակ գավառը «իրար մեջ բաժանել էին վաճառականներն ու չինովնիկի մեծամեծները», նրանցից ամեն մեկն ուներ «որեքորվ» սեփականաշնորհված իր տարածքը եւ ինչպես ցանկանում, այնպես էլ վարվում էր այդ մահալում ապրող բնակչությամբ հետ: Նրանք զբաղված էին առք ու վաճառքով, «նրանց ձեռքում էր դրամը», «վաչխ էին առնում՝ մաճեթիր երեսուն, քառասուն եւ ավելի»:

Միրունով Կոլչիին տղաներին դաստիարակում էր գայլչային օրենքներով.

– Որտեղից լացի ձայն լսես, ներս մտիր, կամ մարդ է մեռել կամ սոված են, կամ տակ տիրոջ ձեռքը են տեղն է: Տո՜ւր, պարտք տուր, չարմեխիր, էնպես մեխիր, որ հուր հավիտյան դռանդ կլանչի: Հեռց այս կերպ էր նա մահվան դուռը հասցրել Օմպի խաչուն:

Կայիմ առեւտրականներ, որ «իրենց մահալում միահեծան տեր էին, բառիս լրիվ իմաստով: Նրանք դատ էին անում, եղբորը եղբորից բաժանում էին, խառնվում էին ամուսնության գործերին, կառիչ հատվածներ բառաչով, ուղտերի հանրիսավորությամբ, որ ընթերցողը մինչեւ տեղ հասնելը՝ իրեն զգում է շուկայական եռուզեռի մեջ:

Շուկա մտնող յոթ ճանապարհներից գրողը նախընտրում է ցրաղացների կողքով բարձրացող այն հին ճանապարհը, որի վրա դեռ կան Կյորեսի հետքերը, ջրաղացպանը պատմում է չմոռացած հեքիաթները, խոսում անցած օրերի մասին եւ պետական պաշտոնյաները՝ դյուքանդարները եւ մեծամեծները, ինչպես կասեր Աթա ապերը: Նրանք էին բուն օտարականները, որոնց դեմ կռվում էին իսկական Կյորեսը եւ նրա միջնաբերդը՝ Շենը»:

Յուրաքանչյուր դրվագ սկսվում է քննարկվող նյութի հարիր նախադրությամբ եւ ապա մանրամասնորեն քննվում առաջադրված խնդիրը:

Ովքե՞ր են այդ վաճառականները, պետական պաշտոնյաները, որոնց դեմ կռվում է Կյորեսը: Գորիսի ընդարձակ գավառը «իրար մեջ բաժանել էին վաճառականներն ու չինովնիկի մեծամեծները», նրանցից ամեն մեկն ուներ «որեքորվ» սեփականաշնորհված իր տարածքը եւ ինչպես ցանկանում, այնպես էլ վարվում էր այդ մահալում ապրող բնակչությամբ հետ: Նրանք զբաղված էին առք ու վաճառքով, «նրանց ձեռքում էր դրամը», «վաչխ էին առնում՝ մաճեթիր երեսուն, քառասուն եւ ավելի»:

Միրունով Կոլչիին տղաներին դաստիարակում էր գայլչային օրենքներով.

– Որտեղից լացի ձայն լսես, ներս մտիր, կամ մարդ է մեռել կամ սոված են, կամ տակ տիրոջ ձեռքը են տեղն է: Տո՜ւր, պարտք տուր, չարմեխիր, էնպես մեխիր, որ հուր հավիտյան դռանդ կլանչի: Հեռց այս կերպ էր նա մահվան դուռը հասցրել Օմպի խաչուն:

Կայիմ առեւտրականներ, որ «իրենց մահալում միահեծան տեր էին, բառիս լրիվ իմաստով: Նրանք դատ էին անում, եղբորը եղբորից բաժանում էին, խառնվում էին ամուսնության գործերին,

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԵՌԱՓԱՐԻՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ «ՍՅՈՒՆԻՔ» ՍՏԵՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՍԱՍՆԵՏԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ քաղաք, ՇԱՐԺԱՅԻՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

կալանավորում էին, ծեծում եւ արյան գին էին որոշում…»

«Առեւտրականների չափ, գուցե եւ ավելի, Գորիսն ուներ բեյեր ու պաշտոնյաներ», որոնք եւս ուներին «իրենց ազդեցության մահալներն ու գյուղերը»:

Բեյերից ոմանք սերում էին հին ու ճշնամվող տոհմերից, ոմանք էլ բեյեր էին դարձել կեղծ վկայություններով… եւ այլ ինչպիսի բեյեր չկայնի երանելի Գորիս քաղաքում: Բեյերի բուլը բոռերի նման վխտում էր պետական ատյաններում:

Աթա ապերը եւ ընդհանրապես կյորեսեցիները ազգային արմատներից հեռացած, խաբեությամբ ու թալանով ապրող, հայրենական ակոսներում թույլ կաթեցնող այս մարդկանց եւ հանարում օտարականներ եւ մշտաբորբոք պահում իրենց Հին կռիվը:

Գրողն ամենայն մանրամասնությամբ եւ ճշգրտությամբ ընթերցողին տեսանելի դարձնում հայրենի քաղաքի հատակագիծը, նոր ու հին կառույցների, ճշնամվող շենքերի տեղն ու դիրքը, տների ու այգիների համաչափ ու ինքնատիպ համայնապատկերը: Այս ամենի կողքին առանձնահատուկ դեր է ստանձնում շուկան, որտեղ ավելի ակնառու են ազգատության թշվառությունը եւ հարստության լկտիությունը, ազնվությունն ու խորամանկությունը, կեղծ, շիճծու սիրալիրությունն ու միամիտ հավատը, օտարականներն ու կյորեսեցիները:

Գավառի կենտրոնը Գորիսն էր, Գորիսի կենտրոնը՝ շուկան: Շուկա տանող ճանապարհների նկարագրությունն անգամ զրնգում է մի զարմանալի աշխուժությամբ, մրգերի, ապրանքների առատությամբ, տեղից ուղիղ գծով մինչեւ Մաթեւոս բեյի տունը, ապա մինչեւ Դրոժժիգաի գորանոցը եւ հայոց եկեղեցին»:

Շուկայում եռում է կյանքը, աշխույժ առեւտուր, հանդիպումներ, զրույցներ, նայվածքներ, խաբեբայություններ, հոչակավոր վաճառատներ…

«Կանչ, աղմուկ, շների կլանչոց»… միտք, որ «հասնում է մինչեւ Սեղրաբերդ», բայց «երբեմն հանկարծ լռում են, ինչպես ճնճղուկների երամը, երբ գետնի երեսով անցնում է անգղի ստվերը»: Սա այն դեպքում, երբ հրապարակով անցնում են ոստիկանները ու գինվորական ջոկատները:

Կյորեսը մշտապես այդ ստվերի տակ է, եւ պատահական չէ, որ մեջբերված նախադասությունը նույն էջի վրա կրկնում է՝ ընդգծելով Կյորեսի անպաշտպանվածությունը:

Այս ընդհանուր միտորից անմասն է Պասաժը՝ նեներոնական շուկայի զարգը: Այստեղ հիմնականում քաղքենին էր, եւ այստեղ չէր կարող հայտնվել սովորական մարդը, նրան անմիջապես դուրս էին շպրտում:

Պասաժում չէր վաճառվում տեղական ապրանք, այնտեղ գնորդնեը բեյեր էին ու չինովնիկի մեծամեծերը:

Պասաժում ամեն ինչ ազնիվ էր եւ ազնվացեղ, այնտեղ ուուեռեն էին խոսում, նույնիսկ նրանք, որ չգիտեին այդ լեզուն:

«Լյուդմիլա Լվովնան եւ բժիշկ Տիկրան Պետոիվիչի կինը՝ Սառա Կասպարովան, նաեւ մի փոքրիկ շնիկ՝ կապույտ ժապավենով»: Խոսքը գնում է Ամպիրը, Մուգամին Մկրտիչը դառավ Նիկիտա… Քեզ փա՞ռք Աստված…»

Լյուդմիլան, Պետոյիչը, Կասպարովնան, Նիկիտիչը, բոլորն էլ այդ փոքրիկ շան կարգավիճակում են եւ բաժանում են շնիկի կենսուրախ ճակատագիրը:

Նրանք հեռացել են իրենց արմատներից եւ կորցրել իրենց տեսակի ազնվությունը: Բակունցի հումորը միածալ չէ, այն ունի շերտեր, որոնք հավատում են մեծ գրողի վերաբերմունքը Կյորեսի եւ Գորիսի նկատմամբ:

Հպանցիկ, բայց մնայուն տպավորություն թողնող հեգնանքն ու երգիծանքը բացում են քաղքենիական ճահճում գունաթափված, բարոախավալ, բնավորություն դարձող մի արատավոր սովորություն, որ հատուկ լինելով այդ խավի համար, միաժամանակ այլասիրության եւ ինքնաօտարացման բացիլներ են տարածում հասարակական կյանքում:

Բակունցն անընդհատ խտացնում է նյութը, բացում հոգսերի ու կարտուռությունների մեջ մոլորված մարդկանց ապրելակերպի եւ չինովնիկի մեծամեծերի վայելքի լկտիությամբ հանդդրված նոր տարածքներ:

Բացվող առավոտների հետ բացվում էին մսավաճառների խանութները: Առավոտ կանուխ թարմ մսի հոտ առած անտեր շների հետ խառնված՝ մարդիկ վխտում են խանութների առաջ: Նրանք «….միս չէին առնում, այլ փորոտիք, աղիքներ, ոտքեր եւ գլուխ»:

Քիչ հետո գալիս են պաշտոնյաները՝ մեծ ու փոքր չինովնիկները, Ներսես բեյը եւ ինքը՝ նաքարապետ Մաթեւոս բեյը՝ իրենց սպասավորների հետ:

Իրարահաջորդ մանրամասները ցուցադրում են քաղքենիական կյանքի տարաբնույթ տեսարաններ՝ առաջ բերելով զայրույթ ու զարմանք, հիասթափություն ու կարեկցանք:

Իսկապես, «Այդ ի՞նչ էր կատարվում քեզ հետ, իմ հայրենի քաղաք»:

Վերջին բեյերի մուտքը ամմիջապես փոխում է խանութներում ընթացող աշխատանքի ռիթմը, վաճառակալների ստրկահամ վերաբերմունքը, նրանց կախվածության գինը չինովնիկներից, որ փոխիմաստուցվում է՝ «Դու՝ ինձ, ես՝ քեզ» բառնաձեւի լուռ համաձայնությամբ:

Գրողը բացում է փակ դարպասների դռները, մտնում տուն ու խոհանոց եւ ամենայն մանրամասնությամբ ներկայացնում բեյական ընտանիքների քաղքենիական կենցաղավարությունը, բամբասանքներով, ճախանձով, անիմաստ մրցակցությամբ թուսվորված ապրելու նրանց կեսակպերազը:

Գրողի ամենատես հայացքի առաջ բացվում է այդ ընտանիքների մեծ ու փոքր անդամների հոգեւոր աղքատության խորշակված դաշտանկարը, լսելի դարձնում նրանց տաղտկալի ու ձանձրալի զրույցները, ընտանեկան դաստիարակության խաբկանքի կիսածայծ շշուկները եւ …կանանց դավաճանության անառակ պատմությունները:

Բարաքում կայիմ շներ, որոնք «իրենց վարքն ու բնավորությունը նմանեցնում էին տերերին»:

Նրանք տերերի հանար թիկնապահներ եւ գործընկերներ էին:

«Խանկար բեյի Ֆիդնառ շունը, որ տիրոջ հետեւից գնում էր գյուղերը հավ հավաքելու, այսինքն՝ աչքին ընկած հավը կուլ էր տալիս ու մնում էր անպատիժ, կարծես թագավորական խարոջ հավքող էր»: Այսպիսին են բեյերի շները: Նրանք էլ բեյերի նման քնում էին «հետեւեսոյա քնով… եւ նույնիսկ քնի մեջ պուֆ էին անում»: Պատկերն իր լրումին է հասնում «Այուլայց ճահկարիության հին եւ գալիք ժամանակների մասին» Պավլի բեյի ունեցած մտորումներով եւ Ավետիսի ընտանիքի եւ նրա աղջիկներին ամուսնացնելու զվարթ ու տխուր պատմություններով:

Իսկ բե՞վ էր Ավետիսը, ի՞նչ տառապանքների միջով էր անցել, ի՞նչ ճամփով է հասել Գորիս, ոչ ոք չգիտեր:

Չգիտեին ոչ թե եւ ոչ միայն, որ «Գորիսում ի՞նչեր մարդկանց մասին երկար չեն խոսում», այլեւ որ բացարձակապես անտարբեր էին հայրենիքի բախտի ու ճակատագրի նկատմամբ:

Այդ հարսանիքները տեղի էին ունենում տուն-տեղից, հանդ ու հոդից, վար ու ցանքից կտրված եւ Հին ճանապարհի վրա ապրող կյորեսեցիների տիրական ներկայությամբ:

Փոխվել էր վերջիններիս վարքն ու բարքը: Նրանք «աղ ու հացի եղբայրներ էին» եւ դարձել են խրախճանքների ու գինարբուքների փրահարներ եւ շարունակում էին Հին կռիվը, բայց հիշեցնելով ոչ թե Ղաթրիկի Աղալոյի ուժեղ, պարտադրող ու խիստ ազդեցիկ, այլ Գյուրջի Օբիհ թույլ ու վախվորած ժամանակները:

Վիպակի վերջին դրվագները մի յուրօրինակ ամփոփում են, որտեղ գրողն առավել որոշակի է դարձնում ասելիքի ներքին հոսանքները, Գորիսի երկսեռ հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտը:

«Գորիսում կային տեսակետ ունեցող տիկիններ», որոնց զրույցներն սկսում էին տարաբնույթ թթուների եւ մուրաբաների համ ու հոտի մասին տեղեկատվությամբ եւ ավարտվում փեսացուի եւ հարսնացուի շուրջ հանգատրաստից հյուսվող բամբասանքներով:

Այսպիսի դատարկ եւ անիմաստ զրույցներով էին զբաղվում «հոգեւոր շահերից» զուրկ «Գորիսի բնակչությունը» եւ առավելապես բեյերը: «Նրանք հոգի չունեին, որ հոգեւոր շահեր ունենային»:

Հոգեւոր շահերից զուրկ այս միջավայրում, հայրենի հողի վրա, հայրենի քաղաքում արհամարհվում, աղավաղվում են բարքերն ու սովորությունները, աղավաղվում է լեզուն, նսեմանում ու ծաղրվում, քամահրվում եւ ազգային արժեքներ:

Անհեռատես ու նյութապաշտ, «հոգեւոր շահերից» զուրկ բեյերից խորապես տարբերվում է Պավլի բեյ Օրբելյանը. տագնապաշտ է նրա հոգին, եւ նրա մտքերն անընդհատ պտտվում են ռուսացող Զանգեզուրի շուրջ, որի դեմն առնելու միակ պատնեշը «Այուլայց ճախարարության վերականգնումն է»: Հանընդհանուր անտարբերության մեջ նա միակն է, որ օթեւան է տալիս Ավետիսի ընտանիքին: Սեփական զորությունն ապահովելու համար նա քարոզում է հայտներին՝ ամուսնանալ միայն հայ աղջիկների հետ: Տեղի է ունենում երեկ եւ այսօր շատ տարածված մի սովորական դեպք, որ իր մատյանում արձանագրում է Պավլի բեյ Օրբելյանը. «Արյունարբու եւ գազանաբարո ավազակներ, ազգով թուրք եւ դարբա-մամադ ցեղից գինված՝ հարձակվեցան ուխտավորաց վրա», բայց կյորեսեցիները «Միահամուռ արշավելով դարբաղաշ արին ավազակերաց…»: Այսքանից հետո Պավլի բեյ Օրբելյանը հատուկ իմացնել է տալիս, որ «…

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
Գնային՝ թանգարան, ընտրանքային՝ 200 դրամ
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 18 215
26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2010

Իրողություն

Ամայացած Կյորեսը եւ նրա միջնաբերդը՝ Ծենը

«... Իր թաղերով եղել է աղմկոտ փեթակ, եւ այնտեղ... մի ահագին գյուղ կար քարանձավների մեջ, քերծերի գլխին...»

...Ալ որիշ էր Կյորեսի լեզուն, որով խոսում էին Հին ճաճապարհի բնակիչները, հին շուկայի արհեստավորները եւ խոսում էին կամուրջից այն կողմը՝ Շենի բոլոր թաղերում, Ցաքուտ, Նորու եւ Ջորեկ գյուղերում, այն լեզուն, որին տիկին Օլինկան անվանում էր շենավարի լեզու՝ ստորադասելով իրենց քաղաքավարի եւ բլաղարողնի լեզվին:

Ինչ չքնաղ լեզու էր կյորեսերենը... Չուտեիր եւ չխմեիր, այլ միայն այդ լեզվով խոսեիր կամ լսեիր, թե ինչպես քաղցր են նուրբ ինչյուններով խոսում էր լվացարարուհի Սինան, ինչպես էր ծոր տալիս, ասես ոչ թե խոսում, այլ ճախարակի առաջ բարակ երգ էր ասում, եւ բառերը նստում էին, ինչպես փափուկ մաքլանչները: Հապա Դոլուն Կարիմ... Կռանում էր սառն աղբյուրի վրա, կուշտ խմում եւ ջուրը բեղերից կաթկթելով ասում էր խուվա՛ղ... եւ այնպես էր ասում, այդ բառն այնպես էր զրնգում, որ եթե աղբյուրը նորահարս լիներ, ամոթից քողը կքաշեր երեսին... Իսկ Աթա ապերը, երբ բարկանար, այնպես մի ըմբո կասեր, որ Մեղրաբերծը կդրնգար:

Գորիսի ոչ մի փողոցում լեզուն այնքան վճիտ չէր, ինչպես Հին ճաճապարհի վրա: Այդ լեզուն չէր, այլ կարոտ, տխրություն, զայրույթ, այդպես Ղաբիրնի ձորում երգում էր կաքավը եւ մթնում կարկաչում էր Ցուրտ աղբյուրը:

– Տիյերի հացերը մրսել են, – կասեր Աթա ապերը, չուխայի փեշից պոկելով փուշը, որ կպել էր արտի մեջ, բայց այնպես կասեր, կարծես խնդրում էր մի կարպետ, որ ծածկի արտերը:

– Հորա՜ է, հորա՜, – եւ էլ ուրիշ ոչինչ չէր ասի Աթա ապերը, բայց այդ մի բառը կասեր դանդաղ, ծանր եւ արքայավայել, կասեր ինչպես հանդերի պատրիարք, եւ ով կյորեսեցի էր, նա հասկանում էր, թե ո՞ւր կորան վաղեմի պարարտ հողերը եւ շարմաղ ալյուրը.

«Իրանի Թուրանում չկար քեզ բարաբար,
Դառն ես դառել, հե՜յ Ջանգեզուր...»

Աթա ապերը կարտասաներ երկու տող «Գորիսի գովքից», բայց այնպես կասեր, որ իբրեւ իջնում է խոր ձորերը եւ բարձրանում է բարձր լեռները, եւ լեռնային քամու նման լեզուն պտույտք է անում դեպի երկինք:

...Այդքան գեղեցիկ եւ հնչեղ էր Կյորեսի լեզուն: Նա մի չքնաղ գորգ էր նախշերով եւ վարդ ծաղիկներով մի հին գորգ, ինչպես Սինայի աղջիկ ժամանակ գործած գորգը, որ փռված էր Հաստ Ներսես բեյի դահլիճում: Ինչքան հնանում եւ մաշվում էր, այնքան շքեղանում էին գորգի գույները, եւ պատահում էր, որ Սինան, երբ այդ հին գորգը տանում էր գետը եւ լվանում էր, Սինան լաց էր լինում, եւ նրա հետ լաց էր լինում Կյորեսի լեզուն...

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

Լուսանկարը Ս. Վարդանյանի

Հին ամրոցի պատերի հետքերն իր վրա կրող ասփվածային այս շինվածքի քարանձավներում է գործել Գորիսի թաղրոնը:

Լուսանկարը Հ. Մոնոյանի

Տեսարան ամայացած Կյորեսից: Կենտրոնում՝ 4-րդ դարում կառուցված Սուրբ Հռիփսիմե եկեղեցին է (որոշ մասնագետների կարծիքով՝ Սբ Աստվածածին):

Լուսանկարը Հ. Պետրոսյանի

Գորիս գյուղի բրուտանոցի հետքերը:

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
Գնային՝ թանգարան, ընտրանքային՝ 200 դրամ
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Գորիսը՝ Ջանգեզուր-Վայոց ձոր փարածաշրջանի կառավարման կենտրոն 1993-95թթ.

Ստեղծվեց Սյունիքի հարցերով ՀՀ պետնախարարի ինստիտուտը

Մարտի 28-ին Գորիս ժամանեց ՀՀ կառավարության պատվիրակությունը՝ վարչապետ Հրանտ Բագրատյանի գլխավորությամբ: Նույն օրը շրջխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ պատգամավորների Գորիսի շրջանային, քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեների համատեղ նիստ՝ կառավարության անդամների մասնակցությամբ: Ելույթ ունենալով համատեղ նիստում՝ Հրանտ Բագրատյանը մասնավորապես ասաց. «Զանգեզուրն արդեն ունի պետական նախարար: Ուզում եմ այսօր ներկայացնել նաեւ պետնախարար Վազգեն Սարգսյանին, որը տարվա մեծ մասը լինելու է Գորիսում: Պետնախարարի ինստիտուտը կոչված է ապահովելու իշխանության տեղական մարմինների համագործակցությունը, գլխավորելու «Սյունիք-Զանգեզուր» ծրագրի իրագործման աշխատանքները»: – «Սյունիք-Զանգեզուր» ծրագրի իրականացումը երկճյուղ գործընթաց է, – իր ելույթում ասաց Վազգեն Սարգսյանը: – Առաջին ճյուղն ընթացիկ հարցեր է ներառում, որոնց լուծմանն արդեն ձեռնամուխ ենք եղել: Երկրորդ ճյուղը ստեղծագործական պրոցես է. ծրագիրը վերջնամշակված չէ: «Սյունիք-Զանգեզուր» ծրագրի կարեւորությունը պայմանավորված է հանգամանքով, որ Սյունիքն Արցախի թիկունքն է: Որպեսզի հարատեւի Արցախի նորակազմ պետությունը, պետք է ունենանք ամուր Զանգեզուր: Պատերազմական ժամանակներում դժվար է որեւէ ծրագիր իրականացնել, եթե, մանավանդ, չունենանք ներքին կարգուկանոն: Տարածաշրջանում պետք է ստեղծվի օրենքի դիկտատուրա:

***

Սյունիքի հարցերով պետնախարար Վազգեն Սարգսյանը ապրիլի 5-7-ը Գորիսում էր: Նրա նստավայրը գտնվում է Գորիսի շրջխորհրդի վարչական շենքի երրորդ հարկում: Նախօրյակին լրագրողների հետ հանդիպման ժամանակ Վազգեն Սարգսյանը հայտարարեց. «Թեեւ գոյություն ունեն աղետի գոտու, Սեւանի ավազանի հիմնահարցերը, սակայն, «Սյունիք-Զանգեզուր» ծրագիրն, իմ կարծիքով, կարեւորագույնն է, քանի որ Արցախը պահելու համար նրա թիկունքում մենք պետք է ունենանք հզոր Զանգեզուր: Պետական նախարարի կարգավիճակն իճձ հնարավորություն կտա, համագործակցելով Զանգեզուրի շրջանների իշխանությունների հետ, լուծել ծագող խնդիրները, որոնցից առաջինը պատերազմող շրջանին հատուկ կարգուկանոնի հաստատումն է»:

«Զանգեզուր», №15 եւ №16, 1993թ.

Հայոց ազգային բանակի ակունքներում

Մի քանի վավերագրեր

Կոչ Սյունյաց Ժողովրդին

Հայրենակիցներ, Լեռնահայաստանի աշխատավոր ու քաջ ժողովուրդ, մենք, որ հաղթահարեցինք մեր կյանքի ամենադաժան ձմեռը, ի հեճուկս թշնամու այսօր հող ենք մշակում եւ փորձում տնտեսություն վերականգնել: Հաստատ վերականգնելու ենք, որովհետեւ մենք ոչ միայն շնչահեղձ չեղանք վերջին տարիներին մեր գլխին պայթած արհավիրքներից, այլեւ կարողացանք մեր պատմության մեջ երկար, շատ երկար ընդմիջումից հետո նաեւ մեծ հաղթանակներ տանել: Մեր զրկանքներն արժեքավորվեցին, քանզի մեզանից հետո մեր մասին դատելու են ոչ թե վառած գազով ու կերած հացով, այլ փաստով՝ կարողացա՞նք պահել ու պաշտպանել մեր հայրենիքի ամբողջականությունը, կերտել մեր անկախ պետականությունը, թե՞ ոչ:

Ինչպես մենք ենք դատում մեր նախորդների մասին՝ բյուզանդիաներում եւ թուրքիաներում, թիֆլիսներում եւ բաքուներում թող կայսրեր ու զորավարներ, վաճառականներ ու միլիարդատերեր չդառնային, հարեւան բրդի ու թուրքի վրանի կողքին երկիրակաի տներ չկառուցեին, ավելի շատ զորք ու ավելի քիչ կուսակցություններ ունենային, վերջապես, միլիոններով նաեւ տարվելու փոխարեն մարտի դաշտում հազար, հինգ հազար զինվոր էլ ավելի կորցնեին, բայց սերունդներին պինդ ու անկախ, ամփոփ պետություն ժառանգեին: Մենք այսօր իրավունք չունենք բաց թողնել մեզ ընձեռված, արյունով ու քրտինքով ամրապնդված պատմական շանսը: Իսկ ՀՀ պետականության եւ ամբողջականության ամրապնդման համար անհրաժեշտ է ունենալ մարտունակ եւ կարգապահ բանակ: Վերածնված Արցախը թիկունքում պիտի ամուր Սյունիք ունենա: Այսօր Արցախն է մեզ թիկունք: Դա անքնական է եւ մեզ պատիվ չի բերում: Էլ չեմք խոսում հենց Սյունիքի պաշտպանության մասին: Այսօր Սյունիքի երիտասարդներին հնարավորություն է տրվում ծառայել ոչ միայն իր հայրենի Հայաստանում, այլեւ հենց Սյունիքում: Թե ինչպես կլինի Սյունիքի պաշտպանությունը, մեծապես կախված է հենց այն բանից, թե ինչպես կիրակացնցվի 1993թ. գարնանային, ինչպես նաեւ աշնանային զորահավաքը: Յուրաքանչյուր քաղաքացու, պաշտոնատար անձի, կազմակերպության սուրբ պարտքն է նպաստել զորահավաքի իրականացման գործին: Պիտի ծառայեն բոլորի որդիներն ու եղբայրները՝ նախագահի, թե շարքայինի, դատախազի, թե բանվորի: Օրինականության եւ արդարության յուրաքանչյուր խախտում զինակոչի հարցում կպատժվի խստագույն ձեւով: Պատժամիջոցներ միշտ կարելի է կիրառել եւ կկիրառվեն՝ անկասկած: Մենք, սակայն, ուզում ենք դիմել մեր բարձր հնքնագիտակցությանը: Սիրելի՛ սյունեցիներ, վերականգնենք մեր որդիներին ու եղբայրներին առնական, բարձր պատասխանատվությամբ եւ հպարտությամբ բանակ ուղարկելու ավանդույթը: Հիշենք եւ հետեւությունները անենք. Հայրենական մեծ պատերազմի ընթացքում ոչ մեկի մտքով չէր անցնում թաքցնելու իր հարազատին, ավելի՝ ճակատ էին մեկնում ծաղկեփնջերով:

Սիրելի՛ մայրեր, քույրեր, ձեր ափի մեջ է ազգի ճակատագիրը: Լացը լաց է բերում, ծիծաղը՝ ծիծաղ: Հպարտացեք ձեր զինվորացու որդիներով ու եղբայրներով: Սահմանների վրա նրանք հայրենիք են պաշտպանելու եւ ձեր անվտանգությունն ու պատիվը: Հիշենք, վերջապես՝ ով չի կերակրում իր բանակը, ստիպված է լինում կերակրել ուրիշի բանակին: Ուրեմն համախմբվենք ու որոշենք հնքները մեզ համար. բոլոր սյունեցի զորակոչիկները մեկ մարդու նման պիտի անդամագրվեն հայոց բանակին: Ոչ մի դասալիք մեր կողքին տեղ չի ունենա: Վերականգնենք բարի ավանդույթները: Սպասում ենք բանակի քեֆի առաջին հրավերին:

ՀՀ պետական նախարար՝ Վ.Սարգսյան
Խորհուրդների նախագահներ՝
Ռ.Ալեքսանյան (Գորիսի շրջան)
Ս.Սահակյան (Սիսիանի շրջան)
Ա.Հայրապետյան (Կապանի շրջան)
Վ.Արիստակեսյան (Մեղրու շրջան)
Ա.Թովմասյան (Վայքի շրջան)
Ա.Ավետիսյան (Եղեգնաձորի շրջան)
Ս.Հարությունյան (Գորիս քաղաք)
Ռ.Սարուխանյան (Կապան քաղաք)

ք.Գորիս, 2 մայիսի 1993թ.
«Զանգեզուր», №20, 6.05.1993թ.

ՀՀ անվտանգության խորհրդի նիստեր Գորիսում

– 1993 թվականի հունիսի 12-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, ՀՀ ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյանը եւ ՀՀ նախագահի հատուկ հանձնարարությունների գծով արտակարգ եւ լիազոր դեսպան Դավիթ Շահնազարյանը Գորիսում հանդիպում են ունեցել ԼՂՀ ԳԽ եւ Պաշտպանության պետական կոմիտեի ղեկավարների հետ:

– 1993 թվականի օգոստոսի 1-ին ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը Գորիսում անցկացրել է Անվտանգության խորհրդի ընդլայնված նիստ, որին խորհրդի անդամներից բացի՝ մասնակցել են նաեւ ՀՀ ԳԽ նախագահի առաջին տեղակալ Արա Սահակյանը, հատուկ հանձնարարությունների գծով դեսպան Դավիթ Շահնազարյանը, ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Կարեն Բաբուրյանը, ԼՂՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, ԼՂՀ արտգործնախարար Արկադի Ղուկասյանը:

Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ քննարկվել եւ մշակվել են ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 853 բանաձեւի հետ կապված առաջիկա քաղաքական եւ դիվանագիտական խնդիրները:

ՀՀ պետական նախարարի կարգադրություն

ա) Հայաստանի Հանրապետության անկախության ամրապնդման համար անհրաժեշտ է ունենալ մարտունակ եւ կարգապահ բանակ: Թե ինչպիսին կլինի Հայոց անկախ պետության բանակը, շատ բանով կախված է նրանից, թե ինչպես կիրակացվի 1993թ. գարնան զորահավաքը: ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու, պաշտոնատար անձի, կազմակերպության եւ կուսակցության սուրբ պարտքն է նպաստել զորահավաքի իրականացման գործին:

Ելնելով ՀՀ «Զինապարտության մասին» օրենքից, ՀՀ նախագահի հրամանագրից, ՀՀ կառավարության որոշումից եւ ՀՀ պաշտպանության նախարարի 29.04.93թ. հրամանագրից:

Կարգադրում եմ

1. Զորակոչի ճիշտ եւ օրինական անցկացման ողջ պատասխանատվությունը դնել շրջանային եւ քաղաքային խորհուրդների նախագահների, զինկոմների, դատախազների, զինվորական ոստիկանության վարչության եւ միլիցիայի շրջանային բաժինների պետերի վրա:

2. Ստեղծել զինակոչի իրականացմանը նպաստող հանձնաժողովներ, որոնց մեջ ընդգրկել Հայրենական պատերազմի վետերանների, ազատամարտիկների ծնողների եւ շրջանային դատախազության ներկայացուցիչների: Նրանց պարտականությունների մեջ է մտնում զինակոչի օբյեկտիվության եւ օրինականության պահպանումը:

3. 1993թ. գարնան զորակոչն իրականացնել հանդիսավոր տոնական մթնոլորտում՝ որպես ազգային զինվորական հոգեբանության ձեւավորման կարեւոր միջոց: Տոնական ատարությունների անցկացման հսկողությունը դնել պետական նախարարի տեղակալ Վ.Ավետիսյանի վրա:

ՀՀ պետական նախարար՝ Վ.Սարգսյան
ք. Գորիս, 1.05.1993թ.
«Զանգեզուր», №20, 6.05.1993թ.

բ) Ելնելով ՀՀ «Զինապարտության մասին» օրենքից (9 դեկտեմբերի 1991թ.)

Կարգադրում եմ

1. Զորակոչի տարիքի բոլոր քաղաքացիներին արգելել բացակայել իրենց հիմնական բնակավայրից (Վայք, Եղեգնաձոր, Սիսիան, Գորիս, Կապան, Մեղրի):

2. Զորակոչային տարիքի այն քաղաքացիները, որոնք բացակայում են իրենց մշտական բնակավայրից, 15-օրյա ժամկետում վերադառնան մշտական բնակավայրերը:

3. Զորակոչային տարիքի քաղաքացիների ճկատմամբ, որոնք չարամտորեն կխուսափեն հերթական զորակոչից, այլեւայլ պատճառներով, կամ 15-օրյա ժամկետում չեն վերադառնա մշտական բնակավայրեր, կհարուցվեն քրեական գործեր, որոնց հիման վրա կհայտարարվեն հետախուզումներ:

ՀՀ պետական նախարար՝ Վ.Սարգսյան
ք. Գորիս, 1.05.93թ.
«Զանգեզուր», №20, 6.05.1993թ.

ՀԵՌԱՀԱՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ «ՍՅՈՒՆԻՔԻ ՍՏԵՎԱՐՈՒԹՅՈՒՆ»
ԱՌԱՋԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
Գլխավոր խմբագիր՝ Ս.Հովհաննիսյան
Հասցե՝ քաղաք, Շտեփանավան, 2002
Հեռախոս՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Լուսանկարը Կ. Հովհաննիսյանի

Այս շենքում էր տեղաբաշխված №3 գումարտակի շտաբը:

№3 ԳՈՒՄԱՐՏԱԿԻ մարտական ուղին

ԱՐԿԱԴԻ ՇԱՏՈՒՐՅԱՆ

1992թ. մարտի 17-ին Խոր Հորդային 7-րդ բանակի զորամասերը հեռանում են իրենց անկախ ու սուվերեն պետություն հռչակած Հայաստանից: Ռազմաստրատեգիական առումով ստեղծվում է միանգամայն նոր իրավիճակ: Երրորդ կողմի բացակայության պայմաններում Ադրբեջանը լիակատար շրջափակման մեջ է առնում Արցախը, ամուր փակում է Գորիս-Լաչին ճանապարհը՝ վայրագ հրետակոծության ենթարկելով հայոց սահմանային բնակավայրերը:

Ազերի բռնակալներն ամեն կերպ փորձում են հավերժացնել Ղարաբաղի հայության ստրկացումը:

Ղարաբաղի համար սկսվում է մի նոր, ծանր ու դժվարին ժամանակ, որը գնալով ավելի է ծանրանում:

Հարկավոր էր միջոցներ փնտրել Ղարաբաղի ժողովրդին թշնամու երախից փրկելու համար: Իսկ այդ փրկությունը պիտի գար ու անցներ Գորիսով: Առաջին հերթին Գորիսը պիտի կանգներ Ղարաբաղի թիկունքին, քանի որ այն դարձել էր հակամարտության կենտրոն, որի խաչմերուկներում իրար են բախվում հայ-ազերական հակադիր ուժերը:

Նկատի ունենալով այս ամենը՝ թշնամին հսկայական զորային միջոցներ էր կուտակել այստեղ՝ Հայաստանի հարավում՝ հիմնականում Գորիսի ու Կապանի ուղղություններում:

Թշնամու պատասխան հակակշիռը պարտադրված էր ստեղծել հայկական կողմը: Ազերիների վայրագ հրետակոծություններին պատասխանելու համար հարկավոր էր ստեղծել ժողովրդական-հայրենասիրական միասնական ճակատ: Հարկավոր էր լայնամասշտաբ միջոցառումներ մշակել հայկական զորային ուժերը միավորելու, նրանց տեխնիկական հնարավորությունները զորացնելու, պետական բոլոր կառույցները նպատակամղելու հայրենիքի պաշտպանության գործին: Ճիշտ է, այդ ժամանակ կային հնգնաբուխ կերպով ստեղծած երկրապահ-կամավորական ջոկատներ, որոնց թիվը շրջանում քսանից անցնում էր: Կային նաեւ աշխարհազորային միավորումներ, առանձին գինված խմբեր, բայց արդեն ժամանակն էր այդ ուժերը միավորելու, հարվածային մեկ բռունցք ստեղծելու, մարտական հնգնաձգությունը եւ վրեժի վրա հիմնված արկածախնդրություններին վերջ տալու, այն զորային միավորները, որոնք պայմանականորեն ջոկատներ էին կոչվում եւ շատ դեպքերում գործում էին առանձին-առանձին, միացնելու, դնելու մեկ միասնական հրամանատարության տակ:

1992թ. մայիսի 27-ին Գորիսի դրամատիկական թատրոնի շենքում տեղի է ունենում ժողովրդապահ մարտիկների հավաք: Հավաքին մասնակցում են Գորիս քաղաքի եւ շրջանի գյուղերի ավերիչ զորային միավորումների ներկայացուցիչներ, Պաշտպանության խորհրդի անդամներ, իշխանությունների ներկայացուցիչներ, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության բարձրաստիճան սպաներ: Հավաքի մասնակիցների միահամուռ համաձայնությամբ առաջարկվում է ստեղծել Գորիս քաղաքի եւ շրջանի գյուղերի աշխարհազորայինների (ջոկատների) միասնական զորամիավորում:

Նշանավոր այս հավաքին մասնակցում եւ համապատասխան բացատրություններ է տալիս ՀՀ պաշտպանության նախարարության մարտական պատրաստության վարչության պետ գեներալ-մայոր Մ.Սարգսյանը: Այսպիսով, շրջանում գործող բոլոր կամավորական-երկրապահ ջոկատները եւ զորային փոքր խմբերը միավորվում են, եւ այդ հիմքի վրա ստեղծվում է Գորիսի երկրապահ կամավորականների III պայմանագրային գունդը, որը Գորիսի գինկոմիսարիատի ենթակայությամբ ստեղծված, պետական պատասխանատվությամբ գինվորական կազմավորում էր՝ միասնական հրամանատարությամբ: Երկրապահ կամավորականների միաձայն հավանության ներքո գեներալ-մայոր Մ.Սարգսյանն ընդունում է, որ երկրի պաշտպանությունը զուտ պետական խնդիր է եւ չի հանդուրժում ոչ մի խմբակային, կուսակցական, թայֆայական մոտեցում: «Պատմության մեջ, – ասում է նա, – հաճախ ենք պարտվել, երբ հայրենիքի պաշտպանությունը վեր ենք ածել ցավաքի, մելիքթալության, տվյալ շեհի ու գյուղի պաշտպանության»: Սպարապետը նաեւ այն կարծիքն է հայտնում, որ պահեստազորայինների երկրապահ կամավորական միավորումներից եւ սկիզբ առել պետական ռազմական կառույցները: Շատ գինվորականներ մարտական դասեր առել երկրապահ կամավորականների գումարտակում եւ նրա ջոկատներում:

1992թ. գարնանը Գորիս քաղաքի եւ շրջանի բոլոր գյուղերի երկրապահ կամավորականների ջոկատները բոլորը գինվել թշնամուն: Ուրեմն՝ նախ եւ առաջ հարկավոր էր գինել գումարտակը, ձեռք բերել ժամանակակից գինատեսակներ: Հարկավոր էր ոչ միայն թշնամուն թույլ չտալ ներխուժել սահմաններից ներս, այլեւ անհրաժեշտ էր նրան հեռացնել հայոց սահմաններից եւ ապահովել խաղաղ բնակչության անվտանգությունը: Դրան հասնելու համար պետք է մարտիկների բարոյականային մեծ ոգեւորությանը գումարել գինային համապատասխան միջոցներ:

Այդ նպատակով իր գործունեության սկզբնական շրջանում Գորիսի երկրապահների գումարտակի գլխավոր խնդիրը դառնում է ռազմական տեխնիկայի եւ սպառազինության այլ տեսակների ձեռքբերման հարցը: Եվ իրոք, բավական կարճ ժամանակում գումարտակը կարողանում է գինվել պատշաճ գինատեսակներով: Եվ դա կատարվում է ոչ միայն սեփական երկրի միջոցների հաշվին, այլեւ թշնամուց խլված զենքի հաշվին: 1992թ. ամռան շրջանում գումարտակը հենց այդպիսի մարտավարությամբ է առաջնորդվում: Մինչեւ մեծ ու ընդհանուր հարձակումը, գումարտակը փոքրաքանակ գինախմբերով՝ ջոկերով ու դասակներով, այս ու այնտեղ, որտեղ թշնամին չէր սպասում, հանկարծակի հայտնվում է թշնամու թիկունքում, անակնկալի բերում նրան եւ տիրանում փախած հայատակարդի գինամիջոցներին:

Սույն մարտավարությունը ժամանակի մեջ արդարացնում էր իրեն: Գումարտակի հրամանատարությանը հաջողվում էր համախմբել ռազմական բոլոր ուժերը, ապահովել հանգործակցությունը նախկին ջոջկատների միջեւ: Սերտ կապ է հաստատվում ռազմական գնալ եւ թիկունքի միջեւ, այնպես որ գումարտակը միշտ ստանում է ժողովրդի աջակցությունը, վայելում է մարդկանց վստահությունը:

Գումարտակի ղեկավարությունը հասնում է այն բանին, որ երկրապահ տղաների մոտ իշխում է միայն մեկ գաղափար ու մեկ ձգտում՝ միահամուռ ուժերով փրկել հայրենիքը՝ կռվող մարտիկից հեռու պահելով գաղափարական տարաձայնությունները, քաղաքական շահարկումները ու կուսակցական տարաբնույթ մոտեցումները: Պահանջների հավասարություն, կարգապահություն բոլորի համար՝ գինվորից մինչեւ հրամանատար, փոխհամաձայնություն դասակների եւ ջոկերի միջեւ, խստապահանջություն ռազմական իրադրությանը համապատասխան, անխափան կապ երկրապահ ազատամարտիկների եւ ժողովրդի միջեւ, քաջությամբ փառաբանություն եւ վախկոտությանն նշավակում, անասաստ հավատ հաղթանակի նկատմամբ:

Ահա գումարտակի գործունեության ընդհերքում մշտապես գործող կանոններն ու օրենքները:

Գումարտակն առանձին վաշտերից ու դասակներից (ճախկին ջոկատներից) կազմված մի կուռ ամբողջություն էր, որտեղ ամեն մեկը գիտեր իր անելիքը եւ պատրաստ էր կատարելու ամեն մի մարտական առաջադրանք:

Գումարտակը նախաբանակային հզոր զրոամիավորում էր՝ բանակին հատուկ զրոային ստորաբաժանումներով: Գումարտակը բաղկացած էր երեք մարտական վաշտերից: Վաշտերն իրենց հերթին բաժանվում էին դասակների, դասակները՝ ջոկերի, ինչպես սովորաբար լինում է բանակում: Գումարտակի յուրաքանչյուր վաշտ ուներ մարտական գործունեության իր տեղանքը եւ գործում էր ռազմաճակատի իրեն հատկացված հատվածում:

Գումարտակի առաջին վաշտը գործում էր հինմնականում Շուռնուխի եւ Գորիս-Կապան ավտոճանապարհի պաշտպանության հատվածներում՝ վաշտի հրամանատար Վլադիկ Ստեփանյանի գլխավորությամբ: Այս վաշտում ընդգրկված էին Գորիս քաղաքի, Քարահունջի, Հարժիսի եւ Խոտ-Որոտան գյուղերի երկրապահ կամավորական ազատամարտիկները:

Գումարտակի երկրորդ վաշտը՝ Մելիքսեթ Պողոսյանի (Մելո) գլխավորությամբ, գործում էր ռազմաճակատի Խնածախ, Տեղ գյուղերի պաշտպանության հատվածներում:

Վաշտում ընդգրկված էին Տեղ, Խնածախ, Վաղատուր, Խոզճավար, Քարաշեն, Արավուս գյուղերի ջոկատների երկրապահ ազատամարտիկները:

Շրջանի հարավային սահմանների պաշտպանության հատվածներում (Հարթաշեն, Խնձորեսկ, Կոռճիձոր) գործում էր գումարտակի երրորդ վաշտը՝ Սաճասար Բեգլարյանի (Սաճո) գլխավորությամբ:

Ակներ, Վերիշեն, հետագայում նաեւ Կոռճիձոր գյուղերի կամավորական ջոկատները՝ Սերյոժա Սեդրակյանի, Ստյոպա Արզումանյանի եւ Սեյրան Գալստյանի ղեկավարությամբ, կատարել են գումարտակի հրամանատարի հատուկ հանձնարարությունները:

Գումարտակի վաշտերի միջեւ մարտական գործողությունների այսպիսի տեղաբաշխումն ամենեւին չէր նշանակում, թե գումարտակի ստորաբաժանումները գործում էին իրարից անջատ եւ կապ չունեին մեկը մյուսի հետ: Գումարտակի հրամանատարությունը օպերատիվ աշխատանքի շնորհիվ ստորաբաժանումների միջեւ փոխադարձ կապը ցանկացած պահի ապահովվել է եւ նկատի է առնվել պահի թելադրանքը: Այնպես որ Կոռճիձորի սահմաններում գործող վաշտը, թշնամու քայլերից համապատասխան, կարող էր հայտնվել Որոտան-Շուռնուխ հատվածում եւ ընդհակառակը:

Գումարտակի վաշտերն ու դասակները մշտապես գտնվել են փոխադարձ կապի մեջ եւ իրադարձության պահանջով իրար փոխօգնության են հասել՝ գործելով միասնական մարտական կանոնադրությամբ ու համապատասխան գրաֆիկով:

Գումարտակն իր ստեղծման օրից սկսած ազերի հրոսակների դեմ մտնում է մարտական գործողությունների մեջ եւ վճռական դեր կատարում թշնամուն հայոց սահմաններից հեռու բշելու եւ ջախջախելու գործում:

1992թ. արյունալի մարտերը շարունակվում են Արցախում: Թշնամին իսկական նվաճողական պատերազմ է սկսում Գորիսի սահմանների վրա: 1992թ. ապրիլ-մայիս ամիսների բոլոր օրերի ընթացքում ազերիները վայրագորեն հրետակոծում են ամբողջ Գորիսը՝ նպատակ ունենալով խարխլել հայոց սահմանների պաշտպանական դիրքերը, անայացնել սահմանամերձ բնակավայրերը, Ղարաբաղ իսպառ կտրել մայր Հայաստանից եւ բացառել որեւէ օգնություն մարտնչող Արցախին:

Հրթիռային կայանքներից, հրանոթներից, մոտահրանգային տեխնիկայի բոլոր տեսակներից ամենա հրետակոծվում են Գորիս քաղաքը, Խնածախ, Կոռճիձոր, Շուռնուխ, Տեղ, Արավուս, Խնձորեսկ, Ներքին Խնձորեսկ գյուղերը: Չայգամիից Խոզճավար ու մինչեւ Կոռճիձոր ընկած տարածքները վերածվում են վիթխարի կրակագծի: Վայրագ թշնամին գերակշիռ տեխնիկայի եւ հրետանու հզոր միջոցներով կարողանում է զգալի վնասներ պատճառել սահմանամերձ բնակավայրերին: Մի օրվա ընթացքում միայն Տեղ գյուղում ութ բնակչենք է ավերվում, հրդեհներ են բռնկվում Խոզճավարում, Կոռճիձորում, Խնձորեսկում, Ներքին Խնձորեսկում: Թշնամին կանգ չի առնում ոչ մի միջոցի առջեւ՝ դիմելով պատերազմելու ամենաստոր քայլերին:

Սահմաններում տիրող իրավիճակը հրամայաբար պահանջում է համախմբել բոլոր ուժերը, ամրապնդել սահմանների պաշտպանությունը եւ հնարավոր բոլոր միջոցներով ճնշել հակառակորդի բոլոր կրակկետերը, ռազմական հենակետերը: Գլխավոր խնդիրը Գորիս-Ստեփանակերտ ճանապարհի բացումն էր, որ շարունակում է ազերիների կողմից փակված մնալ: Սարդարիական ճանապարհի բացումը կյանքի չափ անհրաժեշտ էր, եւ դա մնում էր հայոց մարտական ուժերի գլխավոր ռազմավարական նպատակը:

1992թ. ընդհանրապես հարուստ էր կարեւոր իրադարձություններով ու անցքերով, որոնք ճակատագրական նշանակություն ունեցան եւ Հայաստանի, եւ Արցախի ժողովուրդների համար:

1992թ. հունվարի վերջին Լեռնային Ղարաբաղի Գերագույն խորհուրդը Ղարաբաղը հռչակեց անկախ պետություն:

Ազգերի ինքնորոշման այս միաձայնչ իրավացի դրսեւորումն Ադրբեջանի կողմից ընկալվեց որպես հակասահմանադրական ոտնձգություն իր տարածքային ամբողջականության դեմ եւ ազերիների ռազմական մեքենան ամբողջ թափով հետվեց ազատատեսչ Արցախի եւ նրան սատարող Հայաստանի դեմ: Սկսվեց հայ ժողովրդի հայրենական-ազատագրական պատերազմը մեծապետական հովերով տարված ադրբեջանական ցվՀՈՆերի դեմ:

1992թ. հունվարի 28-ին, որը համարվում է հայոց բանակի ստեղծման օր, ՀՅ Գերագույն խորհրդի նախագահի հրամանագրով ստեղծվում է Հայաստանի պաշտպանության նախարարություն: Պաշտպանության նախարար է նշանակվում Վազգեն Սարգսյանը:

Թշնամանքն հորդաները զսպելու եւ Ղարաբաղի ժողովրդի ազատությունը պաշտպանելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշում է ընդունում ստեղծել հանրապետության ինքնապաշտպանական ուժեր եւ ենթակայացնում նպատակով Լեռնային Ղարաբաղի պաշտպանության կոմիտե:

Ամբողջ Ղարաբաղում հաստատվում է արտակարգ դրություն: Մեծից փոքր գինվորականներ են, ողջ ժողովուրդը, «Մահ կամ ազատություն» գոչելով, խրամատավորվում է սեփական տանը՝ պատրաստ մարտնչելու մինչեւ վերջին մարդը: Ղարաբաղյան ազատամարտերին հսկայական օգնություն են ցույց տալիս Հայաստանից գնացած ուժերը, որոնց մեջ կային նաեւ տասնյակ գորիսեցիներ:

Մայիսի 8-ին ազատագրվում է Շուշին: Ռազմավարական նրբագույն արվեստի տեսակետից Շուշիի ազատագրումը մինչեւ հիմա էլ շատերին է զարմացնում, թե այդ ինչպես եղավ, որ հայերն մի փոքր հատվածի մի քանի տասնյակ տղաներ կարողացան հողմացրիվ անել մինչեւ ատամները գինված ազերական բանակի հզոր որջը:

1992թ. մայիսի 18-ին հայկական հնքնապաշտպանական ուժերը շեշտակի գրոհով ազատագրում են Լաչինը՝ պատմական Հայաստանի Ազատեցք գավառը, որը բնակեցվել էր թրքախոս քրդերով, հետագայում նաեւ ադրբեջանցիներով: Ազերիներն այստեղ էլ պարտություն են կրում: Լաչինի ընդամենը 7 կիլոմետրանոց միջանցքից փախչում են ավելի քան 7.5 հազար թրքախոս քրդեր, որոնք չեն ուզում կռվել հայերի դեմ:

Ազերական բռնության դեմ տարած հայ ժողովրդի այս հաղթանակները մի անգամ եւս ցույց տվեցին, որ հանուն ազատության եւ անկախության ճանապարհը հետընթաց չունի եւ հնարավոր չէ հաղթել մի ժողովրդի, որ հանուն ազատության մեծից փոքր զինվոր է դարձել: Ժողովուրդն ամուր ու միակամ կանգնել է իր զինվորական թիկունքին: Մարդասիրական միջանցքի բացումից ընդամենը երկու օր հետո Հայաստանից մոտ երկու հարյուր մեքենա սննդամթերք, հագուստեղեն, դեղորայք եւ այլ տեսակ ապրանքներ են առաքվում Ղարաբաղի ժողովրդին:

1992թ. օգոստոսին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի օգնությամբ գնվեց 32 տանկ: Հայ տանկիստ մարտիկները ճանապարհ են ընկնում դեպի ազատություն, դեպի Արցախ՝ իրենց հետ տանելով վեհափառի օրհնությունը:

1992թ. հունիսի 10-ին Գորիս է ժամանում Հայաստանի պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը եւ ելույթ ունենում տեղի գինվորականների ու ժողովրդի առջեւ: Նա իր ելույթում մասնավորապես ասում է այն մասին, որ ճիշտ է, բացվել է Լաչինի մարդասիրական միջանցքը, բայց երկրի հարավային ուղղությամբ վտանգը դեռ առկա է եւ պետք է պատրաստ լինել թշնամու նոր հարձակումներին:

Հայոց Սպարապետի այցն ամրապնդում է ժողովրդի հավատը հաղթանակի նկատմամբ, հայրենասիրական նոր խանդավառությամբ համակում գինվորությանը, երկրապահ գումարտակի առաձին դասակներ (Տեղ, Շինուհայր, Խնձորեսկ, Գորիս քաղաք, Կոռճիձոր, Հարթաշեն, Խնածախ, Խոզճավար) հերոսական կռիվներ են մղում գրաված դեմ՝ կասեցնելով նրա առաջխաղացումը դեպի մարդասիրական միջանցք:

1992թ. օգոստոսին իրավիճակը բարդանում է Շուռնուխի, Բարձրավանի եւ Թասի ոլորանների տարբեր տեղամասերում:

Գորիսին թիկունքից հարվածելու եւ հայկական ուժերի զգալի մասն այստեղ կաշկանդելու նպատակի հետապնդելով թշնամին Թասի լեռնանցքը եւ նրա հարակից շրջանները ենթարկում է զանգվածային հրետակոծության եւ միաժամանակ «Օխտի մեջք» կոչվող տարածքից սկսում բավական խոշոր ուժերով հարձակվել Շուռնուխի ուղղությամբ: Այստեղ տեղաբաշխված Գորիսի երկրապահների գումարտակի առաջին վաշտը՝ Մարատ Աթաբեկյանի գլխավորությամբ, մարտի մեջ է մտնում թշնամու դեմ: Տղաները կռվում են քաջաբար, անձնուրաց: Սակայն իրավիճակը քանի գնում բարդանում է: Ուժերն անհավասար էին: Անձնուրաց կռվող տղաները գիտակցում են, որ այդպես երկար դիմադրել չեն կարող թշնամու տասնապատիկ շատ ուժերի դեմ: Օգնությունը խիստ անհրաժեշտ է: Շուռնով գումարտակն իր հինմական կազմով տեղափոխվում է ռազմաճակատի այս չափազանց կարեւոր հատվածը: Շուռնուխ-Չայգամի-Թասա հատվածներում կռվող տղաներին օգնության է հասնում նաեւ մեր հրետանին: Հմուտ հրետանավոր Սամվել Աղաջանյանն իր ընկեր հրետանավորների հետ հրանոթները մեծ դժվարությամբ կարողանում է տեղափոխել Բարձրավան գյուղի բարձունքները եւ այնտեղից կրակի տակ առնում գրոհող թշնամուն: Գումարտակը Շուռնուխի մատույցներում տեղի ունեցած հանառ ու անզիջում կռիվների ընթացքում կարողանում է ապահովել Գորիսի անվտանգությունը: Թշնամուն այդպես էլ չի հաջողվում փակել Գորիս-Կապան ավտոճանապարհը, որն ուներ ոչ միայն ռազմական, այլ նաեւ կենսական նշանակություն: Գումարտակի տղաների քաջության եւ անվեհերության շնորհիվ հակառակորդի գրոհները կասեցվում են Շուռնուխի ուղղության վրա: Ադրբեջանի ռազմական մեքենան գործում էր ամբողջ թափով՝ անընդմեջ ստանալով նոր համալուսնություններ: Թշնամին շարունակում էր գիշեր-ցերեկ ռմբակոծել-արկակոծել Լաչինի միջանցքն ու նրա հարակից շրջանները: Ադրբեջանցիները հույսեր էին փայփայում, որ իրենց կհաջողվի հետ գրավել Լաչինը եւ այստեղով անցնող մարդասիրական միջանցքը: Նրանք իրենց հույսը դրել էին ռազմական տեխնիկայի եւ մարդկային ուժի քանակային առավելության վրա: Բայց հաշվի չէին առել հայ զինվորի, կամավոր երկրապահի ոգու զորությունը:

1992թ. օգոստոսի 29-ին Եռաբլուրում Վազգեն Սարգսյանի գլխավորությամբ տեղի է ունենում մահապարտների գումարտակի երդման արարողությունը եւ գիշերը՝ մոմի լույսի տակ հատուկ վաշտի հրամանատար Գագիկ Շառոյանը ընթերցում, իսկ մյուսները բառ առ բառ կրկնում են երդման տեքստը:

Գորիսի գումարտակի կամավորականները գիտեին այդ մասին եւ դրանում զարմանքի բան չէին տեսնում: Նրանց համար դա հայոց սխրանքի սովորական մի արտահայտություն էր, քանի որ Հայաստանի եւ Արցախի համար կռվի ելած երկրապահ կամավորականներն էլ պակաս մահապարտներ չէին եւ կռվում էին անձնվեր եռանդի նվիրումով, հայրենիքի փրկության համար նա-

Շարունակությունը՝ էջ 30

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԵՌԱՀԱՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ «ՍՅՈՒՆԻՔԻ ՍՏԵՎԱՐՈՒԹՅՈՒՆ»
ԱՌԱՋԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
Գլխավոր խմբագիր՝ Ս.Հովհաննիսյան
Հասցե՝ քաղաք, Շտեփանավան, 2002
Հեռախոս՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Սյունյաց աշխարհ

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Հին գումարտակի հրամանատարությունը լավ գիտակցում էր, որ մարտական բարձր ոգին հաղթանակի կեսն է, բայց դեռ հաղթանակ չէ: Միայն մարտական խանդավառությամբ հնարավոր չէ ընկեցել տանկերով, գրադնովով ու հրանոթներով գինված թշնամուն: Ուրեմն՝ նախ եւ առաջ հարկավոր էր գինել գումարտակը, ձեռք բերել ժամանակակից գինատեսակներ: Հարկավոր էր ոչ միայն թշնամուն թույլ չտալ ներխուժել սահմաններից ներս, այլեւ անհրաժեշտ էր նրան հեռացնել հայոց սահմաններից եւ ապահովել խաղաղ բնակչության անվտանգությունը: Դրան հասնելու համար պետք է մարտիկների բարոյականային մեծ ոգեւորությանը գումարել գինային համապատասխան միջոցներ:

Այդ նպատակով իր գործունեության սկզբնական շրջանում Գորիսի երկրապահների գումարտակի գլխավոր խնդիրը դառնում է ռազմական տեխնիկայի եւ սպառազինության այլ տեսակների ձեռքբերման հարցը: Եվ իրոք, բավական կարճ ժամանակում գումարտակը կարողանում է գինվել պատշաճ գինատեսակներով: Եվ դա կատարվում է ոչ միայն սեփական երկրի միջոցների հաշվին, այլեւ թշնամուց խլված զենքի հաշվին: 1992թ. ամռան շրջանում գումարտակը հենց այդպիսի մարտավարությամբ է առաջնորդվում: Մինչեւ մեծ ու ընդհանուր հարձակումը, գումարտակը փոքրաքանակ գինախմբերով՝ ջոկերով ու դասակներով, այս ու այնտեղ, որտեղ թշնամին չէր սպասում, հանկարծակի հայտնվում է թշնամու թիկունքում, անակնկալի բերում նրան եւ տիրանում փախած հայատակարդի գինամիջոցներին:

Սույն մարտավարությունը ժամանակի մեջ արդարացնում էր իրեն: Գումարտակի հրամանատարությունը հաջողվում էր համախմբել ռազմական բոլոր ուժերը, ապահովել հանգործակցությունը նախկին ջոջկատների միջեւ: Սերտ կապ է հաստատվում ռազմական գնալ եւ թիկունքի միջեւ, այնպես որ գումարտակը միշտ ստանում է ժողովրդի աջակցությունը, վայելում է մարդկանց վստահությունը:

Գումարտակի ղեկավարությունը հասնում է այն բանին, որ երկրապահ տղաների մոտ իշխում է միայն մեկ գաղափար ու մեկ ձգտում՝ միահամուռ ուժերով փրկել հայրենիքը՝ կռվող մարտիկից հեռու պահելով գաղափարական տարաձայնությունները, քաղաքական շահարկումները ու կուսակցական տարաբնույթ մոտեցումները: Պահանջների հավասարություն, կարգապահություն բոլորի համար՝ գինվորից մինչեւ հրամանատար, փոխհամաձայնություն դասակների եւ ջոկերի միջեւ, խստապահանջություն ռազմական իրադրությանը համապատասխան, անխափան կապ երկրապահ ազատամարտիկների եւ ժողովրդի միջեւ, քաջությամբ փառաբանություն եւ վախկոտությանն նշավակում, անասաստ հավատ հաղթանակի նկատմամբ:

Ահա գումարտակի գործունեության ընդհերքում մշտապես գործող կանոններն ու օրենքները:

Գումարտակն առանձին վաշտերից ու դասակներից (ճախկին ջոկատներից) կազմված մի կուռ ամբողջություն էր, որտեղ ամեն մեկը գիտեր իր անելիքը եւ պատրաստ էր կատարելու ամեն մի մարտական առաջադրանք:

Գումարտակը նախաբանակային հզոր զրոամիավորում էր՝ բանակին հատուկ զրոային ստորաբաժանումներով: Գումարտակը բաղկացած էր երեք մարտական վաշտերից: Վաշտերն իրենց հերթին բաժանվում էին դասակների, դասակները՝ ջոկերի, ինչպես սովորաբար լինում է բանակում: Գումարտակի յուրաքանչյուր վաշտ ուներ մարտական գործունեության իր տեղանքը եւ գործում էր ռազմաճակատի իրեն հատկացված հատվածում:

Գումարտակի առաջին վաշտը գործում էր հինմնականում Շուռնուխի եւ Գորիս-Կապան ավտոճանապարհի պաշտպանության հատվածներում՝ վաշտի հրամանատար Վլադիկ Ստեփանյանի գլխավորությամբ: Այս վաշտում ընդգրկված էին Գորիս քաղաքի, Քարահունջի, Հարժիսի եւ Խոտ-Որոտան գյուղերի երկրապահ կամավորական ազատամարտիկները:

Գումարտակի երկրորդ վաշտը՝ Մելիքսեթ Պողոսյանի (Մելո) գլխավորությամբ, գործում էր ռազմաճակատի Խնածախ, Տեղ գյուղերի պաշտպանության հատվածներում:

Վաշտում ընդգրկված էին Տեղ, Խնածախ, Վաղատուր, Խոզճավար, Քարաշեն, Արավուս գյուղերի ջոկատների երկրապահ ազատամարտիկները:

Շրջանի հարավային սահմանների պաշտպանության հատվածներում (Հարթաշեն, Խնձորեսկ, Կոռճիձոր) գործում էր գումարտակի երրորդ վաշտը՝ Սաճասար Բեգլարյանի (Սաճո) գլխավորությամբ:

Ակներ, Վերիշեն, հետագայում նաեւ Կոռճիձոր գյուղերի կամավորական ջոկատները՝ Սերյոժա Սեդրակյանի, Ստյոպա Արզումանյանի եւ Սեյրան Գալստյանի ղեկավարությամբ, կատարել են գումարտակի հրամանատարի հատուկ հանձնարարությունները:

Գումարտակի վաշտերի միջեւ մարտական գործողությունների այսպիսի տեղաբաշխումն ամենեւին չէր նշանակում, թե գումարտակի ստորաբաժանումները գործում էին իրարից անջատ եւ կապ չունեին մեկը մյուսի հետ: Գումարտակի հրամանատարությանը օպերատիվ աշխատանքի շնորհիվ ստորաբաժանումների միջեւ փոխադարձ կապը ցանկացած պահի ապահովվել է եւ նկատի է առնվել պահի թելադրանքը: Այնպես որ Կոռճիձորի սահմաններում գործող վաշտը, թշնամու քայլերից համապատասխան, կարող էր հայտնվել Որոտան-Շուռնուխ հատվածում եւ ընդհակառակը:

Գումարտակի վաշտերն ու դասակները մշտապես գտնվել են փոխադարձ կապի մեջ եւ իրադարձության պահանջով իրար փոխօգնության են հասել՝ գործելով միասնական մարտական կանոնադրությամբ ու համապատասխան գրաֆիկով:

Գումարտակն իր ստեղծման օրից սկսած ազերի հրոսակների դեմ մտնում է մարտական գործողությունների մեջ եւ վճռական դեր կատարում թշնամուն հայոց սահմաններից հեռու բշելու եւ ջախջախելու գործում:

1992թ. արյունալի մարտերը շարունակվում են Արցախում: Թշնամին իսկական նվաճողական պատերազմ է սկսում Գորիսի սահմանների վրա: 1992թ. ապրիլ-մայիս ամիսների բոլոր օրերի ընթացքում ազերիները վայրագորեն հրետակոծում են ամբողջ Գորիսը՝ նպատակ ունենալով խարխլել հայոց սահմանների պաշտպանական դիրքերը, անայացնել սահմանամերձ բնակավայրերը, Ղարաբաղ իսպառ կտրել մայր Հայաստանից եւ բացառել որեւէ օգնություն մարտնչող Արցախին:

Հրթիռային կայանքներից, հրանոթներից, մոտահրանգային տեխնիկայի բոլոր տեսակներից ամենա հրետակոծվում են Գորիս քաղաքը, Խնածախ, Կոռճիձոր, Շուռնուխ, Տեղ, Արավուս, Խնձորեսկ, Ներքին Խնձորեսկ գյուղերը: Չայգամիից Խոզճավար ու մինչեւ Կոռճիձոր ընկած տարածքները վերածվում են վիթխարի կրակագծի: Վայրագ թշնամին գերակշիռ տեխնիկայի եւ հրետանու հզոր միջոցներով կարողանում է զգալի վնասներ պատճառել սահմանամերձ բնակավայրերին: Մի օրվա ընթացքում միայն Տեղ գյուղում ութ բնակչենք է ավերվում, հրդեհներ են բռնկվում Խոզճավարում, Կոռճիձորում, Խնձորեսկում, Ներքին Խնձորեսկում: Թշնամին կանգ չի առնում ոչ մի միջոցի առջեւ՝ դիմելով պատերազմելու ամենաստոր քայլերին:

Սահմաններում տիրող իրավիճակը հրամայաբար պահանջում է համախմբել բոլոր ուժերը, ամրապնդել սահմանների պաշտպանությունը եւ հնարավոր բոլոր միջոցներով ճնշել հակառակորդի բոլոր կրակկետերը, ռազմական հենակետերը: Գլխավոր խնդիրը Գորիս-Ստեփանակերտ ճանապարհի բացումն էր, որ շարունակում է ազերիների կողմից փակված մնալ: Սարդարիական ճանապարհի բացումը կյանքի չափ անհրաժեշտ էր, եւ դա մնում էր հայոց մարտական ուժերի գլխավոր ռազմավարական նպատակը:

1992թ. ընդհանրապես հարուստ էր կարեւոր իրադարձություններով ու անցքերով, որոնք ճակատագրական նշանակություն ունեցան եւ Հայաստանի, եւ Արցախի համար:

1992թ. հունվարի վերջին Լեռնային Ղարաբաղի Գերագույն խորհուրդը Ղարաբաղը հռչակեց անկախ պետություն:

Ազգերի ինքնորոշման այս միաձայնչ իրավացի դրսեւորումն Ադրբեջանի կողմից ընկալվեց որպես հակասահմանադրական ոտնձգություն իր տարածքային ամբողջականության պաշտպանության նախարարություն: Պաշտպանության նախարար է նշանակվում Վազգեն Սարգսյանը:

Թշնամանքն հորդաները զսպելու եւ Ղարաբաղի ժողովրդի ազատությունը պաշտպանելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշում է ընդունում ստեղծել հանրապետության ինքնապաշտպանական ուժեր եւ ենթակայացնում նպատակով Լեռնային Ղարաբաղի պաշտպանության կոմիտե:

Ամբողջ Ղարաբաղում հաստատվում է արտակարգ դրություն: Մեծից փոքր գինվորականներ են, ողջ ժողովուրդը, «Մահ կամ ազատություն» գոչելով, խրամատավորվում է սեփական տանը՝ պատրաստ մարտնչելու մինչեւ վերջին մարդը: Ղարաբաղյան ազատամարտերին հսկայական օգնություն են ցույց տալիս Հայաստանից գնացած ուժերը, որոնց մեջ կային նաեւ տասնյակ գորիսեցիներ:

Մայիսի 8-ին ազատագրվում է Շուշին: Ռազմավարական նրբագույն արվեստի տեսակետից Շուշիի ազատագրումը մինչեւ հիմա էլ շատերին է զարմացնում, թե այդ ինչպես եղավ, որ հայերն մի փոքր հատվածի մի քանի տասնյակ տղաներ կարողացան հողմացրիվ անել մինչեւ ատամ

ՀԵՌԱՄԻՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՒԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
ԳԼԽԱՒՈՐ Խ/Գ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ, ՀԱՐՈՒՄԱՅՆ, 2010Թ.
ՀԵՌԱԽՕՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցէ՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

№3 ԳՈՒՄԱՐՏԱԿԻ **մարտական ուղին**

Սկիզբը՝ էջ 29

հատակվելու պատրաստակամությամբ: Դա մեր ժողովրդի պայքարի եւ ազատության աստեղային պահն էր, որտեղ առանց հարկադրանքի ու հրամանների հերոսանում էին նրա արժանավոր զավակները: Հայոց կռիվը համազգային էր, արդարությամբ օժտված, միակամ եւ միասնական եւ պիտի հաղթական ելք ունենար:

Բայց եղել են նաեւ անհաջողություններ:

Դրանից ամենաողբերգականը տեղի ունեցավ 1992թ. հունիսի 29-ին: ԼՂՀ-ի Մարտակերտի հատվածի Հասանդայի համար մղված անեղ մարտերում հայ կամավորականները, հերոսաբար դիմադրելով թշնամու մեծաքանակ ուժերին, ինքնամոռաց մխրճվում են թշնամական դիրքերի խորքը եւ հայտնվում ծուղակում: Անհավասար մարտում հայ ազատամարտիկների մեծ մասը զոհվում է, իսկ 79 տղաների ճակատագիրը մինչեւ այսօր է մնում է անհայտ: Նրանց մեջ եղել են նաեւ սյունեցիներ: Այդ օրը՝ հունիսի 29-ը, հոչակվում է որպես «Անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օր»:

Սակայն մարտական այս եւ նման անհաջողությունները (Արծվաշենի կորուստը եւ այլն) չընկճեցին հայ ժողովրդի պայքարի ոգին: Ողջ հայությունը պատրաստ էր թշնամու դեմ կռվել մինչեւ վերջնական հաղթանակ:

Իսկ հայոց բանակն արդեն կայանում էր:

1992թ. հունիսի 17-ին արդեն պատրաստ էին Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ռազմավիացիոն ստորաբաժանումները: Դա նշանակում էր, որ հոխորտացող Ադրբեջանի օդային ուժերի դեմ հայերն էլ իրենց օդուժն ունեին:

Նույն թվականի սեպտեմբերին հայկական զինուժն արդեն ուներ ինժեներական, իսկ հոկտեմբերին՝ հրետանային զորքեր: Այս ժամանակաշրջանում է ստեղծվում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հետախուզական գվարամը: 1992-ի նոյեմբերին կազմավորվում է հայկական զինուժի 5-րդ մոտոհրաձգային բրիգադը: Այսինքն՝ այն ամենը, ինչ որ անհրաժեշտ էր իսկական կանոնավոր բանակ ունենալու համար:

1992թ. վերջերին եւ 1993-ի սկզբներին հայոց մարտական ուժերի գլխավոր մտահոգությունը դարձյալ կապված էր Լաչինի միջանցքը պաշտպանելու կարեւոր խնդրի հետ:

Հակառակորդը շարունակում էր հզոր ուժեր կուտակել ռազմաճակատի այս հատվածում՝ նախապատրաստվելով լայնածավալ հարձակման: Թշնամու հրետանին գործում էր աշխարհագրական բավական մեծ տարածության վրա՝ Լաչինի միջանցքի եւ Գորիսի սահմանների ողջ երկարությամբ: Լաչինի պաշտպանության եւ Ստորոյա-Կոռնիձոր հատվածների շրջանում ազերիները մարտի մեջ են նետում Սու-24 ռմբակոծիչ հնքնաթիռներ: Հայկական հնքնապաշտպանական ուժերը, այդ թվում նաեւ Գորիսի զգուստակը, ծանր մարտեր են մղում Կուբաթլուի տարածքից թշնամու ձեռնարկած գրոհները կանխելու համար: Թշնամու կրակակետի մի մասը լռեցվում է: Մազրի Դուլից եւ Կուբաթլուի կողմերից հարձակվող թշնամին ուժեղ մայրաքաղաք Ստեփանակերտում:

Սակայն ինչպես միշտ, այս անգամ էլ էլչիբեյի եւ Բաքվի ղեկավարների հաշիվները սխալ դուրս եկան: Ռազմաճակատի եւ ոչ մի հատվածում ազերական բանակը չի կարողանում հասնել որեւէ շոշափելի հաջողության: Ընդհակառակը, նրանք մեկը մյուսի հետեւից զիջում են իրենց դիրքերը, եւ շուտով Լաչինի մարդասիրական միջանցքը դառնում է լիովին անվտանգ:

Հայրենապաշտպան այս կռիվների ողջ ընթացքում իրեն հիանալի է դրսեւորում Գորիսի երկրապահ կամավորականների գումարտակը՝ անցնելով մարտական սխրագործությունների անմոռանալի ճամփաներով:

1993թ. սկզբներից Հայաստանի զինված ուժերում տեղի են ունենում կառուցվածքային կարեւոր փոփոխություններ: Հունվարի 1-ից ներքին գործերի նախարարությունը հանրապետությունում ստեղծում է 9 ռեգիոնալ վարչություն, որոնցից մեկը՝ Սյունիքում:

Հունվարի 13-ին Գորիսի շրջանում ստեղծվում է մոտոհրաձգային նոր ստորաբաժանում, որի հրամանատարը նշանակվում է ազատագրական մարտերում թրծված փոխգնդապետ Սերգեյ Գրիգորյանը: Միեւնույն ժամանակ հանրապետության պաշտպանության նախարարությունը պետական կարգավիճակ է տալիս Սյունիքի բոլոր աշխարհազորային միավորումներին:

Այս ամենը հնարավորություն է ընձեռում ավելի կենտրոնացնել հարավարեւելյան ռազմաճակատի զինյալ ուժերը եւ ավելի նպատակասլաց օգտագործել ռազմական տեխնիկայի հնարավորությունները: Այդ փոփոխությունների իրական արդյունքները շուտով իրենց զգալ տվեցին թշնամու դեմ մղվող հետագա կռիվների ընթացքում:

Դրան մեծապես նպաստեց նաեւ այն հանգամանքը, որ Գորիսը դարձավ Պետական նախարարի աթոռանիստ քաղաք: Վազգեն Սարգսյանը պետնախարարի պաշտոնում եկավ Գորիս՝ Արցախի թիկունքը ամրացնելու եւ Ձանգեզուրը տնտեսապես ամրացնելու լիազորություններով: «Արցախը պահելու համար թիկունքում մենք պետք է ունենանք հզոր Ձանգեզուր», – Գորիսում էր առաքելությունից այսպես է բացատրել հայոց Սպարապետը:

Երկարատեւ ու արյունալի մարտերից հետո 1993թ. ապրիլին վերջապես ազատագրվում է Քելբաջարը: Հայոց սահմանների մոտ լիակատար պարտություններից հետո թշնամին քաշվում է դեպի Կուբաթլու եւ Խնձորեսկից հարավ խոշոր ուժերով դիրքավորվում Ղուրբան Թափա (Մատաղասար) կոչված վայրում: Ազերիները ծիգեր էին գործադրում այստեղ կանգնեցնել հայոց ուժերի առաջխաղացումը եւ լրացուցիչ այլ ուժեր ներքաշելով այստեղ՝ այդ դարձել ռազմական ուժեղ հենակետ՝ նախապատրաստվելով նոր հարձակումների: Հայկական կողմը, գիտակցելով թշնամու այս մտադրությունները, միջոցներ է փնտրում հակառակորդին ոչնչացնելու եւ գրավված դիրքերից հետ քշելու համար:

Այստեղ են հավաքագրվում հայոց զինուժը ներկայացնող տարատեսակ զորամասեր: Հինմեկսան զորուժը Գորիսի երկրապահ կամավորականների գումարտակն էր, որի հետ թշնամու դեմ ճակատելու են գալիս Գորիսի մոտոհրաձգային գնդի տանկիստները, բանակի զինվորության անձնակազմեր, մարտիկներ «Տիգրան Մեծ» ջոկատից: Կարեւոր նշանակություն ունեցող այս գոտեմարտը ազերիների դեմ ղեկավարում է Գորիսի երկրապահների գումարտակի հրամանատար Սուրեն Խաչատրյանը:

Ճակատամարտը սկսվում է 1993թ. օգոստոսի 27-ին: Թշնամին համան դիմադրություն է ցույց տալիս: Մարտական հաջողությունները բերվում են մեկ ազերիների, մեկ հայերի կողմը: Թշնամին փորձում է տանկերի գերակշռությամբ ճնշել հայերի դիրքերը, ճեղքել պաշտպանությունը: Հակառակորդն այստեղ նաեւ օգուտ է օգտագործում: Սակայն թշնամին դատապարտված էր կործանմամ: Հայոց քաջերը կռվում էին անձնազոհ նվիրվածությամբ: Մի քանի ժամ տեւած ճակատամարտը ազերիները տանում եւ տալիս եւ խուճապահար գլորվում դեպի Կուբաթլու:

Ղուրբան Թափա կոչված տեղանքում մի նոր հերոսական էջ է գրվում: Գորիսի երկրապահ ազատամարտիկները ցույց են տալիս զանգվածային հերոսության օրինակ:

Օգոստոսի 31-ին Հադրութի կողմից Ղարաբաղի հինքնապաշտպանական ուժերը մտնում են Կուբաթլու: Զոհմանալով հյուսիսից հարձակվող հայոց ուժերի ճնշմանը եւ խուսափելով երկու կողմից շրջապատմամ մեջ ընկնելու վտանգից՝ ազերական ջախջախված զորամասերի մնացորդները խուճապահար փախչում են դեպի Արաքսի ափերը: Ազատագրվում է Կուբաթլուն, սահմանային այն հզոր ռազմակայանը, որտեղից թշնամին անընդհատ կրակի տակ էր տալիս Գորիսի եւ Կապանի բնակավայրերը: Նույն թվական աշնանը ազատագրվում է Ձանգեզանը, որից հետո հայկական եւ ղարաբաղյան զորամիավորումները միասնական ուժերով մտնում են Հորադիզ եւ անցնում պաշտպանության:

Հայ-ազերական հակամարտության մեջ առանձնահատուկ կողմերով նշանավորվեց հորադիզյան կռիվների շրջանը, երբ արդեն դանդաղորեն փակվում էր պատերազմական գործողությունների վարագույրը, եւ արդրեքանակաբար բանակը վերջին ճիգերն էր գործադրում բեկում մտցնելու պատերազմի ընթացքի մեջ: Կուբաթլուի, Ձանգեզանի, Ֆիզուլիի անկումից հետո սա վերջին հենակետն էր, որից կառչել էր թշնամին:

1994թ. գարնան սկզբներից հակամարտության ճակատային գիծը անցնում էր Հորադիզով:

Բացի սեփական ուժերից՝ արդրեքանական զորամիավորումներից էին եկել միացել Թուրքիայից, Չեչնիայից, Իրաքից ժամանած սպառազեն վարձկանների ու ահաբեկիչների ավազակախմբերը: Հայկական կողմը թշնամու դեմ հանել էր հայոց նորաստեղծ բանակի զորամասեր, որոնց միացել էին երկրապահ կամավորների տասնյակ ջոկատները եւ Ղարաբաղի հինքնապաշտպանական զորամասերը:

Ղարաբաղի եւ Սիսիանի զորամիի ուժերի հարեւանությամբ պաշտպանական իրենց դիրքերում ամուր կանգնած էին նաեւ Գորիսի երկրապահ գումարտակի տղերքը, որոնք ռազմաճակատի իրենց հատվածում արդեն մի քանի անգամ հետ էին մղել թշնամու կատաղի գրոհները: Հորադիզի ռազմաճակատի հրամանատարն էր գեներալ Ֆմյաայ Հարությանը: Կապամ-Մեղրի զորամիավորումները գլխավորում էր Միքայել Գրիգորյանը, իսկ Գորիս-Սիսիան զորամիավորման հրամանատարն էր Գորիսի երկրապահ կամավորականների գումարտակի հրամանատար Սուրեն Խաչատրյանը:

Սակայն ինչպես միշտ, այս անգամ էլ էլչիբեյի եւ Բաքվի ղեկավարների հաշիվները սխալ դուրս եկան: Ռազմաճակատի եւ ոչ մի հատվածում ազերական բանակը չի կարողանում հասնել որեւէ շոշափելի հաջողության: Ընդհակառակը, նրանք մեկը մյուսի հետեւից զիջում են իրենց դիրքերը, եւ շուտով Լաչինի մարդասիրական միջանցքը դառնում է լիովին անվտանգ:

Հայրենապաշտպան այս կռիվների ողջ ընթացքում իրեն հիանալի է դրսեւորում Գորիսի երկրապահ կամավորականների գումարտակը՝ անցնելով մարտական սխրագործությունների անմոռանալի ճամփաներով:

1993թ. սկզբներից Հայաստանի զինված ուժերում տեղի են ունենում կառուցվածքային կարեւոր փոփոխություններ: Հունվարի 1-ից ներքին գործերի նախարարությունը հանրապետությունում ստեղծում է 9 ռեգիոնալ վարչություն, որոնցից մեկը՝ Սյունիքում:

Հունվարի 13-ին Գորիսի շրջանում ստեղծվում է մոտոհրաձգային նոր ստորաբաժանում, որի հրամանատարը նշանակվում է ազատագրական մարտերում թրծված փոխգնդապետ Սերգեյ Գրիգորյանը: Միեւնույն ժամանակ հանրապետության պաշտպանության նախարարությունը պետական կարգավիճակ է տալիս Սյունիքի բոլոր աշխարհազորային միավորումներին:

Այս ամենը հնարավորություն է ընձեռում ավելի կենտրոնացնել հարավարեւելյան ռազմաճակատի զինյալ ուժերը եւ ավելի նպատակասլաց օգտագործել ռազմական տեխնիկայի հնարավորությունները: Այդ փոփոխությունների իրական արդյունքները շուտով իրենց զգալ տվեցին թշնամու դեմ մղվող հետագա կռիվների ընթացքում:

Դրան մեծապես նպաստեց նաեւ այն հանգամանքը, որ Գորիսը դարձավ Պետական նախարարի աթոռանիստ քաղաք: Վազգեն Սարգսյանը պետնախարարի պաշտոնում եկավ Գորիս՝ Արցախի թիկունքը ամրացնելու եւ Ձանգեզուրը տնտեսապես ամրացնելու լիազորություններով: «Արցախը պահելու համար թիկունքում մենք պետք է ունենանք հզոր Ձանգեզուր», – Գորիսում էր առաքելությունից այսպես է բացատրել հայոց Սպարապետը:

Երկարատեւ ու արյունալի մարտերից հետո 1993թ. ապրիլին վերջապես ազատագրվում է Քելբաջարը: Հայոց սահմանների մոտ լիակատար պարտություններից հետո թշնամին քաշվում է դեպի Կուբաթլու եւ Խնձորեսկից հարավ խոշոր ուժերով դիրքավորվում Ղուրբան Թափա (Մատաղասար) կոչված վայրում: Ազերիները ծիգեր էին գործադրում այստեղ կանգնեցնել հայոց ուժերի առաջխաղացումը եւ լրացուցիչ այլ ուժեր ներքաշելով այստեղ՝ այդ դարձել ռազմական ուժեղ հենակետ՝ նախապատրաստվելով նոր հարձակումների: Հայկական կողմը, գիտակցելով թշնամու այս մտադրությունները, միջոցներ է փնտրում հակառակորդին ոչնչացնելու եւ գրավված դիրքերից հետ քշելու համար:

Այստեղ են հավաքագրվում հայոց զինուժը ներկայացնող տարատեսակ զորամասեր: Հինմեկսան զորուժը Գորիսի երկրապահ կամավորականների գումարտակն էր, որի հետ թշնամու դեմ ճակատելու են գալիս Գորիսի մոտոհրաձգային գնդի տանկիստները, բանակի զինվորության անձնակազմեր, մարտիկներ «Տիգրան Մեծ» ջոկատից: Կարեւոր նշանակություն ունեցող այս գոտեմարտը ազերիների դեմ ղեկավարում է Գորիսի երկրապահների գումարտակի հրամանատար Սուրեն Խաչատրյանը:

Ճակատամարտը սկսվում է 1993թ. օգոստոսի 27-ին: Թշնամին համան դիմադրություն է ցույց տալիս: Մարտական հաջողությունները բերվում են մեկ ազերիների, մեկ հայերի կողմը: Թշնամին փորձում է տանկերի գերակշռությամբ ճնշել հայերի դիրքերը, ճեղքել պաշտպանությունը: Հակառակորդն այստեղ նաեւ օգուտ է օգտագործում: Սակայն թշնամին դատապարտված էր կործանմամ: Հայոց քաջերը կռվում էին անձնազոհ նվիրվածությամբ: Մի քանի ժամ տեւած ճակատամարտը ազերիները տանում եւ տալիս եւ խուճապահար գլորվում դեպի Կուբաթլու:

Ղուրբան Թափա կոչված տեղանքում մի նոր հերոսական էջ է գրվում: Գորիսի երկրապահ ազատամարտիկները ցույց են տալիս զանգվածային հերոսության օրինակ:

Օգոստոսի 31-ին Հադրութի կողմից Ղարաբաղի հինքնապաշտպանական ուժերը մտնում են Կուբաթլու: Զոհմանալով հյուսիսից հարձակվող հայոց ուժերի ճնշմանը եւ խուսափելով երկու կողմից շրջապատմամ մեջ ընկնելու վտանգից՝ ազերական ջախջախված զորամասերի մնացորդները խուճապահար փախչում են դեպի Արաքսի ափերը: Ազատագրվում է Կուբաթլուն, սահմանային այն հզոր ռազմակայանը, որտեղից թշնամին անընդհատ կրակի տակ էր տալիս Գորիսի եւ Կապանի բնակավայրերը: Նույն թվական աշնանը ազատագրվում է Ձանգեզանը, որից հետո հայկական եւ ղարաբաղյան զորամիավորումները միասնական ուժերով մտնում են Հորադիզ եւ անցնում պաշտպանության:

Հայ-ազերական հակամարտության մեջ առանձնահատուկ կողմերով նշանավորվեց հորադիզյան կռիվների շրջանը, երբ արդեն դանդաղորեն փակվում էր պատերազմական գործողությունների վարագույրը, եւ արդրեքանակաբար բանակը վերջին ճիգերն էր գործադրում բեկում մտցնելու պատերազմի ընթացքի մեջ: Կուբաթլուի, Ձանգեզանի, Ֆիզուլիի անկումից հետո սա վերջին հենակետն էր, որից կառչել էր թշնամին:

1994թ. գարնան սկզբներից հակամարտության ճակատային գիծը անցնում էր Հորադիզով:

Բացի սեփական ուժերից՝ արդրեքանական զորամիավորումներից էին եկել միացել Թուրքիայից, Չեչնիայից, Իրաքից ժամանած սպառազեն վարձկանների ու ահաբեկիչների ավազակախմբերը: Հայկական կողմը թշնամու դեմ հանել էր հայոց նորաստեղծ բանակի զորամասեր, որոնց միացել էին երկրապահ կամավորների տասնյակ ջոկատները եւ Ղարաբաղի հինքնապաշտպանական զորամասերը:

Ղարաբաղի եւ Սիսիանի զորամիի ուժերի հարեւանությամբ պաշտպանական իրենց դիրքերում ամուր կանգնած էին նաեւ Գորիսի երկրապահ գումարտակի տղերքը, որոնք ռազմաճակատի իրենց հատվածում արդեն մի քանի անգամ հետ էին մղել թշնամու կատաղի գրոհները: Հորադիզի ռազմաճակատի հրամանատարն էր գեներալ Ֆմյաայ Հարությանը: Կապամ-Մեղրի զորամիավորումները գլխավորում էր Միքայել Գրիգորյանը, իսկ Գորիս-Սիսիան զորամիավորման հրամանատարն էր գնդապետ Վալերի Գրիգորյանը:

Թշնամին ուժեղ էր: Հայերը անցել էին տեւական պաշտպանության: Հակառակորդը մոտ երեք ժամ հեռահար թնդանոթներով, գրադներով ու տանկերով հրետակոծում էր հայկական դիրքերը:

Պատմում են, որ խրամատից խրամատ շարժվելը դառնում էր անհնարին: Կապը չէր աշխատում:

Տեւական ավերիչ հրետակոծությունից հետո ազերիներն անցնում են գանգվածային հարձակման: Ազերական տանկերը սլաքաձեւ առաջ են շարժվում: Տանկերի հետեւից հոծ շարքերով առաջ են շարժվում հետեւեւակայինները: Կարծելով, թե հայերի կենդանի շունչ չի մնացել՝ ազերի ասկյարները գոռում-գոչյունները լսելու են նաեւ... Բայց ահա ազերիների համար բոլորովին անսպասելի հայ տղաները հող ու ավազի տակից դուրս են գալիս... Խփվում է թշնամու առաջատար տանկը, հետո՝ երկրորդը: Հայ քաջերը նույնիսկ վիրավոր վիճակում գնդացրային կրակահերթով ոչնչացնում են հակառակորդի շփոթված ու զարմացած հետեւեւակայիններին: Կասեցվում են թշնամու գրոհները: Թշնամին պարտություն է կրում նաեւ այստեղ՝ Հորադիզի կիսաանգապատային հարթավայրում:

Հորադիզի հաղթանակով վերջ դրվեց պատերազմական գործողություններին:

Հաղթանակը, ավա՜ղ, ձեռք բերվեց թանկ գնով: Արցախյան ազատամարտիկ մասնակցեցին շուրջ հիսուն հազար հայեր, որոնցից մոտ չորս հազար Արցախից զոհվեցին, 3.5 հազար՝ Հայաստանից:

Գորիսի երկրապահ կամավորական գումարտակը կորցրեց իր 58 ամենաքաջ տղաներին:

1992-94թթ. մարտական գործողությունների ընթացքում Գորիսի եռնամարզից զոհվեցին 20 զինվորներ: 1992-93թթ. ազերական վայրագ հրետակոծությունների Գորիսի եռնամարզից զոհ է դարձել 63 խաղաղ բնակիչ:

Պատերազմի դաշտում թշնամին պարտվեց: Պատերազմը տեղափոխվեց դիվանագիտական դաշտ, որը մինչեւ հիմա էլ շարունակվում է: 1994թ. մայիսի 16-ին Մոսկվայում հանդիպում են Հայաստանի, ԼՂՀ-ի եւ Ադրբեջանի ռազմական գերատեսչությունների ղեկավարները: ՌԴ զինված ուժերի նախարար, մարշալ Գրաչովը, Վազգեն Սարգսյանը, Սամվել Բաբայանը, Սերժ Սարգսյանը եւ Ադրբեջանի ներկայացուցիչները ստորագրում են հանդամանագիր մայիսի 17-ից կողմերի միջեւ հրադադար հաստատելու մասին:

Հորադիզից հետո հրամայական պահանջ է դառնում սահմանների պաշտպանության խնդիրը: Հրադադարը դեռ չէր նշանակում, որ պատերազմը դադարել է: Հայ զինվորը տուն վերադառնալ չէր կարող: Հրադադարից հետո Գորիսի երկրապահների գումարտակը մի քանի օրով վերադարձավ Գորիս: Որոշ երկրապահներ դուրս եկան նրա կազմից, բայց գումարտակը նոր պայմաններում շարունակեց իր մարտական գործողությունները: Գումարտակի երկրապահների մեծ մասը հանվեր հայոց բանակի շարքերը, դարձավ հայրենապաշտպան զինվոր եւ մեկնեց Հորադիզ՝ երկրի սահմանները պաշտպանելու: Գումարտակի զինվորները սկզբում Հորադիզի, այնուհետեւ Կուբաթլիի դիրքերում մնացին մինչեւ 1997թ. վերջը: Պատերազմից հետո գումարտակի հրամանատար Սուրեն Խաչատրյանն անցնում է պետական այլ պաշտոնի: Գումարտակի նոր հրամանատար է նշանակվում Սուրեն Բաղդասարյանը, իսկ տեղակալ՝ Արայիկ Ղասումյանը: ■

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Հայրենասեր էին ծնվել ու երդում տվել...

Սահմանամերձ Գորիսը ոչ միայն մասնակցել է Արցախյան ազատամարտին, իր մասնակցությունը բերել մեր պատերազմի հողերի ազատագրմանը, անկախ Հայաստանի բանակաշինությանը, այլեւ ապրել պատերազմի դժնի օրերն ու կրել դրա հետեւանքները: Շարժման հենց սկզբում Գորիսն ինքնապաշտպանության խնդիր ուներ, եւ քաղաքում ու շրջանի գյուղերում սկսեցին ինքնապաշտպանական ջոկատներ ձեւավորվել:

Մոտ 1200 հոգի Գորիսից ու տարածաշրջանի գյուղերից մասնակցել է տարածքի ինքնապաշտպանությանն ու Արցախյան ազատամարտին ընդհանրապես:

Ինքնապաշտպանության նախաձեռնողներից, անմիջական մասնակիցներից մի քանիսի օգնությամբ փորձում ենք ներկայացնել այդ տարիների գործիչների իրականությունը:

Հիսուներեքամյա **Սուրիկ Բաղդասարյանը** 1988-1992-ը եղել է Գորիսի Քոլատակի ջոկատի հրամանատարը, երրորդ պայմանագրային գումարտակի ստեղծումից հետո՝ դրա հրամանատարի տեղակալը: Մայոր Բաղդասարյանն այժմ ՍՊԸ է ղեկավարում:

Քառասուներկոսրսամյա ավագ լեյտենանտ **Սարիբեկ Սայունցը,** որն այժմ անհատ ձեռներեց է, եղել է Խնձորեսկի ջոկատի զինվոր, 1993թ. դարձել ջոկատի հրամանատար, այնուհետեւ 3-րդ պայմանագրային գումարտակում եղել վաշտի հրամանատար:

Քառասուներեքամյա կապիտան **Սլավիկ Սիմոնյանն** այժմ չի աշխատում, 1990թ. եղել է Խնածախի հնքնապաշտպանական ջոկատի հրամանատարը, այնուհետեւ եղել է գումարտակի հրամանատար, ղեկավարել Գորիսում տեղակայված զորամասը, այժմ Գորիսի զինկոմն է:

Մ.Ողորոյանը նշում է, որ Շուռնուխից մինչեւ Խոդճաքար Գորիսը 170կմ սահմանով անմիջապես շփվել է ադրբեջանցիների հետ, եւ արդեն 1988-ից սկսած այդ սահմաններում անասնագողությունը ու հոլիվիներին վնաս տալու դեպքերն սկսվեցին, եւ բնականաբար, պաշտպանության հարցը օրակարգ մտավ: Առաջին զոհը Գորիսում եղել է Հարժիսի հովիվներից մեկը, որի 300 ոչխարը տարել են: Սահմանին եւ սարերում կատարվող իրադարձությունները ստիպեցին, որ մարդիկ դիմեն հնքնապաշտպանության, քաղաքում եւ գյուղերում ձեւավորվեցին առաջին հնքնապաշտպանական ջոկատները:

Սարիբեկ Սայունցը հիշում է, որ խորովածանցում էր աշխատում, երբ լսել են գյուղի ներքեւում չորս հովիվների սպանության բոթը. գյուղի երիտասարդներով, երբ տեսել են կատարվածը, ամեն ինչ թողել ու մտել են ջոկատ, նույն գիշերը էլ 7-8 հոգով գնացել են ազերիներից վրեժ լուծելու...

Սլավիկ Սիմոնյանն ավտոմատ հեռախոսակայանում հնձեներ էր աշխատում, երբ սկսվեց շարժումը, ասում է, որ գյուղը պաշտպանելու մեծ տարածք ուներ, բացի դրանից, ազերիները խանգարում էին դեպի Գորիս իրենց շարժվելը, եւ հնարավոր չէր առանց հնքնապաշտպանական ջոկատ ստեղծելու վերահսկել գյուղը, որի մի վաշտը Գորիսում էր գտնվում: Գորիսում ինքնապաշտպանական ջոկատներ ստեղծվեցին ամենուրեք, գրադներով, ինքնաշեղ հրանոթներով, ինչպես ասում է Գորիսի հարաբերությունները լավ են եղել, 1990-ի կեսերին 40 հոգի՝ հիմնականում զորիսյան արմատներով, եկել են Խոզճավար, ու իրենք այդ հատվածի պաշտպանությունը հանձնել են նրանց: ՀԱԲ-ից նաեւ ավտոմեքենաներ են ստացել:

Մ.Ողորոյանը, նշելով, որ հանձնարարվել են ՀԱԲ-ի հետ, այդուհանմենայնիվ, ասում է, որ գորիսեցիներն ի վիճակի էին իրենց պաշտպանելու, պարզապես չէին կարող մերժել եւ չընդունել իրենց երեւանաբնակ հայրենակիցների օգնությունը:

Մինչ գումարտակի ստեղծումն ինչպե՞ս էին կառավարվում ջոկատները, ո՞վ էր համակարգում դրանց աշխատանքը: 1990թ. ստեղծվեց Գորիսի 13 հոգանոց պաշտպանության խորհուրդ՝ Համլետ Մկրտչյանի նախագահությամբ: Այն գործեց ամիսներ եւ խորհուրդն էր հանակարգում ինքնապաշտպանության հարցերը, դիրքերում ընթացող գործողությունները: Գորիսի հնքնապաշտպանությունը կազմակերպողները մի կարեւոր առաքելություն էլ ունեին, դա Կապան-Գորիս ճանապարհի անվտանգության ապահովումն էր. ազատամարտիկները ռազմական մեքենայով Որոտանից մինչեւ Կարմրաքար ուղեկցում էին շարասյունը՝ հանձնելով Կապանի ազատամարտիկներին, եւ վերադառնում՝ ուղեկցելով այնտեղից եկող շարասյունը:

Չնայած ազատամարտի առաջին տարիներին հնքնապաշտպանական ջոկատները գործում էին դեռեւս խորհրդային պետությունում՝ հրամանատարները նշում են, որ տեղական իշխանությունները, վարչակարգն իրենց գործողություններին չեն խանգարել, ճնշումներ չեն եղել, ընդհակառակը՝ կար հանագործակցություն: Ս.Բաղդասարյանը, օրինակ, հիշում է, թե ինչպես է շրջխորհրդի նախագահ Ռոբերտ Ալեքսանյանից տաք հագուստ խնդրել, ու նա 100 կոմպլեկտ հագուստ է տրամադրել: Նշում են նաեւ, որ, օրինակ, խոչընդոտ չի եղել պետական «Գամմայում» զենք պատրաստելու համար:

Իսկ անմիջապես Գորիս քաղաքի մերձակայքում առաջին հայ-ադրբեջանական աղմկահարույց բախումը եղել է 1989-ի սկզբներին Որոտանի ճանապարհին գտնվող Էյվազլար գյուղում: Գորիսում միտինգի ժամանակ կոչեր են հնչել տարածքից ազերիներին դուրս հանելու մասին: Եվ Գորիսից երկու հոգի մեկնել են հիշյալ գյուղը՝ իբր բնակիչներին տեղահանելու համար: Քանի որ ադրբեջանցիները զենք ունեին, գորիսեցիներից մեկը խփվում է, քաղաքում լարվածությունն ավելի է բորբոքվում, եւ ավելի մեծ խմբով շարժվում են դեպի գյուղ, այն կրակի տալիս...

Շրջափակման ու Լաչինի փակ միջանցքի պայմաններում Գորիսը նաեւ կամրջի դեր էր կատարում Արցախի եւ Հայաստանի միջեւ, տղաները կարողանում էին հնչ-հնչ ճանապարհներով օգնություն, զենք-զինամթերք հասցնել Ղարաբաղ: Բացի ադրբեջանցիներից՝ դրա համար պիտի շրջանցեին նաեւ ռուսներին: Մելիքսեթ Պողոսյանը պատմում է, որ Հայաստան-Ադրբեջան սահմանին ռուսական պահակակետ էր տեղակայված. **«1992թ. մարտի 8-ին տեղեկատվություն ունեինք, որ ռուսական բանակը պիտի դուրս գա, մենք էլ իսկույն էինք նրանց ու տեսանք, որ Լաչինից գալիս-տանում են նրանց զենք-զինամթերքը...»:** Այսպիսով՝ զենքի մի մասը պիտի հանեին Հայաստանից, մյուս մասը տային ադրբեջանցիներին: Որոշել ու ռուսներին զինաթափելու գործողությունն են իրականացրել, տեխնիկա, զենք-զինամթերք վերցրել:

Զոհված ընկերների շատ հերոսացած անունները են հիշում ազատամարտիկները, բոլորի մասին մեկ առ մեկ չես պատմի... Սարիբեկ Սայունցը հիշեցնում է իրենց ջոկատի առաջին հրամանատարի՝ Սանոյի մասին (Սանասար Բեգլարյան), ընկերներն էլ միանում են ու ջերմությամբ սկսում պատմել հայտնի ազատամարտիկի մասին... 1993-ի սեպտեմբերին Կուբաթլիում հնքն ու տեղակալը՝ Գարիկ Մինասյանը, շրջափակման մեջ են ընկել, լուրջ ու անհավասար մարտ մղել, վիրավորվելով՝ Սանոն, թշնամու ձեռքը չընկնելու համար, վերջ է տվել իր կյանքին:

Սուրիկ Բաղդասարյանը հուզվելով պատմում է եղբոր՝ Վոլոդյա (Վալո) Բաղդասարյանի մասին: Վոլոդյան բնակվում էր Միջին Սսիայում: Երբ սկսվել է շարժումը, վերադարձել է Գորիս՝ հետը նաեւ զենք բերելով: Գորիսի հնքնապաշտպանության աջ թեւում էր գտնվում Կուրթալար նախկին ադրբեջանաբնակ գյուղը: Վալոն հավաքում է գյուղը, հաշվի առնելով նաեւ, որ այն սահմանին է՝ որոշում է բնակություն հաստատել այնտեղ՝ նաեւ սահմանապահի դեր ստանձնելով: Այլոց էլ է կոչ արել տեղափոխվել, ու այնտեղ 17 ընտանիք վերաբնակվելով՝ նաեւ գյուղի պաշտպանությունն են կազմակերպել: Գյուղում տնտեսություն են հիմնում, անասնապահություն զարգացնում, փոքր բիզնես հիմնում, նոր կյանք տալիս բնակավայրին: 1992-ի մայիսի 28-ին գյուղի ճանապարհին Վալոն խփվում է...

Գորիսի ջոկատներն ու ազատամարտիկները շատ հերոսական էջեր են գրանցել մարտերում, մասնակցել վճռորոշ մարտերի: Մելիքսեթ Պողոսյանը պատմում է տեղդիների կողմից իր հրամանատարությամբ Թորոսի խութի գրավմամբ մասին:

Շարունակությունը՝ էջ 114


Մելիքսեթ Պողոսյան


Սարիբեկ Սայունց


Սլավիկ Սիմոնյան


Սուրեն Բաղդասարյան

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԵՌԱՄԻՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՒԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
ԳԼԽԱՒՈՐ Խ/Գ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ, ՀԱՐՈՒՄԱՅՆ, 2010Թ.
ՀԵՌԱԽՕՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցէ՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎԵՌԱՅՈՒՂԻ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԳԱՌՆԻ՝ թ.ԱՊՐԻԼ, ԵՒՍԻՆՅԱԼ 2010
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Լուսանկարը՝ Կ.Հովհաննիսյանի

Այս շենքում նախ տեղակայվել է ոստիկանության Սյունիքի փարածաշրջանային բաժինը, ապա բանակային առաջին կորպուսի շտաբը:

Գորիսի №60369 զորամասի մարտական ուղին

Ինչպես ամեն մի զորամաս, որ մասնակցել է մերօրյա ազատամարտին, Գորիսում տեղակայված զորամասը եւս մարտական փառավոր ուղի է անցել: Արցախյան պատերազմի ծանր օրերին՝ 1993 թվականի հուլվարի 25-ին, ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 1 հրամանով Գորիսի պարեկային վաշտի եւ Գորիսի տարածաշրջանի ինքնապաշտպանական ջոկատներից կազմված պայմանագրային գումարտակի հիման վրա կազմավորվեց ՀՀ զինված ուժերի 110-րդ առանձին մոտոհրաձգային գունը. տեղակայման վայրը՝ քաղաք Գորիս: Սկսվեց մի ժամանակաշրջան, երբ ռազմաճակատում հայ մարտիկի քաջությամբ էր պայմանավորված մեր պետության ապագան: Մարտիկը պաշտպանեց երկիրը, իսկ պետությունը կարողացավ հզորանալ այնքան, որ ստեղծեց ազգային բանակը, որը մեր անկախության ամենամեծ նվաճումն է:

1993 թվականի փետրվարի 23-ին ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 58 հրամանով գնդի եւ Լուսակերտի 2-րդ մոտոհրաձգային գնդի հիմքի վրա ստեղծվեց երկրորդ ԱՄՀ բրիգադը: Կազմավորման օրվանից մինչեւ հրադադարը ընկած ժամանակահատվածում բրիգադն ակտիվորեն մասնակցեց Գորիսի սահմանամերձ Շուռնուխ, Կոռնիձոր, Տեղ, Խնձորեսկ, Խնածախ, Խոզնավար, Հարթաշեն գյուղերի ինքնապաշտպանությանը, Լաչինի մարդասիրական միջանցքի, Լեռնային Ղարաբաղի հայկական բնակավայրի ազատագրման համար մղվող մարտերին, ինչին գործուն մասնակցություն են ունեցել բրիգադի բոլոր ստորաբաժանումները:

Բրիգադի զինծառայողները պաշտպանեցին Հայաստանի Հանրապետության սահմանները, իսկ երբ խաղաղ բնակավայրերի հրետակոծումը կանխելու համար հարկ եղավ նվաճել ռազմավարական նշանակություն ունեցող դիրքեր, բրիգադն անցավ հակահարձակման եւ փայլուն իրականացված օպերացիաների շնորհիվ կարողացավ հակառակորդին դուրս շպրտել մեր հայրենիքի պատմական տարածքից: Հորադիզի, Ֆիզուլու, Խուդափերին-Վերսալուի մարտերը փառքով օծեցին Գորիսի բրիգադի մարտիկների անունները: Մարտական գործողությունների ժամանակ բրիգադը տվեց 164 զոհ եւ 437 վիրավոր: 11 զինվոր համարվում է անհայտ կորած:

Մարտադաշտում դրսեւորված արիության, խիզախության ու անձնազոհության համար բրիգադի բազմաթիվ սպաներ ու զինվորներ արժանացել են պետական ու կառավարական տարբեր պարգեւների: Առաջին աստիճանի «Մարտական խաչ» շքանշանով պարգեւատրվել է հինգ զինծառայող, որոնցից 12-ը՝ հետմահու, «Մարտական ծառայության» մեդալով պարգեւատրվել է 14 զինծառայող: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գերատեսչական մեդալով պարգեւատրվել է 94 զինծառայող:

1995 թվականի սեպտեմբերի 18-ին բրիգադը ստացավ մարտական դրոշ՝ որպես զինվորական պատվի, փառքի եւ արիության խորհրդանիշ:

2000 թվականի հուլիսի 21-ին ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով բրիգադը վերակազմավորվեց 2-րդ ԱՄՀԳ-ի:

ՀՀ նախագահի հրամանագրով՝ ՀՀ զինված ուժերի կազմավորման 15-րդ տարեդարձի կապակցությամբ՝ բանակաշինության գործում ունեցած ծեռքբերումների, ինչպես նաեւ հայրենիքի սահմանները պաշտպանելիս ցուցաբերած խիզախության համար գունը պարգեւատրվել է «Վարդան Սամիկոնյան» շքանշանով:

Գնդի մարտական հաջողությունները կանխորոշել եւ այսօր էլ մեր բանակի հզորացմանը նպաստել են բազմաթիվ ճշանավոր զորահրամանատարներ.

գեներալ-մայոր Վալերի Նարիմանի Գրիգորյան (25.09.94թ.-14.03.94թ.),

գնդապետ Սերգեյ Ջավենի Գրիգորյան (25.01.93թ.-25.03.93թ.), (14.03.94թ.-24.09.94թ.),

գեներալ-լեյտենանտ Յուրի Գրիգորի Խաչատուրով (24.09.94թ.-11.03.96թ.),

գնդապետ Սուրեն Ցոլակի Գեւորգյան (11.03.96թ.-11.04.98թ.),

գնդապետ Տիգրան Հրաչիկի Քեշիշյան (11.04.98թ.-15.02.99թ.),

գնդապետ Աշոտ Վռամի Միքայելյան (15.02.99թ.-12.10.2000թ.),

գնդապետ Մելիքսեթ Արամի Պողոսյան (12.10.2000թ.-16.07.2007թ.),

փոխգնդապետ Արտակ Էմիլի Բուդաղյան (16.07.2007թ.-2010թ. հուլիս):

Ներկայիս հրամանատարն է փոխգնդապետ Ալեքսանդր Արշակի Ցականյանը:

Բրիգադի քուրայով անցել են փոխնախարար Յուրի Խաչատուրովը, հանրապետության երբեմնի գլխավոր զինկոմ Կամո Քոչունցը, ՀՀ զինված ուժերի բանակային կորպուսի հրամանատարներ Վալերի Գրիգորյանը, Հայկազ Բաղմանյանը, Իջեւանի զինկոմ Սերգեյ Գրիգորյանը, Գորիսի զինկոմ Մելիքսեթ Պողոսյանը, ՕՎ պետի տեղակալ Ալբերտ Բաղդասարյանը, բանակի կորպուսի հրամանատարի տեղակալ Նիկոլ Առուստամյանը, Ալբերտ Բաբայանը, Սամվել Սարգսյանը, բարձրաստիճան սպաներ Հայկ Կարապետյանը, Ռեմիկ Մարդանյանը, Արիս Բրուտյանը, Վանիկ Մանուկյանը, Ռաֆիկ Բեկլարյանը, Հակոբ Հարությունյանը, Միքայել Միքայելյանը, Հակոբ Հարությունյանը:

2007 եւ 2008 ուսումնական տարվա արդյունքներով լավագույն մոտոհրաձգային գունդ է ճանաչվել 60369 զորամասը եւ պարգեւատրվել պատվո դրոշով:

Այսօր էլ զորամասի մարտիկները ու սպաները պատվախնդրորեն կատարում են հայրենիքի սահմանները պաշտպանելու գործը՝ հստակ գիտակցելով, որ մեր պետության անկախությունն սկսվում եւ ավարտվում է երկրի սահմանները պաշտպանող խրամատներից:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Խոնարհվենք զոհված ազատամարտիկների անմար հիշատակի առջեւ

Գորիսի տարածաշրջանից 1988-94թթ. զոհված զինծառայողների եւ ազատամարտիկների անվանացանկ

Ասրյան Մուրադ Միշայի
Ասրյան Արայիկ Յուրիկի
Աբգարյան Առաքել Ավետիքի
Անդրյան Սերգեյ Արտաշի
Աղամյան Ռոբերտ Պետրոսի
Առուստամյան Սեյրան Կարմենի
Առուստամյան Վարդան Մայիսի
Աղաբեկյան Արամ Ռաֆիկի
Բաղդասարյան Արա Արամայիսի
Բաղդասարյան Կարեն Վազգենի
Բաղդասարյան Գառնիկ Հրաչիկի
Բալասանյան Էդգար Ռուբիկի
Բաղդասարյան Մհեր Խաչատուրի
Բալասանյան Ազնիվ Ռաֆիկի
Բալաչյան Մարտուն Վլադիկի
Բեգլարյան Սանասար Խաչատուրի
Գալստյան Վարուժան Գեւորգի
Գեւորգյան Սամվել Անդրանիկի
Գրիգորյան Գրիգոր Լյուդվիկի
Գրիգորյան Լյուդվիկ Միխայելի
Գեւորգյան Կարեն Միխայելի
Գրիգորյան Միշա Հովսեփի
Դանիելյան Խաչիկ Անդրանիկի
Զաքարյան Անուշավան Ղեւոնդի
Էյլազյան Շուրա Գրիգորի
Խաչյան Արամ Ռուբենի
Հակոբյան Սենիկ Ռաֆիկի
Հովհաննիսյան Սամվել Արտաշեսի
Հարությունյան Օլեգ Սլավիկի
Հայրյան Սեյրան Սերժիկի
Հարությունյան Արամ Գառնիկի
Հովակիմյան Սամվել Սերոբի
Հովակիմյան Արարատ Հմայակի
Հովհաննիսյան Վագիֆ Լազրի
Մարտիրոսյան Արմենակ Հայկի
Միրզոյան Սասուն Սեյրանի
Միրզոյան Արմեն Պետրոսի
Մինասյան Կարեն Արծրունի
Մկրտչյան Կամո Էրիկի
Մկրտչյան Վահրամ Սամվելի
Միրզոյան Գագիկ Ռազմիկի
Մկրտչյան Արայիկ Անդրանիկի
Միրզոյան Հայկ Հմայակի
Մկրտչյան Մուշեղ Յուրիկի
Մինասյան Գարիկ Միշայի
Մարգարյան Արմեն Արկադիայի
Մարտիրոսյան Անդրանիկ Համազասպի
Մարտիրոսյան Ռազմիկ Աշոտի
Միքայելյան Սամսոն Վաղարշակի
Մինասյան Սեւակ Վարդգեսի
Մալուեց Արթուր Գառնիկի
Մկրտչյան Կամո Գառնիկի
Մարգարյան Հրաչիկ Վլադիկի
Մաշուրյան Սպարտակ Հրանտի
Յուզբաշյան Կամո Սուրենի
Ներկարանց Վրեժ Արամայիսի
Նազարյան Սուրիկ Գուրգենի
Շեգունց Շիրակ Էդիկի
Պետրոսյան Լենա Արծրունու
Պողոսյան Արմեն Ռիգայի
Պողոսյան Կամո Միշայի
Պետրոսյան Վազգեն Արտավազդի
Սարգսյան Ստյոպա Բորիկի
Սահակյան Ջավեն Ներսեսի
Սահակյան Սամվել Վոլոդայի
Սահակյան Գարիկ Գրավիկի
Սարգսյան Արմեն Սլավիկի
Սնեպուլով Իգոր Միխայելի
Սահակյան Ալեքսանդր Շահենի
Վարդանյան Արա Մաքսիմի
Վարդանյան Մարտիկ Համլետի
Վարդանյան Գագիկ Ջավենի
Փարսադանյան Արթուր Վոլոդայի
Փարամազյան Վարուժան Սերգեյի
Քարամյան Սեյրան Ալբերտի
Քոչարյան Վաչագան Սմբատի
Քոչունց Մհեր Հայկի
Քոչոյան Արամ Ցոլակի
Ֆիլանենկո Անատոլի Անատոլիի

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ
Գորիսի զինկոմ, գնդապետ

Լուսանկարը՝ Կ.Հովհաննիսյանի

Հուշարձան՝ նվիրված հայրենիքի համար զոհված բոլոր հայորդիներին: 2002թ.: Նախագծի հեղինակ եւ ճարտարապետ՝ Սեւադա Զաքարյան: Հովանավոր՝ Սուրեն Խաչատրյան:

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎԵՌԱՅՈՒՂԻ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԱՌՆԻ՝ թ.ԱՊՐԻԼ, ԵՒՍԻՆՅԱԼ 2010
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Սյունյաց աշխարհ

Բնաշխարհ

Այստեղ քարերն են խոսում անգամ

Տերասի ձեւով բարձրանում են ժայռերը, մեկը մյուսից գեղեւ, ահռելի: Ահա մեկը՝ ռնգեղջյուրի նման մռութը հառել է մի ուրիշի՝ որ վիթխարի գորտի է նման: Նրանց մոտ մի ժայռ՝ կարծես արձանացել է հեթանոս քուրմը: Նրանից բարձր՝ քարե արծիվը ճիգ է անում թեւերը թափահարելու ու չի կարողանում:

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

Լուսանկարները՝ Կ.Հովհաննիսյանի

ՀԵՌԱՄԻՐ ԵՎ ՀԱՅԱՍՊԱԿՈՒ «ՍՅՈՒՆԻՔԻ ՍԵՓԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՄԱԿԱՆ-ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹԱԳՐԱԿԱՆ
Գլխավոր խմբագիր Ս. Հովհաննիսյան
Հասցե՝ քաղաք Գորիս, Շևչենկոյի 20/32
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ՆՇԱՆԱՎՈՐ ԳՈՐԻՍԵՑԻՆԵՐ

Սերո Սպարապետ

Նրա գրական անդաստանը ոչ մի տարին երաշտ չի ճանաչել

Ինքն իր մասին

Ես ծնվել եմ Ջանգեզուրում, այնտեղ, ուր լեռները երկնքի մեջ են, որոնցից շատերի գագաթներին ամռանն անգամ ձյուն է լինում: Ծնվել եմ այնտեղ, ուր խորունկ ձորերի ու կիրճերի մեջ քաղցրանում է նուռը, խաղողը, թուզը, իսկ լեռներում ալպյան արոտներն են, կապույտ լճեր: Լեռների ծոցում՝ Վարարակն գետի ափին է Գորիս քաղաքը: Նրա դիմացը ձորերի մեջ, կուտակված է հին Կյորես գյուղը՝ ժայռերի նախիրներով, հեթանոս Չագ նահապետի կառուցած բերդի ավերակներով, գերեզմանոցներով, քարանձավներով ու կամարակապ աղբյուրներով: Գյուղում հնադարյան ձիթհաններ կան, բրուտահոցներ էլ, ձորում հազարամյա ջրաղացներ կան ու մատուռներ:

Հին, շատ հին է մեր Կյորեսը: Այստեղ՝ հսկա ժայռի տակ, այժմ էլ երեւում է կիսավեր մի քարանձավ ու մի փլված պատ: Հենց այդ քարանձավում է ծնվել եմ ես:

Հայրս, որ ինքն իրեն էր գրաճանաչ դարձել, մեր տանը մինչեւ երեսնական թվականները պահպանվող մի հին երգարանի լուսանցքում ծուռումուռ տառերով գրել է. «Ինձ եղավ եւս մի որդի Սերոբը: Ծնվեց դեկտեմբերի 3-ին, մկրտեցինք 6-ին»: Խեղճ հայրս մոռացել է գրել իմ ծննդյան տարեթիվը:

Մայրս հիմա էլ ասում է.

– Ես էլ եմ դեկտեմբերի 3-ին ծնվել: Քո ծնված օրը ես դարձել եմ ուղիղ տասնհինը տարեկան: Իսկ եկեղեցում չափաբերական մատյանում գրված էր. «Վարդանուշ Արշակի Զիլֆուդարյան- Մելիք-Օհանյան, ծնվեց 1896 թվականի դեկտեմբերի 3-ին»:

Այսպիսով, ես ծնվել եմ 1915 թվականի դեկտեմբերի 3-ին:

Հայրս երբեք դպրոց չի գնացել, այնինչ մայրս ավարտել է մեր գյուղի օրիորդաց դպրոցի չորրորդ դասարանը: Նրա հայրը միջին կարողության տեր գյուղացի է եղել, որը սերում է մեր կողմերին հայտնի Մելիք-Օհանյան հայտնի տոհմից: Այժմ էլ մայրս հպարտանում է իր մելիքական-իշխանական ծագումով, այն բանով, որ իր նախապապ Մելիք-Օհանը եղել է Դավիթ Բեկի գիճակիցներից:

Հորս գծով իմ բոլոր ապուպապերը հովիվներ են եղել: Դառը որբությամբ է անցել հորս կյանքը: Զրկանքներով է անցել նաեւ իմ կյանքը: Իմ հիշողությունից երբեք չջնջվեցին մեր թաղի անձավաբնակ մարդիկ, խորունկ ձորերը, ձորերի մթին այգիները, կապույտ սարերը, եւ հոգսից ընկճված հայրս բարձրահասակ, ժամանակից շուտ ծերացած եւ նյարդայնի, գրգռված: Պատանի տարիներին հայրս բեռնակիր-մշակ է եղել Կրասնովոդսկ քաղաքում, ապա քսանմեկ թվականից մինչեւ երեսուներեք թվականը գյուղական փոստատար էր մեր շրջանում: Մեր գավառական քաղաքից փոստը նա շալակով տանում էր հեռավոր գյուղերը եւ շալակով էլ բերում:

Լավ հիշում եմ մորս տատիճ Նանախանում գիզայնից, որը մեռավ մոտ հայրդար տարեկան հասակում, ոտի վրա, բաղուբուտանը մշակելիս: Նա ինձ մեծացրել է ծնկների վրա: Հին արխալուղով, արծաթ սուրմաներով, թզբեղը ձեռքին այդ նահապետական պառավը լեգենդների, հեքիաթների, առասպելների, առածների ու հին-հին զրույցների մի անսպառ աղբյուր էր:



Հեքիաթային կին էր մեծ տատս: Նա գյուղական հեքիմ էր ու հռչակավոր տատմամյր: Նաեւ հեզ էր, ինչպես հինա հեզ է մայրս՝ այդ նահապետական կնոջ թոռը:

1921 թվականի սեպտեմբերին հայրս իմ մեծ եղբորը տարավ գյուղի դպրոցը: Նրանց ետեւից, լալով ու գոռալով, ես էլ էի ուզում գնալ «շկոլ»: Շատ էի փոքր, չընդունեցին: Բայց ես ամեն օր գնում էի դպրոց ու մնում նրա պատերի տակ: Հաջորդ տարին եւս ծանր գլխացավանք պատճառեցի հորս եւ մեր գյուղի դպրոցի ուսուցիչներին: Ստիպված սրանք ինձ ճստեցրին 19-20 տարեկան առաջին դասարանցիների հետ, որոնցից շատերն այդ տարի ամուսնացան: Մի տարի ինձ բանի տեղ չդրին դպրոցում, եւ բաց էլ չկարողացա սովորել: Երկրորդ տարին մնացի դասարանում: Ադքատ դպրոց էր, չորս-հինգ աշակերտի մի մատիտ ու մի տետր էր հասնում: Դրանք էլ դասի վերջին ուսուցիչները հավքուն, տանում էին, որ մյուս օրը նորից բերեն:

1925 թվականին հայրս Գորիս քաղաքի ծայրին մի հեղեղատի մոտ, ցեխապատ մի սեղյակ շինեց եւ մեզ գյուղի քարանձավներից տեղափոխեց այնտեղ:

Սովորում էի Լուկաշինի անվան յոթնամյա դպրոցում: Դասերից հետո անտառ էի գնում ձնռան համար փայտ բերելու: Ամբողջ ամռանն աշխատում էի դաշտում, մեր արտը հնձում, խոտ հարում, բոստանը մշակում: Երեսուներեք թվականի գարնանը մենք մտանք կոլխոզ՝ նրան տալով մեր միակ էշն ու միակ կովը: Այդ տարվա աշնանը մեր կոլտնտեսության վարչությունն ինձ հարվածային կոլտնտեսականի կոչում տվեց: Որքա՛ն էի ուրախ...

Ես միշտ եղել եմ հորս աջ թեւը, - շարունակում է Խանզադյանը, - նրա օգնականը տանը, դաշտում, կոլխոզում: Շուտ բռնկվող մարդ էր հայրս:

Սերո Սպարապետի արխիվից

Սերո Խանզադյանի կիսանդրին Գորիսի №6 դպրոցի բակում (2000թ.): Քանդակագործ՝ Գեւորկ Բաղդասարյան: Նախաձեռնող եւ հովանավոր՝ Սուրեն Խաչատրյան:

Երբեմն նաեւ ծեծում էր մեզ: Քանի անգամ է նա ինձ տասը-տասներկու տարեկան անչափահասիս խփել... նա չեմ մեղադրում նրան: Նա դառնությամբ էր հաց վաստակում իր բազմանդամ ընտանիքի համար, անասելի տառապում էր, եւ նրա դաժանությունից էլ հենց դրանից էր: Ես տեսել եմ, թե ինչպես իմ քիթ-մռութը արյունոտելուց հետո նա ծածուկ լաց էր լինում, զղջում: Հակառակ հորս դաժանության, մայրս անսահման բարի էր եւ ոչ ոքի մի «չոռ» անգամ չի ասել:

1934 թվականին ես ավարտեցի մեր քաղաքի մանկավարժական տեխնիկումն ու նշանակվեցի Տաթեւ գյուղի յոթնամյա դպրոցում մայրենի լեզվի եւ գրականության դասատու: Այդ տարի ես առաջին անգամ տրեխների փոխարեն կոշիկ հագա:



Օրը մթնեց

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ
Սերո Խանզադյանին

Օրը մթնեց, ժամն է արդեն
Իրիկնահացի,
Տխրությունս կամաց-կամաց
Փոխվում է լացի:

Կայերի մեջ՝ ծղոտաբույր
Թիկնոցը հագած
Նինջ էր մտնում ամառային
Օրը վաստակած:

Իջնում էին խոնարհ, խոնարհ
Դագերի ուսին
Մի կաթսահունց երկնակամար,
Մի ծնրադիր լուսին...

Մենք մենիգ ամպնրով,
Եվ զուսպ, եւ հանգ,
Նայում էին մեր տնքոք կարգով -
Գրպտեր ու ավագ:

Նայում էին եւ սպասում
Մինչեւ պառաջ գար,
Մինչեւ բակում Ծաղիկ եգան
Ջանգը ծնգաց:

Պառաջ գալիս, սուփրի գլխին
Նայում էր շուրջով,
Եվ լցնում էր գուռնը դաշտի
Թույր ու շշուկով...

Ու երբ գաղջս մեռնն էր առնում
Շերեփը իր հին,
Գդակները բնազդաբար
Աղմնում էին:

Թանապարի գաք գոլոշին
Գերանին առնում
Եվ սյունն ի վար գլոր-գլոր
Ուլունք էր դառնում:

Վայելում էր գաք թանապար,
Լավաշ ու սամիթ
Աշխատավոր մի գերդաստան
Դարգ ու միասիթ...

Հինս այդ մեծ գերդաստանից
Ոչ մենք չկա...
Ես եմ մնում լոկ իրբեւ հուշ
Եվ իրբեւ վկա:

Օրը մթնեց, ժամն է արդեն
Իրիկնահացի,
Տխրությունս կամաց-կամաց
Փոխվում է լացի:

Անջնջելի տպավորություն են թողել ինձ վրա Տաթեւ գյուղը, վանքը, Որոտանի ահռելի կիրճը, Օվեմի անտառը եւ մարդիկ՝ հազարամյա փորձով ու տառապանքով իմաստնացած լեռների մարդիկ:

1935 թվականին մեկնեցի Բաքու՝ բարձրագույն կրթության: Շրջանի ժողկրթբաժինն ինձ թույլ չտվեց ուսման գնալու, մի բան, որին ծարավ էի: Չէ՞ որ տեխնիկումը մենք ավարտեցինք, թող ներեն այն օրերի իմ ուսուցիչները, գրեթե կիսագրագետ: Զարմանալի խղճուկ ուսուցում էր դա:

Հակառակ ժողկրթբաժնի արգելքի, ես գնացի Բաքու՝ հույս ունենալով, որ այնտեղ եղած իմ բարեկամները նյութապես կօգնեն ինձ: Հայրս էլ էր դրան դեմ:

– Ինչպե՞ս պահեմ քույրերիդ, – տրտնջում էր նա: – Քեզ ինչպե՞ս օգնեմ:

Մեծ եղբայրս այդ ժամանակ բանակում էր՝ ծառայության մեջ: Բաքվում լավ քննություն տվի եւ ընդունվեցի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնի պատմության ֆակուլտետը:

Դունվարին մեր դեկանը կանչեց ինձ ու քթիս դեմ արեց մի գրություն.

– Փախստական ես...

Գորիսի ժողկրթբաժնից գրել էին, որ ես ինքնագլուխ եմ մեկնել սովորելու:

– Քեզ կհեռացնեմ ինստիտուտից, կպատժեմ, – գոչեց դեկանը:

Ահ ընկավ սիրտս: Սոված էի, ցուտ էր: Սովորելը թողի եւ մեր մի բարի բարեկամից գնացքի տոմսի փող պարտք առնելով ետ եկա տուն:

Բարձրագույն կրթություն ստանալ չէի էլ կարող երազել: Հայրս տխրեց: Չմեռավ պաշար արած ցորենից մի քանի փութ ծախեց, իմ պարտքն ուղարկեց Բաքու:

Ես նորից ուսուցիչ եմ Յայջի, Վերիշեն եւ ապա Խնածախ գյուղերում...

Վաղ հասակից ես մեծ սեր եմ ունեցել դեպի բանահյուսությունը: Ուսուցիչ եղած ժամանակ գրի եմ առել հայրուսլավոր առակներ, ասացվածքներ, հեքիաթներ, աշուղական ու ժողովրդական երգեր, զրույցներ, լեգենդներ, առասպելներ, հանելուկներ:

Ես գրել սկսել եմ պատանի հասակից: Երեսուներեսել թվականին գրել եմ վեպ կոլխոզային շինարարության կյանքից: Վեպի տետրակները կորել են: Հիշում եմ միայն նրա առաջին նախադասությունը. «Քարաշենում այդ երեկո փողով կար»: Ապա հիշում եմ, որ վեպիս գլխավոր հերոսը քեռիս էր՝ մեր կոլխոզի հիմնադիր նախագահը:

Արձակով սկսելով՝ ես նաեւ բանաստեղծություններ գրեցի: Առաջին ոտանավորս լույս է տեսել մեր քաղաքի թերթում. կարծեմ 1933 թվականին: Վերնագիրը հիշում եմ «Յայլաղում»: Ավելի շատ մանկական բանաստեղծություններ էի գրում, որոնք այդ տարիներին տպվեցին «Հոկտեմբերի-կում»: 1933 թվականին մասնակցել եմ հանրապետական երիտգրողների հավաքին եւ ճառ եմ ասել: Այդ թվին էլ ավարտել եմ «Վահրամ Որոտնեցի» պիեսը, որը լսվել գնահատեց Արվեստի վարչությունը եւ 40-41 թատերաշրջանում բեմադրվեց Գորիսի թատրոնում:

Վրա է հասնում Հայրենական մեծ պատերազմը, եւ ես, տասը օրվա ամուսնացած, 1941 թվականի հունիսի 23-ին մեկնում եմ բանակ: Սկզբում մեզ պահում եմ Քաջարանում, որտեղ նոր-նոր սկսել էին հետախուզել մեր այդ լեռների պղնձի ու մոլիբդենի հարուստ հանքավայրերը: Մեզ ասում էին, թե շուտով գնալու ենք Երեւան: Մեր զորամասում մեծամասնությունը հայեր էին: Օգոստոսին գնացքով մեկեցինք Ռուսաստան: Երկար ճանապարհորդելուց հետո հասանք Ղազախստանի Բալխաշ քաղաքը: Մի ամիս այնտեղ մնալուց հետո, սոված, անապատով մեկնեցինք դեպի Կարագանդա: Ահռելի անապատն անցանք տասնչորս օրում մեր մեքենաների մի մասը թողնելով նրա ավազուտների մեջ: Կարագանդայում քիչ մնացինք: Մեզ տեղափոխեցին Չելյաբինսկ: Այստեղ հասնելուց մի քանի օր հետո ես եւ բազմաթիվ հայ տղաներ դիմեցինք գիշկոմիսարիատ՝ խնդրելով մեզ ուղարկել ռազմաճակատ: Մեր խնդիրը հարգեցին եւ մեզ՝ մոտ 150 կամավորներիս, ուղարկեցին Կուրգան քաղաք, որտեղ մի դիվիզիա էր ձեւավորվում:

Երբ մեզ ներկայացրին գնդի հրամանատարին, սա նայեց ինձ ու ասաց.

– Այս մեծեւներին ինչո՞ւ են ուղարկել: Ես սաստիկ վիրավորվեցի եւ ասացի, որ եկել եմ կամավոր ռազմաճակատ մեկնելու: Նա միայն արհամարհաքով ժպտաց: Այս խոսքերը ես նրան հիշեցրի մի քանի ամիս հետո, երբ ռազմաճակատում ինքն իր ձեռքով իմ կրծքին ամրացրեց առաջին մարտական պարգեւը եւ ինձ սերժանտի կոչում շնորհեց: Դա տեղի է ունեցել Լենինգրադի մատույցներում՝ Վոլխով գետի ափին, Նովգորոդ եւ Զուդովո քաղաքների արանքում, 1942 թվականի սկզբներին:

1942թ. հունիսի 10-ին Վոլխով գետի ափին վիրավորվեցի ոտքիցս: Ապաքինվելով մերձռազմաճակատային հոսպիտալներում՝ ես նորից մեկնեցի ռազմաճակատ: Այստեղ ինձ շնորհեցին կրտսեր լեյտենանտի կոչում եւ նշանակեցին ակամաենտային մարտկոցի դասակի հրամանատար: Շատ բան սովորեցի ես ծանր մարտերի մեջ, իսկ իմ սիբիրցի զինվորներն ինձ սովորեցրին դիմանալ ցրտին, պայքարել սովի ու սառնամանիքի դեմ:

Մի ճակատամարտում կոնտուզիա ստացա, որից եւ խլացավ ձախ ականջս: Մինչեւ այսօր էլ այն չի լսում: Հայրենական պատերազմն ինձ համար հանդիսացել է իմ կյանքի մեծ դպրոցը: Անվերջ մղվող մարտեր, պաշտպանություն, հարձակում, վիրավորների տնքոց, փոքրոգիների խելագար ճիչեր, մահ, մանավանդ մահ՝ ամեն օր, ամեն ժամ:

Իմ՝ կնոջս գրած նամակից երկու տող եմ ուզում մեջբերել այստեղ: Քառասունհինգ թվականի մայիսի 2-ին գրում եմ. «Երեկ ես մասնակցեցի մայիսմեկյան զինվորական շքերթին: Մեր ռազմաճակատի երթը ընդունեց գեներալ Բաղրամյանը՝ հայ ժողովրդի այդ նոր զորավարը: Բաղրամյանի երեւալը մեր շարքերի առջեւ իմ փրտոը լցրեց անհուն հպարտությամբ եւ ցնծության դողով: Ինձ թվում էր, թե նրա ասածները կարդացել եմ Ռաֆֆու կամ Մուրացանի պատմվեպերում»:

Կռիվն ավարտվեց: Ես արդեն ակամեռնետային մարտկոցի հրամանատար էի, լեյտենանտ: Պարգեւատրվել էի շքանշաններով, մեդալներով: Գերմանիայում ես սկսեցի գրել «Մեր գնդի մարդիկ» վեպը (1945թ. մայիսից), որը լույս տեսավ 1950 թվականին Երեւանում եւ 1956թ. Մոսկվայում (ռուսերեն): Բանակից զորացրվել ու տուն եմ եկել 1945 թվականի նոյեմբերի վերջերին: Գորիսում չմնացի: Ընտանիքս թողի այնտեղ ու եկա Երեւան: Սկսեցի աշխատել Հայաստանի ժողովրդական ստեղծագործության տանը՝ իբրեւ ժողովրդական բանահյուսության կոնսուլտանտ եւ ակադեմիայի գրականության ինստիտուտում իբրեւ բանահավաք:

1954 թվականին լույս տեսավ «Հողը» վեպիս առաջին գիրքը, ապա երկրորդը (1955թ. սկզբներին): Այնուհետեւ տպագրեցի «Որոտանի կիրճում», «Լալ Հանազը», «Քարանձավի բանկիչները» մանկական գործերս: Դրանք ռուսերեն լույս տեսան Մոսկվայում: 1958 թվականին «Կարմիր շուշաններ» տպագրվեց: Պատմվածքներիս այս ժողովածուն ռուսերեն լույս տեսավ 1959թ. (Մոսկվա): 1956 եւ 1957 թվականներին 2 անգամ հրատարակվեց «Հողը»: 1961թ. տպագրվեց «Մխիթար Սպարապետը»: Ահա եւ իմ կյանքի համառոտ ուղին:

■

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ
ՀԵՌԱՄԻՐ ԵՎ ՀԱՅԱՍՊԱԿՈՒ «ՍՅՈՒՆԻՔԻ ՍԵՓԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՄԱԿԱՆ-ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹԱԳՐԱԿԱՆ
Գլխավոր խմբագիր Ս. Հովհաննիսյան
Հասցե՝ քաղաք Գորիս, Շևչենկոյի 20/32
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru
Սյունյաց աշխարհ Syuniacy Yerkir

ՆՇԱՆԱՎՈՐ ԳՈՐԻՍԵՑԻՆԵՐ

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Սերո Խանզադյանի մասին

Հայ գրականությունը, համայն հայ մշակութային կյանքը, հայ հասարակական-քաղաքական միտքը ծանր կորուստ ունեցան. իր բեղուն կյանքի 83-րդ տարում վախճանվեց Սերո Խանզադյանը՝ գրողը, հրապարակախոսը, գործիչը: Զանգվածների հրապարակներում այլեւս չի լսվելու նրա խռպոտ, հանդուգն, տիրական ձայնը, հայոց երկրային ու ժամանակային տարածքներն այլեւս չեն որոշվելու այդ մարտիկի եւ գիտնականի, այդ հետախույզի եւ վավերագրողի, այդ աշխարհագրի եւ մատենագրի քայլերով, հայ գրականության, հայոց պատմության վաղվա առաջամարտիկն այլեւս չի ակնկալելու նրա խրախուսիչ կանչը իր թիկունքից-վաստակած, հոգնած նրա կյանքը իր ժողովրդի հավերժական երթից ետ է ընկել այսօր 1998-ի հունիսյան այս օրը:

Ծնվել է 1915-ին Գորիսում: Ծանր մանկություն եւ պատանեկություն է տարել, ավելի քան ծանր երիտասարդություն, բայց դաժանության հարող այդ ծանրությունը կարծես հատկապես ստեղծված է եղել միայն հանուն այն բանի, որ տոկուն ու հաղթական մարտիկի կոփեն, նա պետք է փրկվեր եւ պայքարեր իր եւ մեր բոլորիս նախնու տանուլ տված հաղթանակները ետ բերելու եւ պետք է կռվեր իր եւ մեր նախնու չապրած կյանքերը ապրելու համար:

«Մեր գնդի մարդիկ», «Հողը», «Մխիթար Սպարապետ», «Մատյան եղելությանց», «Քաջարան», «Թագուհին հայոց», «Հորս հետ եւ առանց հորս», ռազմաճակատային օրագրեր, «Անդրանիկ», «Նժդեհ» – 1949-ից վեր նրա գրական անդաստանը ոչ մի տարին երաշտ չի ճանաչել, գրական, հասարակական, քաղաքական հրապարակը նրա բացակայությունն ու լռությունը չի տեսել:

Քաղցի եւ մտավոր ամլության տարիների վկա՝ նա ծարավի էր իրենից մշակութային կոթող բարձրացնել, եւ բարձրացրեց այդ կոթողը, որի իրական չափերը, որի իրական կարեւորությունը մենք այսօր տեսնում ենք եւ վաղն ենք զգալու: Նրա ծայնից, նրա խենթությունից, նրա իմաստությունից, նրա քաջությունից եւ խոհեմությունից այլեւս պարպված մեր պարապ հրապարակներում:

■

Լուսանկարը Կ. Հովհաննիսյանի

Սերո Խանզադյանի տունը Գորիսում՝ կառուցված 1977-78թթ.: Ներկայումս գրողի տուն-թանգարանն է:

Ամբողջ ժողովրդով, ազգովի

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Սերո Խանզադյանը քայլող պատմություն է, մեր ժողովրդի քայլող պատմությունը: Այդ պատմության թռիչքների ու գահավիժումների, ողբերգությունների ու հանդիսությունների, նրա աստեղային ժամերի եւ ասուպային վայրէջքների քաջահմուտ տարերքն ու վկան:

Այս խոսքիս մեջ Խանզադյանի հետ ապրած երեսունհինգ տարիներից հիշելու եւ հուշելու եմ միայն մի սովորական ժամ...

Մի քանի տարի առաջ էր: Սիսիանում էինք: Մի առավոտ Խանզադյանն արթնացավ եւ հրամայելու պես առաջարկեց.

– Այսօր գնում ենք Ցից քարեր:

Ցից քարերը այսօրվա Սիսիան քաղաքից երկու կիլոմետր հեռավորության վրա, հյուսիս-արեւելքում գտնվող անգիր ժամանակների բնակավայր է: Ամենայն հավանականությամբ, նախապատմական բերդաքաղաք՝ հարավից եւ հարաւ-արեւելքից վիթխարի ժայռաբերող ցից քարերով, հյուսիսից վիհավոր, մթին կիրճով, արեւմուտքից բնական ժայռեղեն պարիսպներով պաշտպանված:

Գնացինք: Մոտեցանք հարավային սահմանին: Խանզադյանի մեջ արթնացավ հնագետը: Շոշափեց սահմանապահ-ժայռաբերկորները, հայացքով չափեց սահմանը: Հայացքը կանգ առավ մի կետի վրա. «Մայր դարպասը պիտի եղած լինի»: Բաց դարպասից մտանք բնակավայրը. «Կանգնի՛ր, – ասաց Խանզադյանը, – ցայի՛ր, հողի վրա պարզ երեւում է քաղաքի նախագիծը»: Քայլում ենք կենտրոնական փողոցով: «Տեսնում ես, – ասում է Խանզադյանը, – այստեղ է եղ հարուստ ու աղքատների եղել, կարգադրող ու ենթականեր եղել. տառապողներ եւ վայելողներ են եղել, – խորտակված ավերակների դիրքն ու տարածքը հուշում են այդ բոլորը»:

Իջնում ենք բնակավայրի հյուսիսային սահմանը, ձորաբերանը, որտեղ հազար մամուռ մաշած ու նորից մամռակալած դղյմենեներ են: Խանզադյանը նայում շոշափում է... Ափսոս, եղծված գրեր չկան, որ նա հագուրդ տա իր վերծանելու կրքին: Վերծանելու նրա մոլուցքը հայտնի է, խաչքարեր շատ է վերծանել եւ միշտ անսխալ:

Հետո նա սուլում է ձորաբերանից: Կիրճն արձագանք է տալիս: Կանչում է, կիրճն արձագանք է տալիս, երգում է, կիրճն արձագանք է տալիս:

Հետո տեսնում եմ, որ իմ ներկայությունը մոռացել է, ինձ տեսնում է, չի նկատում: Խոսում է ամերեւույթ էակների հետ, խոսում է ձեռքերով, աչք-ունքով, գլխով հաստատում եւ ժխտում է նրանցից լսածները, ինչ նախնական լեզվով է խոսում, չգիտեմ: Ես թողնում եմ նրան իր «զրուցակիցների» հետ ու հեռանում: Նայում եմ իր երգից կախված եւ իր երգն ի վեր մագլցող արտույտին, սահմանապահ «ցից քար» ժայռին նստած շահեմ բազեի անհագնիստ հայացքին, ձորաբերանին շորորող կաքավին, քարերի տակից կկոցած աչքերով ինձ նայող ամաչկոտ ծաղիկներին, նայում եմ, եւ մեջս բանաստեղծական տողեր են բողբոջում...

Մեկ էլ մոտենում է Խանզադյանը. «Գնացի՞նք»: Հարցնում եմ. «Ու՞մ հետ էիր խոսում»:

– Էս քաղաքի բեղ-մորուքով, մազակալած մարդկանց հետ:

– Ի՞նչ, նրանց ժամանակակիցը դարձա՞ր, – հարցնում եմ:

– Դու էլ ես նրանց ժամանակակիցը, նրանք էլ են արտույտ սիրել, բազե սիրել, կաքավ սիրել, ծաղիկ սիրել ու սիրո տոներ են մրմնջացել:

Այսպես, Ցից քարերից վերադարձանք Սիսիան:

– Բա չտեսա՞ր, – ասում է Սերոն, որ նրանք մեզ հետ գալիս էին:

– Չէ՛, – ասում եմ, – ես մենակ նրանց ժամանակակից Սերո Խանզադյանին տեսա:

– Գալիս էին: Եկան, – ասում է Սերոն: – Եկան, մտան այս հրաշալի նորատ Սիսիանը կառուցող քարտաշների, որմնադիրների, ճարտարապետների կերպարի մեջ էլ դարձան մեր իմ ու քո ժամանակակիցները:

Այսպիսին է մեր իմաստուն գրող, հնագետ, պատմաբան Սերո Խանզադյանի էությունը, ապրելու կերպը, նաեւ աշխատելու եղանակը, լցվել կյանքով եւ դատարկվել թղթերի վրա:

Կես ժամ առաջ, երբ դուրս եկանք Ցից քարերից, նա ոչ թե յոթանասուն, այլ յոթ հազար տարեկան էր: Ցիմա մեզ հյուրընկալող առաջին դասարանցի երեխան եկել է դպրոցից, Խանզադյանը նրա հետ միասին կարդում է այբուբենը, հարցեր է տալիս, պատասխանում է նրա հարցերին, դարձել է յոթ տարեկան: Չէ, մեզ գրողը տարիք չունի, նա հասակակից է իր ժողովրդի, նրա ապրած կյանքի, նաեւ նրա տեղաքնքների:

«Գրական թերթ», 20 դեկտեմբերի 1985թ., №151

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԵՂԾՈՒ
ԱՄՍԱԳԻՐ. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ.
ՀԱՍՑԷ՝ բ.ԱՊՈՒՇ, ԵՐԵՎԱՆ-0010, 20/32
ՀԵՌԱԽՕՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 00 47 (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

Պեկական գործիչներ

ՍԵՐԳ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ երրորդ նախագահ

Ծնվել է 1954թ. հուլիսի 30-ին, Ստեփանակերտ քաղաքում, որտեղ ավարտել է միջնակարգ դպրոցը: 1971 թվականին ընդունվել է Երեւանի պետական համալսարան: 1972-1974 թվականներին ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում: 1979 թվականին ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը:

Աշխատանքային գործունեությունը սկսել է 1975 թվականին Երեւանի էլեկտրատեխնիկական գործարանում՝ որպես խառատ, որտեղ աշխատել է մինչեւ 1979 թվականը:

1979-1988 թվականներին եղել է ԼԿԵՄ Ստեփանակերտի քաղկոմի բաժնի վարիչ, ապա՝ երկրորդ քարտուղար, առաջին քարտուղար, կոմկուսի Ստեփանակերտի քաղկոմի պրոպագանդայի եւ ագիտացիայի բաժնի վարիչ, ԼՂ մարզկոմի կուսկազմակերպությունների բաժնի իրահանգիչ, ԼՂ մարզկոմի առաջին քարտուղար Հեղինկ Պողոսյանի օգնական:

1989-1993 թվականներին ղեկավարել է ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի կոմիտեն:

1993-1995 թվականներին եղել է ՀՀ պաշտպանության նախարար:

1995-1996 թվականներին՝ ՀՀ պետական անվտանգության վարչության պետ, ապա՝ ազգային անվտանգության նախարար:

1996-1999 թվականներին՝ ՀՀ եռթիվ գործերի եւ ազգային անվտանգության նախարար:

1999 թվականին՝ ՀՀ ազգային անվտանգության նախարար:

1999-2000 թվականներին՝ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար:

1999-2007 թվականներին՝ ՀՀ նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար:

2000-2007 թվականներին՝ ՀՀ պաշտպանության նախարար:

2007 թվականի ապրիլի 4-ին նշանակվել է Հայաստանի Հանրապետության վարչապետ:

2007 թվականի հունիսի 7-ին կրկին նշանակվել է ՀՀ վարչապետ՝ գլխավորելով ՀՀ Ազգային ժողովի ընտրություններից հետո ձեւավորված կառավարությունը:

2008թ. փետրվարի 19-ին ընտրվել է Հայաստանի Հանրապետության նախագահ:

1990 թվականին ընտրվել է Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր:

Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է 2006 թվականից, 2006 թվականի հուլիսից մինչեւ 2007 թվականի նոյեմբերը՝ կուսակցության խորհրդի նախագահ: 2007 թվականի նոյեմբերին ընտրվել է ՀՀԿ նախագահ:

Երեւանի պետական համալսարանի խորհրդի եւ Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահն է:

Ստացել է Արցախի հերոսի կոչում, ՀՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի, «Տիգրան Մեծ» եւ «Ոսկե արծիվ» շքանշաններ, պետական այլ պարգեւներ:

Ամուսնացել է 1983 թվականին: Կինը՝ Ռիտա Սարգսյանը, ծնվել է Ստեփանակերտում, գիմնազիական ընտանիքում: Մասնագիտությամբ երաժշտության ուսուցչուհի է:

Ունի երկու դուստր՝ Անուշն ու Սաթենիկը:

■

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Ականավոր կուսակցական, պետական գործիչ, դիվանագետ: Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար (1953-60):

Ծնվել է 1910թ. հունվարի 2-ին Շինուհայր գյուղում: Սովորել է գյուղի դպրոցում, ավարտել Երեւանի պետհամալսարանը եւ Անդրկովկասի բարձրագույն կուսակցական դասընթացները:

Քսաներկու տարեկանում նա Սիսիանի, 26-ում Իջեւանի կուսշրջկոմների բաժնի վարիչ էր, 28-ում Կապանի կուսշրջկոմի առաջին քարտուղար, 29-ում Հայկական ԽՍՀ ներքին գործերի ժողկոմի առաջին տեղակալ (1939թ. ապրիլ): Շատերը, ժամանակային գործոնը հաշվի չառնելով, մինչեւ այժմ էլ նրան մասնակից են դարձնում 37-թ հանրահայտ եղերական դեպքերին: Մինչդեռ, նա ժողկոմատում աշխատել է ընդամենը 17 ամիս, որովհետեւ 1940-ին ժողկոմատը տրոիզել էր երկու մասի, եւ Ս.Թովմասյանը նոր նշանակում էր ստացել դառնալով ՆԳ ժողկոմի տեղակալ, եւ այն պայմաններում անգամ, երբ ժողկոմատը 37-ից պրոֆեսիոնալ էր Մոսկվայից եկած էմիսարներով, «եռյակներով» ժողկոմ Կորոտկովի գլխավորությամբ, Ս.Թովմասյանը կարողանում էր վերակացնել շատ անմեղ դատապարտվածների իրավունքները: Իրազեկներն այդ մարդկանց մեջ տեսնում են ականավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանին, Երեւանի համալսարանի ռեկտոր, հետագայում ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Անուշավան Արզումանյանին եւ շատ ուրիշների:

Ս.Թովմասյանը 1941-ին մեկնել է ռազմաճակատ եւ պատերազմի առաջին օրերի հսկայական ծանրության պայմաններում կազմակերպական մեծ աշխատանք տարել սկզբում լինելով 136-րդ դիվիզիայի կոմիսար, իսկ 1942թ. փետրվարից գնդապետ Ս.Զաքյանի հրամանատարությամբ գործող 390-րդ հայկական հրածգային դիվիզիայի քաղբաժնի պետ:

Հայրենական պատերազմի պատմությանը շատ թե քիչ ծանոթ ամեն մեկը գիտի, թե ինչ Գողդոթայով է անցել հայկական այդ զորամիավորումը: Կազմավորվելով Երեւանում, փաստորեն, աշխարհազորայիններից, 390-րդն ամփոթապես մարտադաշտ ուղարկվեց ամենադժվարին մի տեղամասում, որովհետեւ այդպես էր ցանկացել Գերագույն գլխավոր հրամանատարի ներկայացուցիչ Լ.Մեխլիսը: Հետագայում Ս.Թովմասյանը մշտապես ընդգծում էր այդ ողբերգության մեղավորներին պատմության մեջ համապատասխան գնահատական տալու անհրաժեշտությունը: Նա ուղղակի չէր կարողանում հաշտվել այդ փաստի հետ, որովհետեւ դա կապված էր տասնյակ հազարավոր հայ զինվորների զոհողության հետ: Ճիշտ է, նա հետագայում հրատարակեց «Մեծ հայրենականի ճամփաներով» գիրքը (1971թ.), սակայն, այնտեղ էլ չկարողացավ իր սրտի խոսքն ասել ինչպես հարկն է, որովհետեւ վերեւում Լ.Բերիմեեւն էր հայ զինվորի համար մեկ այլ գերեզման դարձած իր «Վալայա զեմլյայով», եթե նկատի ունենանք նաեւ այն հանգամանքը, որ հենց Բերիմեեւն էր հետագայում Ս.Թովմասյանին դիվանագիտական աշխատանքից հետ կանչողը:

1946-53թթ. Ս.Թովմասյանը աշխատել է որպես կուսակցության Երեւանի քաղկոմի քարտուղար. Կենտկոմի բաժնի վարիչ, Երեւանի օկրուգկոմի երկրորդ քարտուղար, իսկ 1953թ. նոյեմբերին ընտրվել է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար եւ աշխատել մինչեւ 1960թ. դեկտեմբերը:

Եթե մեր հիշողության մեջ վերականգնենք այդ տարիները, ապա նկատելի կդառնան այն հսկայական դժվարությունները, որոնք պետք է կանգնեին Կենտկոմի առաջին քարտուղարի առջեւ կապված անհատի պաշտամունքի քննադատության, կուսակցական եւ պետական կառույցներում բույն դրած պահպանողականության, մարդկանց մտայնության բարացածության, ինչպես նաեւ «խրուշչովյան ձնհալի» հետ կապված նորագոյացումների հետ:

Ս.Թովմասյանը, նրքոտ հետեւողականությամբ զբաղվելով անցյալի սխալների վերանայմամբ ու բարդույթների հանգուցալուծմամբ, միաժամանակ պայքարում էր, որպեսզի այդ արմատական բարեփոխումները անցանկալի ախտադարձությունների պատճառ չդառնան, որպեսզի, այսպես կոչված, գլոբալ դեմոկրատացումը չտանի ամենաթարդության, կարգապահության անկման, իշխանության լծակների թուլացման: եվ հենց դրանով պետք է բացատրել մտավորականության մի մասի մոտ առաջացած դժգոհությունը, քանի որ նրանք տեսնում էին, որ մի կողմից գրականության մեջ նորից իրենց արժանի տեղն են գրավում Ռաֆֆին, Չարենցը, Բակունցը, արեւմտահայ գրողները, իսկ մյուս կողմից գրականության կուսակցականության հանրահայտ նորմերը շարունակում են մնալ գործողության մեջ: եվ այդտեղ զարմանալու ոչինչ չկար, որովհետեւ, ինչպես այդ, այնպես էլ «ձնհալային» գործընթացի մյուս ասպարեզներում ինարավոր չէր հակառակվել համախորհրդային գաղափարախոսությանը:

Ս.Թովմասյանը էկոնոմիկայի ասպարեզում մի շարք արմատական տեղաշարժերի հեղինակ դարձավ՝ Հայաստանում հիմք դնելով արդյունաբերության նոր ճյուղերի, մասնավորապես զարկ տալով մեքենաշինությանն ու էլեկտրատեխնիկային, ինչպես նաեւ էներգետիկայի զարգացմանը: Այդ տարիներին սկսվեց Որոտանի կասկադի շինարարությունը, որը փաստորեն շոշափում էր Սյունիքի տնտեսական եւ սոցիալական կյանքի բոլոր կողմերը:

Հաճախ Ս.Թովմասյանին վերագրվող, այսպես կոչված, սխալների մեջ տեսնում են Սփյուռքի հետ կապերի եւ հայրենադարձության խնդիրների նկատմամբ նրա նեգատիվ կեցվածքը: Մինչդեռ իրականում ամեն ինչ ընդհակառակն էր: Նա ցանկանում էր խուսափել հետպատերազմյան տարիների հայրենադարձության սխալներից, որոնց հետեւանքները երկար ժամանակ զգալ էին տալիս: Այսինքն՝ սփյուռքահայը հայրենիք պիտի վերադառնա հավատով, համոզված լինելով, որ դա իր միակ հանգրվանն է, այլ ոչ թե քարոզչությունից դրդված կամ այլ պատճառներով: Նա գտնում էր նաեւ, որ պետք է ամրապնդվեն սփյուռքահայ գաղութները եւ ուժեղանան Սփյուռք-հայրենիք կապերը: Այդ իմաստով նա առաջարկում էր ընդլայնել Հայաստանի արտաքին գործերի նախարարության գործունեության շրջանակները, ընդհուպ հայաշատ երկրներում Հայաստանի ներկայացուցչություններ ունենալը:

1961թ. Ս.Թովմասյանը նշանակվում է Վիետնամի Դեմոկրատական Հանրապետությունում ԽՍՀՄ արատակարգ եւ լիազոր դեսպան: Փաստորեն, դիվանագիտական աշխատանքի փորձ չունեցող գործչին ուղարկում էին աշխարհի այն ժամանակվա թեժ կետերից մեկը, որտեղ, ըստ իրության, բախվում էին ոչ թե մի երկրի երկու մասի բաժանված ժողովուրդների, այլ աշխարհի երկու գերտերությունների շահերը: Երբեմն Ս.Թովմասյանի այդ նշանակումը համարում են Ն.Խրուշչովի նկատմամբ նրա նվիրվածության փոխհատուցում, քանի որ 1957թ. Ս.Թովմասյանը հստակ դիրքորոշում էր հանդես բերել եւ Կենտկոմի պլենումում պաշտպանել առաջին քարտուղար Ն.Խրուշչովին, երբ նրա դեմ էին դուրս եկել ստալինյան շրջանի ամենասանձավոր գործիչները (այսպես կոչված հակակուսակցական խմբավորում): Սակայն, վերոհիշյալ նշանակումը ոչ թե հովանավորչություն պիտի որակել, այլ, ընդհակառակը կամային հատկություններ ունեցող գործչին դժվարին տեղամաս ուղարկելու անհրաժեշտություն: Առավել եւս, որ 60-ական թվականներին Ս.Թովմասյանը չէր խուսափում քննադատել նույն Խրուշչովին, որը, փորձելով ազատվել անհատի պաշտամունքի ստալինյան մոդելից, ստեղծում էր նոր պայմաններին համապատասխան խրուշչովյան մոդել: Այդ մասին Ս.Թովմասյանը թողել է «Մտորումներ հրատապի մասին» շատ արժեքավոր մի ծավալուն փաստաթուղթ, որը դժբախտաբար մինչեւ օրս չի տպագրվել:

Որքան հայտնի է, Ս.Թովմասյանը հինգ տարի Վիետնամում աշխատելուց հետո պետք է նշանակվեր Ֆրանսիայում ԽՍՀՄ դեսպան, սակայն 1964-ի բրեժնեյան հեղաշրջումից հետո ստեղծված պայմանների թելադրանքով նա դեսպան նշանակվեց Լիբիայի Արաբական Հանրապետությունում: Այդտեղ էլ նրան սպասվում էր ոչ սովորական աշխատանք, որովհետեւ սկսվել էր ալեբախությունների մի նոր ժամանակաշրջան կապված այդ երկրում բաղաքական ու սոցիալական արմատական տեղաշարժերի հետ: Հետագայում այդ ամենը Ս.Թովմասյանը ամփոփեց իր մի մեծագույնում մեջ «Լիբիան անկախության եւ սոցիալական առաջադիմության ճանապարհին» վերնագրով:

1970թ. անցնելով կենսաթոշակի՝ Ս.Թովմասյանը, հանրապետությունում աշխատանք ստանալու հույսեր չունենալով, մտածում էր անցյալի իր գործունեության եւ պատմական ուշագրավ դեպքերի վերաարժեքավորման համայնապատկերի վրա հուշագրությունների շարք տպագրել: Այդ հմայնով նա արժեքավոր հուշագրություններ է թողել ոչ միայն քաղաքական դեմքերի, այլ նաեւ գրականության ու արվեստի մի շարք գործիչների՝ Ավ.Իսահակյանի, Ե.Չարենցի, Հ.Քոչարի, Հ.Ներսիսյանի, Վ.Փափազյանի, Մ.Սիմոնյանի եւ ուրիշների մասին: Նա, անհագստացած լինելով Սփյուռք-հայրենիք կապերի ամրապնդման խնդիրներով, նորից փորձում էր այդ երեւույթին տալ համազգային նշանակություն: Գտնելով, օրինակ, որ Մխիթարյան միաբանները մեծ ավանդ են ներդրել մեր մշակույթի պատմության մեջ նա մասնավորապես գրում էր. «Երկար տարիներ հայագիտության եւ մշակույթի մեր հիմնարկները խուսափում էին որեւէ հարաբերություն ունենալ Վենետիկի Մխիթարյանների հետ: Նրանց շփոթեցնում, իսկ գուցեեւ վախեցնում էր նրանց համագործակցությունը Վատիկանի հետ: Բայց նրանք մոռացել են այն, ինչ պետք է մեզ: Մխիթարյանները հայ ժողովրդի ստեղծած մշակութային արժեքների հավաքողներն են: Հայագիտության վերաբերյալ փոխադարձ տեղեկատվությունը օգուտ կարող էր բերել մեր մշակույթի պատմությանը»: Պետք է ավելացնել, որ ժամանակիհ հենց Ս.Թովմասյանն էր նախաձեռնել Փարիզից Երեւան բերելու Արշակ Չոպանյանի արխիվը, նա էր Հայաստան վերադարձրել նաեւ Այվազովսկու եւ հայ դասական այլ նկարիչների մի շարք գործեր:

Մշտապես հետաքրքրվելով Հայաստանի տնտեսական ու տնցիալական կյանքով, հպարտանալով նրա հաջողություններով՝ Սուրեն Թովմասյանը կյանքի վերջին տարիներին լինում էր նաեւ հանրապետության շրջաններում: Նա ինքնատիպ դատողություններ ուներ միջազգային անցուդարձի, բրեժնեւ-սուսլովյան բյուրոկրատիզմի, ԽՍՀՄ տնտեսական ներուժի անբավարար օգտագործման, շուկայական հարաբերությունների կաղապարվածության եւ այլ ամենի մասին, որոնց հանգուցալուծման բանալին չգտնելն էլ հենց պիտի տաներ 80-ական թվականների վերջերի ճգնաժամին: Նա ոչ միանշանակ մտածելակերպ եւ վերաբերմունք ուներ պատմական խոշոր իրադարձությունների ու դեպքերի նկատմամբ՝ Ավարայրից մինչեւ Սարդարապատ, Մաշտոցից մինչեւ Հր.Աճառյան, Սահակ Պարթեւից մինչեւ Վազգեն Առաջին, Աշոտ Հովհաննիսյանից մինչեւ Կարեն Դեմիրճյան: Նա միանշանակ գնահատական չէր տալիս նաեւ հայ ավանդական կուսակցություններին ու նրանց գործիչներին:

Ս.Թովմասյանը ուներ երկու դուստր, որոնք այժմ Հայաստանում չեն ապրում: Իսկական հայ ընտանիքի մայր էր նրա տիկինը Ամալյան:

Ս.Թովմասյանը կարճատեւ հիվանդությունից հետո վախճանվեց 1980թ. փետրվարին, երբ նոր էր բոլորել կյանքի 70 տարին:

Շչորս Դավթյան, Մարտին Ջիլֆիդանյան, «Գորիս. ականավոր գործիչներ, նշանավոր դեմքեր, արժանավոր զավակներ»

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԵՂԾՈՒ
ԱՄՍԱԳԻՐ. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ.
ՀԱՍՑԷ՝ բ.ԱՊՈՒՇ, ԵՐԵՎԱՆ-0010, 20/32
ՀԵՌԱԽՕՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 00 47 = (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru
Այսօրյայ երկիր



ՇՄԱՎՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Կուսակցական, պետական ականավոր գործիչ: Ծնվել է 1903թ. հունվարի 2(15)-ին Սինքենդ գյուղում (Լաչին-Քաշաթաղի շրջան): 1905թ. օգոստոսի 19-22-ին Սինքենդում հայերի զանգվածային կոտորածից հետո Առուշայանների ընտանիքը ապաստան է գտել Գորիսում, ապա նորից վերադարձել ծննդավայր: Այստեղ էլ Շ.Առուշայանը սովորել է տեղի երկդասյան, ապա Գորիսի քառամյա բարձր տարրական դպրոցում: Կատարել է կոմերիտական եւ պետական աշխատանքներ: 1935թ. ավարտել է Մոսկվայի Սվերդլովի անվան բարձրագույն գյուղատնտեսական կոմունիստական համալսարանը: Այնուհետեւ աշխատել է զանազան դեկավար պաշտոններում, իսկ 1937-38թթ. եղել է ՀԽՍՀ հողագործության ժողկոմ: 1938թ. ընտրվել է կուսակցության Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար եւ աշխատել մինչեւ 1946թ.: 1946-47թթ. Շ.Առուշայանը եղել է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար, 1948-53-ին՝ հանրապետության ավտոտրանսպորտի նախարար, 1953-54-ին՝ ՀԿԿ Երեւանի քաղկոմի առաջին քարտուղար:

1954թ. Շ.Առուշայանը ընտրվել է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության գախագահ եւ, ըստ ԽՍՀՄ Սահմանադրության՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ: Այդ պաշտոնում նա մնացել է մինչեւ 1963թ., որից հետո անցել է կենսաթոշակի: Եղել է ԽՍՀՄ 1-ին, 2-րդ, 4-6-րդ գումարումների եւ ՀԽՍՀ 2-6-րդ գումարումների Գերագույն խորհուրդների պատգամավոր: Ընտրվել է ՀԿԿ Կենտկոմի կազմում, 1937-47թթ. եւ 1953-64թթ. եղել է ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի անդամ:

Շ.Առուշայանն իր ամբողջ կյանքը նվիրաբերել է հարաքաշ ժողովրդին, հավատարիմ մնացել իր գաղափարներին, եղել ղեկավար աշխատողի փայլուն օրինակ:

Մահացել է 1982թ. հունվարի 25-ին Երեւանում:

Շչորս Դավթյան, Մարտին Ջիլֆիդանյան, «Գորիս. ականավոր գործիչներ, նշանավոր դեմքեր, արժանավոր զավակներ»

ՄԵԼԻՔԱԿԱՆ ՏՆԵՐ

Օրբելյաններ

Տասներեքերորդ դարասկզբին Սյունիքում սկսում է բարձրանալ Օրբելյան իշխանական տոհմը: Դա տեղի է ունենում այն բանից հետո, երբ վրաց արքունիքում բարձրագույն պաշտոններ զբաղեցնող Սարգիս Զաքարյան Երկայնաբազուկի որդիներ Զաքարե եւ Իվանե իշխանները ջախջախում են Հայաստանում, այդ թվում՝ Սյունիքում սփռված սելջուկներին եւ այդ հաղթության գործում մեծ ավանդ ներդրած, իրենց զինակից Լիպարիտ Օրբելյանին հանձնում Սյունիքի կառավարումը: Այնուհետեւ նրա թոռ Լիպարիտը իշխում է 1221-ից մինչեւ 1260 թվականը, որից հետո նրա որդի Սմբատ Օրբելյանը կարողանում է հմուտ դիվանագիտական քայլերով Սյունիքում ինքնավարություն ձեռք բերել՝ Ոսկե հորդայի մայրաքաղաքում հանդիպելով մոնղոլական Մանգու խանին եւ շահելով նրա վստահությունը: Այդ հարաբերությունները շարունակվում են նաեւ հետագա տարիներին: Սմբատը կրում էր նույնիսկ «Արքա» տիտղոսը:

Սմբատ Օրբելյանը մահացել է 1273թ., եւ նրանից հետո Սյունիքի իշխանապետ է հռչակվել նրա եղբայր Տարսայիճ Օրբելյանը, որը մինչ այդ Ծղուկ-Սիսիան գավառի Որոտան եճգավառի կուսակալն էր, կառուցել էր Դարբաս գյուղի Սբ.Աստվածածին եկեղեցին (այժմ չպահպանված), հիմնվել վերակառուցել Որոտնավանքը՝ այդ շինությունների պատերին թողնելով ընդարձակ արձանագրություններ:

Նա սերտ կապեր էր հաստատել նաեւ տեղի բնիկ իշխանական տներից մեկի՝ Որոտշաների հետ եւ Իվանե Որոտշաիի նստավայր հաստատել Վաղատնի գյուղը, որտեղ էլ ծնվել է Իվանեի որդի, հետագայում հռչակավոր փիլիսոփա, կրոնական գործիչ ու րաբունապետ Հովհան Որոտնեցին:

Տարսայիճ Օրբելյանն ամուսնացել էր Սյունիքի օտար կառավարողներից մեկի՝ Սադուհի դստեր Արուզ խաթունի հետ, որը հետո քրիստոնեություն էր ընդունել: Այդ ամուսնությունից ծնվել են երեք արու զավակներ Ելիկում (որ փոխարինեց հորը), Ստեփանոս (նշանավոր պատմիչը եւ Սյունյաց մետրոպոլիտը, «Պատմութիւն նահանգի Սիսական» երկի հեղինակը) եւ Փախրադուլա (վաղ հասակում վախճանված): Սակայն, կնոջ կենդանության օրոք Տարսայիճը երկրորդ անգամ ամուսնանում է Արցախ-Խաչենի նահատակված իշխան Հասան Ջալալ Դուլայի դստեր՝ Սինա խաթունի հետ: Այս ամուսնությունից ծնված աղջիկներից մեկին նա ամուսնացնում է վրաց թագավորի եղբոր՝ Մանվելի, իսկ մյուսին՝ Գրիգոր Բ Խաչենցու հետ: Ըստ որում, պատմաբանները նկատում են, որ այդ ամուսնությունները հետապնդում էին նաեւ քաղաքական նպատակներ եւ ամենից առաջ՝ Սյունյաց իշխանության հետագա ամրապնդման հեռանկարներ:

Տարսայիճը մահացել է 1290թ., թաղված է Նորավանքի (Վայք) Օրբելյանների տոհմական գերեզմանատանը, այնտեղ է թաղված նաեւ Սինա խաթունը, իսկ Արուզ խաթունը թաղված է Տաթեւի վանքի բակում, որտեղ նրա որդու Ստեփանոսի մետրոպոլիտական աթոռն էր:

Տարսայիհին փոխարինել է ավագ որդի Ելիկումը, որը մահացել է 1300թ.: Իսկ մինչ այդ մահացել էին նրա մայրը Արուզ խաթունը (1276թ.) եւ հոր երկրորդ կինը՝ Սինա խաթունը (1298թ.): Ելիկումը մեծ աշխատանք էր տարել ամրապնդելու իր նախորդների ավանդությունները, ծավալել տնտեսական ու շինարարական մեծ գործունեություն:

Այնուհետեւ Օրբելյանների իշխանական տունը ղեկավարել է Ելիկումի որդի Բուրթել Մեծը՝ մինչեւ 1346թ.: Նա Մեծ անունը կրել է եւ իր նախորդ անվանակիցներից տարբերվելու, եւ իր ծավալած ներքին ու արտաքին բարեփոխումների համար: Հենց Բուրթել Մեծն է կառուցել Նորավանքի երկհարկ դամբարանեկեղեցին՝ հրաշալի ռոտոնդայով, ստորին եւ վերին եկեղեցիների բարավորներին թողնելով հայ բարձրաքանդակային արվեստի հիանալի գործեր: Հենց նա է հովանավորել ժամանակի ականավոր ճարտարապետներ Սիրանեսին եւ Մոմիկին, որպեսզի ստեղծեն այնպիսի հրաշալի կոթողներ, ինչպիսիք Նորավանքի համալիրն ու Արեգնի Սբ.Աստվածածին (1312թ.) եկեղեցին են, ինչպես նաեւ խաչքարային արվեստի ասեղնագործ մնուշներ:

Բուրթել Մեծից հետո Օրբելյանների իշխանությունը նկատելիորեն թուլանում է: Ստեղծված վիճակը դառնում է ճակատագրական, երբ 1387թ. Լենկ-Թեմուրի հրոսակները, գրավելով Տաթեւ եւ Որոտնաբերդը, փաստորեն վերջ են տալիս նրանց իշխանությանը: Հետագա տարիներին Սյունիք են ներխուժում նաեւ միջհնասիական կարակոյունլուս վաչկատուն ցեղերը: Օրբելյանները փորձում են դիվանագիտական քայլերով, նույնիսկ առերես մուսուլմանություն ընդունելու միջոցով պահպանել գոնե կիսանկախ իշխանությունը: Սակայն, երբ 1405թ. Լենկ-Թեմուրը մահանում է, եւ Հայաստանն անցնում է կարակոյունլու ցեղի առաջնորդ Յուսուֆի, իսկ հետո նրա որդի Իսկանդարի ձեռքը, ապա արդեն իսկ հյուծված Սյունիքը դառնում է վերջիններիս եւ Թեմուրյան Շահռուխի հակամարտությունների թատերաբեմ: եվ քանի որ Օրբելյանների համակրանքը դեպի Իսկանդարն էր, ուստի խուսափելով Շահռուխի հետապնդումներից Բեշքենն Օրբելյանը Սյունիքից վեց հազար ընտանիքի հետ 1437թ. գաղթում է Լոռի, որը Վրաստանին էր միացել 1431թ., իսկ վրաց Ալեքսանդր Ա թագավորն էլ Բեշքենի փեսան էր:

1438թ., սակայն, Բեշքեն Օրբելյանին Վրաստանում թուլավորում են, եւ գաղթականների վիճակն սկսում է ավելի վատթարանալ: 1447թ. Շահռուխը մահանում է: Բեշքենի որդի Ռոստոմը, որ ծառայության էր մտել Իսկանդարի մոտ, արժանացել էմիրի տիտղոսի, դարձել արքունի խորհրդական (գուցե մուսուլմանություն ընդունել), Սյունիքում մի քանի տասնյակ գյուղեր, կալվածքներ, հողեր, այգիներ է գնում եւ հավիտենական կտակով (վակֆ կամ վախմ) նվիրում Տաթեւի վանքին՝ ի դեմս Լոռուց վերադարձած Տաթեւի հոգեւոր առաջնորդ Շնավոր բարբանեպետ Անգեղակոթգու: Այս երեւույթը, սակայն, ավելի խորհիմաստ ուներ: Դեռեւս 1431թ. Ռոստոմն Իսկանդարից ընդարձակ տարածքներ էր ստացել Արագածոտն, Նիգ, Կոտայք եւ այլ գավառներում, որոնք վակֆ էր արել էջմիածնի մայր եկեղեցուն: Ըստ երեւույթին, Ռոստոմը նպատակ ուներ Այրարատում եւ Սյունիքում ստեղծել ինքնավար իշխանություններ Օրբելյանների հետագայում մելիքական տիտղոս են ունեցել, ապացուցում է նաեւ այն փաստը, որ մինչեւ 1920թ. Գորիսում ապրում էին բեկ տիտղոսով Օրբելյաններ, որոնցից մեկի՝ Պավլի բեկ Օրբելյանի մասին պատմում է Ա.Բակունցը իր «Կյորես» վավերագրությունում: Իսկ հայտնի է, որ մելիք տիտղոսը կրում էր տոհմից միայն մեկը եւ նրա ժառանգներից նույնպես մեկը: Մյուսները միայն բեկ կարող էին հորջորջվել:

Բարեբախտաբար, Նորավանքում Տարսայիճ իշխանի կառուցած Սմբատի դամբարանում պահպանվել են Օրբելյանների տոհմի մի շարք իշխանների եւ նրանց իշխանագուն տիկնանց գերեզմանները ուշագրավ ու բանաստեղծական տապանագրերով, ինչպես նաեւ դամբարանի որմերին մնացած արձանագրություններով: Օրինակ՝

Ես, Տարսաիճ իշխանաց իշխան շինեցի զդամբարանս յաղագս եղբաւր իմո Սմպատ արքաիմ. վասն որո աղաչեմ յիշել: Ի թվ.: ՉԻԳ (1275)

ՍՄՊԱՏ ԱՐՔԱԻՆ Է ՏԱՊԱՆՍՍ. ՅԻՇԵՑԷՔ: ՉԻԳ (1273)

Թվիս: ՉԽԹ (1300) Զգեղեցկատիպ էլիկում, որդի Մեծի Տարսաիճին, որ առոյծաւլէն խրոխտ մնջէր ընդդեմ այլասեռ գնդին: Ալաչեմ յիշել յաղաւթս:

Ի թվ: ՉԽԵ: (1298) Թագաւգարմ արքայուհիմ է Սիմայ խաթունն, դուստր Մեծ կողմնակալին Աղուանից Ցալալին:

Բոլոր դեպքերում պետք է հպարտանալ եւ շնորհակալ լինել ճակատագրին, որ Օրբելյան տոհմի շառավիղներն այժմ էլ հարատեւում են...

Շչորս Դավթյան, Մարտին Ջիլֆիդանյան, «Գորիս. ականավոր գործիչներ, նշանավոր դեմքեր, արժանավոր զավակներ»

Լուսանկարը Ս. Հարությունյանի

Օրբելյանների զինանշանը Գորիսի Սինդարա ձորի Սբ Տրդատ մատուռի հարավային պատին (2005թ.): Էսքիզը՝ Սեւադա Զաքարյանի, քանդակագործ՝ Վարդան Խուրշուդյան:

ՀԵՂԱՓԱՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ «ՍՅՈՒՆԻՔԻ ՍՏԵՎԱՐԸ»
ԱՄՍԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԾԱԽՈՐԴՈՒՆ
Գլխավոր խմբագիր՝ Ավետիս Ավետիսյան
Հեռախոս՝ (0285) 5 25 63 • (091) 45 00 47 (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ

№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ԳԵՐԴԱՍՏԱՆՆԵՐ

Յոլյաններ

Յոլյանների փոխմը հայտնի է ինչպես Գորիսում, Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս: Նա ճանաչված գիտնականների, զինվորականների, բժիշկների, մանկավարժների փոխմ է: Ներկայացնում ենք նրանցից երկուսին:

Լուսանկարը Ս. Հովհաննիսյանի

Յոլյանների տունը Գորիսում (Օրբելյանների 14):

ՀԱՄՈ ՅՈԼՅԱՆ

Պետական եւ ռազմական գործիչ, ինժեներահրետանային ծառայության գեներալ-մայոր (1944), Սոցիալիստական աշխատանքի հերոս (1943), ԽՍՀՄ պետական մրցանակի քառակի դափնեկիր:

Ծնվել է 1903թ. հուլվարի 10-ին Գորիսում: Սովորել է ծննդավայրի դպրոցում, ավարտել Շուշիի ռեալական ուսումնարանը:

1923-26թթ. սովորել է Ադրբեջանի պոլիտեխնիկական ինստիտուտում, 1929-ին ավարտել է Ազնեֆետի մետաղների սառը մշակման եռամյա դասընթացը (Բաքու): 1930-ից եղել է Բաքվի Կիրովի անվան գործարանի տնօրենը եւ «Նեվլոոմաշ» տրեստի դիրեկտորը, 1936թ. ստաժավորվել է ԱՄՆ-ում: 1937-40թթ. եղել է Մոսկվայի 32-րդ գործարանի տեխնիկական տնօրեն, 1940-ից՝ 92-րդ հրետանային գործարանի (ք. Գորկի) տնօրեն: Հայրենական պատերազմի ընթացքում գործարանը թողարկել է 100 հազար տարբեր տիպի հրանոթներ:

Այդ գործարանը չորս անգամ պարգեւատրվել է Լենինի շքանշանով: Գործարանն առաջինն էր հրետանային ձեռնարկություններից, որ հրանոթների արտադրությունն իրականացվում էր հոսքային համակարգով: Պատերազմի ժամանակ հրետանային մոտ 100 գնդեր սպառազինվել են միայն 92-րդ գործարանի արտադրած հրանոթներով:

Հետպատերազմյան տարիներին մասնակցել է նոր տիպի զենքերի, հատկապես հեռահար զենիթային, հրթիռային համակիրների, այդ թվում՝ աշխարհում առաջին հակաօդային պաշտպանության C-25 «Բերկուտ» բազմալիքային համակիրի ստեղծման գործին: 1952թ. նշանակվել է ԽՍՀՄ սպառազինության նախարարի տեղակալ: 1955թ. զորացրվել է, մեղադրվել է երկրի նախկին ղեկավարության հետ ունեցած կապերի մեջ, նշանակվել մերձմոսկովյան գործարաններից մեկում գլխավոր մեխանիկ:

Երեք անգամ կաթված ստանալուց հետո մահացել է 1965թ. հուլվարի 15-ին Մոսկվայում: Թաղված է Նովոդեւիչիե գերեզմանատանը:

ԷԴՈՒԱՐԴ ՅՈԼՅԱՆ

ԽՍՀՄ վաստակավոր փորձարկող օդաչու (1967), Խորհրդային Միության հերոս (1971), գեներալ-մայոր:

Ծնվել է 1926թ. օգոստոսի 20-ին Բաքվում: Սերում է Յոլյանների նշանավոր տոհմից:

Հայոր աշխատել է Բաքվում, Ղազախում, Նորիլսկում, Սվերդլովսկում:

Էդուարդն ավարտել է ռազմաօդային ուժերի Սվերդլովսկի հատուկ դպրոցը եւ Բորիսոգլեբսկի ռազմաօդային ուսումնարանը (1948), որտեղ էլ մնացել է որպես օդաչու-հրահանգիչ: 1960թ. ավարտել է Մոսկվայի ավիացիոն ինստիտուտը՝ մինչ այդ ստանալով առաջին կարգի փորձարկող օդաչուի կոչում: Նույն տարում աշխատանքի է ընդունվել Ա.Տուպոլեւի փորձնական կոնստրուկտորական բյուրոյում, 1973-ից՝ ԿԲ-ի օդաչուական ծառայության պետ:

Առաջինն է փորձարկել ՏՈ-104, ՏՈ-124, ՏՈ-134, ՏՈ-154 եւ գերձայնային ՏՈ-144 ինքնաթիռները: Փարիզում ՏՈ-144 ինքնաթիռի վթարի ենթարկվելուց հետո նրա սերիական արտադրությունը դադարեցվել է (թողարկվել է ընդամենը 17 ինքնաթիռ), ուստի Յոլյանը հետագայում տեղափոխվել է Կրտեմ Միկոյանի ԿԲ-ն: Այժմ ապրում է Դոնի Ռոստովում:

Կեսգիշերային զրույց Ստալինի հետ

Սկսվեց Հայրենական մեծ պատերազմը՝ խորհրդային ժողովրդի ամենամեծ փորձության ժամանակաշրջանը: Դա փորձության մեծ քննաշրջան էր նաեւ Համո Յոլյանի համար: Պետք էր տեխնիկապես վերազինել գործարանը, թողարկել ավելի շատ՝ թշնամու տեխնիկայի որակապես գերազանցող արտադրանք: Ծավալվեց հսկա ու տքնաջան աշխատանք:

Ինչպես վկայում են Հայրենական մեծ պատերազմի տարեգրության փաստերը, 1943-ի ամռանը Կուրսկի աղեղի յուրաքանչյուր կիլոմետրի վրա հաշվվում է 100-150 տանկ: Դրանք ֆաշիստական «Վագր» եւ «Հովազ» տիպի հզոր մեքենաներ էին, որոնց զրահի հաստությունը հասնում էր 100-110 միլիմետրի: Այդ տանկերին կանգնեցնելու համար անհրաժեշտ էին ոչ միայն արագաձիգ, այլ նաեւ՝ նման զրահներ ճեղքող ականներով հրանոթներ:

Գիշերվա կեսին նրան զանգահարում է Ստալինը եւ պահանջում անցնել իր մոտ: Յոլյանը շտապում է Գերագույն գլխավոր հրամանատարի կրեմլյան աշխատասենյակը՝ լավ իմանալով, որ նա այդ ժամերին դեռ արթուն է, դեռ պլաններ է մշակում թշնամու հեղեղն ամեն կերպ կասեցնելու համար:

Յոլյանը մեր է մտնում, զգաստ կանգնում դռան մոտ: Ստալինը, ափը կիսով չափ բաճկոնի արանքը խրած, նստ ու առաջ է քայլում երկարաձիգ փռված գորգի վրա, փստփստացնում ծխամորճը՝ կարծես չկնատելով մեր մտնողին: Նա մտագբաղ է, խոժոռ, դեմքին հագիվ նշմարելի տագնապ կա: Ստալինը հանվարին. «Մեր զորքերն արդեն ճեղքել էին բլոկադան եւ հանառ մարտեր էին մղում Սինյավինյան նշանավոր բարձունքների մոտ ճեղքումն ընդլայնելու ուղղությամբ: 267-րդ կորպուսային հրետագնդի մարտկոցներից մեկի կրակադիրքերը գտնվում էին ճահճուտ տեղանքում, քողարկված էին խիտ թփուտներով: Առջեւից տանկի մոտորի հոնդյուն լսվեց: Մարտկոցի ավագը, չկասկածելով, որ տանկը մերն է, եւ վախեցնելով, որ այն կարող է թրթուրների տակ տրորել թնդանոթը, որոշեց նախագգուշացնել տանկիստին: Բայց բարձրաձայով տեսավ, որ ուղիղ հրանոթի վրա է գալիս մի վիթխարի տանկ աշտարակի վրա խաչ... Կրակ բացվեց ընդառաջ: Իսուսն մետր հեռավորությունից: Արկը տառացիորեն թոցրեց ճեղքված աշտարակը, իսկ նրա բեկորներն այնպիսի ուժով հարվածեցին ետեւից եկող տանկի զրահին, որ նրա անձնակազմը, չհասցնելով անգամ անջատել շարժիչը, փախուստի դիմեց: Դրանից հետո մեր մարտիկները շարքից հանեցին թշնամու բոլոր մեքենաները»:

Սա պատերազմական մի փոքրիկ դրվագ է, սակայն ցույց է տալիս, թե որքան հզոր էին հայրենական արտադրության հրանոթները:

Պատերազմի բոլոր տարիների ընթացքում Յոլյանի ղեկավարած գործարանի կոլեկտիվը երեսուներկու ամիս անընդմեջ իր ձեռքում է պահել պաշտպանության պետական կոմիտեի եւ ՍՍԿԿ Կենտրոնական Կոմիտեի փոխանցիկ դրոշը, զինված ուժերին տրամադրել տարբեր տրամաչափի հարյուր հազար հրանոթ: Իսկ սպառազինության ժողկոմ, սոցիալիստական աշխատանքի հերոս, հետագայում ԽՍՀՄ զինված ուժերի նախարար, Խորհրդային Միության մարշալ Դ.Ուստինովը, պաշտպանության պետական կոմիտեին տված իր զեկուցումներից մեկում նշելով, որ պատերազմի երկու տարում հրետանային բոլոր ձեռնարկությունները բոլոր տեսակի հրանոթների տարեկան արտադրությունը հասցրել են 130 հազար փողի, հատկապես ընդգծել է Սոցիալիստական աշխատանքի հերոսներ Հ.Յոլյանի, Ա.Բուխովկինու գլխավորած դ92 եւ 172, ինչպես նաեւ դ74 (տնօրեն Մ.Իվանով) գործարանների լավագույն աշխատանքը:

Իր մի հոդվածում, որը «Միշտ գերազանցել թշնամու տեխնիկային» խորագրով Սեծ Հոկտեմբերի 27-րդ տարեդարձի առթիվ տպագրվել է «Քեզ՝ ռազմաճակատ» թերթի հավելվածում, Յոլյանը գրել է. «Ասում են, որ թվերն ու փաստերը համոզիչ են ամեն մի խոսքից:

Մեր Ստալինի անվան հրետանային գործարանի կոլեկտիվի աշխատանքը բնութագրում են հետեւյալ փաստերը. հրետանիների թողարկումը պատերազմի անցած ժամանակաընթացքում 7հոկտեմբերի 27-րդ տարեդարձի առթիվ, ավելացել է 19 անգամ»:

Այնուհետեւ նա նույն հոդվածում գրում է, որ այժմ ավելի հզոր, ավելի ժամանակակից ու կատարյալ հրանոթներ են արտադրում, քան պատերազմից առաջ:

Կուսակցությունն ու խորհրդային կառավարությունը բարձր են գնահատել Համո Յոլյանի ծառայությունները հայրենիքի հանդեպ: Պատերազմի ավարտից մեկ տարի առաջ նրան շնորհվեց գեներալ-մայորի կոչում: Համո Յոլյանն արժանացել է սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչման, պարգեւատրվել Լենինի չորս, Աշխատանքային կարմիր դրոշի երկու, Սուվորովի եւ Հայրենական պատերազմի առաջին աստիճանների շքանշաններով, բազմաթիվ մեդալներով: Նա պետական մրցանակի քառակի դափնեկիր է:

1951 թվականի հունիսին Ի.Ստալինի եւ Մ.Կալինինի ստորագրությամբ նրան հանձնվեց ԽՍՀՄ Սինիստրների խորհրդի դ 1440 վկայականը, որով Համո Յոլյանը նշանակվեց ԽՍՀՄ սպառազինության նախարարի տեղակալ:

Զանգեզուրի ծոցից ծնված անվեհեր, կյանքը ժողովրդին ու հայրենիքին նվիրաբերած մարդը ճակատամարտեր չի գլխավորել, չի վարել զորամիավորումների հաղթարշավներ, սակայն շատ մեծ են խորհրդային բանակին զինելու ուղղությամբ թիկունքում կատարած նրա հերոսական աշխատանքները:

Մոսկվա: Նովոդեւիչիե գերեզմանատուն: Այստեղ ննջում են հայրենիքի համար իրենց կյանքը նվիրաբերած շատ մեծեր՝ գիտության, արվեստի, գրականության ներկայացուցիչներ, զորահրամանատարներ: Այստեղ 1965-ից իր հավերժական տունն է հիմնել նաեւ մեր անմահ հայրենակից Համո Յոլյանը, որն ապրեց ընդամենը վաթսունվեցներկու տարի:

Սուրեն Բակունցի նամակը Համո Յոլյանին

Քարտուղարուհին օրվա փոստը դրեց տնօրենի սեղանին եւ լուռ դուրս գնաց: Իր սովորության համաձայն, Յոլյանը մի կողմ դրեց տարբեր լրագրերի կույտը, վերցրեց պաշտոնական ծրարները, որ քարտուղարուհին նախապես կանոնավոր շարուն էր իրար վրա, եւ պատրաստվեց ծանոթանալ դրանց: Բայց գմուտսե կնիքով փակված գերատեսչությունների ծրարների արանքում նրա ուշադրությունը գրավեց հասարակ մի ծրար: Հետաքրքրությամբ գրեթե հափշտակեց այն, կարդաց հետադարձ հասցեն, եւ հոգեած աչքերը հրծվաքնից փայլեցին ու կարծես լայնացան: Ծննդավայրից էր Գորիսից:

Ամմիջապես պատռեց ծրարը, բացեց քառածալ թուղթը: Մեսրոպատառ նամակ էր: Հուզվեց, հոգին տակնուվրա եղավ, ինչպես փոթորկահույզ ծովի ալիքներում փշրվող անգոր մակույկ:

Կարդաց մի քիչ անփույթ, դպրոցական ձեռագրով, կարծես անվստահ գրված տողերը.

«Մեր Սեղրակ ամու որդի ընկեր Յոլյան:

Լսել ենք, գիտենք, որ մեծ գործարանի ղեկավար եք: Հերոսի կոչման եք արժանացել: Ուրախ ենք: Թող մի ոսկի աստղը երկուսը դառնա, երկուսը՝ երեք: Հպարտ ենք մեր կուլտուզի, մեր Գորիսի ողջ ժողովրդով:

Սիրելի հայրենակից: Ես մի խնդիր ունեմ…

Մեր «Վանձարդ» կոլխոզը, որը գտնվում է շրջկենտրոնում, դժվար օրեր է ապրում: Դաշտերը սարալանջերում են, թեք, քարքարոտ, անջուր… Ստոմուց է կախված մեր բերքի բախտը: Կուզի՝ ժամանակին անձրեւ կտա… Բայց գուցե եւ սայլի անիվի օղ ճա չունի… Դու դարձիր մեր Ստվանձը, մեր ապավենը: Եթե հնարավոր է, մեզ համար ուղարկիր մի քանի գութան, մի քանի անվաղ: Երախտապարտ կլինենք եւ կձգտենք շատ հաց արտադրել ժողովրդի ֆրոնտի համար…

Խորին հարգանքներով՝ Սուրեն Բակունց»:

Նա չէր ճանաչում նամակագրին, բայց խոր մի հարազատություն զգաց նրա նկատմամբ: Հեռվից հեռու գտել էր իր հայրենակցին, հիշել Սեղրեգ դարձած Սեղրակ ամու տղային, եւ ուզածն ինչ է գութանի խոփ ու սայլի մետաղյա մասեր, որ հերկի լեռների քարքարոտ հողերը, ցորեն ցանի, ապա, երբ հասունանա, հնձի եւ բերի տուն:

– Սա էլ պակաս հայրենասիրություն չէ, – ինքն իրեն խորհեց Համո Սեղեգյիշն ու հանկարծ խոժոռվեց, չգիտես ինչու՝ հիշելով իր մասին գրված այն կեղծիքները, որոնք չար ձեռքերով գրվել եւ իր հարազատ եզերքից ուղարկվել էին Կենտկոմի հասցեով:

Նա սեղմեց զանգի կոճակը: Քարտուղարուհին ներս մտավ եւ կանգնեց դռների մոտ սպասողական հայացքը հառելով դիրեկտորին:

– Եթե հարցնեն, ես այստեղ չեմ, – հանձնարարեց Յոլյանը եւ հետո ժպտալով ավելացրեց, – նայած, թե ով կհարցնի եւ ինչ գործով... ես մյուս սենյակում կլինեմ...

Վերցնելով նամակը՝ նա գնաց հարեւան սենյակը, կախեց ուսերին նետված բաճկոնը եւ, մեջքի վրա պառկելով բազմոցին, նորից աչքի անցկացրեց մեսրոպատառ տողերը: Հետո փոքրիկ ծրարը նա դրեց կրծքի վրա, եւ նրա շեղ կտրվածքից անվերջանալի ցերմություն ասես հորդեց սրտի մեջ՝ նրա խորքում բռնկելով հավերժ չմարող մի հրդեհ: Համո Սեղեգյիշը կնոջ եւ իրեն հանդիպող կամ գործարանում աշխատող բոլոր հայերի հետ խոսում էր մայրենի լեզվով, բայց արդեն քանի տարի հայերեն ոչինչ չէր կարդացել, նույնիսկ նամակ: Եվ այդ գորշավուն օրարում ամփոփված ջերմ, ամմիջական ու անկեղծ բառերը նրա դեմ բացեցին իր համար ամենամեծ աշխարհի՝ հայրենի եզերքի հեքիաթային պատկերները: Նա ճախրեց այդ լեռնոտ, քարոտ, անտառոտ, անձավոտ պատկերների գրկում, որտեղ մնացել էր իր անդարձ մանկությունը: Նրա կարոտը ձգվեց-հասավ Դրնգաձի, Ղաթրիճի, Սահիշկա ձորերը, որի կտրվածքներում անցել են պատանեկան միամիտ խենթությունները, փարվեց խճապատ Լաստ սարի լանջին, բարձրացավ Մեղրաքերծի գագաթը, որի ճեղքերից, թեպետ ահաբեկված վայրի մեղուներից իրենք սեւ մեղր էին թոցնում, խճճված Սուսդարի անտառի ճեղվածքներում, որտեղից ցպխ էին կրում ընկերներով... Սակայն այդ անհոգ, երբեմն անմիտ խաղերի նմանվող պոռթկումները երկար չչարուճակվեցին իր սերնդի համար, որովհետեւ շուտ մարեց իր տարեկիցների հրմվանքի փարոսը, իրենք ստիպված եղան գրեթե մանկական տարիքում լրջորեն մտահոգվել, նույնիսկ կռվել, որ ապագա կյանքի բարդ հորձանուտում չփշրվեր, չխորտակվեր ուրիշ երեխաների երջանկության նավակը:

Հիմա ո՞ւր են իմ մանկության կածանները, խճախեղդ են ու խոտածա՞ծկ, որտե՞ղ են այդ կածանները տրորած իմ ընկերները կռվո՞ւմ, թե՞ թիկունքում են, ապրո՞ւմ են, թե՞ ընկել են մարտում...

Նա մեջքի վրա պառկած հիշում էր, հիշո՞ւմ, եւ սիրտը գարնան արեւի ծգտող երամի նման թռչում էր դեպի լեռները հայրենի:

– Պատերազմն ավարտվի՝ անպայման կգնամ... Իսկ մերոնք ի՞նչ են անում հիմա, ո՞նց են ապրում՝ Ղազարը, Լեւոնը, Տիգրանը, Յուլուց տոհմի մեծ ու փոքրը...

Մտքերը ճախրեցին հոր գիրկը: Խե՞ղճ հայր: Կնոջ մահից հետո նա չամուսնացավ, պանդխտի նման դեգերեց քաղաքից քաղաք, սկզբում գնաց Թովլուզ ադրբեջանական փոքրիկ շրջկենտրոնը, հետո եկավ հայոց արդյունաբերական քաղաք Ալավերդի, աշխատեց պղնձահանքային կոմբինատում եւ ապրեց մեծ աղջկա՝ Լիզայի մոտ: Լուրերից պարզվում է, որ նրան նեղել են հայրենի եզերքում, որից հետո Սեղրակը լքել է Գորիսը՝ պետությանը հանձնելով իր ու եղբոր՝ Գալուստի երեք շենքերը: Դա պատահել է այն ժամանակ, երբ սկսել են քանդել Ռուսաց եկեղեցին, եւ Սեղրակը, իր ընկեր Վաճերի հետ մոտենալով, ոժգոհությամբ վրա է տվել.

– Ա՜յ մարդիկ, էս Վաճերի փողերն այրեցիք, ասելով, թե դա Նիկոլայ ցարինն է... Բա եկեղեցին ինչո՞ւ եք քանդում, դա էլ հո ցարինը չէ՞...

– Եկեղեցու քարը տանում ենք ԳԷՍ-ի համար, – աղմուկի մեջ բղավել է մեկը, – ԳԷՍ սարքենք, լույս ստանանք:

– Մեղա՞ քեզ, Աստված, – խաչակնքել է Սեղրակը, – էս քարաշատ երկրում քար չկա՞, որ արվեստի նմուշ եք քանդում:

Այդ ժամանակ մոտեցել է մի պաշտոնյա եւ սաստող տոնով, հեգնանքով ֆշշացրել.

– Ի՞նչ ես դուրս տալիս, հենա քո շենքերն էլ կքանդենք...

– Չեզանից ամեն բան կսպասվի, – նրա երեսին շպրտել է Սեղրակը եւ հեռացել:

Այդ դեպքից հետո նրան շատ տարաբերին: Սեղրակը օրինական կարգով շենքերը հանձնեց պետությանն ու լքեց լեռնաշխարհը:

Տառապանք ու չարչարանք տեսած, օջախից զրկված հայրը, սակայն, միշտ բարձր էր պահում ոգու կորովը, նամակներում գրում էր, որ իրենք լավ են, ողջ-առողջ...

– Միայն ինքը լավ մնա, քեզ հեռու պահի ցրտից ու վտանգից, – խորհուրդ է տալիս հայրը:

Իսկ ո՞վ էր նամակագիրը: Գուցե իր պատանեկության տարիների ընկե՞ր է, որին չի կարողանում հիշել, գուցե բոլորովին երիտասարդ է եւ նո՞ր է տնտեսություն ղեկավարում եւ օգնության կարիք է զգում, գուցե... Սա ոչ մի կերպ չկարողացավ պատկերացնել Սուրեն Բակունցին, բայց սրտում ջերմություն կար այդ մարդու նկատմամբ...

էջը պակրասվել է ըստ Մարգին Զիլֆուղարյանի «Պրոֆեսոր Սուրեն Յոլյան» գրքի

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ
ՀԵՂԱՓԱՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ «ՍՅՈՒՆԻՔԻ ՍՏԵՎԱՐԸ»
ԱՄՍԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԾԱԽՈՐԴՈՒՆ
Գլխավոր խմբագիր՝ Ավետիս Ավետիսյան
Հեռախոս՝ (0285) 5 25 63 • (091) 45 00 47 (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru

ԳԵՐԴԱՍՏԱՆՆԵՐ

Մալինցյաններ

Գերդաստանի նշանավոր ներկայացուցիչներից երկուսը

ԽԱՉԱՏՈՒՐ ՄԱԼԻՆՑՅԱՆ

Ծնվել է 1878թ. Գորիս քաղաքում: Պատանի տարիներից թուրքերի դեմ կռվել է շրջանի պաշտպանական դիրքերում: Այնուհետեւ զորակոչվել է ցարական բանակ, մասնակցել 1914-18թթ. Առաջին համաշխարհային պատերազմին: Եղել է պորուչիկ, արտակարգ խիզախության տեր մարդ, արժանացել Գեորգիեւյան խաչ շքանշանին: Զորավար Անդրանիկի հետ թուրքերի հետ մարտնչել է Բուլղարիայում: 1918թ. նույն թշնամուն հարված է հասցրել Արեւմտյան Հայաստանի մի շարք վայրերում: Կարուսում եղել է հայկական բանակային կորպուսի վաշտի հրամանատար: Վերադառնալով հայրենիք՝ 1919-21թթ. Անդրանիկի, այնուհետեւ Արսեն Շահմազյանի զորախմբերում կատաղի կռիվներ է մղել թուրքերի դեմ, եղել Տեղի ճակատի հրամանատարը, իր մեծ ներդրումն ունեցել Զանգեզուրն օտար նվաճողներից փրկելու գործում:

«Գորիսի հանրագիտարան», էջ 284

Հ.Գ. *Համարի նախապատրաստության ընթացքում ճամակագրական կապ հաստատեցինք Խաչատուր Մալինցյանի՝ Չեխիայում բնակվող Ծոռնուհու՝ Թամարայի հետ: Նա մասնավորապես տեղեկացրեց, որ Մալինցյանը հետապնդվել է բոլշեւիկների կողմից եւ, դրանից դրդված, 1921թ. փորձել է Արաքս գետով անցնել Պարսկաստան, սակայն գետանցի ժամանակ խորտակվել է: Երեք երեխա է ունեցել՝ երկու աղջիկ, մեկ տղա: Աղջիկները բնակության են տեղափոխվել Միջին Ասիա, բնակվել Սամարղանդում: Որդին ապրել է Երեւանում, բայց շուտ է մահացել: Իսկ Խաչատուրի կինը մահկանացուն կնքել է 1930-ին: Խ.Մալինցյանի տունը Գորիս գյուղում էր:*

ՂԱԶԱՐ ՄԱԼԻՆՑՅԱՆ

1918թ. օգոստոսից մինչեւ 1919թ. մարտ ամիս Ղազար Մալինցյանի Գորիսի Մաշտոցի 19 հասցեում գտնվող այս տանն է բնակվել Զորավար Անդրանիկը (սկզբում զորավարը բնակվում էր Միքայել Պարոնյանի տանը): Իսկ Անդրանիկի կիսանդրին տան բակում կանգնեցվել է 1989թ.: Հեղինակն է վաճառորդցի Արշակ Պետրոսյանը, ճարտարապետը՝ Սեւադա Զաքարյանը:

Լուսանկարը Ս. Հովհաննիսյանի

Ղազար Մալինցյանի տունը, Մաշտոցի 19:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽ ՍՓՅՈՒՌՔԻ ՄԱՄՈՒԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԳԱՌԵՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԳԱՌԵՆ Բ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇՐՋԱՆ, 2003Ջ
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

Ծագումով գորիսեցիները ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում

Սիմոնյան Հրաչիկ Ռուբենի, պատմաբան, ԳԱԱ ակադեմիկոս 1996 թվականից (1986-ից՝ ակադեմիայի թղթակից-անդամ), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Պետրոսյան Գարեգին Բախշիի, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 1944-1949թթ. ակադեմիայի նախագահության գիտական քարտուղար:

Բաղդասարյան Անդրանիկ Բախշիի, գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, աշխարհագրագետ-կլիմայագետ, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 1974-86թթ. ԳԱԱ երկրի մասին գիտական բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի տեղակալ:

Խուրշուդյան Լենդրոշ Արշակի, պատմաբան, ԳԱԱ ակադեմիկոս 1996 թվականից, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ղազարյան Վահան Հովսեփի, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ ակադեմիկոս 1974 թվականից:

Սիմոնյան Արամ Հրաչիկի, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ թղթակից-անդամ 2006 թվականից: Երեւանի պետական համալսարանի ռեկտոր:

Բակունց Սեւադա Ալեքսանդրի, բժիշկ-ֆիզիոլոգ, բժշկական գիտությունների դոկտոր, գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ 1968 թվականից:

Աբոյան Ռոբերտ Վարդգեսի, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս 1986 թվականից:

Բարսեղյան Խիկար Հակոբի, ԳԱԱ հիատարակչության տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

ՎԱՐԿԱԾ

Պատմահայրը՝ Գորիսի՞ց

Մովսես Խորենացին եզական գրական դեմք է մեր հին մատենագիրների մեջ: Նա տասնեւչորս դար շարունակ անընդհատ հետաքրքրություն է շահել հայ ժողովրդի եւ բանասիրության մեջ իր հայոց պատմությամբ, որ ծառայել է իբրեւ ուսման առարկա եւ իբրեւ ուսումնասիրության նյութ: Ավելի քան տասը դար այդ գրվածքը եղել է հայ ազգի միակ դասագիրքը իր հին անցյալի հետ ծանոթանալու համար. եղել է աղբյուր եւ օրինակ հետագա պատմիչների համար, որոնք նրանից քաղվածքներ են անում, ընդօրինակում են, հետեւում են նրա ստեղծած պատմագրության տիպին: Ամենաբարձր գովեստներով են հիշում նրա անունը՝ տիեզերահռչակյալ քերթող, պատմահայր, քերթողահայր: Նրան կոչել են հայ Հերոդոտոս, որ եւ, ինչպես Գուտշմիդն ասում է, հայերը, եթե փոքր-ինչ սնափառություն ունեն, իրավունք ունեն այսպես կոչելու նրան. նա արեւելյան ազգերի պատմական գրականության մեջ իր հնությամբ առաջիններից մեկն է Սուրբ գրքից հետո:

...Խորենացի բառը, որով կոչվում է Պատմահայրը, ցույց է տալիս, որ նա ծնված պետք է լինի Խորեն կամ Խորեան անունով մի տեղում: Այս անունով քաղաք կամ գյուղ հայտնի չէր մինչեւ վերջին ժամանակներս: Նա երբեմն կոչվում է նաեւ Տարոնացի. Տարոն գավառում եղել է Խորնի կամ Խորոն անունով մի գյուղ, բայց եթե Մովսեսը այստեղ ծնված լիներ, պետք է կոչվեր Խորենեցի կամ Խորանացի (ինչպես մի ժամանակ Վենետիկի Մխիթարյաններից ոմանք գրում էին): Ավելի հավանական է կարծել, թե նա ծնված է Սյունիքում, Հաբանդ գավառի Խորեա անունով փոքր գյուղում, որը հիշում է Ստեփանոս Օրբելյանը («Պատմություն», Թիֆլիս, եր. 517) տասներեքերորդ դարի վերջում: Օրբելյանի հիշած Խորեա ձեւը հինգերորդ դարում հնչում էր ավելի լիակատար ձեւով՝ Խորեան: Այս եզրակացությունը ուժ են տալիս մի քանի կողմնակի փաստեր, ինչպես Խորենացու լավ ծանոթ լինելը Սյունիքին, Երասխի հոսանքին, Երասխի ափերին մոտ եղած շեներին, Սյունյաց նահապետ Սիսակին մեծ գովեստներով հիշելը, հակակրությունը դեպի Սամիկոնյանները, որոնք Սյունյաց հակառակորդներ էին 6 դարի երկրորդ կեսում եւ այլն:

...Խորենացու ծնունդը դնելով 410թ. մոտ, այնուհետեւ եզրակացնում ենք, որ նա մանկության տարիներին սկզբնական կրթությունն ստացել է հենց Սյունիքում՝ Սուրբ Մեսրոպի հիմնած դպրոցում, ինչպես վկայում է Կորյունը: Այստեղ ուսանելով ավանդված տարրական գիտությունը... մոտ 427թ. ուղարկվում է Վաղարշապատ, որտեղ ուսուցանում էր ինքը՝ Սուրբ Մեսրոպը:

...Ենթադրվում է, որ նա լինի մեռած 490-ին:

ՍՏԵՓԱՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ
Հատված Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ներածությունից
10 հոկտեմբերի 1940թ.
Թբիլիսի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հայրենի փուն

Սկիզբը՝ էջ 1

Պատմագրության ավանդույթները (գորիսյան թեմայով) յուրովի շարունակեցին մեր օրերի պատմագիրները՝ Հրաչիկ Սիմոնյանը, Սերգեյ Հախվերդյանը, Գրիգոր Գրիգորյանը, Խիկար Բարսեղյանը, Արամ Սիմոնյանը, Մարտին Ձիլֆուդարյանը, նաեւ Էդիկ Զոհրաբյանը, Քրիստափոր Պետրոսյանը... Գորիսագիտության մեջ անգերազանցելի դեր խաղաց նշանավոր լեզվաբան Ալեքսանդր Մարգարյանը:

Այս ընթացքում նկատեցինք երիցս, որ խորհրդային էպոխայի հատկապես վերջին շրջանում, երբ մեր բոլոր դաշտամասերն անխտիր ենթարկվում էին մելիորացիայի, անդառնալիորեն կորցրինք պատմաշչակուբային բազմաթիվ հուշարձանների հետքեր, անհետ կորան նույնիսկ հողային աշխատանքների ընթացքում ի հայտ եկած նյութական մշակույթի բազում ու հազվագյուտ նմուշներ: Նույն կուրությամբ վերացրինք քաղաքի հնամենի շենք-շինություններից շատերը: Նույն հաջողությամբ Շենը դարձրինք հանգստարան: Իսկ պատմաշչակուբային իրերի, ցուցանմուշների «բնակատեղի» երկրագիտական թանգարանն այսօր անմխիթար վիճակում է, նաեւ շեղված գիտական-հետազոտական իր գլխավոր առաքելությունից, ինչը պիտի մտահոգի տեղական իշխանությանը: Կրկին համոզվեցինք, որ Գորիսի պատմության շատ-շատ հարցեր դեռեւս ուսումնասիրված չեն ըստ պատշաճի, որ Գորիսի պատմության ուսումնասիրումը շարունակում է մնալ ծավալուն մի ճակատ հետազոտող պատմաբանների համար: Հավատացեք, Գորիս քաղաքի ամեն մի տուն, ամեն մի փողոց պատմագիտական առանձին հետազոտության թեմա է: Այնպես որ Գորիսի պետհամալսարանում 2010-ին ծնունդ առած հայագիտական կենտրոնը մեծ առաքելություն ունի:

Հեռու ենք մտայնությունից, որ թերթի սույն համարը լիովին լուծել է իր առջեւ դրված խնդիրները: Միհչդեռ համոզված ենք, որ այն փոքրիկ եւ համեստ ներդրում է գորիսագիտության մեջ, ինչը շարունակություն կունենա հայագիտության նոր եւ ավելի կարող ուժերի կողմից: Ուրեմնն՝ բաղձալի է տեսնել-լսել բոլոր դիտողությունները, նկատառումները, որոնք կծվեն թերթի հրատարակումից հետո:

Համարի նախապատրաստությունն ազդակ եղավ, որ Գորիսի անցած ճանապարհի մի շարք հարցերի վերաբերյալ ծնվեն արժեքավոր հոդվածներ, որոնց հեղինակներին երախտագիտությունն ենք հայտնում: Միաժամանակ, ներողամտությունն ենք հայցում բազմաթիվ հոդվածագիրների, որոնց պատրաստած նյութերը չկարողացանք ընդգրկել համարում: Դրանք ոչ թե թերի էին ու անկատար, այլ, պարզապես, համարի հայեցակարգը որոշակիորեն շեղվեց սկզբնական ուղղությունից եւ մի քիչ այլ խնդիրներ ու մոտեցումներ դրվեցին հիմքում: Օգտագործվեցին նոր տարրեր (նախորդ նման համարներում չկիրառված)՝ գովազդ, որը տպագիր ծանուցի նման թողարկումների համար գրեթե պարտադիր բաղադրիչ է, զուտ բնանկարային էջեր (բացառիկ բնաշխարհ ուն-եցող երկրամասը պետք է պատշաճ արտացոլում գտներ լուսանկարների օգնությամբ): Պատմական որոշ եղելություններ նույնպես արտացոլեցինք լուսանկարների միջոցով:

Գորիս հասկացությունը, ճակատագրի կամքը, շատ հաճախ տարածվել է համանուն շրջանի վրա: Այդ անվանումը երբեմն նույնացվել է Զանգեզուրի, Բուն Զանգեզուրի, Սյունիքի հետ: Սակայն գլխավորապես կենտրոնացանք Գորիս քաղաքի վրա, թեեւ ցանկալի էր, գոնե համառոտ, անդրադառնալ մերձակա գյուղերին, որոնք եղել, այսօր էլ մնում են Գորիս երեւույթի անկապտելի բաղադրիչը:

Մի քանի անվանի եւ նշանավոր գորիսեցիների, գերդաստանների օրինակով փորձեցինք ստեղծել գորիսեցու ընդհանրական կերպարը:

Նորովի հայացք ձգեցինք Գորիսի քաղաքաշինական դեմքին, ի ցույց դրեցինք պատմամշակութային հուշարձանները, որոնցից յուրաքանչյուրն անցյալի մի ամբողջ իրադարձության, պատմական որեւէ կոնկրետ էպոխայի քարե խորհրդանիշ է:

Վերդրցեցինք ինքնճանաչման ճրագն ու ճանապարհվեցինք դեպի դարերի խորը: Ուխտագնացի զգուշավորությամբ ու նվիրումով մոտեցանք պատմության նշանավոր իրադարձություններին: Ցանկացանք նաեւ այսօրը բացել, ցանկացանք մեզ տեսնել մեր նախնիների եւ գալիք սերունդների հավերժորեն մեկ եւ նույն երթի մեջ՝ հուսալով եւ հավատալով մեր երթի հավերժությանը: Հասկացանք երիցս, որ Գորիսը, հիրավի, ճանրամասն սիրելու քաղաք է, անմնացորդ նվիրումի արժանի, ինչպես եւ Հայաստան աշխարհի ամեն մի անկյուն: Համոզվեցինք վերստին, որ Գորիսը հենց այնպես՝ ինքնաբերաբար, չի փոխանցվել ներկա սերնդին, որ քանիցս լինել-չլինելու հարց է ծառացել նրա առջեւ, որ պատմության քառուղիներում բազմիցս արյան գետեր են հորդել այստեղ՝ Գորիսը Հայաստան ու հայ պահելու համար, որ Գորիսի ամեն մի թուփ ու քար յուրօրինակ հուշարձան են մեր իմաստուն եւ քաջարի նախնիների, որ նրանց օրինությամբ, պատգամներով է ներծծված այս հողը, նրանց ոսկորներով է զորավոր երկիրը: Հիշո՞ւմ եք նախրապան Պետու բակունցյան պատմության ավարտը՝ «Այու սարի լանջին մի կտոր տեղ կա, որ կանաչն ավելի փարթամ է, ավելի մուգ: Փարթամ կանաչի տակ փտում են ոսկորները Պետուս»:

Հազարամյակների ընթացքում, հիրավի, մեծաճշանակ շատ իրադարձություններ եղան այս երկրամասում: Եղան բազմաթիվ գործիչներ, ովքեր պատմության դժվարագույն ժամանակներում մեր ժողովրդին առաջնորդ եղան ու քանիցս հաստատեցին լինելու մեր իրավունքը: Նրանց վարքի ու գործի փայլի վրա մոռացության փոշի չի նստել եւ չի նստելու երբեք. դրա հավաստիքը նաեւ թերթի սույն համարն է: Հետո եղավ ժամանակ, երբ այստեղով Բակունցն անցավ, ու մեր երկրամասը դարձավ Բակունցի աշխարհ, ու մեր երկրամասը հռչակվեց Բակունցի թագավորություն, ինչպես եւ կա այսօր:

Պատմությունը, սակայն, ճանաչողական խնդիր չի միայն լուծում: Պատմությունը, նախեւառաջ, կիրառական, գործնական առաքելություն ունի: Պատմությունն իմաստության աղբյուր է, պատմությունը դասեր է տալիս, եթե ուզում եք, իհարկե, դրանք տեսնել, լսել եւ կարկալել: Հեքիաթային մեր բնաշխարհը, Բակունցի մաքրամաքուր արվեստը հպարտանալու համար չեն սոսկ, այլ մեր դեմքը ժամանակ առ ժամանակ դրանցով լվանալու, մեր ապրած կյանքն ու անցնելիք ճանապարհը դրանցով չափելու-նժարելու համար: Եվ այդ իմաստությամբ ու դասերով, հոգեւոր այդ արժեքներով, ուրեմն, մեր ներկա ընթացքը սրբագրենք: Ու սրբագրենք այնպես, որ այսօրվա մեր գործերով ուրվագծենք հուսալի ապագան, ավելի հզոր ու արժանապատիվ Հայաստանի տեսլականը: Ազգակցվենք Գորիսին՝ մեր գործերով, մեր ապրած կյանքով, եւ Տեր լինենք մեր քաղաքին: Իսկ Տեր չլինել չենք կարող, եթե իսկապես ճանաչում ենք վաղնջական, բայց հավերժ երիտասարդ մեր ուտանը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽ ՍՓՅՈՒՌՔԻ ՄԱՄՈՒԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԳԱՌԵՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԳԱՌԵՆ Բ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇՐՋԱՆ, 2003Ջ
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru
Սյունյաց երկիր

Քարե դրախտ, դրախտի քար...

«Հազարամյա լեռները քո շարքեր կազմած, Ասես Դավթի էն քաջերն են արձանացած»

Լուսանկարները՝ Ն. Դեվիրանդիսյանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԴԱՍՏԱՄԱԿԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԱՎՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է 1992Թ. ԱՊՐԻԼԻ 20-ՍՏ
ՀԵՌԱԽՄՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 00 47 (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Ամենայն հայոց աշուղը

Գուսան Աշոտի հայրենասիրական քնարը

Հատված Անդրանիկ Կարապետյանի «Գուսան Աշոտի բանաստեղծական աշխարհը» մենագրությունից

Հայրենիքը արվեստի ու գրականության հավերժական նյութն է: Քիչ ժողովուրդների գրականության մեջ է հայրենիքը այնքան խորությամբ ու ողբերգական գույներով ներկայացվել, ինչպես դա արվել է հայ գրականության մեջ, քանզի բազմաչարչար հայոց աշխարհը մշտապես գտնվել է իր օրինական տիրոջից զրկվելու վտանգին հանդիման: Սիա թե ինչու հայրենիքը եղել է մեր գրականության, մասնավորապես պոեզիայի ամենազգայուն լարը: Գուսան Աշոտն էլ գրել է բազում հայրենասիրական երգեր՝ մեր հայրենասիրական քնարերգությունը հարստացնելով նոր գույներով: Աշոտի հայրենասիրությունը շատ առողջ է ու հորդաբուխ: Դրա ակունքը հայոց աշխարհն է, մեր ժողովուրդն ու նրա պատմությունը: Ժողովուրդ-գուսան կապի բանաձեւումն է «Իմ ժողովուրդ» երգը, որտեղ մասնավորապես կարդում ենք.

Մի՛ ժողովուրդ, իմ մնողդ դու ես, դո՛ւ,
Բնն կյանք տվող, ինձ սնողդ դու ես, դո՛ւ,
Քո շեն այգում ես մի տխրես՝ անցողի,
Բնն փայփայողը, ինձ պահողդ դու ես, դո՛ւ (ԳՄ, 106):

Գուսանն իր բախտն ու ճակատագիրն անտրոհելի է համարում իր ժողովրդի ճակատագրից, ուստի եւ երգում է լինել հովի պես, անվերջ ծփալ ծովի պես եւ հուզել իր ժողովրդի սիրտը.

Հե՛յ ժողովո՛ւրդ, կուգամ լինեմ հովի պես,
Դաղար չաանեմ, անվերջ ծփամ ծովի պես,
Միտքդ հուզեմ՝ անմահ Սայաթ-Նովի պես,
Իմ քնարին շուչ տվողդ դու ես, դո՛ւ (և.ա.):

Այս նույն համատեքստում կրկներգ ավելի է շեշտում ժողովրդի ու նրա ծոցից ծնված գուսանի միասնության գաղափարը.

Ինձ ինչ տվիր, հազար էդքան թե քեզ տամ.
Քիչ է դարձել, իմ սուրբ մայրը դու ես, դո՛ւ (և.ա.):

Ժողովուրդն անբաժանելի է իր պատմությունից: Աշոտն ուխտում է հավատարիմ մնալ «մեր շարական խաղերին» եւ ընթանալ հայոց պատմության հաստատուն ճանապարհով, որ լուսավորվում է մեր մեծերի հանճարով.

Քաղսակ, Սայաթ, Ջիվանի քո ճանմիներին լույս կրան,
Թեւտիդ է բնաղդ, զառ հավքերին ձայն կրան,
Նարբ կանչերով վարպետաց աշխարհն նկար սազ առած,
Դե, էլ խնջույք բաց արա, օրն անցնում է, հայ գուսան (Ծ, 199):

Ինպես նշեցինք, Աշոտի ստեղծագործության ակունքը հայրենի հողն ու ջուրն են, բովանդակ Հայոց աշխարհը, մեր բազմադարյա երգն ու տաղը, որոնք նորանոր լիցք են հաղորդում բանաստեղծի քնարին.

Երգդ ձուլվից հայ բնարին,
Ձոթ գույն կապեց մեր սարերին,
Դարձար գարուն-բնաստեղծ,
Քո աշխարհին ու քո յարին... (Ծ, 11):

Գուսանը մայր ժողովրդի հետ իր ունեցած անզուգական կապն է շեշտում «Հայաստան», «Ջեփյուռ» եւ այլ երգերում: Նա իր կյանքը չի պատկերացնում հարազատ ժողովրդի երթից անջատ, քանզի՝

Հայաստանն իմ ծնողավայրն է,
Արեւ է ցվիկ իմ սրտին, կյանքին,
Երեւանն էլ իմ հարազատ մայրն է,
Բնն սնող մայրը քաղցր ու թանկագին (ԳՄ, 80):

Գուսան Աշոտի շատ ստեղծագործություններ նվիրված են մեր ազգային արժեքներին: Նա մի առանձին սիրով է երգում մեր մայրենին՝ այն դիտելով մեր գոյատեւման հիմքը: «Հայ մնա» երգը հեղինակի խոստովանությունն է մեր ազգային արմատներից սնված լինելու եւ դրանց հավատարմորեն ծառայելու մասին.

Աչք եմ բացել ու թոքդվել հայերեն,
Հոգուս ասել նրգ հոքդվել հայերեն,
Շոքով օծված, ոսկեգծվված բառերով,
Միտդ սրտից գալեր քաղել հայերեն (Ծ, 31):

Եվ իմաստավորելով մեր պատմությունը՝ Գուսանն իր ապած տարիների ու թողած վաստակի բարձունքից պատգամում է սերունդներին՝

Գուսան Աշոտի կիսանդրին Գորիսի մշակույթի կենտրոնի բակում (2005թ.): Քանդակագործ՝ Գեղիկ Բաղդասարյան, ճարտարապետ՝ Սեւադա Զաքարյան: Նախաձեռնող եւ հովանավոր՝ Սուրեն Խաչատրյան:

Սիրուհի Ղ. Ամոյանի լուս.

ներ նվիրված են մեր ազգային արժեքներին: | րին վառ պահել ազգային դիմագիծը եւ միշտ | *լոի,*

Հայ ժողովուրդ, հայ մնա,
Հոգդ պահիր, հայ մնա,
Իմքդան-ինքդան ազգեր կան,
Միտով եղիր, վար մնա
Միտով եղիր, հայ մնա (և.ա.):

Աշոտի ստեղծագործ միտքը մշտապես որոնումների մեջ է: Նա քննում է հայտնաբերում է մեր ազգային գույի հիմքերն ու բարոյական հիմունքները: Նա քնարական ջերմագին սիրով է ներբողում մեր մայրենին, որ եղել է հայության ամենամեծ ապավենը նրա մաքառումների պատմության մեջ: Նրա «Սրտի կտակ» երգը հեղինակի պաշտամունք-սիրո դրսեւորումն է առ մայրենին.

Հայկի սերունդ, քո մայր լեզուն անմար չան է դարերի.
Լույս է ցվիկ, ջերմացդուկ, պոեզ, ջան է դարերի.
Իմաստության ծով է դասել հինավուրց քո աշխարհը.
Հազար աչք են ցանվարներին, խաչքարերին, վանքերին (Ծ, 187):

Մայրենին մեր սրբությունն է, ամենամեծ հարստությունը, հոգու գանձը, ուստի Գուսանը հորդորում է ամուր պահել այն, որպեսզի արեւի տակ ապահովենք մեր գոյության իրավունքը.

Հայկի սերունդ իմաստնացած, ազգդ, լեզուդ պինդ պահի,
Որ քաջագուն Սասնա գուռնդ Դավթի շեչով նորոգվի,
Մայրն իր ազգով թեւեր կառնի, կմանաչվի աշխարհում,
Դարեր օծված, ոսկեգծված, հզոր գանձդ պինդ պահիր (Ծ, 187):

Դարեր շարունակ օտար նվաճողները հայոց աշխարհն ավերել են, կործանել են մեր ժողովրդի մտքի ստեղծագործությունները, որ «հայոց աշխարհը չլինի», «որ լեռներում հայ երգը, հայոց լեզուն միշտ լռեն, մագաղաթները մոխրաճաս, եւ ոչ մի գանգ չինչի» («Հազարան փրկիչ»), բայց այդ ոճրագործ ձրագերն ու դավերը տեղի են տվել մեր ազգային ոգու առաջ, ոգի, որի հիմքը եղել է մեր մայրենին: Անհավատար գոյամարտերում հաղթանակել են Մաշտոցի մտքի եւ հոգու ստեղծագործ քուրայում ձնված գնդերը.

Գուսան Աշոտ, քո ազգի հոգին խաղաղ մի ծով է,
Ծնունդ առած դարերի շաչաղ-շաչաղ մի ծով է.
Մեծ մեսրոպյան սուրբ գրքի գոնար-գոնար մի ծով է,
Մենք հազարան փրկիչ ունենք, հայոց լեզուն չի լռի,
Տաճապանքի ճանմիս անցած հայոց երգդ չի լռի (ԳՄ, 174):

Աշոտի պոեզիայում մի գեղեցիկ ծաղկեփունջ են նաեւ Սայր Արաքսիի, Սեւանա լճին, Ավարայրի դուցազգնին, Նարեկացուն, Սայաթ-Նովային ու Կոմիտասին նվիրված ձոները: Գուսանի քնարը թախծալուր նվագներ է մրմնջում, եւ դիմում է մեր պատմությունը խորհրդաճշող Մայր Արաքսին ու բիբլիական Արարատին: Նրա «Մայրություն ես, իմ Արաքս» երգը հիշեցնում է Ռ.Պատկանյանի անմահ բանաստեղծությունը: Աշոտն էլ քայլամոլոր գնում է Մայր Արաքսի ափերով նրա ալիքների մեջ փնտրելով հին հիշատակներ: Նա հասկանում է Արաքսի վիշտը.

Նայում եմ քո ցոլքերին, փրփուր կապած ջրերին,
Կարոտներս կիսատեն քո ադամանդ ակներին,
Ինչո՞ այդքան կարվնես, դու էլ ինձ պես իդձ ունես,
Հայի կարոտ աչքեր կան հոդդ ջրերիդ ծալքերին (ՄԿ, 36):

Մայր Արաքսի ապրած տխրությունը համակում է նաեւ ժողովրդի երգչի սիրտը: Երգի ընդհանրացնող գաղափարը որոշակի է. քանի դեռ հայ ժողովրդի զավակների մի մասը կմնա պանդուխտ, «չի պակասի ծովացած կարոտ սրտի հառաչը»: Եվ բանաստեղծը մրմնջում է.

Հարազատ են, սրտամոտ էլ քո շաչ ու շառաչը,
Աշխարհներին թող հասնի կարոտալուր մեր կանչը.
Մտդրում եմ ափերիդ, կածաններում իմ սիրտ,
Չի դադարի ծովացած կարոտ սրտի հառաչը (և.ա):

Կրկներգը խորացնում է հույզը, շեշտում հայրենի բնաշխարհի ու ժողովրդական գուսանի անբեկանելի կապը.

Մայրություն ես, իմ Արաքս,
Մխ. Բինեզդից դու կգաս.
Տանտրներն ինձ կկանչեն՝
Խոր գնենչանքիս զարդն առած:

Գուսան Աշոտի «Բարձր Արարատ, քաղցր Արարատ» ստեղծագործությունը մեր հայրենասիրական քնարերգության ամենահուզաթաքավ էջերից մեկն է գրված Դ.Ալիշանի «Մասիսու սարերի» ազդեցությամբ: Արարատը՝ մեր պատմության լուռ վկան, դառն ու ամենամեծ հուշերի է արթնացնում Գուսան հոգում: Բիբլիական լեռն անձնավորվում՝ հեղինկը նրա առաջ բացում է իր կրակված սիրտը:

Իմ հայրենիքից զրկված հայերը
Օջախն ու ցուցը ջեզ են պատ ցվիկ,
Օրդոքներ զրկած մնան մայրերը
Ամենայն հայոց աշխարհ

Շարունակությունը՝ էջ 44

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԴԱՍՏԱՄԱԿԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԱՎՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է 1992Թ. ԱՊՐԻԼԻ 20-ՍՏ
ՀԵՌԱԽՄՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 00 47 • (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Սաթյանի երգերը

Աշոտ Սաթյանի ստեղծագործությունն անմիջականորեն բխում է ժողովրդից եւ արձագանք գալիս ժողովրդի սրտում: Նա իր ստեղծագործությամբ շարունակ ժողովրդի մեջ եւ ժողովրդի հետ է եղել, ուրիշ շահ չի ունեցել, քան ապրել ժողովրդի առօրյա կյանքով, այդ կյանքի անմիջական մասնակիցը լինել:

Աշոտ Սաթյանը եղել է երաժշտական-հասարակական ակտիվ գործիչ, Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահ (1947-1952թթ.), արժանացել Հայկ. ԽՍՀ վաստակավոր արտիստի կոչման:

Սաթյանի արվեստը ժողովրդական արվեստ է բառիս լայն իմաստով:

Նա գրել է սիմֆոնիկ եւ կամերային ստեղծագործություններ, «Դավիթ Բեկ» օրատորիա (անավարտ), երաժշտություն կինոյի, փողային նվագախմբերի համար, վոկալ եւ վոկալ-սիմֆոնիկ սյուիտներ, բազմաթիվ երգեր: Սակայն հետաքրքրությունների նման բազմազանությամբ հանդերձ՝ նրա ստեղծագործության հիմնական տարերքը երաժշտության մասսայական տեսակներն էին եւ մասնավորապես երգը:

Երգը երաժշտական արվեստի այսպես կոչված «փոքր» ձեւերին է պատկանում: Այդ փոքր ձեւին տիրապետելը, սակայն, մեծ դժվարությունների հետ է կապված: Երգեր շատ են ստեղծվում, բայց սովորաբար դրանցից մի քանիսն են իսկապես հաջող ստացվում:

Լավ երգը որքան էլ լսես, չպետք է ծանձրույթ պատճառի, կորցնի իր թարմությունը, իր համն ու հոտը:

Այդպիսին են Ա.Սաթյանի երգերը:

Երգի երաժշտական-արտահայտչական միջոցները շատ սեղմ են ու համեստ: Լավ երգը միայնակ ձայնով հնչելիս էլ պետք է լինի ախորժալուր, դուր գա կատարողին եւ ունկնդրին, իր տրամաբանությամբ համակի մարդուն, թափանցի հոգու մեջ:

Այդպիսին են Ա.Սաթյանի երգերը:

Երգը բանաստեղծության եւ մեղեդու միահյուսվածքն է, օրգանական ամբողջությունը: Լավ երգի բանաստեղծությունը լինում է ձեւով պարզ եւ բովանդակությամբ խոր, ժողովրդի սրտից բխող: Վերամբարձ արտահայտությունները, կեղծ պաթոսը, ինչպես եւ սենտիմենտալ զեղումները լավ երգի մեջ տեղ չեն կարող ունենալ: Ամենապարզ, բայց անմիջական խոսքերով կարելի է շատ վեհ եւ խորիմաստ գաղափարներ արտահայտել:

Այդպիսին են Ա.Սաթյանի երգերի բանաստեղծությունները:

Երգի երաժշտական մարմնավորման մեջ ամենակարեւորը մեղեդին է: Մեղեդին, խոսքերի հետ բնականոն միահյուսված, արդեն երգն է, երգի էությունը: Նվագակցությունը, թեկուզ շատ լավ գրված, չի փրկի անգույն մեղեդին: Ժողովրդի ամենալայն խավերը ներկայացնող մարդիկ ի վիճակի են ընկալելու շատ բարդ կառուցվածքի մեղեդիներ, եթե դրանք իսկապես երգային են եւ բարեձեւ, եթե երաժշտական միտքը տրամաբանորեն զարգանում է, եթե նրանցում շունչ կա, ոգի կա, ապրումներ կան...

Սիա այդպիսին են Աշոտ Սաթյանի մեղեդիները:

Չի կարելի չիիշել, թե ի՞նչ եռանդով, ինչպիսի սիրով ու ոգեւորությամբ է ընդունել, ընկալել մեր ժողովուրդը Սաթյանի ամեն մի նոր երգը: Ծնվելուն պես Սաթյանի երգերը դարձել են թե մեծերի, թե փոքրերի, բանվորի ու կոլտնտեսակների, ուսանողի ու մտավորականի շուրթերին, նրանք հնչել են տանը, փողոցում, հրապարակում, դպրոցում, հանգստի ժամին եւ աշխատանքի, կազմել են մեր երաժշտական ռադիոհանդորդումների բովանդակության մի պատկառելի մասը: Սաթյանի երգերի լայն ժողովրդականությունը կոմպոզիտորի ամենաբաձկ վարձատրությունն է եղել, նրա ստեղծագործական վաստակի վսեմ գնահատականը:

Վերոհիշեցք տաղանդավոր երաժշտի երգերից մի քանիսը:

«Մարտիկի երգը» խորհրդային ռազմիկի լիրիկական ապրումներն են Հայրենական մեծ պատերազմի օրերին իր կարոտած մոր, հայրենի տան ու բնաշխարհի մասին: Բանաստեղծության մեջ դրված պարզ ու անկեղծ զգացմունքները նույնքան պարզ ու ամմիջականորեն արտահայտված են մելոսում: Նկատենք, որ երգի մեղեդին չափազանց համեստ է իր միջոցներով, ընդամենը մեկ օկտավայի հնչյունաշար եւ ոչ մի լադային շեղում կամ տոնայնության փոփոխություն: Ընդհակառակը, ժողովրդական գործիքային եղանակների նմանությամբ այստեղ էլ սկզբից մինչեւ վերջ տոնիկայի ռեւոր հատկանիշներից է, որ այստեղ կիրառված է մեծ հաջողությամբ: Եվ այս ամենի շնորհիվ երգը հասնում է հուզական ներգործության անդիմադրելի ուժի:

Նշենք «Սիրո երգը» երիտասարդ աղջկա դժբախտ սիրո մասին մի լեգենդ, որ հիշեցնում է «Ասում են ուռին»: Առանց հավակնությունների, բայց սրտառուչ ու գողտրիկ բանաստեղծությունն այս երգում ունի հար եւ նման պարզ, մելոդիկ մի եղանակ, որ պատմողական բնույթի է, շարունակ հոսում, երգվում է: Մեղեդին ոչ միայն չի խանգարում բառերի արտասանությանը, այլեւ կարծես հստակ արտահայտման մի ավելի բնական միջոց է դառնում:

Մտովի կրկնենք «Լավ լսեք ինձ» էպիկական շունչ ունեցող երգը, որտեղ զանազան համադրությունների օգնությամբ հաստատվում է այն միտքը, թե

Ժողովրդի կյանքն աշխատում քաղցր պահեք,
Հախտդ օրերին սրտերը ձեր կարծր

Աշոտ Սաթյանը կնոջ՝ Գոհարի եւ դպտեր՝ Կարմենի հետ

Աշուղ Աթա
1852-1942թթ.

Կոնսպտանտին Օրբելյան
Ծնվել է 1928թ.

Տաթեւիկ Սազանդարյան
1916-1999թթ.

անփոփոխ հարմոնիա է լսվում: Սակայն մեղեդու մեջ ներքին մեծ ուժ, հուզմունք, հոգեկաղ շարժում կա: Մեղեդին երգվում է մեկ շնչով, չի կտրտվում, այլ բնականորեն շարունակվում է, ծավալվում:

Սկզբի հնքնամփոփ մտորումները մի քանի տակտի ընթացքում անհանգիստ վիճակի են հասցնում, խիստ հուզական արտահայտչություն ստանում: Դա ձեռք է բերված նաեւ մետրական զարկերի միապաղաղությունը հաղթահարելու միջոցով: Միեւնույն ռիթմն ունեցող դարձվածքները տակտի տարբեր մասերում այստեղ այնպես են դասավորված, որ կոտրում են այդ միապաղաղությունը, ստեղծում են անընդհատ շարժում: Սա հայ ժողովրդական լավագույն երգերի կանոնավոր ռիթմն է լսվում: Սակայն մեղեդու մեջ ներքին մեծ ուժ, հուզմունք, հոգեկաղ շարժում կա: Մեղեդին երգվում է մեկ շնչով, չի կտրտվում, այլ բնականորեն շարունակվում է, ծավալվում:

Սկզբի հնքնամփոփ մտորումները մի քանի տակտի ընթացքում անհանգիստ վիճակի են հասցնում, խիստ հուզական արտահայտչություն ստանում: Դա ձեռք է բերված նաեւ մետրական զարկերի միապաղաղությունը հաղթահարելու միջոցով: Միեւնույն ռիթմն ունեցող դարձվածքները տակտի տարբեր մասերում այստեղ այնպես են դասավորված, որ կոտրում են այդ միապաղաղությունը, ստեղծում են անընդհատ շարժում: Սա հայ ժողովրդական լավագույն երգերի կանոնավոր ռիթմն է, որ այստեղ կիրառված է մեծ հաջողությամբ: Եվ այս ամենի շնորհիվ երգը հասնում է հուզական ներգործության անդիմադրելի ուժի:

Նշենք «Սիրո երգը» երիտասարդ աղջկա դժբախտ սիրո մասին մի լեգենդ, որ հիշեցնում է «Ասում են ուռին»: Առանց հավակնությունների, բայց սրտառուչ ու գողտրիկ բանաստեղծությունն այս երգում ունի հար եւ նման պարզ, մելոդիկ մի եղանակ, որ պատմողական բնույթի է, շարունակ հոսում, երգվում է: Մեղեդին ոչ միայն չի խանգարում բառերի արտասանությանը, այլեւ կարծես հստակ արտահայտման մի ավելի բնական միջոց է դառնում:

Մտովի կրկնենք «Լավ լսեք ինձ» էպիկական շունչ ունեցող երգը, որտեղ զանազան համադրությունների օգնությամբ հաստատվում է այն միտքը, թե

Ժողովրդի կյանքն աշխատում քաղցր պահեք,
Հախտդ օրերին սրտերը ձեր կարծր պահեք,
Հայրենիքի պարիսպը միշտ բարձր պահեք:

Բանաստեղծությունը գրված է գուսանական բարոյախրատական ոտանավորների յուրահատուկ ոճով, երաժշտությունը նույնպես վառ բնութագրական է: Այս երգի եղանակում հանդիպում են հայկական գուսանական եւ էպիկական շատ երգերի բնորոշ գծեր, հիշենք «Բյոռ-օղլին», «Մոկաց Միրզան», «Դավիկը», Սայաթ-Նովայի մի քանի երգերը: Բայց հետաքրքրականն այն է, որ Սաթյանի մեղեդին լսելիս երբեք մարդու մեջ զգացում չի առաջանում, թե այս կամ այն հայտնի երգի եղանակը կամ թեկուզ եւ նրա որեւէ դարձվածքն այստեղ մեքենայորեն կրկնված են: Կոմպոզիտորը պարզապես մեծ հմտությամբ կառուցել է իր եղանակը այս երգերի բնորոշ հատկանիշները ստեղծագործորեն վերարտադրելով: Եվ այստեղ էլ նա հարազատ է մնացել իրեն հատուկ մեղեդիական ոճին, ունի իր սեփական գեղեցիկ հնարքները, որոնք մեծ աշխույժ են տալիս երգին, նրա ձեւը դարձնում կենդանի, թարմ, տրամադրությունը համակող, ազդու:

«Աշխատանքի երգը» մեզ փոխադրում է կյանքի մի ուրիշ բնագավառ: Ուրախ, ոգեշունչ տրամադրությունը, աշխատանքի որպես աշխարհում բարիք ստեղծելու միակ արդյուրի գիտակցումը եւ գովերգումը նրա բովանդակությունն են կազմում: Այստեղ գտնված են երաժշտական արտահայտչության նոր միջոցներ, նոր հնտոնացիաներ եւ գույներ, թափ ու եռանդ կա այս երգում, աշխույժ ռիթմը, փոփոխական մետրը, ինտոնացիայի «մաժորայնությունը» (նվագակցության փաստորեն միևնոր հիմքի վրա) ստեղծում են պայծառ, լավատեսական տրամադրություն:

Լավագույն զգացմունքները՝ սեր, աշխատանք, համերաշխություն, հայրենիքի պատիվ...

Տեղին է այստեղ հիշել կոմպոզիտորի եւ բանաստեղծի արդյունավետ համագործակցությունը: Աշոտ Սաթյանի լավագույն երգերի գրական տեքստերի հեղինկը բանաստեղծ Գեղամ Սարյանն է, որի ստեղծագործության պարզությունն ու պատկերավորությունը, իսկական պոետական շունչն ու հարազատությունը ժողովրդական կերպարներին, հուզականությունն ու լավատեսությունն իրենց հիանալի երաժշտական մեկնաբանումներն են գտել տաղանդավոր կոմպոզիտորի երգարվեստում:

«Դավիթ Բեկ» թեմայով օրատորիա ստեղծելիս Սաթյանը բախտ ունեցավ աշխատակցելու մեծ բանաստեղծ Վեհտիթ Իսահակյանի հետ: Դրա սքանչելի արդյունքն է, օրինակ, Գայաեմի լայնաշունչ ու հուզական մեներգը, որ մեծ Ժողովրդականություն է վայելում ամենուր:

Ավելացնենք, որ Սաթյանը սերտ համագործակցության մեջ է եղել նաեւ մեր առաջնակարգ երգիչների՝ Տ.Սազանդարյանի, Ա.Թուրուշյանի, Օ.Համբարձումյանի, Շ.Տալյանի, Ն.Հովհաննիսյանի, Ա.Տեր-Աբրահամյանի, Ա.Պետրոսյանի հետ: Նրանք միշտ սիրել են եւ սիրով կատարել Սաթյանի հայրենաշունչ երգերը: Հորիհնդի եւ կատարողի համագործակցությունն ու փոխլրացումը, անմարակույս, իրենց հերթին նպաստել են Սաթյանի երգային արվեստի հարստացմանը:

Ա.Սաթյանի երգերին հատուկ է ցայտուն ազգային լեզուն, նա հավասարապես լավ էր զգում հայ ժողովրդական արվեստում իր բոլոր հատվածներով (գյուղական եւ քաղաքային երգեր, գուսանական եւ հոգեւոր երաժշտություն, տաղերի արվեստը), եւ հայ ժողովրդական երաժշտությունը նրա համար եղել է գեղարվեստական վարպետության դպրոց, ոգեւորության անսպառ աղբյուր: Դրա հետ մեկտեղ Սաթյանն ունի իր սեփական անկրկնելի ոճը: Նա չի սիրում տարածված, վաղուց ծածկծվված դարձվածքները, նրա հնտոնացիաները միշտ ինքնատիպ են եւ միաժամանակ բնական ու սահուն-երգային: Հնտոնացիայի առումով նրա ամեն մի երգը (պատահական բնույթ կրող մի երկու բացառիկ դեպքերը չհաշված) միշտ նորություն է եղել մեզանում եւ մեծ թարմություն է բերել հայկական մասսայական երգարվեստին:

Սաթյանի երգերին հատուկ է նաեւ պարզ, բայց միշտ տրամաբանված ձեւը: Որպես կանոն նա հեռու է մնում տարտամ «քառակուսությունից», բայց ամեն մի երգում «ասիմետրիկ» հատվածները բնականորեն հաջորդում են միմյանց եւ ստեղծում կուռ ամբողջություն:

Մեծապես գնահատելի է այդ երգերի ռիթմական կառուցվածքի կատարելությունը: Մեր ժողովրդական երգերին հատուկ ռիթմական իր օրինաչափություններով անդրադարձել է Սաթյանի երգերում եւ առավել բարձր զարգացում ստացել: Մշտապես պարզ, հեռու խրթին զուգորդումներից, բայց չափազանց շարժուն ռիթմը Սաթյանի երգերի ամենագրավիչ կողմերից է, շատ էական առանձնահատկություն կոմպոզիտորի մեղեդիական տեխնիկայում:

Աշոտ Սաթյանը՝ որպես իր անհատական ցայտուն դեմքը ունեցող կոմպոզիտոր, խոշոր երեւույթ է ոչ միայն հայկական, այլեւ ողջ խորհրդային երգարվեստում: Սաթյանի երգերը ապրում են եւ կապրեն, քանի որ խորապես հուզական են, ժողովրդայինն եւ ժողովրդական:

ՌՈԲԵՐՏ ԱԹԱՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՈՒՐՈՊԱՅԻ ԵՊԱՀՈՊԱԿԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ-ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ
ԳԱՌՆԻ, ԳԱՌՆԻՀԱՆ, 2002
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 00 47 (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Գուսան Աշոտի հայրենասիրական քնարը

Հատված Անդրանիկ Կարապետյանի «Գուսան Աշոտի բանաստեղծական աշխարհը» մենագրությունից

Սկիզբը՝ էջ 42

Իրենց դրբերին քեզ են պահ տվել:
Եղեռնը դնծերիդ անրսենք թողեց,
Դրա համար է ամպը բոր ասնում,
Աշխարհը երբեք սպասք չհղավ քեզ,
Դանդուխտ դարձար քո սրբազան հողում (ՄԿ, 192):

Հայրենակարոտ քնարական հերոսը, որ ինքը բանաստեղծն է, տենչում է իր «պապերի օջախօրրանը տեսնել», տեսնել հայոց երբեմնի ոստանը վերաշինված եւ նրա երդիկներից ծուխը երկինք միտվելիս: Ուստի նա հորդորում է.

Դե նէիր. թեքիր սեգ գլուխը քո.
Գամ նոր դաստ ասեմ, ջրերը ասենն,
Վրդերը վարած գետնեմ սուրբ լուսո,
Աշոտն եմ, սրբվես մտրագի ասենմ (ՄԿ, 192):

Ընդհանրապես Աշոտին մտահոգում է իր պատմական հայրենիքի ճակատագիրը: Հայոց աշխարհի հանդեպ պատմության անարդար վերաբերմունքը հանգիստ չի տալիս նրան: Ուբսուեանցա Գուսանը մի փափագ ուներ տեսնել իր հայրենիքի հանիրավի բռնազավթած տարածքները վերամիավորված մեկ դրոշի տակ: Այսպես «Ուբսուն տարիս» բանաստեղծության մեջ կարդում ենք.

Անցորդ պիպեր, գարիներս բռան-անցան,
Ակնթարթ էր, չիմացա, թե էն ոնց անցավ,
Հոդովմրիս վշերն առած իմ գլաք սրբրին՝
Մորմոքվելով գատասղանքի ճանփա անցա...
Անցորդ պիպեր, ես Աշոտն եմ, ուխտ ուներ դեռ,
Իրդ ու փափագ, հավատ ուներ պիրսեներդ,
Մեղան-սիրոց պիրի բացեմ Վանա ափին,
Արեւները կենաց մաղթեն լուսանեղդ (ԼԿ,4-5):

Այս նույն մտայնությունն ավելի խորացված է արտահայտվում «Իրդ ունեմ» քնարական բանաստեղծության մեջ: Այստեղ բանաստեղծը մի իրդ ունի՝ տեսնել մեր ժողովրդի հավերժությունը խորիորդաշող բիբլիական լեռը գերությունից ազատված, որին նա այնպե՞ս հավատում է.

Իրդն թեքի չի մնա,
Սարս գլուի չի մնա,
Իմ խրձս ինձ կանչում է,
Չարի ձեռքին չի մնա (ԼԿ, 37):

Լուսանկարը Ա. Պետրոսյանի

Գուսան Աշոտի տունը Գորիսում (Մաշտոցի 24)

Իր նկարագրական տարրով ու արթնացնող տրամադրություններով այս ստեղծագործությունների օրգանական շարունակությունն է կազմում ավելի վաղ շրջանում գրված «Երազը»: Սա երազային տեսիլքի նկարագրություն է: Ահա Արարատը, տեղի տալով Գուսանի հորդորներին, նրա առաջ բացել է Ավետյաց երկրի ճանապարհը, եւ հայոց Գուսանն իր երազած վայրերում է՝ Վանա ջքնաղ ծովի ափին, Ախթամարա վանքում, Մշո դաշտում, Տիգրան Մեծի կառուցած կամրջի վրա, Սիփանա սարի փեշերին, Կարսում ու Անիի ավերակներում...

Հասա թախծոտ Ախթամարին, Մշո դաշտին էն եղեմ,
Նախնիներիս սրբավայրին ծառիկ ցանեմ, մամ վառեմ,
Ամա, էն ավեր փլատակին գեր մի բար էլ ես դնեմ,
Նրա թոշեան, խանձված այգում գեր մի ծառ էլ ես գտնեմ (ՄԿ, 53):

Քնարական տեսլային այս պատկերն ավարտվում է գեղարվեստական ընդհանրացմամբ. Գուսանը երազում է Հայաստանի ծաղկուն երթի հետ միահյուսված տեսնել Մայր Արաքսի մյուս ափի հայոց մարած օջախների վերաշինումը.

Զայնս հասնի էն գատապալ հոգիներին, սրբերին,
Հառս ընկած, սիրտը փշրած էն գատաղիր հավրքներին,
Գուսան Աշոտ, էս նոր կյանքով պիտ շենանա մեր Անին,
Ազբյուրները սեր կարկաչեն էն ձորերի վարդերին (Ե. գ.):

Աշոտի շատ ստեղծագործություններում խաչաձեւվում են անցյալն ու ներկան: Հայրենիքի տխուր անցյալի ու երջանիկ ներկայի հանդարումնե՞ն «Զքնաղ Սեւան» երգը: Այստեղ Սեւանն ասես հանայն հայության անցած ճանապարհի խտացումը լինի.

Դու նրկ ես անթարթ աչքդ Հայաստանի,
Ակիրներդ արցունքներն են նրա լացի.
Լացդ այսօր ծիծաղի է փոխվել արդեն,
Ակիրներդ բացվել, ինչպես ձնրանակ վարդեր (ԳՍ, 31):

Շատ լայն են Աշոտի հայրենասիրական պոեզիայի ընդգրկումները: Ժողովրդական Գուսանին հուզում է մայր ժողովրդի ճակատագիրը: Նրա քանքարը հրծվագին պահեր է ապրում, երբ երգում է ժողովրդի վերածնունդը հայրենիքում: Սակայն նշանավոր երգահանին հուզում է նաեւ հայության աշխարհասփյուռ հատվածների ճակատագիրը: Մեծ եղեռնի զոհերը հայության բեկորները, սփռված լիմեելով աշխարհով մեկ, մաքառում են սպիտակ ջարդի դեմ ամենուր հիմնելով իրենց օջախը, կառուցելով վանքեր ու խաչքարեր, ճարտարապետական այլեւայլ կոթողներ («Աշխարհի հայեր»): Նրանք ապրում են հայրենիք վերադառնալու փափագով: Այսպես՝

Ամեն տեղ հայ կա,
Վանք ու խաչքար կա,
Մեծ Եղեռնաթի
Գեռւնեի կսկիծ կա:
Թրկպարտ նդրդ
Վնասչոտ հոգով
Տարագիր հայն իր
Մուրբ օրրանը գա (Ծ., 131):

Աշոտը օտար ափերում շրջագայելիս այցի է գնում տարագիր հայորդիներին՝ նրանց տանելով մի բուռ հայրենի հող եւ իր հայենակարոտը երգը: Նա տխրում է, վշտանում, երբ տեսնում է եղբայրների վշտահար դեմքերը: Գուսանի անբաժան ընկերը՝ քամանչան էլ թախծում է, «հազար սրտի հետ մերվում, մորմոքվում» եւ պանդուխտ հայերին հայրենական հողի հրավերը կարդում.

Գուսան Աշոտի բանանչան թախծեց,
Հազար սրտի հետ մերվեց, մորմոքվեց,
Աշխարհի հայեր, վշրանայ եղս,
Կարոտից Վանա ծովն էլ մոլորվեց (Ծ, 131):

Եվ այսպես Գուսան Աշոտի երգարվեստ է մտնում գործում եւ նաեւ պանդխտության թեմամ: Այս երգերում հեղինակին մտահոգում է օտար ափերում դեգերող հայորդիների ճակատագիրը: Պանդխտության մոտիվով գրված լավագույն գործերից է Գուսանի վերջին գրքի «Երազ տեսա» բանաստեղծությունը: Կոռուկների հրամի հեռաձայը բանաստեղծի հոգում արթնացնում է տխուր խոհեր ու զգացումներ: Նա մտովի փոխադրվում է օտար ափերում դեգերող հայ պանդխտների մոտ, հանդագած դառնում նրանց հայրենակարոտ ապրումներին.

Երազ գտնա՝ նրագում նրանն անցավ կռունկի,
Ասես մի ծով վիշտ առա բարձր լեռան պռունկին,
Միրզա գոլոց ու փարավ հեռվում ապրող պանդխտների,
Չի գաբբանա, կնրան այլոց ծխող կրակին:
Երազնեկս սարացին,
Ամենի ծովը չափեցին,
Տեսա պանդխտի հայերս,
Վշտի ծովում խամրեցի (ԼԿ, 64):

Արտաշխարհի նյութական բարեկեցության պայմաններում ոչինչ չի սփոփում հայ պանդուխտի ներքին տառապանքը, հայրենի հողի կարոտը հալումաշ է անում նրան աչքերից վանելով քունը, հոգուց հանգիստն ու անդորրը.

Մրբրբա թռավ ու հասավ ձնրանպաթեւ նրանին,
Հասա գտնը պանդուխտի՝ վշրանարտնք իմ հայի,
Մի ախ բաշեց ու ասաց՝ «Ծնվե այս՝ Վանա ծով չէ,
Մի բուռ ոսկով չեմ փոխի մի բուռ հողը հայրենի»:
Դաստիարային իմ երկիր, դաշտիդ կիջեի մանանա,
Հոգսված էր քեզ պարգեւել՝ էլ ինչո՞ւ եր առավ նա,
Աշոտն, պապիդ օջախի ծուխը կկլեներ ծիրանի,
Չարի աչքը կուրանա՝ խաչքարերից հեռանա (ԼԿ, 64):

Գուսան Աշոտի հայրենասիրական պոեզիայում խիստ կարեւորվում են նաեւ մեր ազգային մեծությունների՝ Ավարայրի դուցազգին, Զորավար Անդրանիկին, հանճարեղ Սայաթ-Նովային ու Կոմիտասին նվիրված երգերը: Վարդան Մամիկոնյանի առասպելական քաջությունը ու անձնուրաց հայրենասիրությունը մեր արվեստում ու գրականությունը հարստացրել են տարատեսակ ստեղծագործություններով՝ սկսած երիշեի անմահ երկից մինչեւ նորօրյա բանաստեղծների քերթվածները: Վարդանապատումը հարստացնող քնարական մի գործ է նաեւ Գուսան Աշոտի «Ավարայրի արծիվը», որ նկարագրում է հայոց դյուցազնի հերոսական մահը եւ այդ ասպետական մահվան պատճառով բնությանը պարուրած վիշտը.

Աշոտն, հուր ձին Վարդանի վրեթում էր գլխիկոր,
Դուխունների ձայներից զդրդում էր սար ու ձոր,
Բայց կոր հեղոսը ընկավ բարի ժպիտն իր դեմքին,
Թախծեց երկնակամարը, վշտեր հագավ ծուխց ծով (ՄԿ, 115):

Գուսանի փառաբանած ազգային սրբություններից մեկը Զորավար Անդրանիկն է, որին նվիրված երգ-նվերը նրա արտահայտում է ժողովրդի անահի սերն իր փառապանծ զավակի հանդեպ: Ականավոր զորավարը սրբացել է ժողովրդի սրտում ու նրա պատմական հիշողության մեջ: Այսպես՝

Հազար լեզու, հազար բերան կերգեն քեզ,
Հազար խեցդոյք բաներն առած կրգեն քեզ,
Հրն կամոյրներն ես անցել հողմի պես:
Դու պապայր շանթերի դեմ մահարեր,
Մեր դան հոյսի Զորվոր էիր ու Մեր...
Հազար սրբի դառն պրցուքն ես դու սրբեց,
Հազար մոր վիշտ գաղթի ճանփին ամոթեց,
Քո ջշնամու մոր ու մանկան խրճացեր:
Հավք ու հուիր անուշ ցաղեր կիյուսեն,
Քաջիդ զավքը ասդղերն անգամ կլսեն (Ծ, 133):

Մանուկ տարիքում Աշոտը մեծ զորավարին տեսել է Զանգեզուրի սարերում, եւ տարիները երբեք չեն կարողացել նրա հիշողությունից ջնջել նրա կերպարը, քանզի անհնարին է մոռանալ անմոռանալին.

Քո Աշոտը սարերում քեզ գտնել է,
Էն օրերում խրտիսր ձայնդ լսել է,
Քո պատվերն իր սուրբ օջախում պահել է.
Քանի-քանի օջախի լույս ես վառել,
Վիշտ ու կսկիծ սրտիդ առել ու փարել (Ե.գ.):

Մեր մշակույթի իր երախտավորներով հմայում է Գուսան Աշոտին, դառնում ստեղծագործական ներշնչման աղբյուր: Հայոց երաժշտության երկու տիտանները՝ տարբեր ժամանակներում ապրած, բայց իրենց ճակատագրով հար նման Սայաթ-Նովան եւ Կոմիտասը, Աշոտի քնարի թրթռոնները ներկայանում են մեզ որպես մեծ հայրենասերներ եւ խոսքարվեստի վարպետներ: Երկու երաժիշտների նվիրված ստեղծագործությունները, որոնք հավաստում են հեղինակի կրած ազդեցությունը նրանցից, երախտագիտության խոսքեր են դեպի մեր այդ ազգային մեծությունները: Գուսան Աշոտի տաղերում Սայաթ-Նովայի կերպարին անդրադարձումները շատ են ու տարաբնույթ: Այսպես «Իմաստուն» երգում Գուսանը ներբողում է Սայաթ-Նովային՝ որպես իր ուսուցչի արտահայտելով իր հավատարմությունն անմահ գուսան-երգչի ավանդույթներին.

Իմ նրաշին Սայաթ-Նովան նկավ ոսկե վազ նվիրեց,
Ասաց՝ գնա նրգի ճանփով, ու նոր խոսուն սազ նվիրեց,
Ու գնում եմ անմահական նրգի ճանփով,
Սիրո ճանփով,
Էն օրվանից ասես նա ինձ իր սրտից մի մաս նվիրեց (ՄԿ, 43):

Իսկ «Սայաթ-Նովային» երգում նկատելի է Աղրեենի «Տաղարանի» ազդեցությունը: Աշոտի ստեղծագործությունը չարենցյան շարքին նման է իր լեզվառճակաան առաձնահատկություններով ու պատկերային հանարի ոգին: Երգի տողերում եւս թեւաւծում է միջնադարյան հանճարի ոգին.

Բլբուլների նրգն եմ լսում, էն քո ձայնն է, Սայաթ-Նովա.
Գյոգայների խալն եմ դեսնում, յարիդ խալն է, Սայաթ-Նովա,
Երբ նստում եմ մեջդինստում, գինի խմում անմահական,
Ձնաբիս թասը ավանդական բո հին թասն է, Սայաթ-Նովա (ԳՍ, 10):

Պաշտամունքային նման զգացում Աշոտը տածում է նաեւ դեպի անմահ Կոմիտասը: Նրա «Կոմիտաս» ստեղծագործությունը, որ արտահայտում է ժողովրդի հանայ սերը իր մեծ նվիրյալի ու նահատակի հանդեպ, հայոց հանճարի անմահության, նրա գործի վեհության հավաստումն է: Ցեղեւելով Մաշտոցին՝ Կոմիտասը հայտնագործեց եւ իր ժողովրդի ձեռքը տվեց պայքարի մի նոր զենք՝ հայոց երգը, որ եկավ հզոր մի ուժ հաղորդելու մեր դարերի նրանց հետ կազմելով այն բռունցքը, որի դեմ անգոր գտնվեց թուրքական արյունոտ յաթաղանը: Կոմիտասը Գուսան Աշոտին պատկերանում է իբրեւ «մարգարտյա երգի աղբյուր», «հավերժական խոսուն քար»:

Կոմիտասը ոչ միայն հայտնաբերեց մեր երգի արմատները, հոկեց ու մաքրեց օտար շերտերից, այլեւ այն տարավ ամենուր, օտար երկրների բեմահարթակներում տիրակալորեն հնչեցին հայ շիճակաի թախծալուր ու ֆիդայու ասլիաքը ավետող երգի մրմունջները: Ահա թե ինչու՝

Աշոտն ասաց՝ արաա աշխարի հիացրիր նրգեդով մեր,
Քանի անգամ հոդագնդում արեւ դարձրիր սեռոը մեր,
Աշխարի առած նրգի օվկիան փայլեցրիր սեռոը մեր,
Թռնրի կրակ, օջախի լույս, հոգի անմար, մեծ Կոմիտաս (Ե.գ.):

Աշոտի հայրենասիրական երգերից աչքի են ընկնում նաեւ «Մատենադարանը» եւ «Դարաբաղի գարուն»: Հայոց պատմությունն ամփոփող «Մատենադարանը» հուզում ու ոգեւորում է Գուսանին, նրա սիրտը լցնում հպարտության զգացումով:

Մեծ Գուսանին դյուցաք է պատճառում նաեւ Դարաբաղի գարունը («Դարաբաղի գարուն»):

Նրա սրտին մոտ ու հարազատ են արցախյան լեռները, որոնց թիկունքն են Սյունյաց սարերը, իսկ աչքերը՝ լուսինն ու աստղերը: Բանաստեղծը ներքնատեսությամբ ընկալում է արցախյան լեռներին պաշարած թախիծը: Այս լեռներում ապրող անմեղ երկնկիի ապրած տխրությունը խորիորդաշնում է արցախահայության վիշտը.

Քո Սյունյաց սարերն են թիկունքդ, լուսինն ու աստղերն են ապրումդ
Ամպրուքերն բուլր կրան ծաղկունքդ,
վառում է գարունդ,
Դարաբաղ
Երկնկիյդ աչքերը ջրերին,
Քո սերն է միշտ պարմում աշխարհին,
Ամա, սիրուն երկնկիս, մի՛ գնա, մի՛ գնա,
Ամա, դրախտ օրրանդ մի՛ թողնի, մի՛ գնա (Ե.գ.):

Ճշմարիտ է ասված, որ հայրենիքը սկսվում է ծննդավայրից: Ծննդավայրը հայրենիքի միջուկն է, եւ անհատն իր մեջ կրում է վերջինիս բաղադրամասերը: Ինչպես արդեն նշել ենք, Աշոտի համար հայրենիքի կենտրոնը Զանգեզուր աշխարհն է, որն իր քքնաղ բնությամբ վեհաճիստ սարերով, երկնքի հետ հավերժ զրուցող լեռներով. Գուսանի ստեղծագործական ներշնչման աղբյուրն է: Սյունյաց երկրի գովքն անող հանրահայտ երգը «Սյունյաց սարերը», ստացել է հանրընդհանուր ճանաչում՝ մարդկանց սրտերը համակելով հոգեզմայլ հույզերով:

Սյունիքի սիրտը Գուսանի ծննդավայրն է՝ դյուրական Գորիսը, որ նա համարում է «սիգապանճ սարերի զարդ, վարդ»: Աշոտը երգում է փառքն այս քաղաքի այն քաջերի, որոնք հանուն սերունդների խաղաղ ու անանձ երկնքի գոհաբերեցին իրենց կյանքը երկրորդ աշխարհամարտում: Նրանք չեն մոռացվել, եւ հոգեւորականության ներկայացուցիչները, Գլանծորի համալարանի դասախոսները եւ ուսանողները: Նա կաթողիկոսի շրջաբերական ճանապարհով ներկայանում է Արղուն խանին նոր պաշտոնում հաստատվելու, ինչպես նաեւ Սյունյաց եպիսկոպոսական աթոռի կալվածատիրական հարցերը կարգավորելու համար: Արղունը սիրով է ընդունում նրան եւ արձակում է հրովարտակ, որով նրան դասում է Սյունյաց տերերի շարքը «կրկին իշխանութեամբ հոգեւոր եւ մարմնաւոր»: Այժմ հարկավոր էր իրականացնել իր վաղեմի երազանքը՝ միավորել նահանգի տարաբնույթ ազգաբնակչությունը,

ՀԵՌԱՄԻՐ ԵՎ ՀԵՏԱՍՈՒՄԻՉ «ՍՅՈՒՆԻՔԻ ՍՏԵՂԾԱՏՈՒ» ԱՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
ՀԱՅԻՍ՝ ք.ԳՈՐԻՍ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 00 47 (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

Մ.Սարյան, Գորիս, 1935թ., թուղթ, գունավոր մատիտ, 21.5x32

Մարտիրոս Սարյանը Գորիսում

Հատված «Մեծ հույզերի սերմնացանը» գրքից

1935-ի ամռանը Ակսելը նորից եկավ Գորիս՝ մի քիչ պարապելու: Առավոտը շատ շուտ էր վեր կենում: Մեր այգու առվակի մեջ չփչփացնելով լվացվում էր, թրջում, լվանում նաեւ գլուխը, սրբիչով երկար սրբվում: Մայրս ասում էր.

– Այ բալա, առավոտը ցուտ է, կմրսես, մազերդ մի՝ թրջի, գլուխդ կմրսեցնես, մատաղ լինեմ քեզ, է՞:: Գորիսի օդը սարթ է, Երեւանի վրա մի գնա:

Ակսելը ծիծաղում էր, կատակում:

– Որ գլուխս բաց է լինում, խելքս ավելանում է, մամա: Մինչեւ մայրիկը թեյը կեփեր, Ակսելն արդեն այգում էր: Ես մեր այգում տարիներ առաջ սեղան էի սարքել: Ակսելը նստում էր այդ սեղանի մոտ, վրան փռում թղթեր ու հաճգիստ, մեկը մյուսի ետեւից գրում, գրում... Ջարմանալին այն էր, որ թեկուզ հարյուր էջ գրածի մեջ ճա մի ուղղում, մի ջնջում, կամ փոփոխում չէր անում: Ինչ գրեց, ուրեմն դա էլ պետք է գրվեր:

Օրը մի քիչ տաքանում էր թե չէ, մայրիկը աննկատելի կարպետը, մի ներքնակ ու բարձ էր տանում, փռում ծառի շվաքում եւ աննկատելի հեռանում: Կարծես թե զեփյուռ էր. եկավ, փափուկ տեղ պատրաստեց, որ որդին մի քիչ հանգստանա եւ նույն թեթեւությամբ էլ գնաց, առանց մի ծպտուն հանելու:

Մի օր էլ, երբ Ակսելը այգում, խորասուզված իր մտքերի մեջ, աշխատում էր, հանկարծ մեր դարասալի փոքր դուռը հրեցին: Դարպասի փականը սովորականի պես շրխկաց: Գրիգորը վազեց ու դուռը բացեց: Ներս մտան մի խումբ անծանոթ մարդիկ:

– Ակսելը տա՞ն է, – հարցրեց ցածրահասակ, առանց գլխարկի մեկը:

– Հիմա կանչեմ, – ասաց Գրիգորը:

Բայց մինչ նա կիասներ այգու խորը՝ Ակսելին կանչելու, Ակսելն ինքը վազելով եկավ ու մեր բակում դիմավորեց Հյուրին.

– Համեցեք, համեցեք, ներս եկեք, – ուրախ գոչեց նա: – Սամա՛, հյուրեր ունես, աթոռներ բերեք:

Գրկախառնված այգի մտան Ակսելն ու Մարտիրոս Սարյանը, նրանց հետ էլ նաեւ մի քանի այլ նկարիչներ ու Ալլամազյան քույրերը: Ակսելի հրճվանքին չափ ու սահման չկար:

Նստել էին այգում մայրիկի պատրաստած փափուկ օթոցների վրա ու զրուցում էին: Ավելի շատ խոսում էին Ակսելն ու Սարյանը: Ակսելը մեծ հաճույքով էր խոսում Գորիսի գեղատեսիլ վայրերի մասին, մեր քաղաքի վարք ու բարքից: Ավելի խոսում էր հին Գորիսից, ապա սարերից, ծերպերից: Սարյանը, առաջին անգամ Գորիսում լինելով, իր պարտքը էր համարել անպայման այցելել Ակսելին: Այստեղ ինչ-որ կարոտ էր առաջացել գույների ու խոսքի մեծ վարպետների միջեւ:

Մի թեթեւ հյուրասիրությունից հետո որոշվեց, որ Գրիգորը, որը տան ամենափոքրն էր տասնչորս տարեկան, Սարյանին ու նրա ընկերներին կառաջնորդի դեպի Շոր ջրի ձորը, ապա դեպի Գորիս գյուղը: Այդ չքնաղ վայրերում Սարյանը ու նրա ընկերները մի քանի էսքիզներ արեցին: Սարյանը հիացել էր Գորիսով:

– Դե հիմա ինձ հասկանալի է, թե որտեղից են Ակսելի սքանչելի սյուժեները, լեզուն, – ասաց նա: – Այդ բոլորը Գորիսի աննման բնությունն է նվիրել նրան:

– Մին ժամից ավել էլ մարդը ինձ նստեցրել ա չոր աթոռին թա տուրուր չգաս, պատկերդ քաշում եմ: Ինքդ էլ մին ինձ ա յեշում, մին էլ ձեռքին մի պուճուր փետի նման պյան կա, թաթախում ա ռանգի մեջ, քիցում կտավի յիրա: Հոգիս տյուս էկավ, մինչանք անշարժ նստեցի: Ղամուրից քիչ էր մնում տափը ճղվեր մեջը մտնեն: Բա կնկիկ արմատը էդքան վախտ խալխի տղամարդու երեսին կնշի՞", – հետագայում մայրս այսպես էր վերհիշում այն օրը, երբ Սարյանը Գորիսում նկարել էր իրեն:

Շատ տարիներ անց Մարտիրոս Սարյանը ինձ հասցեագրած մի նամակում հիշել էր իր Գորիսում եղած ժամանակ Ակսելին այցելելու ու մայրիկիս նկարելու դեպքը: Ահա թե ինչ էր գրել նա.

«Հարգելի Վահան Բակունց.
Ստացա Ձեր նամակը եւ շտապում եմ պատասխանել: Ես Գորիսում եմ եղել 1935 թվին, ոչ Ակսելի հրավերով, բայց ինչպե՞ս կարելի էր լինել Գորիսում եւ չայցելել Ակսելին:

Ես շատ պարզ հիշում եմ նրան՝ իրենց այգում նստած խորասուզված գրում էր, երբ ես մտա բակը, գուցե ես ընդհատեցի նրա մտքերը, բայց նա ինձ ընդունեց մեծ հրճվանքով, եւ մենք անկեղծ զրույցի բռնվեցինք:

Դժբախտաբար, ես չեմ հիշում մանրամասն, թե ինչի մասին էինք մենք խոսում, բայց մի բան լավ եմ հիշում, որ ես հայտնեցի իմ հիացմունքը Գորիսի ինքնատիպ ու գեղեցիկ բնության մասին: Իսկ Ակսելը ինձ լսում էր մեծ գոհունակությամբ եւ չթաքցնող հպարտությամբ:

Այնուհետեւ ես նկարեցի նրա մոր դիմանկարը: Ակսելը այնքան էր հավանել այդ նկարը, որ ես այն նվիրեցի նրան»:

Մայրիկիս այդ հիասքաչ նկարը ներկայացուց Գորիսի Ակսել Բակունցի տուն-թանգարանում է:

ՎԱՀԱՆ ԲԱԿՈՒՆՑ



Մ.Սարյան, Գորիսի վիմավոր ժայռերը, 1935թ., կտավ, յուղաներկ, 54x65.5:

Մ.Սարյան, Գորիս, 1935թ., թուղթ, գունավոր մատիտ, 19.5x32:

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■

ՀԵՌԱՄԻՐ ԵՎ ՀԵՏԱՍՈՒՄԻՉ «ՍՅՈՒՆԻՔԻ ՍՏԵՂԾԱՏՈՒ» ԱՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
ՀԱՅԻՍ՝ ք.ԳՈՐԻՍ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 00 47 • (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

Էսքիզային խոհեր Գորիսի գեղարվեստի մասին

Անցյալ դարասկզբին հնամենի Կյորեսը մեռնում էր, ինչպես «մեռնում էր Խուռուփի ձորի վերջին կաղնին»: Հետզհետե ամայացող Կյորեսի կողքին Գորիսը կատարելապես վեր էր բարձրանում: Գորիսը հաղթել էր իր շուկայով, վաճառականների կամարդարպաս տներով, քարով սալած մայթերով, թագավորական ուսումնարանով, «Սասուն» դպարանով, լիմոնադի գործարանով, Սպիտկայ բանտով եւ ռուսաց ժամով, հայոց եկեղեցիով, հռչակավոր վաճառականներով, ռուսական մանուֆակտուրայի հարյուրավոր խանութներով...

Անճախադեպ բարձրացող Գորիսը, որ «Մի կատարյալ քաղաք էր, փոքր Մոսկվա, – ինչպես ասել է քաղաքագուլխը, – Այսրկովկասի Հայդելբերգը», – արդեն առանձնանում էր իր ուրույն դիմագծով, ճարտարապետական ուրվագծերով, քաղաքի համայնապատկերի վրա երեւացող գեղարվեստական փոքրիկ դրվագներով:

Գորիսեցի հին վարպետները, քարտաշներն սկսել էին քաղաքին ինքնատիպ շունչ ու ոգի հաղորդել՝ տների զարդանախշ ճակատներով, տարբեր պետական, հասարակական շինություններով, հետագայում՝ աղբյուր, խաչքար-հուշարձաններով, առանձին հայրենասիրական հնչեղություն ունեցող կոթողներով: Տարիների հետ առավել ցայտուն ընդգծվեց այն, որ քանդակելն ի բնե նստած է յուրաքանչյուր գորիսեցի վարպետ-շինարարի հոգում:

Այսօր ունենք աշխարհին հայտնի քանդակագործ, գեղանկարիչ Սպարտակ Խաչատուրի Բաբայան, որի մոնումենտալ աշխատանքները տասնամյակներ շարունակ զարդարել են Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի, Գերմանիայի, ԱՄՆ-ի, արտերկրի շատ երկրների պուրակներն ու փողոցները: Նրա գեղանկարներն ու քանդակները ցուցադրվում են աշխարհի շատ երկրներում:

Ծնվել է 1933թ. Գորիսի շրջանի Վաղատուր գյուղում: Ավարտել է Փ.Մեթլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանը, այնուհետեւ Ս.Պետերբուրգի Սուխինի անվան գեղարվեստի ակադեմիան: Վաղուց բնակվում է ԱՄՆ-ում: Մեր հայրենակցի «Խաղաղության ձեռքեր», «Հայրենիքի պաշտպաններ» մոնումենտալ քանդակներն այսօր էլ զարդարում են Մոսկվայի նշանավոր փողոցները:

Երախտագիտությամբ պետք է հիշատակենք Գորիսի Ժողովրդական վարպետներին՝ չմոռանալով հայր եւ որդի վարպետներ Արամայիս ու Լյովա Առաքելյաններին, քանդակագործ, գեղանկարիչ Միքայել Ղուկասյանին, որոնց աշխատանքները տեղադրված են Գորիս քաղաքում եւ նրա շրջակա տարածքներում:

Փայտագործության արվեստի նրբերանգների փայլուն գիտակ է ինքնուս վարպետ Միհրան Միրումյանը, որը ոչ միայն պարզապես մարդու կենցաղը զարդարող տարաբնույթ իրերի հեղինակ է, այլեւ, որ ամենակարեւորն է, նրա ձեռքերի մեջ յուրաքանչյուր փայտի անշուշ կտոր ձեւ ու իմաստ է ստանում, շնչավորվում եւ ապշեցուցիչ նուրբ լուծումներով հասնում արվեստի կատարելության: Դրանք մոմակալներ են, լուսամփոփներ, կնոջ քանդակներ, փայտե խոյանքով ու քնքշաքով առիքնող իրերից մինչեւ կեցցողի, կահույքի խոշոր տարրեր, որոնց նույնպես հեղինակն արվեստի ուժ եւ շունչ է հաղորդել:

Փայտագործվածքում եւ փայտափորագրման հնքնուս վարպետ է նաեւ Սերժիկ Բաղդասարյանը, որը յուրօրինակ արտահայտչական միջոցներով ստեղծել է բազմաթիվ աշխատանքներ: Մասնակցել է քաղաքային ցուցահանդեսներին, ունեցել անհատական ցուցահանդես:

Նարիկ ու Նարեկ Բաղդագուլյաններ իրենց հոր՝ բրուտագործ Հրաման Բաղդագուլյանի արվեստը տարած մեկ այլ՝ քանդակի ուղղությամբ: Բրոնզե փոքր ծավալի քանդակներով նրանք բազմիցս մասնակցել են հանրապետական, հավաքական եւ թեմատիկ ցուցահանդեսների՝ կազմակերպված Հայաստանում, Արցախում, Իտալիայում: Նրանց աշխատանքների այսօր ցուցադրվում են Մեծ Կանյոնի պատկերասրահում: Արվեստի նուրբ զգացողությունը ժառանգելով բրուտագործ հորից՝ որդիներն իրենց բրոնզե քանդակներին, որոնք կոչվում են «Վրեւելք», «Արեւմուտք», «Թռչունով աղջիկը», «Օրիենտալ ջազ» կամ «Երգ», «Գաղտնիք» եւ այլն, բոլորովին նոր շունչ ու իմաստ են հաղորդել, առավել տարածական էության մեջ կերպարային գեղեցկությունը հանձրակ ներդաշնակել սյուժետային բազմազանության հետ:

Բավականին նուրբ, հեքիաթային գույներ է պարունակում Լիրա Առաքելյանի գոբելենային արվեստը: Նրա աշխատանքները՝ «Մեղեդի», «Մեր բակը», «Փոքրիկ մոլորակ», «Մայրամուտ» եւ այլն, ցուցադրվել են քաղաքային ցուցահանդեսներում, դիտողին համակել քնքուշ թախիծով, կյանքի ու սիրո, անցյալի ու գալիքին պարզած լույսի մտորումներով:

Եթե քանդակագործության մեջ հին վարպետներն էին նախահայրերը Գորիսում, ապա վստահաբար պետք է ասել, որ մեր քաղաքի գեղանկարչությունն սկիզբ առավ Գուրգեն Պարոնյանից (Գուրոս): Դա իսկական վերածնունդ, հեղափոխություն էր քաղաքի գեղանկարչության ասպարեզում:

Գուրգեն Պարոնյան (Գուրոս), ինքնանկար:

Ծնվել է 1905թ. Գորիս քաղաքում, լուսանկարչի ընտանիքում: 1920-1923թթ. ծառայել է Կարմիր բանակի շարքերում: 1927թ. քաղաքում բացել է գեղարվեստական լուսանկարչատուն: 1931թ. զբաղվել է գեղանկարչությամբ: 1933թ. տեղափոխվելով Երեւան՝ սկսել մասնակցել հանրապետական ցուցահանդեսներին: 1939-ից ՀՀ նկարիչների միության անդամ է: 1939-55թթ. նրա աշխատանքները ցուցադրվել են Մոսկվայում՝ հայ արվեստի տասնօրյակներին նվիրված ցուցահանդեսներում: Մինչեւ կյանքի վերջին տարին՝ 1981թ., պարբերաբար կազմակերպվել են Գուրգեն Պարոնյանի աշխատանքների ցուցահանդեսներ Երեւանում, հանրապետության տարբեր քաղաքներում: 1965թ. Գուրոսին շնորհվել է ՀՀ վաստակավոր նկարչի կոչում:

Գուրոսի կտավները՝ ծաղիկներ, նատյուրմորտներ, բնանկարներ, պատմազգագրական աշխատանքներ՝ իրենց բարձր տեխնիկայով եւ գեղանկարչական որակով, գույնի կիրառման որքան պարզ, նույնքան լիրիկական հնարքով, հմայում են չմիջնորդված իրադրության ցուցադրմամբ, բնության կենդանի շնչով ու զգացողությամբ, մարդկային ոգու ջերմությամբ: Գուրոսի «Վոլգի լիճը», «Տուն ժայռերում», «Մատուռ», «Խաղող ու դեղձեր», «Ջմռան առավոտ» եւ այլ լավագույն աշխատանքներ, հիրավի, իսկական դպրոց կարող են հանդիսանալ գեղանկարչական խնդիրներով հետաքրքրվող այսօրվա եւ գալիք երիտասարդների համար: Գուրոսն արվեստի մեծ աշխարհ բերեց այն, ինչ անկրկնելի է՝ իր լեռնաշխարհի վճիտ անդրադարձը, պարզապես գուրոսյան գույները:

Ճիշտ է ասված. մեծերի, ազգային արժեքների յուրաքանչյուր հաստատություն կաղում է: Այն, որ որդի Գեւորգ Պարոնյանը նույնպես գեղանկարչության աշխարհում արժեքակիր է, տարակույս չկա: Հորից նկարչության առաջին դասերն առնելուց հետո 1954թ. ավարտել է Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտի գեղանկարչության բաժինը: 1975-85թթ. Գորիսի նորաստեղծ նկարչական դպրոցի տնօրենն էր: 1954թ. Գեւորգ Պարոնյանը հանրապետական եւ միութենական ցուցահանդեսներին ներկայացրեց իր գեղանկարչական աշխատանքները, որոնք արվեստասեր հասարակության կողմից ընդունվեցին մեծ հետաքրքրությամբ, սիրով ու ջերմությամբ, իսկ թերթերն արձագանքելով Գեւորգ Պարոնյանի արվեստը համարեցին հանիրավի սիրելի եւ ընկալելի հասարակայնության բոլոր շերտերի համար՝ իր նուրբ ճաշակի, գեղարվեստական միջոցներին կատարելապես տիրապետելու նուրբ զգացողության, բնության գեղեցկությունների նկատմամբ նրբանկատ, խորազգաց հատկությունների շնորհիվ:

1964թ. Գեւորգ Պարոնյանը նկարիչների միության անդամ է: Մինչեւ կյանքի վերջը՝ 1995թ., գեղանկարիչը վայր չդրեց վրձինը, եւ մշտապես լուսավոր արվեստանոցը բուրում էր թարմ կտավների յուղաներկով:

Հայր ու որդի Պարոնյանները շուրջ 70 տարի ստեղծագործական հերթափոխությամբ արարեցին հայրենի քաղաքում, ստեղծեցին արվեստի գլուխգործոցներ, համամարդկային արժեքներին ավելացնելով նոր արժեքներ, բարությամբ, սիրով, կյանքի բնական ոիթմի զգացողությամբ, ներիում, անդորրավետ, բնության խաղաղ տրամադրությամբ համակեցիկ մարդկանց, եւ այդ գմայլանքը, կարծում եմ, ընդամիշտ կտեւի, քանի դեռ մարդիկ կհագորդվեն նրանց ստեղծագործության հետ: Դա պարոնյանական հայացքն է, որ մեր հոգիներն է թափանցում «Գորիս գյուղ», «Ջմեռ Գորիսում», «Հին Գորիս», «Արեւածագ», «Սալորներ», «Դաշտային ծաղիկներ» եւ շատ կտավներից, եւ մեզ հափշտակած՝ դառնում առհասարակ մարդ արարածի սեփականությունը:

Գորիսում գեղանկարիչների ձեւավորման եւ կայացման մի հրաշալի շրջան սկսվեց անցյալ դարի 70-80-ական թվականներից, որը շարունակվում է մինչեւ այսօր: Հայտնվեց գեղանկարիչների մի բույլ, որից պրեստի ուժով առաջնացաս են փայլեցին արվեստագետներ Ռազմիկ Արզումանյան, Գեւորգ Սարգսյանը (Ժորիկ), Ժիրայր Սարտիրոսյանը, Սարտուն Զաքարյանը, Գագիկ Օրդյանը, Անդրանիկ Բակունցը, Միքայել Ղուկասյանը, Կարինե Վարդանյանը, Նվարդ Բալասանյանը... Նրանցից շատերը մանկուց սովորել են Գեւորգ Պարոնյանի մոտ, պարոնյանական արվեստից քաղել լավագույն դասեր: Այսօր Գորիսում ապրող եւ ստեղծագործող գորիսեցի գեղանկարիչներից արժանիորեն կարեւորվել են Անդրանիկ Բակունցը, Սարտուն Զաքարյանը, ՀՀ նկարիչների միության անդամներ Ժիրայր Սարտիրոսյանը, Ռազմիկ Արզումանյանը (բնակվում է Կանադայում), Գեւորգ Սարգսյանը (բնակվում է Երեւանում): Նրանց աշխատանքները վաղուց դուրս են եկել հանրապետության սահմաններից, եւ մեկ անգամ չէ, որ հիացրել են արտերկրի արվեստասերներին: Նրանք ամենքն էլ հայկական կերպարվեստ բերեցին իրենց ինքնատիպ գույները, հոգու ցնծալի զգայությունները, ձեւի, ծավալի, լույսի եւ ստվերի սեփական ընկալումները, զգայական իրականության պատրանքը, գեղատեսիլ լեռնաշխարհի սարերի, դաշտերի, ձորերի ու բարձունքների հեռաստանները, ֆրագմենտային գողտրիկ անկյունները տոթ ամառվա եւ հրակարմիր աշնան միջօրեները՝ ստեղծելով լուսաստվերների թափանցիկ եթեր, ընդհանուր տոնայնության մեջ մերթ սառը, մերթ տաք՝ օգտագործելով մոխրակապույտ–վարդասպիտակից մինչեւ մոխրասպիտակ–կաթնամոխրագույն նրբերանգներ՝ համադրված, կտավի եթաշերտում անեցաված, բայց տոնայնություն եւ ռիթմ պահող դեղին, կապույտ, ծիրանի, մանուշակագույն, ոսկեկարմիր, նարնջագույն, կանաչ գույների հետ: Լեռնային զավակների վճիտ գույները թերեւս միավորվում են նրանց՝ միաժամանակ հաստատելով յուրաքանչյուրի ինքնատիպ ոճը, ինքնօրինակ հոգու քնքուշ զեղումները, որոնք գունաւլուսնային ելեւէջների մեջ տեսարանին մեկ անրջային, քնարական, մեկ դրամատիկ, հուզական, նպատակի բացահայտման պատրանք են հաղորդում՝ մշտապես տրամադրության մեջ առնելով դիտողին:

Գույների լուսարձակման եւ հնչեցման գրավիչ զորությամբ են օժտված Անդրանիկ Բակունցի «Տաքեւ», «Վերիշեմ գյուղը», «Ջիեր», Մարտուն Զաքարյանի «Իրիկնամուտ», «Կնոջ աշխարհում», «Զոհաբերություն», Ժիրայր Սարտիրոսյանի «Թախիծ», «Խաչքարերի երգը», Ռազմիկ Արզումանյանի «Լեռներ», «Խնձորեսկ», «Աշուն», «Հույսի ծաղիկներ» (թուղթ, մատիտ) եւ այլ բազմաթիվ աշխատանքներ, որոնք դիտողին կտրում են կյանքի պրոզայից, տանում մաքուր լիրիկայի աշխարհը:

Այսօր Գորիսում գործում է քաղաքային պատկերասրահ (տնօրեն՝ Ժիրայր Սարտիրոսյան), որտեղ պարբերաբար թարմացվում են ցուցադրվող գեղանկարները, կազմակերպվում են ցուցահանդեսներ, ցուցադրվում Սյունիքի մարզի, Արցախի գեղանկարիչների աշխատանքները: Արդեն 3-րդ տարին է, ինչ պատկերասրահը կազմակերպում է Հայաստանի լավագույն գեղանկարիչների աշխատանքների ցուցահանդեսներ, հրավիրվում են նկարիչներ, որոնք հանդիսում են քաղաքի արվեստասեր հասարակայնության հետ:

1982թ. գործում է ՀՀ գեղագիտության ազգային կենտրոնի Գորիսի մասնաճյուղը (տնօրեն՝ Սարտուն Զաքարյան), որը մեծ դեր է խաղացել եւ այժմ էլ մեծ դեր ունի քաղաքի մշակութային կյանքի զարգացման, մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության գործում:

Այս ամենից զատ քաղաքում վաղուց գործում է արվեստի դպրոց (տնօրեն՝ Սիլվա Սաատրյան), որտեղ տասնամյակների ընթացքում հարյուրավոր սաներ ուսանել են արվեստի տարբեր ճյուղերի գաղտնիքներն ու նրբությունները:

...Անմիտելով էսքիզային խոհերը Գորիսի գեղարվեստի, նրա տաղանդավոր ներկայացուցիչների մասին՝ կարելի է ասել՝ հայ կերպարվեստը թեկուզ մի նրբերանգով հարստացավ նաեւ գորիսեցի արվեստագետների ստեղծագործությամբ, որը, ամրապնդելով իր դերը եւ ոճը, նոր լույսով բացահայտեց հայկական լեռնաշխարհի գեղեցկությունները, հայ իրականությունը, հայ ոգու հայրենասիրական առկայծումները՝ գալիք սերունդների մեջ թռիչքների համար ձեւավորելով դպրոց:

ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՀԵՌԱՄԻՐ ԵՎ ՏԵՂԱՏԱՐԱԾ «ՍՅՈՒՆԻՔԻ ՍԵՐՄԱՅԻ» ԱՄՍԱԹԵՐԹ-ՊԱՏԿԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ քաղաք, ՀԱՐՈՒՍՅԱՆ, 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 00 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

21-րդ դարասկիզբ
Գորիսի առողջապահական հիմնարկները

Լուսանկարը՝ Կ. Հովհաննիսյանի

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ 2010թ. դեկտեմբերի 22-ին հանդիսավորությամբ բացվեց Գորիսի բժշկական կենտրոնը:

Լուսանկարը՝ Կ. Հովհաննիսյանի

«Սյունիք» ախտորոշիչ կենտրոնը

Լուսանկարը՝ Կ. Հովհաննիսյանի

2010թ. հոկտեմբերի 16-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ բացվեց Գորիսի սրտաբանական կենտրոնը:

Լուսանկարը՝ Կ. Հովհաննիսյանի

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սյունյաց պատմագիրը՝ Ստեփանոս Օրբելյան

Սկիզբը՝ էջ 45

խիկ դրամ:

16 տարի անընդմեջ վարելով Սյունյաց եպիսկոպոսական աթոռը՝ Ստ.Օրբելյանը վախճանվեց 1303թ. եւ թաղվեց Ամաղուի Նորավանքի Օրբելյան իշխանների տոհմական գերեզմանոցում:

Ստ.Օրբելյանի մասին Սյունյաց նահանգի տարածքում եւ մատենագրական աղբյուրներում պահպանվել են բազմաթիվ հիշատակագրություններ, որոնցում գրիչները փառաբանում են իրենց մեծահամբավ մտավորականին եւ հոգեւոր առաջնորդին:

Ստ.Օրբելյանը թողել է գրական հարուստ ժառանգություն, որից պահպանվել ու մեզ է հասել յոթ աշխատություն, օրինակել է տվել նաեւ մի շարք ձեռագիր մատյաններ:

Ստ.Օրբելյանի ստեղծագործական կյանքում առանձնահատուկ տեղ է գրավում նրա «Հիշատակաց մատեանը», որ ընթերցողին հայտնի է «Պատմութիւն տանն Սիսական» կամ «Պատմութիւն նահանգին Սիսական» խորագրով: Այս երկը Սյունիքի միջնադարյան ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական կյանքի համապարփակ գրական մի հուշարձան է, զարգացած ֆեոդալիզմի իրականությունը հարազատորեն ներկայացնող անգրագնակ գրական կոթողներից մեկը: Աշխատությունը գրավել է հայագետների ուշադրությունը եւ ունեցել է մի շարք հրատարակություններ: Առաջին անգամ հրատարակվել է 1859թ. Փարիզում, Կարապետ Շահնազարյանի ջանքերով, երեք տարի հետո՝ 1861թ., հրատարակեց Մկրտիչ Էմինը Մոսկվայում երկու գրչագիր օրինակների փարիզյան տպագրության բաղդատությամբ: Գրքի վերջում զետեղված է հարկացուցակը:

1299թ. Ստեփանոս մետրոպոլիտն ավարտում է «Պատմութիւն տանն Սիսական» աշխատությունը. Գլաձորի, Հերմոնավանքի եւ այլ ուսումնագիտական կենտրոնների գրիչներն ընդօրինակում եւ տարածում են այդ մեծարժեք երկը, որը Սյունյաց լեռնաշխարհի պատմության առաջին ծավալուն ուսումնասիրությունն էր:

Հետեւելով Մ.Խորենացուն՝ Ստ.Օրբելյանը Սյունյաց պատմությունն սկսում է ավանդական Սիսակ նահապետից, հաջորդաբար ներկայացնում նահանգի առավել աչքի ընկած պատմական դեմքերին եւ նրանց հետ կապված կարեւոր իրադարձությունները՝ ընդհուպ մինչեւ Օրբելյան տոհմի հանդես գալը: «Պատմության» 2-րդ գլխում քվարկում է Սյունյաց 12 գավառները՝ աշխատելով ավանդական զրույցների հիման վրա ստուգաբանել դրանց անվանումների վարկածները, նշում լեռնաշխարհի առավել կարեւոր պաշտպանական կառույցները:

Ստ.Օրբելյանն ապա անդրադառնում է Սյունիքում եւ Աղվանքում Գրիգոր Լուսավորչի թոռան Գրիգորիսի կողմից քրիստոնեությունը տարածելու, նրա նահատակվելու հանգամանքներին՝ ընդգծելով Սյունյաց եպիսկոպոսության, մասնավորապես, կրթական գործում կատարած խոշոր դերը: Հեղինակը, ինչպես սպասելի էր, շռայլ գովեստով է ներկայացնում Սյունյաց նախարարական տան եւ գահերեցության շրջանի խոշոր իշխանների գործունեությունը:

Որպես բարձրաստիճան հոգեւորական՝ Ստ.Օրբելյանը չէր կարող անտեսել նահանգի առավել հեղինակավոր կրոնական գործիչների (Գրիգորիս, Երիցակ, Գյուտ, Ստեփանոս Իմաստասեր, Սողոմոն, Հովհաննես եւ այլք) վարքագրությունը:

Ստ.Օրբելյանը գրում է արաբական արշավանքների եւ խալիֆայության տիրապետության օրոք երկրի քաղաքական ու տնտեսական ծանր կացության մասին: Առանձնապես մեծ արժեք են ներկայացնում «Պատմության» այն հատվածները, որտեղ հանգամանորեն լուսաբանվում են Սյունյաց նախարարական ընտանիքների քայքայման եւ գահերեցության հաստատման տոհմային-քաղաքական պայմանները, ներֆեոդալական հարաբերությունների սրման դրդապատճառները, տիրույթների սեփականման համար ծագած խռովություններն ու ռազմական ընդհարումները:

Ստ.Օրբելյանը ներկայացնում է Սյունիքի վանական միաբանությունների կալվածատիրական գործարքները, ճոխ նվիրատվությունները՝ թագավորներից, գահերեց եւ գահակալ իշխաններից, հարուստ մեծատուններից կամ առանձին հավատացյալներից:

«Պատմության» մեջ զետեղված մի քանի տասնյակ կալվածագրերն ու սիգել-հրովարտակները ապացուցում են այն իրողությունը, որ Սյունյաց հոգեւոր վիճակը զարգացած ավատատիրության դարաշրջանում սեփական հարստությամբ կարող էր մրցել ոչ միայն կաթողիկոսարանի, այլեւ աշխարհիկ ամենախոշոր կալվածատիրոջ հետ: Պատմիչը հիացմունքով է նկարագրում Տաթեւի վանքի մայր տաճարի՝ Պողոս-Պետրոս եկեղեցու օծման արարողությունների ժամանակ հայոց Սմբատ Ա թագավորի, Աշոտ Սյունյաց գահերեցի, Վասպուրականի իշխանաց իշխան Գագիկ Կոծրունու եւ այլոց առատաձեռն նվիրատվությունները:

Որպես տիրապետող դասի ներկայացուցիչ, Սյունյաց իշխանազուն եւ հոգեւոր առաջնորդ՝ Ստ.Օրբելյանը ջանում է արդարացնել Սյունիքի (Կապանի) թագավորության ստեղծումը, որը, նրա կարծիքով, Երեւան է եկել պատմական անհրաժեշտությամբ՝ ժամանակի թելադրանքով:

Ստ.Օրբելյանի նկարագրությամբ Սյունյաց թագավորության մայրաքաղաք Կապանն ունեցել է առանձին փողոցներ ու թաղամասեր, որոնցից հիշատակվում են Խնձորի գլուխն ու Ձիտաթաղը: Պատմիչը կսկիծով է ներկայացնում Կապանի կործանումը 1103թ. Մելիք-Շահի երբեմնի մատռվակ Չորթմանի հրոսակախմբերի կողմից, արձանագրում Սյունյաց իշխանական տոհմերի արտագաղթն ինչպես Հայաստանի մյուս գավառները, այնպես էլ դեպի օտար երկրներ: Հոգեւոր առաջնորդը նշում է նաեւ իր կրած տառապանքները նահանգի վանքերն ու եկեղեցիները մոնղոլական ասպատակություններից զերծ պահելու եւ ապահարկ վիճակը պահպանելու գործում, մանավանդ Տարասայիճ իշխանի մահվանից հետո, երբ ստիպված է եղել հաճախ, նույնիսկ կաշառքի միջոցով ապահովագրել կրթաշնչությունային հաստատությունների ունեցվածքը: Ստ.Օրբելյանը օգտվել է ինչպես հայկական, այնպես էլ վրացական աղբյուրներից:

«Պատմության» վերջին էջերում նա զետեղել է կաթողիկոսների եւ Սյունյաց եպիսկոպոսների գավազանացանկերը՝ ըստ հաջորդականության նշելով նրանց գահակալության տարիները: Պատմական մեծ արժեք է ներկայացնում այս աշխատությանը կցված Հարկացուցակը, որի թվական միավորների առեղծվածն առ այսօր գտնվում է միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական պրոբլեմներով զբաղվող մասնագետների ուշադրության կենտրոնում:

«Սյունյաց աշխարհ» №18, 2003թ.

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԵՌԱՄԻՐ ԵՎ ՏԵՂԱՏԱՐԱԾ «ՍՅՈՒՆԻՔԻ ՍԵՐՄԱՅԻ» ԱՄՍԱԹԵՐԹ-ՊԱՏԿԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ քաղաք, ՀԱՐՈՒՍՅԱՆ, 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 00 47 = (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ՈՒՐՎԱԳԻԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Զանգեզուրի գավառը

Գորիսը՝ վարչական կենտրոն՝ 65 տարի համանուն շրջանի, 90 տարի՝ Զանգեզուրի գավառի, գավառամասի եւ հինգ ամիս՝ Ինքնավար Սյունիքի ու Լեռնահայաստանի Հանրապետության, մեկ ամիս՝ Հայաստանի Հանրապետության

1840թ. Զանգեզուրում սկիզբ է առնում վարչական նոր կացություն, որը, որոշ փոփոխություններով, տեւում է մոտ մեկուկես դար: Վարչական նոր իրավիճակում միանգամայն նոր առաքելություն է վիճակվում մելիքական Գորիսին:

1840թ. ապրիլի 10-ին (սենատոր Հանի մշակած օրենքով) Անդրկովկասում կատարվեց վարչական նոր բաժանում: Ղարաբաղի պրովինցիան վերածվեց Շուշու գավառի՝ Կասպիական մարզի կազմում: Զանգեզուրի բոլոր մելիքությունները մտան Շուշու գավառի մեջ՝ որպես առանձին գավառամաս: Նոր գավառամասի կենտրոն հայտարարվեց Գորիսը:

1849թ. Զանգեզուրի գավառամասը՝ Գորիս կենտրոնով, մտավ Երեւանի նահանգի մեջ:

1867թ. տեղի ունեցավ վարչական նոր ռեֆորմ: Դեկտեմբերի 9-ի կայսերական հրամանագրով ստեղծվեց Ելիզավետպոլի նահանգ՝ Ելիզավետպոլ (Գյանջա) կենտրոնով: Հետագայում մի քանի անգամ տեղի ունեցավ վարչական միավորների խոշորացում: Արդյունքում՝ 20-րդ դարասկզբին նահանգի մեջ մտնում էր ութ գավառ: Դրանք էին Արեշի, Ջեվանշիրի, Ելիզավետպոլի, Զանգեզուրի, Ղազախի, Կարյագինի (Ձեբրայելի), Նուխիի, Շուշիի գավառները: 1891թ. նահանգի բնակչությունը կազմում էր 774963 մարդ: Բնակչության 53.3 տոկոսը հայ էր:

Զանգեզուրի գավառը կազմավորվեց 1868թ. փետրվարի 25-ին: Նորաստեղծ գավառում ներառվեցին տարածքներ Շուշիի եւ Որդուբադի գավառներից: Սկզբնական շրջանում գավառի տարածքը 6829.7 քառակուսի վերստ էր (1 վերստը 1.06կմ է): Գավառի բնակչությունը սկզբնական շրջանում 137871 էր, գերակշռող մասը հայեր էին: Հարավ-արեւելքում գավառը սահմանակից էր Պարսկաստանին. սահմանն Արաքս գետն էր: Գավառում կար 326 գյուղ՝ միավորված 75 գյուղական համայնքում: Բնակչության մեծագույն մասը նստակյաց կյանք էր վարում. հիմնականում զբաղվում էին հողագործությամբ, անասնապահությամբ, հանքարդյունաբերությամբ:

Զանգեզուրի գավառի պատմությունը, ցավոք, առանձին եւ հիմնաբար ուսումնասիրության նյութ չի դարձել դեռեւս: Եվ հիմա դժվար է ճշգրտորեն ասել, թե 1868-1917թթ. (ցարական իշխանության շրջանում) ովքեր եւ երբ են կառավարել գավառը: Առայժմ հայտնի են մի քանի գավառապետերի անուններ՝ Անտոն Կարաեւ, Ստարացկի, Ռուստամբեկով, Պֆելլեր, Վավլիանի, Անտոնով, Պիվարովիչ, Տատեւ…

1917թ. Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից հետո պահպանվեց վարչատարածքային՝ նախկինից եկող վիճակը: Սակայն փոխվեց կառավարման ձեւը: 1917թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Թիֆլիսում կայացած հայ ազգային խորհուրդների: Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհուրդն ուներ հետեւյալ պատկերը՝ նախագահ՝ բժիշկ Միքայել (Միշա) Պարոնյան, անդամներ՝ Արշակ Շիրինյան, Գեղեռն Տեր-Միհայան, Նիկոլայ Հովսեփյան, անդամ-գանձապահ՝ Արսեն Մելիք-Քարայան, անդամ-քարտուղար՝ Տիգրան Սազանդարյան, հաշվապահ՝ Սամվել Մաշուրյան, գրագիր՝ Գեւորգ Գրիգորյան, համարագրող՝ Սաստուր Ասծատրյան: Տեղերում վարչական իշխանությունն անմիջապես իրականացնում էին շրջանային կոմիսարները: Գորիսի շրջանը կամ Բուռ Զանգեզուրը բաժանված էր երեք ենթաշրջանի՝ Գորիսի (կոմիսար՝ Գեւորգ Բալասանյան), Տեղի (կոմիսար՝ Իսահակ Բուշտիցյան), Հալիձորի (կոմիսար՝ Զախար Տեր-Դավթյան):

Արխիվային սակավաթիվ փաստաթղթերն անգամ վկայում են, որ Զանգեզուրի ազգային խորհուրդը պատմության դժվարին այդ շրջանում արժանապատվորեն է կատարել իր առաքելությունը: Զանգեզուրի ազգային խորհուրդը, թեեւ գավառում ժամանակ առ ժամանակ ստեղծվում էին քաղաքացիական ու զինվորական իշխանության այլ մարմիններ եւս, մինչեւ 1920թ. երկրորդ կեսը կատարեց իր առաքելությունը:

1918թ. մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդն ընդունեց որոշում անկախ պետություն ստեղծելու մասին: Սկզբում իշխանության ժամանակավոր գործառույթներն իրականացնում էր Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը: Հայաստանում իշխանության ղեկը Երեւանի ազգային խորհրդի ձեռքում էր՝ Արամ Մանուկյանի գլխավորությամբ:

Առաջին հանրապետությունում Հայաստանը բաժանված էր չորս նահանգապետությունների՝ Արարատյան, Շիրակի, Վանանի, Սյունյաց: Վերջինս, սակայն, շատ հաճախ ձեւականորեն էր համարվում առաջին հանրապետության վարչատարածքային միավոր: Այդուհանդերձ, կենտրոնական կառավարությունը ջանում էր Զանգեզուրում դառնալ իրավիճակի տեր: Եվ 1919թ. հունվարին Ղարաբաղի ու Զանգեզուրի պետական կոմիսար է նշանակվում Արսեն Շահմազյանը, որը Գորիս եկավ Զորավար Անդրանիկի հեռանալուց հետո, գլխավորեց հայկական երկու երկրամասի հայության հնքնապաշտպանական պայքարը մինչեւ 1919թ. նոյեմբերի վերջը:

1919թ. նոյեմբերին Զանգեզուրում Արսեն Շահմազյանին փոխարինեցին երկու գործիչներ՝ Սերգեյ Մելիք-Յոլչյանը՝ որպես քաղաքացիական մասի ղեկավար, եւ գեներալ-մայոր Նիկոլայ Ղազարյանը՝ որպես զինվորական մասի ղեկավար: Զանգեզուրում քաղաքացիական իշխանությունն ամփոփվեց վարիչների խորհրդի ձեռքում՝ Սերգեյ Մելիք-Յոլչյանի նախագահությամբ: Շրջանը բաժանվեց երկու գավառի՝ Զանգեզուրի գավառ (Բուռ Զանգեզուր, Տաթեւի ու Ղարբասի ձորի գյուղեր, Սիսիան), Կապաբդողթ (Ղափան, Բաղաբերդ-Գեղվա ձոր, Արեւիք եւ Կողթ): Զինվորական տնսակետից Զանգեզուրը բաժանվեց երեք մասի՝ Սիսիան (հրամանատար՝ Պողոս Տեր-Դավթյան), Կապարդողթ (հրամանատար՝ Գարեգին Նժդեհ), Բուռ Զանգեզուր՝ Գորիս (հրամանատար՝ գեներալ-մայոր Նիկոլայ Ղազարյան): Եվ Կապարդողթի, եւ Սիսիանի հրամանատարները եղբարկվում էին գեներալ-մայոր Նիկոլայ Ղազարյանին:

1920թ. հունիսի 9-ին Մելիք-Յոլչյանը հրաժարական տվեց, որից հետո Զանգեզուրի շրջանների գեներալ-կոմիսար դարձավ Զախար Յոլչյանը (գավառի պաշտպանության ակտիվ կազմակերպիչներից մեկը), որի իշխանությունը տեւեց ընդամենը մեկ ամիս՝ մինչեւ բոլշեւիկների Գորիս մտնելը:

Շարունակությունը՝ էջ 50

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

Պատմական դեմքեր. գորիսյան առնչություններ

1964թ. Գորիսի Եռաբլրի սարահարթում հայտնաբերվել է հայոց արքա Արտաշես Ա-ի (189-160թթ. մ.թ.ա) արամերեն լեզվով գրված սահմանաքար:

Սմբատ 1-ին Բագրատունի թագավորն այս վայրով անցավ 906թ. աշնանը: Եկել էր Սյունիք՝ մասնակցելու Տաթեւի Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու նավակատիքին:

Ըստ Ստ.Օրբելյանի՝ «....Այդ ժամանակներում նետողաց ազգի զորագլուխն էր Բաչու նոյինը, որն ամենքի վրա իշխում էր որպես թագավոր (Այս Բաչու նոյինը մոնղոլ-թաթարական զորքերի հրամանատար նշանակվեց 1242թ.-խմբ.): Նա իր բանակով նստած էր Հաբանդ գավառում, Չագածորի մուտքի վրա»:

Ալեքսանդր Մյասնիկյան, Կոմկուսի Անդրերկրկոմի առաջին քարտուղար, Հայաստանի կառավարության նախագահ, ռազմական գործերի ժողկոմ (Գորիս է այցելել 1921 կամ 1922 թվականին)

Աղասի Խանջյան, ՀԿ(բ) Կ կենտկոմի առաջին քարտուղար (Գորիս է այցելել 1936թ. գարնանը, իսկ Ս.Խանզադյանի հավաստմամբ՝ 1934 կամ 1935 թվականին, մեկ այլ աղբյուրի վկայությամբ՝ 1931թ. երկրաշարժից հետո)

Գրիգոր Հարությունյան, ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար (Վերջին անգամ Գորիս է այցելել 1952թ.)

Կիլիկիայի հայոց Հեթում Բ թագավորը Բաչուին հանդիպելու համար այցելեց Ձագեձոր՝ Վարարակնի հովիտ:

Անտոն Քոչինյան, ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար (նշանավոր էր 1952թ. այցը՝ ՀԿԿ Գորիսի շրջկոմի պլենումի զեկուցողն էր, իսկ վերջին այցը 1974թ. էր):

Յակով Զարոբյան, ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար (Գորիս է այցելել 1961 թվականին)

Անաստաս Միկոյան, ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահության անդամ (Գորիս է այցելել 1968 թվականին)

Հովհաննես Բաղրամյան (Վերջին անգամ Գորիս է այցելել 1968թ. հոկտեմբերին)

Կարեն Դեմիրճյան, ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար, ՀՀ ԱԺ նախագահ (Վերջին անգամ Գորիս է այցելել 1999թ. մայիսի 7-ին՝ նախընտրական քարոզի նպատակով՝ իբրեւ «Միասնություն» դաշինքի համանախագահ)

Սուրեն Հարությունյան, ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար, արտակարգ իրադրության հանրապետական խորհրդի նախագահ (Գորիս է այցելել 1990թ. հունվարի 28-ին)

Լեւոն Տեր-Պետրոսյան, ՀՀ 1-ին նախագահ (Վերջին անգամ Գորիս է այցելել 2008-ի փետրվարի 13-ին՝ նախընտրական քարոզի նպատակով՝ իբրեւ ՀՀ նախագահի թեկնածու)

Ռոբերտ Քոչարյան, ՀՀ 2-րդ նախագահ (Այդ պաշտոնում առաջին անգամ Գորիս այցելեց 1998թ. հոկտեմբերի 31-ին՝ Գորիսի նոր ջրատարի բացման կապակցությամբ)

Սերժ Սարգսյան, ՀՀ 3-րդ նախագահ (Գորիս է այցելել 2010թ. դեկտեմբերի 22-ին՝ մասնակցելու Գորիսի հիվանդանոցի վերաբացմանը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՐԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՊԵ՝ ք.ԳԱՌՆԻ, ՀԱՅՈՑ ԶՈՐԱՊԱՏ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ՈՒՐՎԱԳԻԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Զանգեզուրի գավառը

Գորիսը՝ վարչական կենտրոն՝ 65 տարի համանուն շրջանի, 90 տարի՝ Զանգեզուրի գավառի, գավառամայի եւ հինգ ամիս՝ Ինքնավար Սյունիքի ու Լեռնահայաստանի Հանրապետության, մեկ ամիս՝ Հայաստանի Հանրապետության

Սկիզբը՝ էջ 49

Հուլիսի 5-ին 11-րդ կարմիր բանակի 32-րդ դիվիզիայի հեծյալ բրիգադը մտավ Գորիս: Քաղաքը գրավելու առաջին իսկ օրը կազմակերպվեց Զանգեզուրի գավառի հեղափոխական կոմիտե (Գավխեղկոմ), որի կազմի մեջ մտան Հակոբ Կամարիի (ճախագահ), Միքայել Չայանը (ճախագահի տեղակալ), Քրիստափոր Մկրտչյանը (քարտուղար), Համբարձում Տեր-Հովհաննիսյանը եւ Լեւոն Առուստամյանը (Հեղկոմի անդամներ): Ավելի ուշ Հեղկոմի նախագահ դարձավ Հայրապետ Տատյանը (Հակոբ Կամարիին անցավ կուսակցական աշխատանքի): Որոշ տեղեկությունների համաձայն՝ Հեղկոմը գլխավորել է նաեւ Գրիգոր Օհանջանյանը:

1920թ. նոյեմբերին Զանգեզուրում տապալվեց խորհրդային իշխանությունը: Կարմիրբանակայիններից ազատագրված Զանգեզուրի բարձրագույն իշխանությունը Գորիսում ձեւավորված բանվորագյուղացիական ժամանակավոր խորհուրդն էր՝ Տիգրան Մելիք-Յուսեֆիյանի գլխավորությամբ: Խորհուրդը Զանգեզուրի տարբեր վայրերում ստեղծեց շրջանային խորհուրդներ, որոնք իրականացնում էին գործադիր իշխանություններ:

Սերգեյ Մելիք-Յոլչյան

Զախար Յոլյան

1920թ. դեկտեմբերի 25-ին Տաթեւի վանքում հրավիրվեց Զանգեզուրի աշխատավորության առաջին համագումարը: Այն Զանգեզուրը հայտարարեց ժամանակավորապես ինքնավար: Համագումարը ճանաչվեց որպես Ինքնավար Սյունիքի բարձրագույն օրենսդիր մարմին: Որպես գործադիր իշխանություն խորհուրդը վեց ամիս ժամանակով ընտրեց ինը հոգուց բաղկացած դիվան: Ինքնավար Սյունիքը բաժանվեց վեց շրջանների՝ Բուն Զանգեզուր, Տաթեւի ձոր, Կապան, Դարաբաղի ձոր, Սիսիան, Գնդեւազ: Համագումարը Սյունյաց սպարապետ կարգեց Գարեգին Նժդեհին: Ինքնավար Սյունիքի կառավարության նախագահ ընտրվեց Գ.Տեր-Միհայլյանը: Ինքնավար Սյունիքի սահմաններ ճանաչվեցին Զանգեզուրի գավառի սահմանները, իսկ մայրաքաղաք հռչակվեց Գորիսը:

1921թ. ապրիլի 26-ին Տաթեւում հրավիրվեց Զանգեզուրի աշխատավորության երկրորդ (արտակարգ) համագումարը: Այն Սյունիքը Վայոց ձորի հետ միասին հռչակեց Լեռնահայաստանի Հանրապետություն՝ Գորիս մայրաքաղաքով: Լեռնահայաստանի կառավարության վարչապետ եւ արտաքին գործերի ու ռազմական նախարար ընտրվեց Գարեգին Նժդեհը:

Լեռնահայաստանի Հանրապետությունը իրավական առումով դադարեց գոյություն ունենալ 1921թ. հուլիսի 1-ին: Մեկ օր առաջ՝ մայիսի 31-ին, ըստ Սերգեյ Հախվերդյանի («Գորիսի ամփոփ պատմություն», էջ 262), «ՀՅ կառավարությունը՝ Ս.Վրացյանի եւ Լեռնահայաստանի կառավարությունը՝ Գ.Նժդեհի ղեկավարությամբ Գորիսում հրավիրեցին միացյալ նիստ եւ համաձայնության եկան միասնական կառավարություն կազմելու: Այդ ձասին հուլիսի 1-ին ստորագրվեց պաշտոնական փաստաթուղթ: Լեռնահայաստանը վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն, որի մայրաքաղաք հաստատվեց Գորիսը: Նոր կառավարության վարչապետը եղել է Ս.Վրացյանը: Կառավարության կազմում էին 11 նախարարներ… Նոր պետությունը գոյություն ունեցավ շուրջ մեկ ամիս: Գորիսը դարձավ ՀՅ մայրաքաղաք: Այո՛, Խորհրդային Հայաստանի կողքին հռչակվեց երկրորդ հայկական պետությունը»:

Կարմիր զորամասերը Գորիս մտան 1921թ. հուլիսի 2-ին: Զանգեզուրում վերահաստատվեց խորհրդային իշխանություն:

1921թ. օգոստոսի 31-ին ՀԽՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի որոշմամբ Զանգեզուրի տարածքում ստեղծվեց երկու գավառ՝ Մեղրու եւ Զանգեզուրի գավառ: Գորիսի, Տաթեւի, Սիսիանի, Կապանի եւ Տեղի գավառակներից կազմվեց Զանգեզուրի գավառը: Տարածքը 3754 քառակուսի կմ էր, բնակչության թիվը (1926թ. մարդահամարի տվյալներով)՝ 68918 մարդ: Գորիսը զրկվեց քաղաքի կարգավիճակից: Միայն 1924թ. ապրիլի 5-ին Գորիսը վերստին ստացավ քաղաքի կոչում եւ դարձավ հանրապետության յոթ քաղաքներից մեկը, ունեցավ քաղաքային իշխանություն: Քաղխորհուրդը տեղակալվեց բժիշկ Միքայել (Միշա) Պարոնյանի պետականացված շենքում, ապա ներկայիս դեղատան շենքի երկրորդ հարկում:

Խորհրդային իշխանության վերահաստատումից հետո կուսակցության Զանգեզուրի գավառային կոմիտեի առաջին քարտուղարներ էին (գործադիր իշխանությունը, փաստորեն, գտնվում էր կուսակցական մարմինների ձեռքում)՝ Երեմիա Բակունցը (հետագայում գնդակահարվեց), 1921թ.՝ Թավաքալյանը (հետագայում գնդակահարվեց), 1922-23թթ.՝ Քեռին (Գաբրիել Կարապետյան), 1923-24թթ.՝ Գառնիկ Ղազարյանը, 1924-25թթ.՝ Հ.Մկրտչյանը, 1926թ.՝ Ա.Սովսիսյանը, 1927-28թթ.՝ Ս.Օթյանը (հետագայում գնդակահարվեց), 1928-30թթ.՝ Գ.Քալաշյանը, 1930թ.՝ Բատիկյանը:

1930թ. սեպտեմբերի 9-ին վերացավ Զանգեզուրի գավառը: Փոխարինը ստեղծվեցին Գորիսի, Կապանի, Սիսիանի, Մեղրու վարչական շրջանները: Գորիսի շրջանի վարչական տարածքը 752 քառակուսի կմ էր, կենտրոնը՝ Գորիս քաղաքը: Գորիսի շրջանի մեջ մտնում էին հետեւյալ գյուղերը՝ Վերիշեն, Ակներ, Քարահունջ, Որոտան, Բարձրավան, Շուռնուխ, Քաշունի, Սվարանց, Տաթեւ, Տաճձատափ, Հալիձոր, Շինուհայր, Խոտ, Հարժիս, Խնձորեսկ, Հարթաշեն, Ներքին Խնձորեսկ, Քարաշեն, Տեղ, Արավուս, Խնածախ, Վաղատուր, Խոզճավար:

Հայաստանի երրորդ հանրապետության ստեղծումից չորս տարի անց երկրում կատարվեց վարչատարածքային ռեֆորմ: 1995թ. դեկտեմբերի 4-ին «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՅ օրենքով վարչական շրջանները (այդ թվում՝ Գորիսի շրջանը) վերացան: ՀՅ տարածքը բաժանվեց տասը մարզի եւ մարզի կարգավիճակ ունեցող երեւան քաղաքի (հետագայում երեւան քաղաքի կարգավիճակը փոխվեց): Գորիսի, Կապանի, Սիսիանի, Մեղրու վարչական շրջանների հիման վրա կազմավորվեց Սյունիքի մարզը՝ Կապան կենտրոնով (մարզի տարածքը 4506 քառակուսի կմ է): Սյունիքի մարզպետներն էին Սուրեն Աբրահամյանը (1996-98թթ.), Ռոման Նավասարդյանը (1998-2000թթ.), Էդիկ Բարսեղյանը (2000-2004թթ.), Սուրեն Խաչատրյանը (2004թ. – մ/ա):

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Յուրի Սաֆարյան

Համալսարանի ռեկտորը, ֆիզմաթ գիտությունների դոկտորը, պրոֆեսոր

- Պետական համալսարանի կայացման, անցման փուլը՝ բոլոր առումներով, ավարտված եմ համարում: Փաստը, որ մոտ 2000 ուսանող կրթություն է ստանում մեզ մոտ, խոսուն է: Այդքան երիտասարդ, փաստորեն, մնում է շրջանում:
- Մեր համալսարանն այսօր այնպիսի հեղինակություն ունի հայաստանյան բուհական համակարգում, որ շատ-շատերը մասնավոր բուհ ավարտելուց հետո գալիս են մեզ մոտ սովորելու: Նույնիսկ պոլիտեխնիկի, բժշկականի, ժողտնտեսականի որոշ շրջաավարտներ ԳՊՀ-ում հիմա երկրորդ մասնագիտություն են սովորում:
- Արեւելագիտական թեքումով, ինչպես եւ դիզայն, տուրիզմ, բնապահպանություն մասնագիտությունների ներդրման մասին մտածում ենք:
- Երրորդ տարին է, ինչ գործում է մագիստրոսական կրթության համակարգը: Մագիստրոսական կրթություն ենք տալիս մեզ մոտ ուսուցանվող գրեթե բոլոր մասնագիտությունների գծով:
- Լավ սովորողը պետք է խրախուսվի: Եթե պետությունը դա չի անում, ապա բուհը պետք է անի…
- Մայրաքաղաքային բուհերի համեմատությամբ որոշ տարբերություններ, անշուշտ, մեզանում կան: Բայց դրանք էական չեն: Կարեւորն ուսման ոլորտն է, որտեղ էական տարբերության մասին, ընդհանուր առմամբ, խոսք լինել չի կարող:
- Հեռաբուհական շրջանում մեր շրջանավարտներն ինքնադրսեւորման ավելի մեծ հնարավորություն են ունենում:
- Համալսարանը լիովին ընդգրկված է տարածաշրջանային գործընթացների մեջ, ինչի համար շարունակաբար ամրապնդում ենք պարտնյորական հարաբերությունները գործատուների հետ:
- Գորիսի պետական քոլեջի եւ մյուս միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (որոնք Գորիսի պետհամալսարանի հետ ունեն համապատասխան պայմանագիր) շրջանավարտները կարող են առանց ընդունելության քննությունների ուսումնը շարունակել մեր համալսարանում:

Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանա՛լ զբանս յանճարոյ…

ք.Գորիս, Ավանգարդ 2
Հեռ.՝ (+ 374 284) 2 27 67, (+ 374 284) 2 01 55

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՐԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՊԵ՝ ք.ԳԱՌՆԻ, ՀԱՅՈՑ ԶՈՐԱՊԱՏ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐ

1905-06 թվականներ. Գորիսը փորձության մեջ

ԳՈՐԻՇ ՍՍԲԱՏՅԱՆ

20-րդ դարասկիզբը նոր ժամանակաշրջան էր հայ ժողովրդի կյանքում: Այն նշանավորվեց տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքի վերելքով, դժբախտաբար նաեւ ողբերգական այնպիսի իրադարձությամբ, որ հայ-թաթարական բախումներն էին: Դրանք սկսվեցին Բաքվում, չսահմանափակվեցին նավթաշխարհով, ալիք առ ալիք տարածվեցին Կովկասի այլ վայրերում, այդ թվում՝ Զանգեզուրի գավառում՝ կրելով ավելի երկարատեւ ու դաժան բնույթ:

Գավառի, նույնիսկ նրա առանձին շրջանների այդ ժամանակի պատմությունը ներկայացնելը դժվարին պարտականություն է նախ եւ առաջ աղբյուրների սակավության պատճառով: Նյութին առնչվող վավերագրերը հայտնվել են նահանգային Գանձակ կենտրոնում եւ, այսօր հարեւան երկրի արխիվների սեփականությունն են կազմում եւ անհասանելի են:

Ա-Դոյի «Հայ-թաթարական ընդհարումը Կովկասում» գիրքը գլխավոր աղբյուրն է, բայց հեռու է ամբողջական պատմությունը լինելուց: Ժամանակի մամուլն անտարբեր չի գտնվել, արձագանքել է իրադարձություններին, բայց շատ բան անտեսել է, առանձնապես զուսպ է գտնվել տեղացիների մասին տեղեկություններ հաղորդելուց: Առավել ժլատ են տեղեկությունները Գորիսի եւ գորիսեցիների մասին:

Աղեղի մեջ հայտնված գավառում ամենատանելին միատարր հայ բնակչությամբ, զինվորական եւ ոստիկանական ուժեր ունեցող գավառական կենտրոն Գորիս քաղաքի վիճակն էր: Փոխարենը, ողբերգական ու դրամատիկ դեպքերից անպակաս է եղել բուն Զանգեզուրի մյուս հինգ շրջանների (ա.Սինքեռն, բ.Խոզնավար-Խնածախ-Զեյվա-Ալիիդուլի-Հարթար, գ.Զեջիմլուներ, դ.Ղարաղշլաղ, ե.Տաթեւ) կյանքը:

Ժամանակի Գորիսին բնորոշ մի առանձնահատկության մասին. բախումները տարեցային բնույթ ունեին, եւ գորիսեցիները ճակատագրական պահերին հայտնվում էին կովի օջախներում, վճռական դեր ունենում ինքնապաշտպանության կազմակերպման, ավազակախմբերին պատժելու եւ ավազակարդեր վերացնելու գործում:

Հոդվածը չի հավակնում ամբողջական պատկերացում ստեղծել Գորիսի շրջանում արյունալի իրադարձությունների մասին: Ընդհակառակը, հույս կա արձագանքների դեպքում հնարավորինս ամբողջացնել նյութը: Հայտնի ճշմարտություններ կրկնելու փոխարեն՝ շրջանառության մեջ են դրվում նորահայտ, եզակի վավերագրեր, արխիվային նյութեր, մամուլի հրապարակումներ, հուշագրություններ…

Դարասկիզբը լավ բան չէր խոստանում, գլուխ էին բարձրացնում թուրք բեկերը: Դա լավ էր հասկանում Դաշնակցությունը: Ժողովրդին գինելու եւ սպասվող արհավիրքներին դիմագրավելու համար նա գավառներ էր ուղարկում ազգային գաղափարներով ապրող երիտասարդների: 1902-ին աշնանը, Գորիս ժամանեցին Բաքվի դաշնակցական մուտքն ու աշխատանքը Զանգեզուրում», «Հայրենիք», 1968թ., աշուն, էջ 71):

Եվ այս բոլորը արվում էր խիստ գաղտնի գավառապետ Պֆելլերի (Մամուլում հաճախ գրվում է Պուֆելլեր) քթի տակ, ում ուշադրության կենտրոնում էին նույնիսկ պետական դպրոցի դասերը եւ ով դասադուլի դիմած աշակերտներին սպառնում էր. «Եթե հանգիստ չմնաք կաքսորի Ռուսաստանի Հիւսիսային մասում գտնվող Արխանգելսկ քաղաքը» (Նույն տեղում, էջ 71):

1905 թվականից իրադրությունն այլ էր՝ բուսավորված էին հարաբերությունները: Մայիսին քոչը հասավ Գորիս: Սար բարձրացողներն իրենց հետ բերել էին Բաքվի, Նդրամի, Նախիջեւանի ընդհարումների պատմությունները, դարձել էին ավելի հանդուգն, անզգիջում կեցվածք էին ընդունել: Սկզբում հանգիստ, ապա աշնանացանն ու գարնանացանը տեղ-տեղ հողին հավասարեցնելով, խոտհարքերը շարքից հանելով՝ քոչը սար էր բարձրանում: Այդ օրերին ՀՅՅ տեղական մարմինը թռուցիկ հրապարակեց՝ կոչ անելով հայ բնակչությանը ցուցաբերել զսպվածություն, ձեռք չտալ քոչին, բացել ճանապարհները, չվերցնել նույնիսկ հետ մնացած ապրանքը: Չենթարկվողներին սպառնում էին պատժել: Կոչը սիրով ընդունվեց հայ բնակչության կողմից հուսալով, որ կլինի ցանկալի խաղաղություն, զուր տեղ արյուն չի հեղվի: Սակայն ուղեկցող զինված խմբերը սպառնալիքներ էին հղում հայկական բնակավայրերին, որոշ դեպքերում դիտավորությամբ արտերը էին քշում անասունները, փակում էին ճանապարհները: Մայիսի վերջին փակվեց Գորիս-Սիսիան ճանապարհը:

Սեբաստացի Մուրադը Այուսիքում (լուսանկարը հոդվածագրի անձնական արխիվից):

Բաքվի դեպքերից հետո (1905թ. փետրվար) մոլեռանդ, անկիրթ ու խավարամիտ զանգվածը, գործիք դառնալով ու հրահրվելով բեկերի կողմից, դարաբակալում էր, շուրջկալվեր սաքրում, որոգայթներ լարում… Հայտնվում էին հայկական գյուղերի մատույցներում, մարագներն ու խոտի դեզերն էին հրկիզում, անասուն էին փախցնում, պատանդներ ձեռք գցում, տանջամահ անում: Կառավարության գաղտնի հովանավորությունն էին վայելում, զինվել էին նրա կողմից եւ կռվում էին «ցարի թշնամիների դեմ»:

Զանգեզուրի գավառից գրված նամակներ են պահպանվել, որոնցում հայ բնակչության ապրած ահն ու սարսափն է. լուրերը թուրքերի կատարած չարագործությունների մասին եւ զենքի իսպառ բացակայությունը խուճապի էին մատնում հայերին: Խնձորեսկ գյուղից «Սազանդարթ» ստորագրությամբ նամակի բովանդական պատկերացում է տալիս այս եւ շրջակա գյուղերի տրամադրության մասին. մի մասի մոտ տիրում են վախն ու պատասխանատվության զգացումը, մյուսի մոտ իշխում է անտարբերությունը. «Մեզ մոտիկ Սիսիանի Սազրա, Շաղատ եւ Ալիլու գյուղերի վրա թուրքերի արած հարձակումները, որոնց միայն հատ ու կտոր հետեւանքներն ենք լսել, մեզ վրա ամ ու սարսափ է բերել: Հարձակումներն ու թալանումները մեր գյուղացոց հավար մի հանելուկ է գրեթե. մերոնք չէին հավատում, որ թուրքերի հետ ունեցած մեր բարեկամությունը կարող է խզվել, կամ թուրքը զենք կառնե մեզ սպանելու, մեր կայք, գույքը տանելու կգա: Ահավասիկ մեր տգետ եւ ռամիկ գյուղացու հավատիությամբ չափը: Ձեռքերը կրծքին խաչած, է՛ի, կգան, կգան, մեզ ի՞նչ են անելու. մեր աղ ու հացը մոռանալու չեն: Չէ՞ որ նոքա մեզանով են ապրում: Այո՛, չի հավատում գյուղացին, իրենից արյուն չէ դուրս գալիս, իսկ հետո առակն է սազ գալիս կրկնիլ:

Մեր գլխավոր երկյուղը մինչեւ յայլաղ գնացած թուրքերի դարձն է, որոնցից շատերը անցել-միացել են թուրք խմբերին եւ թալանել են մի քանի գյուղեր Նախիջեւանի մոտ»: (ՀԱԱ ֆ 227, ց. 1, գ. 567,թ. 75-76):

Մանր-մունր կողոպուտներ, անասնագողություն, մարդասրոր, լարվածություն Գորիսում, ընդհանուր առմամբ, տիրապետող էին մինչեւ 1905թ. օգոստոսը: Բախումները սկիզբ առան օգոստոսին, երբ Դարաբաղում տեղի ունեցած կռիվների մասին լուրերն այստեղ հասան, եւ քոչվորները սկսեցին սարերից դաշտ իջնել…

Քոչի հետ միասին Սյունիք էին թափանցել նաեւ թուրքական զինված կազմավորումներ, բեկերի հակահայկական քարոզչությունը նոր թափ էր առել: Սիսիանում հայտնի Շախսուվար Բեկը թուրքերին գրգռում էր հայերի դեմ, նրանց ճախապատրաստում էր Եռաբլրի եւ Սիսիանի շրջանի վրա հարձակվելու: Նրա ուղարկած մարդիկ Զեբրաիլի շրջանում թուրքերին ոգեւորում էին հայերի ունեցվածքով: Հուլիսի 1-ի գիշերը, թուրք մի պրիստավի վկայությամբ, Խնձորեսկի վրայով Գորիսի, ապա Սիսիանի ուղղությամբ անցել էին 80 զինված թուրքեր:

Այն, որ թուրքերը պատրաստություններ էին տեսնում հայկական բնակավայրերի վրա հարձակվելու, հուլիսի 25-ին քոչի մասին խոսող խնձորեսկցի նամակագիրը գրում է. «…Ասցնում են նույն ոչխարները, կովերը, անցկացնում են տնային նույն կարասիքը եւ մեզ պահ տված իրերը, մի քանի օր է մեծ քանակությամբ այցելում են մեզ էլ, ըստ իրենց ասելով, ի սեր բարեկամության եւ դրացիության միշտ կրկնում են զգույշ եւ պատրաստ լինել. աղ ու հաց շատ ենք կերել միմյանց հետ, մեր պարտքն է մեզ զգուշացնել:

…Լուրեր չենք ստանում, հարաբերություններն ընդհատված են: Մեր դրացի թուրքերը Մազմազալ, Գեորջիվքլի, Ղարաքահա եւ Թամուր խաղաղ դրության մեջ են: Մեր երկյուղը շրթուլլուիցիներից եւ ներքեւից զինված, ծածուկ եկած, սար անցածներից է, որոնց մասին մեզ հայտնում են եւ զգուշացնում: Ժողովուրդը սպասողական դրության մեջ է: Հնձում են արտերը: Հասարակությունը դիմել է գավառապետին՝ ցուցմունքով նահանգապետից զենք կրելու իրավունք ստանալու: Ամեն մի հրացանի պայթյուն խանգարում է մեր խաղաղ սիրտը» (Նույն տեղում, թ. 75-76):

Պատերազմական իրավիճակ ստեղծվեց Եռաբլուրի Պորտաքար վայրում օգոստոսի 16-ին չորս անվանի հայերի սպանության պատճառով (Ա-Դոյի մոտ կարդում ենք նրանց անունները՝ հայր ու որդի՝ Զիլֆուլար, Իսկանդար Սաֆրազբեկյանների ու Արշակ, Ցաֆար Մելիք-Թանգյանների): Հանցագործների գտնելու եւ պատժելու փոխարեն իշխանությունները ճնշեցին հայերին, որից երես առած եւ խրախուսված՝ տեղացի եւ քոչվոր թուրքերը նոր սպանություններ կատարեցին:

Գորիսեցիները հարկադրված էին ինքնապաշտպանական խմբեր ստեղծել բնակավայրերն ու ճանապարհները հսկելու համար: Իշխանությունների չեզոքության պայմաններում խմբերը կանգնեցին Գորիս մտնելու փորձ անող 15 թուրքերի դեմ: Եղավ հրացանձգություն, սպանվեցին մարդիկ: Այս հանգամանքը թուրքերի մեջ ծնեց գորիսեցիներին պատժելու, նրանց նսեմացնելու անզուսպ ցանկություն: Թուրք բեկերը փոխեցին Ղափանի (Ղանքեր) վրա հարձակվելու իրենց նախնական ծրագիրը եւ շարժվեցին Գորիսի ուղղությամբ:

Թուրքերին ղեկավարում էր ավատատեր Սուլթանովներից Իլդրիմ-Բեկը, որը բեկական իրավունքներ էր պահանջում Սյունիքի մի շարք շրջանների նկատմամբ եւ սրանից առաջ Կարմրաքարի համար մի ընդհարման ժամանակ ջարդվել-քշվել էր ղափանցիներից:

Իլդրիմը վերջնագիր ներկայացրեց գորիսեցիներին: Գավառապետը միջամտեց բանակցություններին,

Շարունակությունը՝ էջ 52

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀԷՄ-ԻՆ՝ թ.ԿՊՈՒՆ, ՇԱՐԿԱՅԻՆ-ՀՈՍ
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniaczyerkir.am
էլ.փոստ syuniaczyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐ

1905-06 թվականներ. Գորիսը փորձության մեջ

Սկիզբը՝ էջ 51

կատարեց վերջնագրի մի քանի պահանջներ (բանտից ազատեց մի քանի թուրք բանտարկյալների): Իսկ հայ գիւղորներին դիրքերից հեռացնելու եւ 10 հազար ռուբլի տուգանք վճարելու պահանջը գորիսեցիները համարեցին անպատվություն եւ կտրականապես մերժեցին:

Հանդիպելով դիմադրության թուրք բեկերը փախուստի դիմեցին իրենց վրեժը լուծելով միքենցիներից: Եվ այն, ինչ կատարվեց Սիքեն-դում, նմանը չուներ ջարդերի պատմության մեջ:

Մինչ Միքենեղի կոտորածը նրա շուրջը դավադրություն էր կազմակերպվում, որը վկայում է խնձորեսկցիների նորահայտ նամակը. «Միքենդում նորերս թուրքերը մի գազանային սպանություն են արել կտրատելով անվաճի երիտասարդ Մանաս Բուշտյանցին, գյուղոր բավական մոտիկ: Ապա հայերից գողացել են մի քանի հատ ոչխարներ եւ կոովեր» (Նույն տեղում,թ. 75-76):

Օգոստոսի 19-22-ի ընթացքում եղավ Միքենեղի կոտորածը: Թարաբյամանները (ձիավոր լեռնական քոչվորներ), տեղացի թուրքերը, քրդերը, նույնիսկ քիրվա հորջորջվածները, ամենավայրենի, ամենազազրելի եղանակներով տանջանաի արեցին հայերին՝ առանց սեռի, տարիքի եւ մահմեդականություն ընդունել, որոնցից սերված էր այդ շունը՝ Սաղզը)» («Հիշատակարան», էջ 129):

Իրեն ծնող հայ ժողովրդի նկատմամբ արհամարհանքը, չարությունն ու ատելությունը հաճախ են դրսեւորվել Կյուլիքում: Հավատափոխները ներքին հակասություններ են ապրել. ամեն բան անում էին մոռացության մատնելու իրենց անցյալը, կռիվ էին տալիս հիշողության դեմ, ամաչում էին իրենց ծագման համար, իրենց վարքով փյտել էին եթնիկական ժառանգականությունը. «Ավելին, այդ-պիսի մարդկանցից շատերը խիստ ագրեսիվ ու դաժան են դառնում այն ազգակիցների հկատմամբ, ովքեր հավատարիմ են մնացել էթնիկական արմատներին, ազգային ծչակոյթին եւ կրոնին. ճերեքթիկական ագրեսիվության առավել վտանգավոր եւ պարադոքսալ տեսակներից մեկը» (Ա.Նալչաջյան, «Էթնիկական հոգեբանություն», 1998թ., էջ 432):

Իսկ ահա զտարյուն թուրք՝ 1906թ. Միքենեղի տանուտեր նշանակված Ասկանդար Ամեդդ-Օղլին, ամենագնահատելն է խղճի խայթ եր ապրում հայրենակիցների ու հավատակիցների՝ հայերի նկատմամբ վարմունքից. «Սա քրդերին այնպես պատժեց, որ աշնան դեմ բոլոր քրդերը փախուստ տվին: Այդ գաղթի ժամանակ, որոնցից մեռան մոտ 225 շունչ…, հայերին կոտորած քրդերից երեսուներեք հոգի 1913 թվի հունիս ամսին եմ թաղվելիցի քրեական պատժի՝ քսան տարի տաժանակիր աշխատանքի, որոնք խառնվել էին եղեռնագործությանը» («Հիշատակարան», էջ133):

Միքենեղցի մի քանի ընտանիք փրկվեց Մինաս Առուշայանի շնորհիվ: Խուսքը նրա գլխավորությամբ կռվելով նահանջեց Գորիսի ուղղությամբ: Գիմառդության պահին կրծքից վիրավորվում եւ արնաքամ էր լինում Մինասը: Սակայն լինելով ֆիզիկապես առողջ եւ ուժեղ կամքի տեր՝ չկորցրեց իրեն, խմբի հետ մտավ քաղաք, հանգրվանեց քրոջ (ամուսինը Ղազար Խանզադյանն էր) տանը:

Խուսքն իր հետ Գորիս հասցրեց մանուկների, որոնց մեջ երեքամյա Շմավոն Առուշայանն էր՝ Խորիորդային Հայաստանի Գերագույն խորհրդի ապագա նախագահը:

Միքեքնդը ծանր տպավորություն թողեց Գորիսում: Քաղաքը ոտքի վրա էր: Դաշնակցությունը խորհրդակցության հիավիրեց Կարճիկ Գեւորգ Բեկի տանը: Մարդկային ամբոխը շարժվեց գավառապետարանի հրապարակ:

«Կէսօրին մոտ էր: Մէկ էլ տեսնենք փողոցի գլխից կողք-կոզքի գալիս են Արշակ Շիրիճեանը եւ Ստեփան Ստեփանեանը: Շիրիճեանը տանջոց կողքից էր կախած, իսկ Ստեփանեանը կրծքից էր կախած հիգ հարուածանի հրացանը: Շիրիճեանի եւ Ստեփանեանի յետեւից գալիս էին տեռորիստ Եապոնացիներ եւ երեք արնախում երիտասարդներ, մաուզերներով զինված: Երբ մոտեցան հրապարակին, որտեղ խուռնեցրած ժողովուրդ էր հավաքուած, թեքուեցին դէպի պետական շենքը: Վեց հոգով մտնում էին պետական շէնքի հայաքը եւ լուր տալիս, թէ ուզում են տեսակցել գավառապետի հետ: Գավառապետը լուր առնելուց դուրս է գալիս երկրորդ յարկի պատշգամբ:

Առաջ խոսում է Շիրիճեանը: Շիրիճեանից յետոյ խոսում է Ստեփանեանը, որը վերջում սպառնում ու ծողոպրում են այդ վայրերից: Հայերից զոհվում է մեկ հոգի, վիրավորվում են մի քանիսը:

Սեպտեմբերի 22-ին թուրքական բավական լավ զինված ուժեր՝ նրկին գորոհեցին Խոզնավարի եւ Խնածախի վրա:

Տեղ գյուղից Խ. Մելիք-Բարխուդարյանի «Զանգեզուրի արյունալի դեպքերից» վերնագրով նամակը պատկերավոր ներկայացնում է սեպտեմբերյան կռվի ընթացքը. «Ամեն օր, սեպտեմբերի 22-ին մի զարհուրելի հուզմունք տեղի ունեցավ Խոզնավար գյուղում երկու ազգաբնակչության մեջ: Թուրքական զինված ամբոխի մի մասը հարձակվում է Խոզնավար գյուղի վրա, ահագին վնաս է հասցնում գյուղին, մի քանի տուն հրդեհում են ու թալանում: Լուր է բարձրանում ու դիմում են օգնության. մյուս օրը՝ վաղ առավոտյան, օգնության են հասնում տեղական զինվորներ եւ հասնում տեղական գիւղորներ եւ մի ահագին զորք է գումարվում այստեղ: Թուրքերը, այստեղից մոսինի ձայնը լսելով, թողնում փախչում են՝ մի քանի տասնյակ զոհեր ճվիրելով (ՀԱԱ, ֆ. 227, գ.1, գ. 567,թ. 81-82):

Վավերագրերը վկայում են. կրած պարտության համար բուրքերը փորձեցին վրիժառու լինել խնածախցիներից: Չորս հարյուր հեծյալներով ու հետեւակով նրանք գորոհեցին Խնածախի վրա: Մեծաքանակ ուժերի երեւալը խուճապ առաջացրեց դիրքապահների մեջ, եւ նրանք թողեցին պաշտպանությունը: Գրաված դիրքերից թուրքերը կրակ տեղացին գյուղի վրա, ապա հեծելազորի մի մասը մոտեցավ գյուղի ստորին հատվածին եւ, անցնելով այգիների միջով, գյուղի եզրին հրկիզեց մի քանի տուն:

Օգնության կանչերը հասան հասան կամավորներ գյուղերից եւ Խոզնավարում կուտակված ուժերը:

Զգալի էր Տեղ գյուղացիների օգնությունը: Կռիվը նոր թափով ծավալվեց, օգնական ուժերը գրոհեցին դիրքերի վրա: Կատաղի էր դիմադրությունը, բայց նույնքան կատաղի էին գնդակոծությունն ու գրոհը: Թուրքերը խուճապահար փախուստի դիմեցին:

«Հայերը վրա հասան ու ընկան թշնամու ետեւից: Այստեղից թուրք խուժանը փախչելով մտնում է մոտակա թուրքաբնակ Բայինդուր, Բիհաիրի, Հալաք եւ Իսալար գյուղերը եւ թաքնվեցավ, բայց ոոպեական ընթացքում բոլորը թէ մարդ, թէ կին, թէ երեխա արյան վերջին ծիգը թափելով դուրս թռան տներից, ամեն ինչ թողնելով հայերի իրավունքին եւ սկսան փախչիլ դեպի մոտիկ անտառը: Այդ օրը էլ չգիտեմ ինչ թալաք, ինչ օյին դրին այդ գյուղերի գլխին, վերջը՝ երեկոյան մի կերպ գատվեցան եւ եկան խնածախ գյուղը գիշերելու: Դեհ, ինչ ասեմ ձեզ, թէ թշնամին ինչ աչքերով էր նայում դեպի հրանց անցած մոխիր դառած հայրենիքը» (Նույն տեղում):

Խնածախի կռվում բուրքերին հետապնդող հայերը, երբ թուրքական գյուղերն են մտնում, «Իրանց առաջ միայն ամայի եւ դատարկ տներ են տեսնում: Մի քանի տներում նկատվում են հայ կանանց զգեստների հետքեր, ինչպես օրինակ դարաբաղի կնոջ հատուկ «քուքը», գլխի շորեր եւ այլ զարդարանքներ, որոնք բերվել էին Միքեենդից եւ ով գիտե ինչպիսի գազանային վայրագությունեներ են գործի դրվել այդ բոլորը խլելիս: Կրեժխնդիր հայ երիտասարդներն առանց համբերելու կրակում են այդպիսի տներից մի քանիսը եւ ապա հեռանում՝ անվնաս ազատվելով թուրքերի որոգայթից: Ցավալի է իհարկե այդ բոլորը, բայց ինչ արած, երբ մեր հարեւան թուրքերի վարմունքն ստիպում է երբեմն նրանց դեմ նույն ձեւով կռվել, ինչպես նրանք են անում ամեն

Մեկ այլ վկայությամբ (գորիսեցի Ռեդիկ Հայրապետյան)՝ ալիիդուլցիները հետագայում արմատ ձգեցին Ղարաբաղի Խնածախ գյուղում, եւ մեր օրերում այս գյուղի բնակչության մի մասն ալիդուլցիների սերունդներն են: Յուրաքանչյուր տարի նրանք կազմակերպված ուխտի են գնում իրենց պապերի հայրենիքը: Նախկին ալիդուլցիների հետ արյունակից 12 ընտանիքներ բնակվում են Գորիսի Խնածախում:

Գորիսի մյուս գյուղերում եղավ կազմակերպված եւ ուժեղ դիմադրություն, եւ թուրքերը, պարտություն պարտության հետեւից կրելով ու զոհեր տալով, ետ գնացին:

Խոզնավարի եւ Խնածախի պաշտպանությունն այս օրերի նշանակալից իրադարձություններից է: Խոզնավարցիների վկայությամբ՝ գյուղի պաշտպանների օգնության հասավ ամենաքաջարի հայդուկապետերից մեկը՝ գաճճակեցի Ստեփան Ստեփանյանը (Ա.Խանզադյան, «Հայրենապատում», հատոր 1, էջ 467): Գյուղի պաշտպանների մեջ էր նաեւ կոզակական ջոկատը: Կռվի նախաձեռնողը նույն գյուղում հայերի հետ հաճատեղ ապրող բուրքերի էին, որոնք պարտությունից հետո փախուստի դիմեցին: Նրանց ունեցվածքը կողոպտվեց, տներն այրվեցին: Խոզնավարցիները տուժեցին աճհավասար այս կռվում, դիրքերում զոհվեցին կռվող տղաներ, գյուղում՝ խաղաղ բնակիչներ:

Թուրքերին հերոսական դիմադրություն ցույց տվեցին խնածախցիները: Դա արվեց դիրքային կռիվ մղելու, բնակչության գյուղը փրկելու անսահման կամք եւ կորով դրսեւորելու շնորհիվ: Այստեղ եւս առանց զոհերի չէր կռիվը:

***

1905-ի օգոստոսի 31-ին Նիկոլայ 2-որդի իմացությամբ, իրադրությունը կայունացնելու, բախումներին վերջ տալու անկեղծ ցանկությամբ, Գորիս է ժամնում Երեւանի նորանշանակ գեներալ-նահանգապետ Պրինց Նաալդեռնը: Պրինցը եղավ Միքենդում, Խոզնավարում, Ալիդուլիում, կարգադրեց կալանավորել հանցավորներին, վերադարձնել կողոպտվածը, էկզեկուցիայի ենթարկել ավագակարգերի վերածված թուրք գյուղերը, Միքենդից քշել բուրքերին, հետ բերել հայերին: Ապա անցավ Ղափան եւ Արեւիք՝ հուսալով, որ խաղաղություն պիտի հաստատվի գավառում:

Բարի ցանկություններ ուներ Նաալդեռնը, մտահոգ էր, սրտացավ, սկզբունքային, բայց միեւնույն է, անկարող էր հաշտեցնել երկու ժողովուրդներին: Թուրք բեկական վերնախավը խաղաղության չէր ձգտում, գլուխ էին բարձրացրել թշնամանքն ու ատելությունը: Իշխանությունների անկարողությունն էլ այն տպավորությունն էր ստեղծում, թե ցարիզմը գլխավոր մեղավորը, հերթական կոնձիական է խաղում: Անկարող լինելով խաղաղություն հաստատել գեներալ-նահանգապետը հրաժարական տվեց:

Պրինցը գնաց, իսկ խաղաղությունն չհաստատվեց: Դեպքերի շղթան բացվել եւ ծայրը չէր երեւում: Խաղաղությունը կոչերը զուր էին, եւ թուրքերը չէին հրաժարվում նոր Սիքենդ կազմակերպելու մտադրությունից:

«Արշալույս»-ի մի վկայությամբ (1905թ., №33)՝ 1905թ. սեպտեմբերի 20-ին թուրքական զինված խմբերը հարձակման են անցնում Շուշի-Գորիս ճանապարհին գտնվող Բերդաձորի գոմերի վրա: Վոա հասած գյուղացիները շրջապատվում են ու պիտի գերվեին կամ կոտորվեին, երբ թիկունքից թուրքերին հարվածում են Բաբվից վերադարձող ղափանցիներն ու գորիսեցիները: Բազմաթիվ դիակներ թողնելով՝ թուրքերը

Ի դեպ, Խնձորեսկի մասին. խնձորեսկցիները տուժում էին, բայց հայտնի էին ծայրահեղ հանդուրժողական, մինչեւ անգամ չեզոք կեցվածքով: Գյուղի հայտնի անցյալը դաս չէր լինում, եւ դեռ գալիս գումարվում էր հնչակյանների ազդեցությունը: Գորիսեցիները Խնձորեսկը համարում էին հնչակյանների հայրենիք, որի բնակիչները, ինչպես վկայում է Ա.Զանգեզուրցին. «Մատը մատնի չխփեցին եւ ոչ մի տեսակի էլ օգնութիւն չբերեցին զամգաան շրջանցներում տեղի ունեցած կռիվներին: Անգամ ուշադրութեան էլ չտային, որ հայ կոուտղեցը գիշեր ու ցերեկ կռուի շրջաններում տանջանքներ են քաշում…

Խնձորեսկցիներին աշղներ են ասում, որովհետեւ համարեա ամէն տուն մտնելուց, պատիցը կամ փայտեայ սյունիցիցը կախած կը տյեսնէք սազ կամ փոքրիկ յուլգանր: Սազ կամ չուլգանր նուագողին մեր ժողովուրդը աշղ էր ասում»:

Թեեւ գավառում, մասնավորապես Գորիսում Դաշնակցության խմբերի գործողությունների մասին «Դրոշակ»-ի հաղորդագրությունները սակավ են եւ ընդհանրական, բայց դրանք գալիս-հարստացնում են օրերի պատկերը: Նմանօրինակ եւ 1905թ. հոկտեմբերի 21-ի հաղորդագրությունը. «Գորիսի եւ Միքենդի մեջտեղը գտնված Խոզնավար գյուղը մեր խմբի օգնությամբ ջարդել է թուրքերին՝ կոտորելով 150 հոգուց ավելի:

Եռաբլուրի ընդհարմամ միջոցին, երբ թուրքերը վնասել էին Յայջի գյուղի արտերը, մեր ուղարկած խումբը Յայջի գյուղացիների հետ միասին ետ են մղել թշնամուն սպանելով 20 հոգին, խլելով 75 ոչխար: Մեր կողմից կա մեկ վիրավոր:

Տեղ գյուղորդի մեր ուղարկած խումբը գյուղացիների օգնությամբ ետ է խլել տարված ավարը սպանելով 10 թուրք: Հայերը կորուստ չեն ունեցել»:

Կանխորոշված կլիներ Խոզնավարի ճակատագիրը, եթե չլիներին ՀՅԴ-ի խմբերը. «Իսկույն Մխիթարի խումբը, որն այդ ժամանակ Խնձորեսկում էր, տեղ է հասնում եւ մի օրվա կատաղի կռվից հետո, երբ նրան օգնության են գնում եռեւից դրկված երկու խումբ եւս, մեկ ջարդով քշում են թուրք խուժանին եւ ապա մերոնք գալիս պաշարում են Քեռասլար գյուղը, նախապես ավերելով Խոզնավարի թուրքական մասը: Ապա եւ պարբերաբար ուղարկվում է մեր ռազմիկ ուժերի մնացածը, եւ սկսվում է Քեռասալարի ավերումն ու թալանը: Բնակիչներից շատերը կոտորվում են» («Դրոշակ», 1905թ., №13, էջ 207):

Վերջին գործողությունը վրիժառությունն էր Միքենդի համար: Հերթը Միքենեղց իրագործող բուրքերինն էր, որոնք թողեցին ու ծողոպրեցին: Գավառապետի մուտքը միայն զսպեց կրքերը, այլապես պիտի հետապնդվեին ոոբգաղծները: Զսպել հայերին, այնուհանդերձ չհաջողվեց, եւ նրանց կողմից ավերվեցին ու կողոպտվեցին Ջեջիմլու երկու գյուղերը:

Զանգեզուրի գավառապետը վրացի Ավալիանին էր: Գորիսեցիները նրան մեղավոր են այն էլ գլխավոր մեղավոր էին համարում: 1905թ. հոկտեմբերի 5-ին փոխարքա Վորոնցով Դաշկովին ուղղված հեռագրում նրանք ընդհարումների հրահրող էին համարում գավառապետին, պահանջում էին հեռացնել Ավալիանին եւ հանդամուք էին հայտնում, որ միայն դրանից հետո գավառում կարգ ու կանոնը կվերականգնվի (Ծ.Ադալյան, «Հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների դարավոր բարեկամությունը», Երեւան, 1961թ., էջ 163):

Ավալիանին մեղավոր է համարվում նաեւ Գորիսի հայերի 9 ներկայացուցիչների՝ փոխարքայի օգնական Շիրինկինին ուղղված հեռագրում. «Գավառապետը թուրքերի կողմն է պահում եւ անկարգությունների հեռց սկզբից փոխանակ անկողմնապահ լինելու, իր անտակտ վարմունքով եւ խոսքերով վախեցնում է հայերին, գրգռում բուրքերի հանդգնությունը: Խոնարհաբար խնդրում ենք պաշտոնից հանել գավառապետին, որով եւ հալածմունքն ու թուրքերի գրգռումը ինքնըստինքյան կը վերջանայ: Այժմ մեր գավառին սպառնում է սով, ժողովուրդը ստիպված է զենքը ձեռքին պաշտպանել իր տունն ու ընտանիքը, թողնելով խաղաղ աշխատանքը, որովհետեւ պաշտպանություն չկա» («Новое обозрение»-ից, «Արշալույս», 1905թ., №5):

-Մինչեւ վերջերս էլ զանգեզուրցիներն անենքով էին հիշում ցարական կամ մարդախոշոշ չինովնիկին, – գրում է Ս.Խանզադյանը՝ մեկնաբանելով Տեր-Ղակոբ Գորիսեցու «Հիշատակարանը»:

«Գավառապետ Ավալիանին մեկ գույնի մարդ չէ: Նա անում է եւ այս, եւ այն», – գրում է «Դրոշակ»-ը (№9, 1905թ., էջ137), փաստեր է բերում հայերի դեմ նրա գործողություններից, ինչպես օրինակ՝ ստրաժնիկները խլում են հայերի զենքը, իսկ գավառապետը ոչինչ չի ձեռնարկում դրա դեմ: ՀՅԴ պաշտոնաթերթը միաժամանակ դրական է գնահատում 80 գինյալ թուրքերի դեմ Ավալիանի գործողությունները, երբ վերջինս խնդրում է Նախիջեւանի գավառապետին նոր ուժեր կենտրոնացնել Մազրայի շուրջը եւ հրամայում է կոզակներին պատրաստ լինել եւ ցրել թուրքերին նրանց հարձակման դեպքում:

«Մի խոսքով անուրանալի է եւ այն, որ մարդը միջոցներ ձեռք առավ, գոնե ամ երես. տեսնենք գյանին՝ խնդրելով իր հեղինկությունը օգտագործել, ոչնչացման եզրին հայտնված ժողովրդին փրկություն բերելու համար: Նամանը ստանալուն պես Արքեպիսկոպոսն անմիջապես թողնում է վանքը, հասնում Գորիս, ներկայանում գավառապետ Ավալիանին, խնդրում, հանդգնում նրան Նախիջեւան գնալ եւ տեղում կանխել անխուսափելի կոտորածը. «Արձագանքելով Մելիք-Թանգայանի պահանջին՝ գավառապետ Ավալիանին 100 ձիավոր միլիցիայի գլուխ անցած մեկնում է վտանգված շրջանը: Ձանգեզուրի գավառապետի հետ Նորս եւ ուղեւորվում նաեւ Մելիք-Թանգյանը եւ գավառի մահմեդականության հոգեւոր առաջնորդը»: (Հ.Գեւորգյան, «Սեբաստացի Սուրադ», էջ 99):

Գավառապետ Ավալիանին եւ հոգեւոր առաջնորդների միջամտությունը կանխեց սպանդը, բայց եւ այնպես Նախիջեւանի այդ կողմերում իրադրությունը շարունակեց մնալ պայթյունավտանգ, որը շուտով վերածվեց ահեղ ընդհարման:

Կառավարությունն ինչպես հարկն է չէր միջամտում, իսկ դա բերում էր ոժգոհություն եւ ծայրահեղ գնահատականներ:

«Ղափանից 50 վերստ հեռավորության վրա գտնվող Գորիս քաղաքում միապետության դավադիր ներկայացուցիչները հրվում եւ ծափահարում էին, դիտելով գազանային գործողությունները: Այս ու այն գյուղում նստած կոզակները հանդիսատես էին սոսկալի տեսարաններին եւ անտարբեր դիրք բռնած խմում-ծխում էին ու թամաշա անում… որովհետեւ բյուրոկրատ մարդ գազանները այդպես էին կարգադրել, իրահանգներ տվել: Ամենամեծիդ սկսած մինչեւ ամենափոքր աստիճանավորը ներշնչված էին պրովակատորական ծրագրով եւ երկու ազգերի փոխադարձ ոչնչացման իդեերով:

Դրագունների կոմանդիրներից մեկն ասում էր. «Եթե ինձ իրավունք տային, հայերին ու բուրքերին կը բաժանեի իրացանների եւ նույնիսկ թնդանոթներ եւ կասեի կռվեցեք. իսկ ես այդ ժամանակ կբարձրանայի մի բարձունքի վրա դիտելու, թե ինչպես երկու միմյանց կոտորուն են», – գրում է «Դրոշակ»-ը (№1, էջ 6, 1907թ.):

Եվ, այնուամենայնիվ, զրոքն ինչ-որ բան անում էր ավազակախմբերին պատժելու, բեկերին զսպելու համար, որը չի թաքցնում նույն «Դրոշակ»-ը. «Գոլոշչապովի օգնական գնդապետ Վեճերը ոմբակոծել է մի քանի տուն Շարդախլու գյուղից: Այսօր Գորիսից եկած լուրերը հաստատում են, որ գնդապետը իսպառ այդել է թուրք Ալիեւլու (կանոնավոր ավազակապետ է), Մազմազակ եւ այլ գյուղերը: Գյուղը մտնելիս թուրքերը դիմադրել են գնդապետին, եւ այդ պատճառով նա ոմբակոծել է գյուղը, կոզակները կոտորել են բավական թուրքեր, մոտ 20 հոգի էլ ձերբակալված ուղարկել են Գորիսի բանտ» (1906թ., №84, էջ 55):

Այս բոլորի կենտրոնում Ավալիանին էր, իսկ նա անում էր հեռարվորինը, թեեւ անհանգիստ կյանքով ապրող Գորիսում մոռանում էին գավառապետի երեկվա ձեռնարկումները, մեղադրում նրան ձախողումների եւ շարունակվող քաոսի համար:

1905թ. մայիսին եւ հունիսի սկզբին թուրքերի կողմից ավերված ու կողոպտված մի շարք գյուղերի բնակչությունը փախել է փրկություն էր գտել Նորս-Մազրայում եւ Գոմերում: Հինգ հազարի հասնող բնակչությունը կրել կգնար, եթե վրա չհասներ Ձանգեզուրի գավառապետի կողմից ուղարկված զորքը եւ ապա ինքը գավառապետը: Ոչ ոք չի

Շարունակությունը՝ էջ 54

№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010
տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀԷՄ-ԻՆ՝ թ.ԿՊՈՒՆ, ՇԱՐԿԱՅԻՆ-ՀՈՍ
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniaczyerkir.am
էլ.փոստ syuniaczyerkir@mail.ru
Սյունյաց աշխարհ Syuniaczyerkir

ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐ

տեղ» («Արշալույս», 1905թ., №33):

Կեսգիշերին Մալիբեյլի գյուղի այգիներում հսկայական հրդեհ բռնկվեց. վառվում էին գորիսեցի Սարգսին պատկանող շինությունները իրենց տակառներով: Ուռավոտյան զինված խմբերը մոտեցան Մալիբեյլին, բայց մարդկային շունչ չկար: Բնակչությունը, կանխագաալով հայերի վերահաս հարձակումը, հեռացել էր անտառներ ու դժվարամատչելի վայրեր: Այլեւս իշխում էին վրեժխնդրությունն ու վայրենի բնազդը: Մալիբեյլին կրակի մատնվեց: Կրակի բոցերը նկատելով՝ թուրքերի մի խումբ փորձեց մոտենալ գյուղին, ինչ-որ բան ձեռնարկելու ակնկալիքով. «Իզուր, պաշտպանությունը վաղուց էր ընկած: Բայց, ա՜խ, ո՞վ կտեսներ այդ րոպեին, թե ինչ էր կատարվում, ինչ էր լսվում այդ թուրքերի ծորերում: Ինչ ահ, ինչ սարսափ, ինչ կսկիծ էր տիրել այդ ծորերին: Հայերը մոսիմները, որ զալպով արձակում չէին, գնդակների ծոճոոցը, ժայրերի տրաքտրաքոցը կարծես տակն ու վրա են անում այդ ծորերը: Մի ժամվա ընթացքում ջնջված է հայերի ձեռքով Մալիբեկը, Ջաղացուը, Ջայլուն, Նովլուուզլուն եւ այլն: Ահը, երկյուղը, ընկել էր թշնամու սիրտը, ճեղք չէր ճարում թշնամին, որ թաքնվի:

Ճիշտ են ասում, ճիշտ. այդ օրը կարծես մի ծխային ամպ էր բարձրանում այդ ծորերի միջից: Թշնամու տները բոլորը հորեղեված են, հարոը, խոտի դեզերը, մարագները, բոլորը մոխիր են դառել: Հայերից ընկած է մի մարդ ու մեկն էլ թեթեւ վիրավորված է, իսկ բուրքերից ո՞վ գիտե հարմրի, քանի-քանի տասնյակներ: Կռիվը շատ կշարունակվեր, եթե գավառապետին հասցրած չլիներեն սակաւ ուղղափառ եւ Հայոց Սուրբ Լուսավորիչ եկեղեցի, որտեղ կատարվեցին արարողություններ, հոգեկան մաղթանքներ: Ապա նահանգապետը շարժվեց դեպի Գավառական վարչության ճանապարհին հանդիպելով մարդկանց, լուծում տալով որոշ խնդիրների: Վարչության շենքի առաջ կուտակված էին Միքենեդ, Խոզնավար, Ձեյվա, Հարար, Ալիդուլի գյուղերից փախած մերկ, բոկոտն, սարսափի աչքերիվ բնակիչներ: Նահանգապետն ընդունեց այս գյուղերի եւ Գորիս քաղաքի ներկայացուցիչներին եւ արտահայտեց իր վճռականությունը՝ վերդ դեռլու ընդհարումներին: Գավառի հայ բնակչությանը կոչ արեց շարունակել խաղաղ աշխատանքը, շեշտեց, որ հայերը իրենց աշխատասիրությամբ եւ մշակույթով վաղուց են հայտնի կայսրությանը եւ հայտարարեց, որ կառավարությունը կպաշտպանի հայերի կյանքն ու գույքը: Ասաց, որ Ձանգեզուրում առաջին թուրքերն են հարձակվել հայերի վրա, մատնանշեց Միքենեդը:

«Գեներալը այստեղ հրամայեց իր դիվանի կառավարչին հեռագրել Գանձակ, անհապաղ ձերբակալել նախկին պրիստավ Սաղզը բեկին, Միքենեդի կոտորածի եւ թալանի հեղինակին՝ նաեւ բանտարկել այն բոլոր թուրքերին, որոնք խմբերով հարձակվեցին, սպանությունները են գործել, թալան արել», – «Արշալույս»-ին գրում է Ներսես մելիք-Թանգյանը (1905թ., №39):

(Ի դեպ Գավառապետ Ավալիանին Սաղզը բեկին հեռացրել էր պաշտոնից, քշել Ձանգեզուրից հեռամի, բայց փոխարեն նշանակվել էր հայազգի Բագրատ բեկը: Վերջինս ամուսնացավ գորիսեցի Լալաեանի դեռատի աղջկան՝ Հայոց Սուրբ Լուսավորիչ եկեղեցի, որտեղ կատարվեցին արարողություններ, հոգեկան մաղթանքներ: Ապա նահանգապետը շարժվեց դեպի Գավառական վարչության ճանապարհի հանդիպելով մարդկանց, լուծում տալով որոշ խնդիրների: Վարչության շենքի առաջ կուտակված էին Միքենեդ, Խոզնավար, Ձեյվա, Հարար, Ալիդուլի գյուղերից փախած մերկ, բոկոտն, սարսափի աչքերիվ բնակիչներ: Նահանգապետն ընդունեց այս գյուղերի եւ Գորիս քաղաքի ներկայացուցիչներին եւ արտահայտեց իր վճռականությունը՝ վերդ դեռլու ընդհարումներին: Գավառի հայ բնակչությանը կոչ արեց շարունակել խաղաղ աշխատանքը, շեշտեց, որ հայերը իրենց աշխատասիրությամբ եւ մշակույթով վաղուց են հայտնի կայսրությանը եւ հայտարարեց, որ կառավարությունը կպաշտպանի հայերի կյանքն ու գույքը: Ասաց, որ Ձանգեզուրում առաջին թուրքերն են հարձակվել հայերի վրա, մատնանշեց Միքենեդը:

«Գեներալը այստեղ հրամայեց իր դիվանի կառավարչին հեռագրել Գանձակ, անհապաղ ձերբակալել նախկին պրիստավ Սաղզը բեկին, Միքենեդի կոտորածի եւ թալանի հեղինակին՝ նաեւ բանտարկել այն բոլոր թուրքերին, որոնք խմբերով հարձակվեցին, սպանությունները են գործել, թալան արել», – «Արշալույս»-ին գրում է Ներսես մելիք-Թանգյանը (1905թ., №39):

(Ի դեպ Գավառապետ Ավալիանին Սաղզը բեկին հեռացրել էր պաշտոնից, քշել Ձանգեզուրից հեռամի, բայց փոխարեն նշանակվել էր հայազգի Բագրատ բեկը: Վերջինս ամուսնացավ գորիսեցի Լալաեանի դստեր հետ եւ երկար ժամանակ հանդիսացավ Միքենեդի շրջանը):

Մելիք-Թանգյանը հայտնում է նաեւ, որ հոկտեմբերի 16-ին նահանգապետը գնացել է Տաթեւ, այնտեղից անցել Ղանձավեր հանդիպելու թուրք պատգամավորներին:

***

Անժիտելի, անուրանալի իրողություն է, սրբազան ճշմարտություն. թշվառ, հուսալքված, անդունդի եզրին հայտնված Այուսիքիի ժողովրդին փրկությունն բերեց ՀՅԴ-ն՝ իր հայդուկապետերի ու հայդուկների անմահ սխրանքով, անսահման արիությամբ, տեղացիներին համախմբելու, նրանց կորով ու ոգի ներշնչելու կարողությամբ:

Չլիներ ՀՅԴ-ն, կսպառվեր, կկորչեր, ոտնկայիս կլիներ Այուսիքիի հայությունը, հողի երեսից կսրբվեին հայկական գյուղերը, կանխորոշված կլիներ երկրաձաւսի ճակատագիրը… Ուրեմն եւ չէր կարող լինել 1918-1921 թվականների գոյամարտը (Պիտի Այուսիքիի Գոյամարտի սկիզբ համարել 1905-1906 թվականները):

Ինչ խոսք, Դաշնակցությունը վճռական դեր խաղաց առանձնապես Ղափանում: Գորիսում ՀՅԴ զինված խմբերի առավել ակտիվ գործողությունների մասին քիչ բան է հայտնի: Բայց որտեղ հայտնվում էին ՀՅԴ-ի ջոկատները, այնտեղ հաղթանակն ապահովված էր: Իսկ երբ ուշաձում էին (իսկ ուշաձում էին, քանի որ 1905-ին դեռ նոր էին ուժեր հավաքագրում), ապա լինում էին խուճապ, պարտություն ու ողբերգություն:

Միքենեղը դրա հետեւանքն է:

ՀՅԴ խմբերի ուշ տեղ հասնելու պատճառով էր նաեւ, որ օգոստոսի 17-ին Խնձորեսկի ընդհարման ժամանակ 12 հայ հոգիներ սպանվեցին (քոչվորները քշել էին գյուղի նախիրը, ապա, անպատիժ մնալով եւ նույնիսկ խրախուսվելով պրիստավ Վոսկրեսենսկոյից, իրենց ճանապարհին բռնել եւ բարբարոսաբար սպանել էին խնձորեսկցիներին):

Տեղ գյուղորդի Խ. Մելիք-Բարխուդարյանի «Զանգեզուրի արյունալի դեպքերից» վերնագրով նամակը պատկերավոր ներկայացնում է սեպտեմբերյան կռվի ընթացքը. «Ամեն օր, սեպտեմբերի 22-ին մի զարհուրելի հուզմունք տեղի ունեցավ Խոզնավար գյուղում երկու ազգաբնակչության մեջ: Թուրքական զինված ամբոխի մի մասը հարձակվում է Խոզնավար գյուղի վրա, ահագին վնաս է հասցնում գյուղին, մի քանի տուն հրդեհում են ու թալանում: Լուր է բարձրանում ու դիմում են օգնության. մյուս օրը՝ վաղ առավոտյան, օգնության են հասնում տեղական զինվորներ եւ հասնում տեղական գիւղորներ եւ մի ահագին զորք է գումարվում այստեղ: Թուրքերը, այստեղ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐ

1905-06 թվականներ. Գորիսը փորձության մեջ

Սկիզբը՝ էջ 55

կարող ասել ճշմարտությունը եւ ներկայացնել իրականությունը, ինչպես ակամտեսը: Նախիջեւանի Գոմեր գյուղի հոգեւոր հովիվ Մուշեղ քահանա Ամմիկոյանի հունիսի 20-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին ուղղված նամակն իրադարձություններին եւ գործող անձերին տրվող եզակի վավերագիր է. «Կար ժամանակ, որ մենք էլ շեն էիմք, տուն, ապրանքի, կարողություն տեր էիմք եւ այդ մի քանի օր առաջ. սակայն անցավ օր ու գիշեր մի տասնյակ կիտվեցամ, մեր երկինքը խավարեցավ, արեւն անհայտկուլ գնաց. փոթորիկը պտույտպտույտս ոլորտներով ամպեր ժողվեց մեր գլխին, կարկուտ տեղաց, հեղեղն իջավ մեր, մեր ամեն բան նամարավ: Բայց կար մեկը, նա չթողեց երկար տեղալ կարկուտին, հանեց հողմը, ամպերն ամեն կողմ սփռեց:

Սկսած մայիսի 17-ից փոթորիկը պատրաստվում էր մեր գլխին... Դիմել ենք օգնության թե Նախիջեւանի եւ թե Զանգեզուրի իշխանություններին... Նախիջեւանից ոչ մի օգնություն չենք ստացել, Զանգեզուրը հասել է ժամանակին:

Սոքա հասան կռվի ամենատաք րոպեին եւ վերջ տվին կռվին, որով մենք կռվում մարդկային զոհեր չունեցանք. եւ այդ Զանգեզուրից եկած հիշյալ հրամանատարի ամենաքաջ շարժողությամբ շնորհիվ, որ բացառիկ մի երեւույթ էր ռուս ծառայողների շրջանում, նա չէր քշել եւ այլ ոչ վազ տվել, այլ սլացել թռիչքներով էր եկել: Նա եկել էր Զանգեզուրի գավառապետ Պ.Ավալիաձիի կարգադրությամբ:

Գավառապետ Ավալիաձին եւ հրամանատար Պրոկոպովը արին այն բոլորը, ինչ որ թույլ էր տալիս մարդկային ուժը, ինչ որ կարող էր անել հարազատ հայրը յուր որդոց նկատմամբ:

Առանց սրանց 5000 հոգի կորչելու էին անհայտ, եւ թշնամին գլուխ բերելով յուր օրագիրը մնալու էր անպատիժ:

Մյուս օրը՝ հունիսի 10-ին, եկավ եւ Զանգեզուրի գավառապետ Ավալիաձին... Կարո՞ղ եք երեւակայել, թե ինչ երախտագիտության զգացմունքով վերաբերվեց ժողովուրդը դեպի յուր բարերարը: Արտասուքի ջերմ կաթիլներ էին, որ ծածկում էին ամենուն աչքերը, սրտեր էին, որ հուզմունքից թրթռում էին, բաբախում... Այո՛, Ավալիաձին գերեց մեզ յուր եռանդուն պատրաստակամ վարմունքով, մարդասեր վեր հոգով, ապ չի մոռացվի հազարավոր մարդկանց հիշողությունից» (ՀԱԱ, ֆ. 56, ց.16, գ. 132, թ.145-146):

Ոչ բոլոր դեպքերում է, որ Պրինց Նապոլեոնը տեղական իշխանավորների կնճռոտված դրակաւ է արտահայտվել: Ավալիաձիի դեպքում Պրինցի փոխարքային ուղղված հեռագրում կարդում ենք. «... Գավառը ընդմիշտ ապահով պահելու համար անհրաժեշտ է չորս հարյուրյակ զինվորներ ունենալ գավառի մեջ: Շնորհիվ տեղական գավառապետի իմ հրամանով ձեռնարկած խիստ միջոցների, հացողվել է թալանած իրերի մի մասը վերադարձնել» («Արշալույս», 1905 թ., №11):

Ավալիաձին կարող էր եւ պարտավոր էր ինչ-որ բան անել իր գավառի համար (չմոռանանք նաեւ Զանգեզուրի սահմանների վրնդեց Սաղքը Բեկին), բայց եւ կարող էր քար լռություն պահպանել Նախիջեւանի դեպքերի հանդեպ: Հայ-թաթարական բախումների պատմությունը լի է պետական չինովնիկների եւ զինվորական հրամանատարների անտարբերության, չտեսնելե-չլսել տալու օրինակներով:

Այնուհանդերձ, գավառապետի ճակատագիրը մեզ համար մշուշով է պատում: 1908թ. մարտին Գանձակում տեղացի ահաբեկիչ Վաղոյի գոհեմ է դարձել Ավալիաձի ազգանունով հայատյաց գավառապետ: «Խորամանկ բորենի» բնութագրվող այս վրացին («Դրոշակ», 1930թ., №3, էջ 88-89) եթե Զանգեզուրի գավառապետն է, նշանակում է՝ փոխել է իր գործելակերպը: Եթե ոչ... Դժվար է գուշակել: Այդ ժամանակներում ազգությամբ վրացի չինովնիկները վխտում էին հայ-թաթարական համատեղ բնակության վայրերում: Ուրեմնմ՝ հետագա ուսումնասիրության անհրաժեշտությունն կա:

Իրադրությունը փոխվեց, երբ գործեցին ՀՅԴ զինված խմբերը: 1905թ. աշուն. Արդուոիի բուրքերը Բազարչայից եկած օգնական ուժերով Դարաբաաի եւ Քյուրդլարի բուրքերի հետ հանձնայնությամբ էին եկել Ուզ գյուղի վրայով արշավել Սիսիանի վրա: Հայերի ուշադրությունը շեղելու համար Զաբուղից թուրքերը պիտի շարժվեին Տեղ եւ Խնձորեսկ: Աջողության դեպքում ապառնալիքի տակ էր ընկնելու Գորիս քաղաքը: Վավերագրերում մենք հանդիպում ենք «Վանքի ժողովի որոշում» անորոշ, առանց մեկնաբանության արտահայտությանը: Դժվար չէ կռահել. դրանք Տաթեւի վանքում ընդունված ՀՅԴ «Սյունիք» կոմիտեի եւ Զանգեզուրի Հիվանդական մարմնի որոշումներն էին՝ ամեն գնով կատարման ենթակա: Մեկ օրինակ. «Վանքի ժողովի» որոշմամբ է, որ պատժվեցին «Սյունիք» գործարանը ոչնչացնող թուրքերը. այլ հնար չկար, Ղափանի թրքությունը գլուխ էր բարձրացնում:

Տաթեւում զարմանալիորեն տիրում էր հանդնդհանուր ոգեւորություն. ասպարեզ էր եկել վանքի վանահայր Ներսես Մելիք-Թանգյանը, որն իր նմանների Մկրտիչ Խրիմյանի, Մշո Սուրբ Կարապետ վանքի վանահայր Վարդանի, Մշո հոգեւոր առաջնորդ Ներսես Եպիսկոպոս Խաբրախայանի պես գլուխ չխոնարհեց թշնամու առաջ. «Փարաջան ու վեղարը չմեղկացուց հայրենասեր ոգին, ընդհակառակը: Բավ է հիշատակել այն ահագին դերը, որ նա խաղաց 1905-1906 աղետավոր թվականներին հայ-թուրքական կռիվներու ատեն, իբրեւ Տաթեւի վանահայր, իբրեւ գործակից Սեբաստացի Մուրադի եւ ուրիշ խմբապետերու» («Հուշամատյան Մելիք-Թանգյանի», Թավրիզ, 1968թ., էջ 274):

***

Տաթեւ... Այստեղ գալիս էին կամավորականներ, ձեւավորվում էին մարտական խմբեր: Ճակատագրական պահին Վայոց ձորի վրայով Սիսիան մուտք գործեց Մուրադ Սեբաստացին դիս 50 հեծյալ հայդուկներով. «Եվ ահա այդ ժամանակ էր, որ մեկէն ի մէկ, մեծ մասամբ հեռու վայրերէ, պահապան հրեշտակներու պես լույս ընկան սպառազեն եւ ամվեհեր մեր հայդուկները... Մուրատ, Քեռի, Դրո, Կայծակ Ալաքեւ, Սեհեան Սեհեանյան, Կորյուն, Կոստի, Ռաշիդ» (Մ.Վարանդյան, «ՀՅԴ պատմություն», էջ 342):

Սեբաստացուն առաջինը դիմադրել, որ ուղարկեմ, ինչ գնով էլ լինի մինչեւ երեք հարյուր ռուբլու Բերդաձի փամփուշտ: Լիահույս եմ, իմ գրածներդ կկատարեք ի սեր ժողովրդի» (Կապաձի երկրագիտ. թանգ., փաստաթղթերի մատյան, №3107):

«Զէյլայում, ինչպես երեւում է, սաստիկ կռիվ է. Պետոն օգնութիւն է խնդրում. Թող այստեղ կարքադրէ Սուլթանը հավաքվեմ երկրորդ բէգերվերը եւ եթէ Բայեզնդրը ազատ է, գնա օգնութիւան: Պետոն գրում է, որ ես գրէմ Տաթեւա գողմերը, գրեցի այս գիշեր ուղարկեցի: ԷՄԷՍ» (Մելիք-Ստեփանյանը հանդես է գալիս «ԷՄԷՍ» ծածկանվամբ) (Կապ. երկր. թանգ, փաստաթղթերի մատյան, №3111):

Նամակ Մելքումիին (հավանաբար ինքնապաշտպանության կազմակերպիչ, իրավաբան, ՀՅԴ-ի անդամ Համբարձում Մելքումյանին). «... Հայր Սուրբին եմ դիմում եւ Ձեզ: Նորանից խնդրում, Ձեզանից պահանջում շուտափույթ օգնութիւն– երկիր, գործը երեսի վրա է.....

Հիշո՞ւմ եք ինձ մոտ Ձեզ ասում էի անձնասպանութիւն է Ղափանը երեսի վրա թողնել գնալը, այստեղ մարդ չկայ եւ ոչ մի, եւ ահա հետեւանքը... Այստեղ հրամանատար չկայ, կանոնավոր ոչինչ, ռազմական ույժի ոչ ծախս, ոչ գիուղարայքում, եւ ոչ իրանց անդամների մոտ (բայց իրանք անդամներին հրաշալի գինած են), գրածս գանգատ չէ ոչ էլ բամբասանք, այլ չեք ուզում, որ մասնատվի Ղափանը:

Մի հմուտ հրամանատար, որ կարքադրէ ույժերը, եւ կարելիին չափ ույժ, ռազմական մթերք:

Փամփուշտ մի հատել չկայ այստեղերքը» (Նույն տեղում, №3103):

Ձեզքի ու զինամթերքի կարիք զգացել են նաեւ Գորիսում: Կրկին Մելիք-Ստեփանյանն է. «...Ուզում են վաղը փամփուշտներ ուղարկել Գորիս, կա՞ յարդոք այնտեղ, եթե գիտեք, «ոչ» գրեցեք» եւ ապա գինամթերք է խնդրում հայդուկապետ Պետոյից (Նույն տեղում, №3099):

Հասկանալ է պետք, որքան լակոնիկ ու անընթեռնելի, այնուհանդերձ այս վավերագրերն ավելին արժեն, քան կռվի որեւէ տեսարանի կամ իրադարձությունների շրջայի նկարագրություն ժամանակի պարբերական մամուլում:

***

Գորիսի եւ Շինուհայրի շրջանին հանգիստ չէին տալիս նաեւ Քյուրդլարի հետ միացած Աղուդի-Վաղուդի գյուղերը: Մեծ սպառնալիք էին նաեւ Ցանձավերի եւ Աղվանիի բեկերը, որոնք շարունակ հարձակումներ էին գործում Տաթեւի եւ Ցանձատափի վրա:

Տաթեւից Ղափան ճանապարհն անցնում էր Աղվանի եւ Ցանձավերը գյուղերի վրայով, որոնք թուրքաբնակ էին եւ դարձել էին Սուլթանով բեկերի ավազակաբները: Ամենից ավազակաբարո գորեցեկերպ ունեին դատ ու դատաստանից փախած, մոլեռանդ հայատյացներ Աբբոյ Ալի բեկ, Շիրազի բեկ, Ղամիդ բեկ Սուլթանովները:

Տաթեւի շրջանի, թուրքաբնակ այս գյուղերի եւ Ամանաի գյուղերի իրադրությունը փոխվեց 1905թ. գարնանը այս բեկերի կողմից կավարտցի հայդուկ Ղաչաղ կոստիի (Կոստանդին Աղամյան) դավադիր սպանությամբ: Փակվեց Գորիս-Ղափան ճանապարհը, երթեւեկությունը դարձավ անհնարին: Իրավիճակի գնահատականը տալիս է «Դրոշակ»-ը. «Դարաբերությունները Ղափանի հետ կտրված է: Անցողությունը միայն պոստի հետ են կարողանում գնալ կամ գալ: Բայց այս միջոցով բավական թանգ է նստում, որովհետեւ Գորիսից մինչեւ պղնձի հանքերը ճանապարհը անցնում է թուրքերի միջով: Եթե փոստի հետ գնացողներ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■

ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐ

վրա: Արդյունքը՝ նոր զոհեր ու ավերածություններ:

Այս կռիվները անհանգստություն են առաջ բերում Ղափանում եւ Ներսես Մելիք-Թանգյանին ուղղված նամակում Մելիք-Ստեփանյանը իր մտահոգություններն է ներկայացնում օրեցօր թափ առնող բախումների առթիվ. «Գերապատիվ Հայր Սուրբ, պն. Ստեփանյանից տխուր լուր էր եկել... Կռիվը Տաթեւի կողմից հասնում է մեր ձորը, Ղափանի մի անկյունը... Վերջին ժամանակներս Տաթեւու կողմերից, Սիսիանից իրար հետեւից լուրերը վերին աստիճանի գրգռել են երկու կողմերի էլ... Մի կերպ հանգստացվեց համեմատաբար, անցավ մի քանի օր եւ ասում են, գալիս է լուր, որ քարուքանդ է արված Քյուրդլարը եւ Խոջանանը, բերվել են այստեղից ազատված կանայք եւ երեխաները մեր կողմերը.....» (Կապաձի երկրագիտ. թանգ., փաստաթղթերի մատյան, №3107):

1906թ. սկսվեց անիշխանությամբ եւ այն խաղաղությունէ չէր խոստանում: Երեւանի նահանգի եւ Սյունիքի ուժերի ընդհանուր հրամանատար Ֆար-Դաւոը (Սարգիս Օհանջանյան) հաստատում է. «Ամբողջ Զանգեզուրում կատարյալ անիշխանություն է տիրում: Ոչ մեծ կա, ոչ իշխանություն, ոչ կարգ ու կանոն: Այդ կողմերի հայերը, ավելացնեմ նաեւ ամբողջ քրիստոնյա տարրը սաստիկ վտանգավոր կացության մեջ են գտնվում, երկյուղից ազատ չէ նաեւ ռուս չինովնիկությունը: Եղել են դեպքեր, երբ մինչեւ իսկ կոզակներին կողոպտել են՝ խլելով թե շորերը եւ թե փամփուշտները: Նշանները պարզ երեւում է, որ թուրքերը երբեք դիտավորություն չունեն ձեռք վերցնելու իրանց չար, դիվական գործերից: Սպանված մի քանի թուրքերի գրպանցներում գտնվել են նամակներ, որոնցից պարզ երեւում է, որ հաղորդակցության սերտ կապ կա Զանգեզուրի, Սիսիանի ու Ղափանի եւ նույն իսկ Պարսկաստանի թուրքերի մեջ, որոնք ինչ-որ դիվային ծրագրեր ունեն իրագործելու ապագայում» («Յառաջ», 24 հունիսի 1906թ.):

***

Գավառում մոլեգնում էին սարդրաքը, անհանդուրժողականությունը, կռիվը, կրոնական մոլեռանդությունը: Հնչում էր Սրբազան պատերազմի՝ Ջիհադի կարգախոսը: Սա իրականության մի երեսն էր: Սյունը միմյանց դիմե հանդիպում էին երկու ժողովուրդների մեջ առավել հարգանք ու հեղինակություն վայելող անձիք, սպիտակ դրոշ պարզած համաձայնեցնելու համար: Ամենից ավազակաբարո գորեցեկերպ հայ-ադրբեջանական խմբերը դատապարտելով թշնամքը, քարոզելով հանդուրժողականություն եւ խաղաղություն. «Սպիտակ դրոշակի տակ հայ-թուրքական կոմնիսիաներ, որն անցել է Եվլախ-Գորիս տրակտով, վերադարձնում անվտանգ: Ճանապարհին ստացած կոմնիսիայի տպավորությունը սփռփիչ էր», – Շուշիից 1906թ. հունիսի 23-ի ժ. 10:17-ի թղթակցությունն է հաղորդում «Դրոշակ»-ը:

Զուր ջանքեր. խաղաղության երթի եւ ցույցերի պահին պարտադրում է կրում... բանակամարտը. «Խաղաղությունը պահպանելու համար բոլոր գործ դրած ջանքերին հակառակ անսպասելի կերպով բռնկվեց մասսայական շարժում, հաղորդակցությունը կտրված է, սպանություն, կողոպուտ, գերումնք շատ է լինում» (Գորիսից 1906թ. հունիսի 22-ին Ալ. Մելիք-Ազարյանցին հղված հեռագրից):

Խաղաղության առաքելությամբ Խրիմյանի կողմից Զանգեզուր ուղարկվեց Մեսրոպ Արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը (Ծնունդով Շիկահող գյուղացի հոգեւոր գործիչը ամուր թելերով կապված էր Գորիսի հետ), որը որոշ քայլեր կատարեց վերագրերը՝ 1906թ. օգոստոսի 29-ին Շիկահողից Սմբատ Բեկին ուղղված Մուրադի ճանպը, Յաչդնացի Սաքոյի՝ Շիրինյանի գրված չթվագրված հաշվետվությունը:

Վավերագրերը հաստատում են եւ, որ գորիսեցի Սուրեն Արամյանը գործում էր Ագարակում, Արամ Պարոնյանը Ղափանի գյուղերում: Ղափանում Նիկոլայ Հովսեփյանի ռազմական ղեկավարության մասին փաստում են Սմբատ Մելիք-Ստեփանյանի ճամակը ուղղված «Հարգ Նիկոլային» եւ Հովհաննես Քարամյանի ճամակը Մելիք-Ստեփանյանին: Վերջին գրության մեջ խնդրվում է հնարավորության դեպքում 200 փամփուշտ ուղարկել «Հրամանատար Նիկոլային»:

Ղափանում իրենց դերակատարությանը աչքի ընկան Յաչդնը եւ Յաչդնացիները, թեեւ հածախ երկուսն էլ հանդես են գալիս Յաչդնացի անվամբ: Չպետք է շփոթել նրանց, ինչպես որ Գորիսի մասին իրատարակված շատ նյութերում արվել է: Յաչդնը՝ Հովհաննես Պարոնյանը, ծնվել է 1878թ. ապրիլի 26-ին Գորիսում, Պարուսնաց Բաբուրի եւ Սարիաձի ընտանիքում: Անցել էր Միջին Ասիա, աշխատում էր այնտեղ: 1905թ. վերադարձավ, անդամագրվեց ՀՅԴ-ին, մտադիր էր գործել Կարսում, բայց մի խուսք գորիսեցիներ նախատեցին. «Էսքան ժամանակ Հայրենիքից ու Գորիսից հեռացել էիր, այժմ հասել ես Զանգեզուրի սահմանները, ինչպե՞ս կարող ես վերադառնալ առանց Գորիսը տեսնելու.»(«Եռապնի հուշերը», «Հայրենիք» ամսագիր, էջ 154, №10): Նոյնմբերի կեսերին հասավ Գորիս:

Ստեփան Ստեփանյանի ասպարեզից հեռանալուց հետո «ՀՅԴ Սյունեցնում» ղեկավարեց Գեորգ Յաչդնի առաջ մնալ Սյունիքում: Այդ ժամանակ իրադրությունը սրվում է Ղափանում, եւ Զանգեզուրի Ջիվորական մարմնի որոշմամբ Յաչդնը տեղափոխվում է Ղափան եւ ստանձնում Ղափանի եւ Արեւիքի միացյալ շրջանի հրամանատարությունը (իսքբաչետությունը): Աչքի ընկավ մի շարք վայրերի կռիվներում, առանձնապես Ղափանի արեւելյան գյուղերի պաշտպանության ժամանակ: Ուր ասես հայտնվել է, չէր զիջում նույնիսկ կոզակներին, եղել է անզիջում, անհանդուրժող, վրիժառու, զուր չէ, որ թուրք բնակչությունը նրան համարում էր «Ղափանի սար ու ձորի գուլում» Յաչդն»: Նրան հարկադրված զսպվածությամբ կոչ են անել հայդուկապետերը, գյուղերի բնակչությունը, Սմբատ Մելիք-Ստեփանյանը: Պետոյին ուղղված մի ճամակում Մելիք-Ստեփանյանը դժգոհում է. «Եթե կարողանաս խույս տալ կռվից, դա մեծ հաջողություն է: Բայց երեւի կռիվը անխուսափելի է լինելու, որովհետեւ նայած տեղեկությունների եղվարդում եւ Ողեւում գնալ բ ընկեր Յաչդնը մեծ մասին ընդհարման է ուղարկել» (Կապ. երկր.. թանգ., փաստ. մատյան, №3099):

Իճքնապաշտպանության նվիրյալ էր Յաչդնացի Սաքոն, նույն իճքը՝ Համբարձում Սարգիսջանյանը: Ծնվել է Գորիս գյուղում, Պետրոսի ընտանիքում (Ծննդյան տարեթիվը ինարավոր կլինի պարզել Գորիս գյուղի Չափաբերական մատյանից): Անցել է Բաքու՝ աշատանք որոնելու: Տարվել է Դաշնակցության գաղափարներով: 1902թ. վերադարձել է Գորիս, այստեղ դարձել ՀՅԴ կազմակերպության հիմնադիրներից մեկը: 1903թ. հայ եկեղեցու ուեցվածքի բռնագրավման առթիվ բախվել է կոզակների եւ ոստիկանության հետ: 1905թ. Շուշիում օրը ցերեկով գնդակահարել է հայերին գաբաչոյ ոստիկանասպետին: Յաչդնացի-Սաքոյի հեղինակությունն անվերապահորեն ընդունում էին Գորիսում եւ Ղափանում, նրա մասին նույնիսկ երգեր են հորինվել:

Ապրո՞ւմ են այդ երգերը, թե՞ մոռացության են մատնվել:

Միայց երգերը չէ, որ մոռացության են մատնվում: Ցավալի իրականությունէ է. հավիտենական մոռացության են մատնվել սյունեցի քաջարի հայդուկները: Մոռացվել է երկրի ու հողի տերը ճարահատ զենքի դիմած գյուղացին: Պատճառը տեղացիների մասին թե կուսակցական, թե անկուսակցական մամուլը գերադասում է լռել: Գորիսեցիներ՝ առավել եւս, գրեթե չեն հիշատակվում:

Մամուլը հանդ է... խոսում են վավերագրերը:

Ահա եւ առաջին անգամ հրապարակվում է մի ցուցակ, ուր Յաչդնացի-Սաքոյի (միանշանակ է՝ ոչ Յաչդն-Պարոնյանի) վիրվոր գիվորները են, (հավանաբար մեծ մասամբ գորիսեցիներ)՝

Գրիգոր Դաղայան, Արա Գեւորգյան, Փարանաք Ավանեսյան, Գրիգոր Համբարձումյան, Մնդրի Մկրտչյան, Վարդազար Օհանջանյան, Արա Մնացականյան, Մուսա Սարգսյան, Արա Ալավերդյան, Խաչի Հարությունյան, Խաչի Վանեսյան, Աղաբեկ Սարգարյան, Դավիթ Սարգսյան, Սնտոն Մնացականյան, Պետրոս Մնացականյան, Սանուչար Հարությունյան, Քարամ Ավագյան, Կոստան Գրիգորյան, Փիրի Մելքումյան, Հարություն Պետրոսյան, Կարանոզոր Մելքումյան, Սարիբեկ Փարսյան, Միրզան Վերդուզ, Գալուստ Միմասյան:

Սյունեցու արյան կաչչը եւ հիշողությունը գուցե հարկադրեն փնտրել նրանց մեջ նախնիների:

***

Սյունիքում հաղթանակն ապահովված էր: Տաթեւն էր, որտեղ իրենց պարտությունը ճանաչելու, խաղաղության հաստատելու հույսով, ապիտակ դրոշ պարզած գալիս էին թուրք խմբեր, ցեղապետեր, հայհոյում, մեղադրում էին խաներին ու բեկերին եւ ներսես Մելիք-Թանգյանի միջնորդությանն էին դիմում դադարեցնելու հայ ֆիդայական խմբերի գործողությունները: Տաթեւի վանք հասավ նույնիսկ տխրահռչակ Իլդրիմ Բեկը, որը մաքուր հայերենով խոստովանեց. «Տունը քանդվի դաշնակցութեան. էդ ի՞նչ սարսափելի կազմակերպութիւն է, որին ենթարկվեցին բոլոր հայերը: Ամբո՞ հայ մարդը լսող չի. միմյանց հակառակ են, բայց արի տես թէ ինչպէ՞ս իսկոյն հնազանդեցին եւ ինչպես Դաշնակցութիւնը կարողացաւ ամբոխը բերել» (Միք. Վարանդյան, «ՀՅԴ պատմություն», էջ 344):

Ուշացած, չափազանց ուշացած ցարիզմը կանգնեցրեց երկու ժողովուրդների ահավոր սպանդը: Կարգ դարձի բերել խնձորեսկցի աշուղներին: 1906թ. աշնանը 150 հոգուց բաղկացած հեծելազորը՝ խմբապետ Իսակ Ղազիկյանի ղեկավարությամբ, կարմիր դրոշով (Աղջեւից սպիտակ ձիու վրա դրոշը ձեռքին ընթանում էր Գորիս գյուղացի Ուհանի Մադու որդի Ջաքոն) եւ մարտական երգերով (Ջեթարևի մարշ), Գորիս քաղաքից շարժվեց Խնձորեսկի վրա: Խնձորեսկյան հետագա իրադարձությունների մասին տեղեկություններ չունենք, Ա.Ջգուշեցուցի (Արտեմ Խանզադյան) հուշագրությունն ընդհատված է:

1905-1906թթ. արյունոտ իրադարձությունները, միջեթնիկական բոլոր տեսակի բախումները, անհանդուրժողականությունը, կրոնական մոլեռանդությունը դասեր են տալիս, որոնցից այդպես էլ ոչինչ չենք սովորում: Սակայն անգվիաքի պատմաբան Անոնդ Թոյնբին սթափեցնում է. «Մարդկությունը պիտի ընտրի երկու հնարավոր ուղիներից մեկը. կամ ինքնասպան լինի, կամ սովորի ապրել միասնական ընտանիքում»: ■

Գյուղի այս զրկանքները համարձակ ու արդարացի վրիժառությամբ հետեւանք էին. գավառական չինովնիկները զգուշավոր էին թուրք ավազակապետերի հանդեպ, եւ սովորական էր դարձել նրանց անպատիժ թողնելը: Պատվախնդիր սյունեցիներին մնում էր հանցագործներին պատժել ահաբեկչությամբ: Գավառի պատուհասս, մազմազաքի ավազակապետ Խաճկար բեկը սեպտեմբերի 6-ին, երբ արդեն որերորդ անգամ արդարացվել եւ ազատվել էր Գորիսի բանտից եւ երկու ստրաժնիկի ուղեկցությամբ գյուղ էր վերադառնում Քարահունջի մոտերքով, գնդակահարվել էր գորիսեցի երիտասարդների կողմից:

Քարահունջի էկզեկուցիան որպես հեղափոխական ելույթների արդյունք է ներկայացնում Սերո Խանգաղյանը («Հայրենասպատուն», գիրք Ա., էջ 104), միաժամանակ համարում այն ճախողված գործողություն:

Գորիսեցի պատվասեր երիտասարդներին արդարացի վրիժառության մղեց նաեւ Սիլքեմնը: Խնամախցի քաջ մարտիկ Փարունց Սայադի արարքի մասին իմացվեց ամենուր: Սայադը՝ զինված, սար ու ձոր ընկած, հայտնաբերում եւ ոչնչացնում էր մարդասպան թուրքերին ու քրդերին: Նրան սպառնալիքներ ուղարկեց Սալիթեյլու գյուղացի թուրք Նազիմ, որը Սիլքեմնի դեմ իր ավազակաբարո արարքների համար «Իգիթ» էր նկնվել իր ազգակիցների կողմից. «Եթե ուզում ես կենդանի մնալ, ձեռք քաշիր իմ ցեղակիցներից: Եթե ոչ՝ տունդ կքանդեմ, Խնամախն էլ ավերակի վեր կածեմ»:

Սայադի պատասխանը ուղարկվել է «Իգիթին». «...Զգուշացիր եւ արթուն մնա, որոշել եմ գալ եւ կնոցդ ծոցի մեջ գլուխդ կտրել»:

Խնամախցին խոսքի տերն էր. գիշերով հասնում է Սալիթեյլու, երդիկից թոկով իջնում Նազիի տուն: Նազիզ արթնանում է, բայց անկարող է լինում դիմադրել: Ջեռք չի տալիս կնոջն ու երեխաներին: Սակայն կտրում է ավազակի գլուխը, իր հետ հասցնում Խնամախս, այնտեղից՝ գավառական կենտրոն: Ղաջորդ օրն արդեն ավազակապետի գլուխը ցուցադրվում էր Գորիս քաղաքի հրապարակում:

Վերջում Գորիսի նեղքին կյանքի՝ առանց մեկնաբանության մի դրվագ, որ ավելորդ չէ հիշատակել. խաղաղությունն հաստատվել, եկել էր փոխադարձ հաշիվները մաքրելու ժամանակը. հանձայն Ա.Ջգուզեցուրցու հուշագրության՝ Դաշնակցակցությունը, հիշպես իրենք էին ասում, որոշեցին կարգի կամ դարձի բերել խնձորեսկցի աշուղներին: 1906թ. աշնանը 150 հոգուց բաղկացած հեծելազորը՝ խմբապետ Իսակ Ղազիկյանի ղեկավարությամբ, կարմիր դրոշով (Աղջեւից սպիտակ ձիու վրա դրոշը ձեռքին ընթանում էր Գորիս գյուղացի Ուհանի Մադու որդի Ջաքոն) եւ մարտական երգերով (Ջեթարևի մարշ), Գորիս քաղաքից շարժվեց Խնձորեսկի վրա: Խնձորեսկյան հետագա իրադարձությունների մասին տեղեկություններ չունենք, Ա.Ջգուզեցուրցու (Արտեմ Խանզադյան) հուշագրությունն ընդհատված է:

1905-1906թթ. արյունոտ իրադարձությունները, միջեթնիկական բոլոր տեսակի բախումները, անհանդուրժողականությունը, կրոնական մոլեռանդությունը դասեր են տալիս, որոնցից այդպես էլ ոչինչ չենք սովորում: Սակայն անգվիաքի պատմաբան Անոնդ Թոյնբին սթափեցնում է. «Մարդկությունը պիտի ընտրի երկու հնարավոր ուղիներից մեկը. կամ ինքնասպան լինի, կամ սովորի ապրել միասնական ընտանիքում»: ■

ՀՐԱՏԱՐԵՑ ԵՎ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՍՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԳԱՓԱՆ, ԵՍԵՆԻՆԻ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ՁԱՆԳԵԶՈՒՐԻ ԳՈՅԱՄԱՐՏ

Անդրանիկի ժամանակը

Հատված Հրաչիկ Սիմոնյանի համանուն գրքից

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

Գորիս գալու հաջորդ օրը՝ օգոստոսի 4-ին, Զանգեզուրի Կենտրոնական Ազգային Խորհուրդը հիստ ունեցավ եւ Անդրանիկի ներկայությամբ ողջունեց նրա գալուստը: Խորհրդի անդամները Զորավարին պատմեցին, թե լեռնաշխարհի համար ինչպիսի սպառնալից դրություն է ստեղծվել:

Օսմանյան զավթիչները եւ Ադրբեջանի կառավարությունը՝ ուժեղացած եւ զոռոգացած, հեծված Բաթումի դաշնագրի վրա, Զանգեզուրի հայ բնակչությունից պահանջում էին անվերապահորեն հպատակվել ու զինաթափ լինել՝ հակառակ պարագային սպառնալով բնաջնջել:

Օրերը ծանր էին ու դաժան: Դեպի Աստերոն գնացող օսմանյան զորքերն իրենց մի թեւով թեքվել էին դեպի աջ եւ Բաքվի անկումից հետո պիտի արշավեին հայկական Ղարաբաղի եւ Զանգեզուրի վրա: Մյուս կողմից, գրավելով Նախիջեւանը՝ օսմանյան զորքերը սպառնում էին այնտեղից թափանցել Սիսիան: Ադրբեջանական բանակի մի թեւը տաճիկ սպաների հրամանատարությամբ, Մուղանի դաշտավայրի կողմից շարժվելով դեպի Ձանգեզուրի շրջան, պատրաստվում էր ներխուժել Ղափան: Մեղրիի վրա չէին դադարում Գողթանը գրաված օսմանյան զորքերի հարձակումները:

1918 թվականի օգոստոսին առավել ծանր վիճակ էր ստեղծվել Զանգեզուրի հարեւան հայկական երկրամասում Ղարաբաղում:

....Ղարաբաղը փաստորեն իրեն հայտարարեց անկախ պետական միավոր:

Սակայն մուսավաթական կառավարությունը, թիկունք ունենալով թուրքական զավթիչներին, չճանաչեց Ղարաբաղի ինքնիշխանությունը եւ Զանգեզուրի հետ այն համարեց Ադրբեջանի անբաժանելի մաս:

Այս վճռական պահին Ղարաբաղի հայությունը, հենվելով սեփական ուժերի վրա, միաժամանակ սպասում էր, որ Զանգեզուրից օգնության կգան Անդրանիկ իր զորամասով եւ Գորիսում մնացած Շուշլա գունդը:

Դեռ մինչեւ Անդրանիկի Գորիս ժամանելը, Զանգեզուրի Ազգային Խորհուրդը ստացել էր օգոստոսի 2-ին Շուշիից գրած մի նամակ, որով խնդրվում էր Գորիսում գտնվող Շուշլա գունդը հնարավորին չափ շուտ ուղարկել Ղարաբաղ:

Բայց Զանգեզուրի Ազգային Խորհուրդը նամակին անմիջապես չարձագանքեց: Վեց օր հետո՝ օգոստոսի 8-ին, երբ Անդրանիկն արդեն Գորիսում էր, Շուշիից ստացվեց երկրորդ նամակը:

«Այն ծանր, տագնապալից դրությունը, որն ապրում ենք մենք, – ասված էր նամակում, – մեզ ստիպում է խնդրանքով նորից դիմել ձեզ: Ղարաբաղի հայ ժողովրդի համար ներկայումս օդի պես անհրաժեշտ է գնդի (Շուշլա – Հ.Ս.) եւ մանավանդ ռազմամթերքի այստեղ տեղափոխվելը: Մենք կանգնած ենք ճակատագրական անխուսափելի անակնկալների առաջ, եւ եթե մինչեւ ամսոյս 25-ը ռազմամթերքի պաշար չստանանք, կարելի է վճռականապես եւ հաստատ ասել, որ կորած ենք»:

Ոչ պակաս տագնապալի լուրեր էին գալիս Գողթանից:

Գողթանի մի մասը՝ 9 հայկական գյուղերով Վերին Ագուլիս, Ներքին Ագուլիս, Ցղնա, Տանակերտ, Ռամիս, Փառակա, Բիստ, Ալահի եւ Մորվանիս, միակ անկյունն էր Նախիջեւանի ամբողջ գավառում, որը հուսիյական ահեղի աղետից հետո զերծ էր մնացել կոտորածներից:

Զուլֆայից դեպի Ագուլիս-Օրդուբադ տանող ճանապարհի վրա ընկած երկու Աղա գյուղերը եւ Դեր գյուղը հիմնովին ավերելուց եւ բնակչության մեծ մասը կոտորելուց հետո թուրքերը շարժվել էին դեպի Օրդուբադ եւ գրավել այն:

Օրդուբադ մտնելու առաջին օրը՝ օգոստոսի 8-ին, տաճկական հրամանատարության կողմից այդ շրջանի կառավարիչ նշանակված մայոր Խալիլ բեյը հայտարարեց, որ հպատակություն հայտնած եւ զինաթափ եղած հայերին տրվելու է կյանքի, գույքի եւ պատվի ապահովություն:

Ագուլիսի շրջանի հայությունը մի պահ մտածեց տնաքանդ լինել ու վայիշ թեւով դեպի Բաքու արշավելու: Իրենց ծրագրի միայն մի մասը, այն է՝ գրավել էին Շարուրը, Նախիջեւանի գավառը եւ Գողթանը, բայց ավելի առաջ գնալ նրանք չէին կարողանում:

Նախիջեւանից իր զորքերի անցումը դեպի Մեղրի եւ այնուհետեւ դեպի Ադրբեջանի խորքերը տաճկական հրամանատարությունը ճախատեսել էր իրականացնել Արաքսի ձախ ափով:

Դեռ Առաջին համաշխարհային պատերազմից մի քանի տարի առաջ սկսվել էր Զուլֆա-Բաքու երկաթգծի շինարարությունը: Պատերազմի ճախօրյակին Զուլֆայից սկսած Օրդուբադ-Մեղրիով մինչեւ Քուռ եւ Արաքս գետերի հատման կետն արդեն պատրաստ էր երկաթուղու պատառը, որի վրա պետք է վազեին երկաթե ուղիները: Բայց պատերազմը խանգարել էր շինարարությանը: Ռուս մասնագետների մի մասը դեռ մնացել էր այդ կողմերում եւ կառույցի վրա շարունակել էր աշխատել ընդհուպ մինչեւ Անդրկովկասը Ռուսաստանից անջատվելը: Դեռ 1917 թվականի վերջերից սկսած նրանք դադարեցրել էին աշխատանքները, բայց չէին կարողացել դուրս գալ այդ խուլ վայրերից եւ մեկնել Ռուսաստան:

Երկաթգծի համար պատրաստի պատառն էր, որ տաճկական հրամանատարությունը օրագրել էր իր գնդի աջ ափով, Ղարաբաղի լեռնային դժվարամատչելի կիրճերով:

Տեղական փոքրաթիվ հայկական ուժերի ի վիճակի չէին սանձահարելու բնական անառիկ պատնեշներ ունեցող թուրքական գյուղերը եւ խաղաղություն վերահաստատելու շրջանում: Պարզ էր, որ բուրքաբնակ գյուղերին սահմանեպիկ Սիսիանի եւ Գորիսի հայկական գյուղերի բնակիչների անվտանգությունը սպառնալիքի տակ էր մնալու այնքան ժամանակ, քանի դեռ Զանգեզուրի տարածքում շարունակելու էին անպատիժ գործել զինված ավազակախմբերը:

Ղարաբաղ գյուղի կոմիսարը օգոստոսի 19-ին Անդրանիկին գրում էր.

«Մենք, Ղարաբաս գյուղի հայ ժողովուրդս, մեր հույսը դրել ենք Ձեզ վրա եւ աղաչում ենք մաքրել Շամբ, Ուրուտ թուրք գյուղերը, որպեսզի մեր գյուղացիները հնարավորություն ունենան հնձելու իրենց ցորենի արտերը, որ մինչեւ այժմ մնացել են: Մենք Ուչթափալարի մեր սեփական հողերի տերը չենք: Հուսով ենք, որ մեր աղաչանքը զուր չի անցնի ձեր քովը»:

Նման բովանդակությամբ եւ խնդրանքով Սիսիանից բազմաթիվ նամակներ էին հասնում Գորիս նաեւ Զանգեզուրի Կենտրոնական Ազգային Խորհրդի անունով:

Զանգեզուրի Ազգային Խորհուրդը, իր Գիտներից մեկուն հանգամանորեն քննարկելով Սիսիանի վիճակը, որոշում է ընդունում այնտեղ անցկացնել պատժիչ գործողությունները եւ բացել ճանապարհները: Միաժամանակ Խորհուրդը դիմում է Զորավար Անդրանիկին եւ խնդրում, որպեսզի նա նույնպես իր զորամասով մասնակցություն բերի ծրագրվող ձեռնարկին: Ազգային Խորհրդի որոշմանը հավանություն են տալիս եւ միանում Շուշլա գնդի հրամանատար, գնդապետ Միքայել Մելիք-Շահնազարյանը եւ Ղարաբաղի ու Զանգեզուրի գլխավոր լիազոր Հովակ Ստեփանյանը:

Օգոստոսի 12-ին Հովակ Ստեփանյանը Անդրանիկին գրում է. «Ի նկատի ունենալով, որ տեղիս Ազգային Խորհուրդն՝ ինձ հետ միասին, ինչպես եւ Շուշլա գնդի հրամանատար, գնդապետ Մելիք-Շահնազարյանը, մի շարք պատճառներից դրդված վճռել են զենքի ուժով բաց անել Անգեղակոթից Գորիս-Շուշի տանող խճուղին ոչնչացնելով ճանապարհի մոտ գտնվող թուրքական գյուղերը, Ձեզ խնդրում եմ հրահանգել Ձեր զորամասին, որ մասնակցե տեղի ունենալիք ռազմական գործողություններին, որոնց հետեւանքների պատասխանատվությունը մեզ վրա է ընկնում»:

Զորավարն անմիջապես դրական արձագանք է տալիս:

Վերլուծելով Զանգեզուրում եւ նրա շուրջը եղած ռազմաքաղաքական դրությունը՝ Անդրանիկը եկավ այն եզրակացության, որ տվյալ պահին առավելապես վտանգված է Սիսիանը, նույնիսկ ավելի վտանգված, քան Ղարաբաղը: Թշնամին Սիսիանին սպառնում էր ոչ միայն դրսից, այլեւ ներսից: Ըստ որում, ներսի թշնամին ավելի վտանգավոր էր, որի հետ պետք էր պարզել հարաբերությունները, շրջանի թուրքական գյուղերը ենթարկել Զանգեզուրի իշխանություններին, իսկ անհնազանդությունը եւ թշնամական գործողությունները շարունակելու դեպքում՝ պատժել:

Գորիսի շրջանից Սիսիանի շրջան տեղափոխվելու համար Անդրանիկն ուներ նաեւ ուրիշ հիմնավոր պատճառներ:

Եթե հանձին Հարվածող Զորամասի Զանգեզուրը թուրքական վտանգի դեմ գոնե ժամանակավորապես ուներ ապահովություն, ապա նրա մյուս կողմից նրա մի հատվածում բուն Զանգեզուրում (Գորիսի շրջանում), պարենի եւ կենսամթերքների տեսակետից ստեղծվել էր ծանր կացություն:

Անդրանիկը լավ էր պատկերացնում գալիք դժվարությունները՝ կապված զորքի մատակարարման, գաղթականության գոյապահպանության եւ հատկապես զանգեզուրցիներին սպասվող նյութական մեծ զոհողությունների հետ:

Տնտեսական դժվարին վիճակում գտնվող Գորիսի շրջանում իջեւանած մարդկային հսկա զանգվածն իր հետ բերեց բազում թյուրիմացություններ, անախորժություններ, գժտություններ: Գաղթականներն զբաղեցրել էին բոլոր ջրերի եզերքները, հրապարակները, դաշտերը, պարտեզները:

Ճիշտ է, այդ տարի դաշտերն առատ բերք էին խոստանում, բայց դա չէր կարող հույս ներշնչել, թե հնարավոր կլինի կերակրել տասնյակ հազարավոր հավելյալ բերաններ: Սովից ոսկրացած գաղթականները մրգի, հավի եւ նման մաղր գողությունները հանգան «ավելի ծավալուն» գործողությունների: Նրանք ոտնատակ էին տալիս դեռ լրիվ չհասած բանջարեղենը, քաղում կիսահաս ցորենը՝ չսպասելով բերքը հավաքելուն: Այդ հողի վրա տհաճ դեպքեր պատահեցին, նույնիսկ սպանվեց մի քանի գաղթական: Ցավալի էր այդ ամենը, բայց ինչ արած՝ դա էր իրողությունը:

Ուստիեւ գտնելու հույսով գաղթականության մի մասը Գորիսից սկսեց անցնել հացառատ եւ ավելի ամուր տնտեսություն ունեցող Սիսիան, ուրիշները Ղարալեպազաղի վրայով մեկնեցին Երեւան, նույնիսկ Շուշի գնացողներ եղան կտրելով թուրքական եւ քրդական գյուղերի տարածքներով անցնող մահացու ճանապարհները:

Զանգեզուրի Կենտրոնական Ազգային Խորհուրդն ամեն կերպ նպաստում էր, որպեսզի որքան հեռանան հարեւան գավառները եւ որքան կարելի է շուտ:

Այդ նպատակով Խորհրդի նախագահ Միշա Պարոնյանը մի շարք գրավոր խնդրանքներ ներկայացրեց Զորավար Անդրանիկին: Նկարագրելով վիճակը նա գրում էր, որ «գաղթականության հասցրած վնասները եւ ավերումները հասնում են հսկայական չափերի»:

Խորապես ըմբռնելով դժվարին կացությունը Գորիսի շրջանում Անդրանիկը հարկադրված էր կատարել գաղթական զանգվածների նոր տեղափոխություններ դեպի հացառատ վայրեր, հատկապես դեպի Սիսիան եւ Ղարաբաղ:

Օգոստոսի 10-ի վաղ առավոտյան Գորիսից դեպի Ղարաբաղ շարժվեցին ավելի քան 2500 տաճկահայ գաղթականներ: Նրանք նույն օրը պետք է հասնեին սահմանին, իսկ հաջորդ օրվա առավոտյան մտնեին Զաբուղի ձորը եւ Ղարաշլաղի (Կարադարասի) գյուղախմբի վրայով շարժվեին դեպի Շուշի: Բայց հասնելով Խնձորեսկ, Քարաշեն եւ Տեղ գյուղերի ցորենի հասունացած արտերին՝ գաղթականությունն այլեւս միտք չուներ առաջ գնալու, թեեւ Ղարաբաղում արդեն նրանց ընդունելու պատրաստություններ էին տեսել:

Վերջապես օգոստոսի 15-ին գաղթականությունը շարժվեց տեղից եւ մտավ Զաբուղի ձորը: Բայց դեռ չհասած Ղարագրորաբյանի կամարը՝ հարձակման ենթարկվեց մոտերքում գտնվող Զարլսլու գյուղի թուրքերի կողմից: Շուշիից օգնության հասան մի քանի տասնյակ հայ տղաներ եւ, թուրքերին քշելով, բացեցին ճանապարհը: Գաղթականները մեծ դժվարությամբ տեղավորվեցին մոտակա հայկական գյուղերում, քանի որ Շուշիում նրանց պահելու հնարավորություն չկար, քաղաքի բնակչությունը այդ միջոցին մթերքների սուր կարիքի մեջ էր:

Բայց միշտ չէր, որ գաղթականներն ունկնդիր էին Անդրանիկի եւ Գորիսի իշխանությունների խոսքին:

Իր հեծելավաշտով բուն Զանգեզուրի Հալիծոր գյուղում գտնվող Սարգիս Զեբեջին, որին կարգադրված էր այնտեղ կուտակված գաղթականներին ուղարկել Սիսիան կամ ավելի հեռու՝ Դարալագյազով Բասարգեչարի կողմերը, Անդրանիկին ուղարկած երկտողում գրում էր. «Մեր հրամանը կատարելու համար տղերքը հորդորեցին գաղթականներին», «իսկ անոնք չեն ուզեր» շարժվել տեղից, դրանով իսկ ծանրացնելով վիճակը գյուղում եւ տեղիք տալով նոր անախորժությունների:

Գորիսում գնալով պարենայնի եւ այլ կարգի դժվարություններ առաջացան ոչ միայն գաղթականության, այլեւ զորքի համար:

Զորամասի Գորիս գալուց մեկ շաբաթ հետո թե քաղաքից, թե թե գյուղերից սկսեցին բողոքներ տեղալ Անդրանիկի հասցեին:

Օգոստոսի 10-ին Հին Գորիս գյուղի համայնքը Զորավարին նամակով բողոքում էր. որ գյուղը բաղկացած է մոտավորապես 100 ծխից, որոնցից 30-ը ծայրաեղ աղքատության մեջ է, իսկ մնացած 70 ծխի վրա բաժանվել է 300 զինվոր, այնպես որ ամեն տան մեջ պարում է 3-4, նույնիսկ 5-6 զինվոր: Այդ պարտադրաքը խիստ ծանր համարելով՝ համայնքն Անդրանիկից խնդրում էր պակասեցնել գյուղերում տեղաբաշխված զինվորների թիվը:

Բողոքներ էին գալիս նաեւ Ղափանից, որ մնացել էին մի քանի վաշտեր ու դասակներ, եւ Սիսիանից, որ օգոստոսի 5-ից սկսած Գորիսից աստիճանաբար տեղափոխվում էին Զորամասի որոշ ստորաբաժանումներ:

Իրենց հերթին զորամասերի հրամանատարները մեկը մյուսի հետեւից սկսեցին Զորավարին բողոքել, որ Զանգեզուրի Կենտրոնական Ազգային Խորհուրդը թերանում է կատարել ստանձնած պարտավորությունները եւ անուշադրության է մատնում զորքի կարիքները:

Գորիս քաղաքում գտնվող 2-րդ գումարտակի հրամանատար Սմբատը Զորավարին գրած գեկուցագրում նշում էր.

«Մոտ մի շաբաթ է կսպասենք այստեղ: Ազգային իշխանութեան տուած տնտեսական աջակցությունը բավարարություն չէ տուած զորախումբին: Ցակառակ այդ գրկանքին, զորքը մինչեւ այսօր համբերութեամբ սպասած էր. այս երկու օր է գինուորները ոչ մի ֆունտ հաց չեն ստանար: Կերեւի վաղը եւս չը պիտի ստանան: Հետեւեակա եւ հեծելազորի կողմանե գրավոր եւ բերանացի վճռական գեկուցումներ կան, որոնք կը պահանջեն 24 ժամուայ մեջ, գեթ մասամբ բավարարություն ստանալ, եթե զորքը իր գոյությունը պիտի պահպանե: Իսկապես լեռնամայրի մեջ հեծելազորքի վիճակը եւ այստեղ հետեւազորքի կացությունը անհանդուրժելի է: Այս բոլոր պարագաները Ձեզի հաղորդելով կը խնդրեմ որ կարգադրեք ձեր վերջնական կարգադրությունը եւ տեսրիմնությունը»:

Այդ էր պատճառը, որ գինվորները սկսել էին ծախել իրենց վերջին ունեցածը ուտեստ ձեռք բերելու համար:

Ճշմարտությունը պահանջում է ասել, որ Ազգային Խորհրդի անդամները, վարչական պաշտոնյաները, գյուղական կոմիսարները աշխատում էին գերագույն լարվածությամբ, հնարավորության սահմաններում ամեն ինչ անում էին զորքն ու գաղթականությունը մի կերպ պահելու համար, բայց նրանց ուսերը չէին դիմանում գավառի վրա ընկած ահռելի ծանրությանը:

Գինվորների շրջանում գնալով մեծանում էր դժգոհությունը. ավելի ու ավելի հաճախ էին նրանք տրտնջում, թե «ինչ գործ ունեմ ես այս հեռավոր լեռներում»:

Ուստի Անդրանիկը Զորամասի հրամանատարներին հանձնարարեց զրույցներ ունենալ իրենց ենթակա գինվորների հետ, որպեսզի ամեն ոք լավ պատկերացնի ստեղծված վիճակը. ըմբռնի, որ ինքն այս լեռնաշխարհ է եկել իրադարձությունների թելադրանքով եւ ամենից առաջ այն պատճառով, որ Հարվածող Զորամասի համար անհնար է եղել մտնել Հայաստանի Հանրապետության սահմաններից ներս: Այդ դեպքում միայն գինվորների մոտ գուցե վերանա այն հարցը, թե «ինչ գործ ունեմ ես այս հեռավոր լեռներում»:

Անդրանիկը նպատակահարմար գտավ այս պարզ ճշմարտությունը մեկ անգամ եւս անծանք հիշեցնել գինվորներին եւ սպաներին:

Օգոստոսի 13-ին (հուլիսի 31) Անդրանիկը հրատարակեց հետեւյալ թռուցիկը.

«Հայկական Առանձին Հարվածող Զոկատի սպայակուտին եւ գինվորներին

1. Նկատի ունենալով Երեւանի Հայկական Հանրապետության քաղաքական, ռազմական եւ տնտեսական մեզ համար աննպաստ հանգամանքները,

2. Նկատի ունենալով, որ Տաճկական եւ Հայկական կառավարությունների հաշտության պայմանագրով պետք է հայկական կառավարությունը ունենա մեկ դիվիզիա զորքից ոչ ավել, թուրքական գինվորական իշխանության պահանջմամբ գինաթափ պիտի արվի ամբողջ ջոկատը՝ որպես տաճկահայ առանձնահատուկ մեկ զորամաս,

3. Նկատի ունենալով, որ գինաթափ լինելուց հետո տաճկահայ գաղթականության եւ զորամասերու ֆիզիկական գոյությունը վտանգվում է,

Առաջարկում եմ

1. Չը գնալ Հայկական Հանրապետության սահմանների մեջ եւ ոչ մի պայմանով գինաթափ չը լինել, առանց եվրոպական եւ հայկական պետությունների երաշխիքի:

2. Այն գինվորները, որոնք գտնվում են իրենց ֆիզիկական ապահովությունը հանձնարարելով Ազգային Խորհուրդը թերանում է կատարել ստանձնած պարտավորությունները եւ անուշադրության է մատնում զորքի կարիքները:

Գորիս քաղաքում գտնվող 2-րդ գումարտակի հրամանատար Սմբատը Զորավարին գրած գեկուցագրում նշում էր.

«Մոտ մի շաբաթ է կսպասենք այստեղ: Ազգային իշխանութեան տուած տնտեսական աջակցությունը բավարարություն չէ տուած զորախումբին: Ցակառակ այդ գրկանքին, զորքը մինչեւ այսօր համբերութեամբ սպասած էր. այս երկու օր է գինուորները ոչ մի ֆունտ հաց չեն ստանար: Կերեւի վաղը եւս չը պիտի ստանան: Հետեւեակա եւ հեծելազորի կողմանե գրավոր եւ բերանացի վճռական գեկուցումներ կան, որոնք կը պահանջեն 24 ժամուայ մեջ, գեթ մասամբ բավարարություն ստանալ, եթե զորքը իր գոյությունը պիտի պահպանե: Իսկապես լեռնամայրի մեջ հեծելազորքի վիճակը եւ այստեղ հետեւազորքի կացությունը անհանդուրժելի է: Այս բոլոր պարագաները Ձեզի հաղորդելով կը խնդրեմ որ կարգադրեք ձեր վերջնական կարգադրությունը եւ տեսրիմնությունը»:

Գորիսում գնալով պարենային եւ այլ կարգի դժվարությունները առաջացան ոչ միայն գաղթականության, այլեւ զորքի համար:

Զորամասի Գորիս գալուց մեկ շաբաթ հետո թե քաղաքից, թե թե գյուղերից սկսեցին բողոքներ տեղալ Անդրանիկի հասցեին:

Օգոստոսի 10-ին Հին Գորիս գյուղի համայնքը Զորավարին նամակով բողոքում էր. որ գյուղը բաղկացած է մոտավորապես 100 ծխից, որոնցից 30-ը ծայրաեղ աղքատության մեջ է, իսկ մնացած 70 ծխի վրա բաժանվել է 300 զինվոր, այնպես որ ամեն տան մեջ պարում է 3-4, նույնիսկ 5-6 զինվոր: Այդ պարտադրաքը խիստ ծանր համարելով՝ համայնքն Անդրանիկից խնդրում էր պակասեցնել գյուղերում տեղաբաշխված գինվորների թիվը:

Բողոքներ էին գալիս նաեւ Ղափանից, որ մնացել էին մի քանի վաշտեր ու դասակներ, եւ Սիսիանից, որ օգոստոսի 5-ից սկսած Գորիսից աստիճանաբար տեղափոխվում էին Զորամասի որոշ ստորաբաժանումներ:

Իրենց հերթին զորամասերի հրամանատարները մեկը մյուսի հետեւից սկսեցին Զորավարին բողոքել, որ Զանգեզուրի Կենտրոնական Ազգային Խորհուրդը թերանում է կատարել ստանձնած պարտավորությունները եւ անուշադրության է մատնում զորքի կարիքները:

Գորիս քաղաքում գտնվող 2-րդ գումարտակի հրամանատար Սմբատը Զորավարին գրած գեկուցագրում նշում էր.

«Մոտ մի շաբաթ է կսպասենք այստեղ: Ազգային իշխանութեան տուած տնտեսական աջակցությունը բավարարություն չէ տուած զորախումբին: Ցակառակ այդ գրկանքին, զորքը մինչեւ այսօր համբերութեամբ սպասած էր. այս երկու օր է գինուորները ոչ մի ֆունտ հաց չեն ստանար: Կերեւի վաղը եւս չը պիտի ստանան: Հետեւեակա եւ հեծելազորի կողմանե գրավոր եւ բերանացի վճռական գեկուցումներ կան, որոնք կը պահանջեն 24 ժամուայ մեջ, գեթ մասամբ բավարարություն ստանալ, եթե զորքը իր գոյությունը պիտի պահպանե: Իսկապես լեռնամայրի մեջ հեծելազորքի վիճակը եւ այստեղ հետեւազորքի կացությունը անհանդուրժելի է: Այս բոլոր պարագաները Ձեզի հաղորդելով կը խնդրեմ որ կարգադրեք ձեր վերջնական կարգադրությունը եւ տեսրիմնությունը»:

Գորիսում գնալով դժվարանում էր ամեն ինչ. բոլորի ուշադրությունը գրավեցին Զանգեզուրի հիշատակարանները, գաղթականները, գինվորները, գաղթականությունը, զորամասերը, գաղթականությունը, զորամասերը, գաղթականությունը, զորամասերը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՊՈՐԱ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԱՄՍԱԳԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
ՀԷՂԻՆ՝ ք.ԳԱՓԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 10 229
28 ՄԱՅԻՍԻՍ 2010

ՀԱՆԳԵԶՈՒՐԻ ԳՈՅԱՄԱՐՏ

Անդրանիկի ժամանակը

Հատված Հրաչիկ Սիմոնյանի համանուն գրքից

Սկիզբը՝ էջ 57

յից, Բորիսովկայից, Մուխությունյանից եւ Բոնկոյթ բերած ռազմամթերքով ու թնդանոթներով խճուղով գաք՝ ոչնչացնելու Ղոլուտ եւ Վաղուտ թաքարական գյուղերը: Օրուայ ռազմական գործողութեանց ձեւի մասին մանրամասն գրել է պոլկովնիկը եւ կարդալ յուր ներկայացուցիչը: Օրուայ եւ ժամի մասին մեզ հայտնեցեք, որ այս կողմից գանք ու դիրք բռնենք: Գործի դրեք Սիսիանի ռազմական ուժերը եւ նրանց տեղեկացեք գործի մասին»: Այնուհետեւ Զորավարը հետգրությամբը (P.S.) ճամակում ավելացրել է. «Դուք կը վերցնեք ձեր ուժերից 250 կանոնավոր ձիավորներ, եւ մեկ վաշտ ամբողջապես……, որոնք պիտի նստեն սայլերի վրա: Իսկ մնացած ձեր ուժերը պիտի թողնեք իրենց տեղում: Կգգուշացնեք ձեր հետ եղած արտիլերիային, որ մեզ վրա կրակ բաց չանեն»:

Շուտով Սիսիանի տարբեր գյուղերում տեղաբաշխված իր զորամասերից Անդրանիկը պատասխաններ ստացավ, որ պատրաստ են անմիջապես կատարելու Զորավարի հրամանը:

Թեեւ Զորավարը Սիսիանում գտնվող իր ուժերին հաղորդել էր, թե Գորիսից դուրս կգա օգոստոսի 20-ին, բայց նշված ժամկետը խախտվել էր, իսկ ինքը այդ մասին նախապես տեղյակ չէր պահել նրանց: Դա առաջ էր բերել որոշ թյուրիմացություններ: Սիսիան մեկնելու նախօրյակին խորհրդակցելով Զանգեզուրի Խորհրդի անդամների հետ՝ Անդրանիկը որոշել էր, որ խճուղու վրա գտնվող Աղուդի, Վաղուդի եւ թուրքական մյուս գյուղերի դեմ ինքը ռազմական գործողություններ չի սկսի, եթե դրանց բնակիչները խաղաղությամբ բացեն ճանապարհները եւ պատրաստակամություն հայտնեն ենթարկվելու գավառի իշխանություններին:

Օգոստոսի 27-ին զորամասի հիմնական ուժերը, տեղական ինքնապաշտպանական ջոկատները եւ գաղթականության մեծ մասը Անդրանիկի հետ Գորիսից ճամփա ելան դեպի Սիսիան: Հույս կար, որ երեկոյան մութը վրա չհասած, կհասնեն Սիսիանի հայկական գյուղերից մեկը:

Անցնելով Գորիս քաղաքին իշխող Յոխուչ սարը եւ կտրելով Եռաբլրի (Ուչքարփա) սարահարթը՝ զորքը մտավ Արփա-Բուլդա եւ Գեղբա անունով դաշտերը: Այդ դաշտերից էր սկիզբ առնում Աղուդի եւ Վաղուդի գյուղերի սահմանը եւ գնում-վերջանում Որոտան գետի եզերքին ավելի քան 10 կիլոմետր երկարությամբ: Այս տարածության վրա էին Ուրուտը, Շամբը, Ղեղեցերդը, Ղզլջուղը, Օրթաքյուզը եւ թուրքական ուրիշ գյուղերը: Մոտեցնելով խճուղային ճանապարհից ոչ հեռու գտնվող Աղուդի, Վաղուդի եւ Զոմարթլու գյուղերի սահմանին՝ Զորավարի անջատվեցին երկու հեծյալ զինվորներ, որոնք, իրենց հետ գրություններ ունենալով, գճացին հանձնելու այդ գյուղերի ղեկավարներին: Նամակներում ասված էր, որ Անդրանիկ փաշան իր զորքով եւ գաղթականության հետ անցնում է Սիսիան եւ հույս ունի, որ ճանապարհին չի հանդիպի ոչ մի խոչընդոտի:

Աղուդի գյուղում բանագնացներին ձեռք չէին տվել եւ նրանց թողել էին այդտեղից անցնելու Վաղուդի՝ գրությունը հանձնելու յուզբաշի Մամառ բնույթ ստացան հատկապես Բահրեյնյ գյուղախմբերի շրջանում: Այս գյուղախմբերի եւ Աղուդի ու Վաղուդի գյուղերի զինված ավազակախմբերին օգնելու համար նախօրյակին Մաղավուզի շրջանից այստեղ էին եկել մուսավաթական զինված նոր կազմավորումներ՝ տաճիկ սպաների գլխավորությամբ:

Կռվի ամենաթեժ տեղամասերից մեկում, որտեղ զորավար Սմբատն էր, թուրքերի ուժերը տեղի տվեցին: Հայրուրապետ Հարությունի խումբը հանդուգն հարձակումով մխրճվեց հակառակորդի դասավորության մեջ եւ նրան դուրս քշեց անառիկ դիրքերից: Դա խուճապ առաջ բերեց նաեւ կռվի մյուս տեղամասերի մուսավաթական ջոկատներում: Շնչաված բոլոր ջանքերին՝ տաճիկ սպաներին չհաջողվեց թաքարերին պահել դիրքերում: Լքելով դիրքերը՝ սրանք անկանոն փախած հարավի ուղղությամբ, ձորն ի վար, անցան Որոտան գետի մյուս ափը եւ գետի եզերքի անտառուտ լանջերը կտրելով, մտան Բարգուշատի թաթարական եւ քրդական գյուղերը: Հետագայում վերադիրելով Աղուդի, Վաղուդի եւ Որոտան ձորի մյուս թուրքական գյուղերի մոտ ծավալված կռիվը՝ Սմբատը գրել է.

«Զանգեզուրի մեջ եղած մեր կռիվները՝ Աղուդի-Վաղուդիի մեջ բացառիկ էին: Հայրուրավոր զինված թուրքեր կանգնց պես փախուստի կը դիմեին եւ միայն Անդրանիկի անունը բավական էր՝ սարսափ ազդելու համար անոնց»:

Խստորեն կատարելով Անդրանիկի հրամանը՝ նրա զինվորները եւ Գորիսի տեղական ուժերը ձեռք չտվեցին բնակիչներին, որոնք հավատացրին, որ իրենք այստեղ կարգելեն զինված ջոկատների վերադարձն իրենց գյուղերը:

Ցորեն ու գաղթականությունը շարունակեցին ճանապարհը:

Աղուդիի եւ Վաղուդիի ասպատակությունները ժամանակի արգելք էին հանդիսացել, որ Շուշվա եւ Գանձակի գնդերին պատկանող երկու դաշտային թնդանոթները Սիսիանից փոխադրեն Գորիս: Հարվածող Զորամասի՝ դեպի Սիսիան շարժվելուց օգտվելով եւ հուսալով, որ ճանապարհը բացված կլինի, այդ թնդանոթները սասունցի գնդի զինվորների հետ խճուղով ուղղվեցին Գորիս:

Անդրանիկը կանգ չառավ շրջանի կենտրոն Ղարաքիլիսայում, այլ շարժվեց դեպի Անգեղակոթ: Ղարաքիլիսայի հարեւանությամբ խճուղուց ձախ ընկած էր Շաքի թուրքաբնակ մեծ գյուղը, որի զինված բնակիչները նույնպես, մի քանի հարյուր մարդ, փակել էին ճանապարհը, Անդրանիկը սուրհանդակ ուղարկեց Շաքիի թուրքերի ղեկավարների մոտ՝ պահանջելով ճամփա տալ: «Մենք ճանապարհ ենք ուզում, այլ ոչ թե կռիվ», – գրել էր նա իր երկտողում: Գյուղապետ Քյամանդ Բաբա օղլի Ալավերդիեւը եւ ուսուցիչ Աբրուլազիմ Թալիբ օղլի Ռուստամովը համատեղ ստորագրած ճամակով պատասխան են ուղարկում Անդրանիկին: Ծրարում դնում են փամփուշտ ու երկտող եւ այն հանձնում սուրհանդակին: «Ճանապարհ չունենք ձեզ տալու, – գրված էր երկտողում, – իսկ եթե փորձեք անցնել, ապա ձեր բոլորի մարմնի մեջ կիայտնվեն այսպիսի գնդակներ»:

Զորամասը ստիպված էր կռվի բռնվել: Կարճատեւ մարտում շաքիցիները տեղի տվեցին եւ նահանջելով բացեցին ճանապարհը:

Դիմադրություն ցույց տվեց նաեւ ճանապարհի վրա գտնվող թուրքական Ղալաջուղ գյուղը, ուստի Զորամասը Գորիս տարվող՝ վերը հիշատակված Շուշվա գնդի երկու թնդանոթներից ստիպված էր հրետակոծել բնակավայրը, որի հետեւանքով բնակիչները թաքվեցին իրենց յայլաները:

Դատարկված թուրքական գյուղերում ժամանակավորապես տեղավորվում էր Անդրանիկի հետ գճացող զաղթականությունը: Հետագա օրերին նույնպես զաղթականները բուն Զանգեզուրից շարունակում էին տեղափոխվել Սիսիան եւ բնակություն հաստատել լքված գյուղերում՝ օգտվելով ոչ միայն թուրքերի տեերից, այլեւ նրանց թողած ուտեստեղենից:

Վերջապես զորքն ու գաղթականները օգոստոսի 30-ին հասան Անգեղակոթ, որը մի կարճ ժամանակով դարձավ Անդրանիկի ճնտավայրը:

■

Շոքի ձորում

Սդզի լիճը (Քարահունջի ջրամբարը)

Լուսանկարները՝ Ն.Հովհաննիսյանի

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՊՈՐԱ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԱՄՍԱԳԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
ՀԷՂԻՆ՝ ք.ԳԱՓԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru

ՀԱՆԳԵԶՈՒՐԻ ԳՈՅԱՄԱՐՏ

Սյունիքի ինքնավարության ազդարարումը

Հատված Արամ Սիմոնյանի «Զանգեզուրի գոյամարտը» գրքից

ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ

Ազատ եւ ինքնուրույն ապրելու՝ զանգեզուրցիների բուռն ձգտումն ու զարմանալի համառությունն իր ցայտուն արտահայտությունը գտավ համազանգեզուրյան պատմական համագումարի հրավիրման եւ Ինքնավար Սյունիքի հռչակման փաստի մեջ:

Մինչ գավառի ռազմաքաղաքական իրավական դրության վերջնական պարզվելը երկիրը պետք է ապրեր ու կառավարվեր սեփական օրենքներով: Իսկ օրենքներ կարող էր ստեղծել ժողովրդի հավաքական կամքը: Ամիսներեշտ էր եւեւ ի մի բերել գավառում թուրք-բոլշեւիկյան զինված ուժերի դեմ անցած ամիսկայացուցիչները:

Արեւիքի գյուղացիական պատգամավորական համագումարը որոշեց շրջանի կողմից Տաթեւի համագումարին ներկայացուցիչներ ուղարկել Դավիթ Դավթյանին եւ Խաչատուր Դանիելյանին: Պատգամավորները Մեղրիից դուրս եկան նույն օրը դեկտեմբերի 22-ին, բայց Լիճք-Տաշտոնի ճանապարհն առատ ձյան պատճառով փակվել էր, եւ նրանք ստիպված էին հետ վերադառնալ ու դեկտեմբերի 23-ին անցնել Հանքերը:

Չկարողանալով հասնել Համագանգեզուրյան համագումարի բացմանը պատգամավորները Հանքերից հեռախոսով Տաթեւ հղեցին Արեւիքի գյուղացիական համագումարի որոշումը ավելացնելով, որ արեւիքցիները լի են անկտրտրում վճռականությամբ. «թույլ չտալ ոչ մի օտար զորքի եւ օտար մարդկանց ներս խուժելը մեր երկրի սահմանները եւ խառնվելը մեր ներքին գործերի մեջ»:

Համազանգեզուրյան առաջին համագումարը բացվեց Տաթեւի պատմական վանքում 1920թ. դեկտեմբերի 25-ին՝ կեսօրվա ժամը 2-ին:

Համագումարին ներկա էին Զանգեզուրի բոլոր շրջանների 69 գյուղերից ըստ բնակչության քվի ընտրված պատգամավորները, գավառի բոլոր շրջանային խորհուրդների 15 ներկայացուցիչները, Զանգեզուր-Գողթանի սպարապետ Գարեգին Նժդեհը, ընդամենը 118 մարդ:

Համագումարը բացում է բուն Զանգեզուրի Գյուղացիական ժամանակավոր խորհրդի նախագահ Տիգրան Մելիք Հուսեինյանը եւ առաջարկում ընտրել համագումարի դիվանը:

Քայլերի մեծամասնությամբ համաժողովի դիվանի կազմում ընտրվում են Գեղեռնի Տեր-Միհայանը նախագահ, Եգոր Հարությունյանը եւ Տիգրան Մելիք-Հուսեինյանը փոխնախագահներ, Սամվել Մաշուրյանը եւ Նիկոլայ Դորոնցը քարտուղարներ:

Նիստը հայտարարելով բացված՝ նախագահ Գ.Տեր-Միհայանը համառոտ բացատրում է համագումարի պատմական նշանակությունը, նշում անելիքները, որից հետո առաջարկում է համագումարի հետեւյալ օրակարգը.

1. *Զեկուցում Հայաստանի քաղաքական անցուդարձերի մասին եւ համագումարի բռնելիք դիրքը.*
2. *Իրենց գործունեության մասին բոլոր շրջանային խորհուրդների զեկուցումները.*
3. *Ինքնավար Սյունիքի հռչակումը եւ նրա կառավարման ձեւի որոշումը.*
4. *Ինքնավար Սյունիքի իշխանության կազմակերպումը (Սպարապետի հրավիրումը, Ինքնավար Սյունիքի պալատական դիվանի. Ինքնավար Սյունիքի վերահսկիչ մարմնի ընտրությունները).*
5. *Իշխանության կենտրոնատեղի որոշումը.*
6. *Արտաքին քաղաքականություն (փոխհարաբերությունների մշակում Հայաստանի եւ Ադրբեջանի խորհրդային հանրապետությունների, Պարսկաստանի կառավարության եւ հարեւան թուրքերի հետ).*
7. *Ինքնապաշտպանության հարց.*
8. *Պարենավորման հարց.*
9. *Պետական ծառայողների ռոճիկների նորմաների որոշման հարց.*
10. *Սամանվոր խոշոր սեփականությունների պետականացում. ա.վանքապատկան եւ եկեղեցական, բ. խաների, բեկերի եւ մելիքների, գ. արդյունաբերական ձեռնարկությունների պետականացման հարց,*
11. *Ընթացիկ հարցեր (որբանոցի, ջուլհականոցի բացման, նախկին կառավարություններից գանձված անձնավորությունների մոտ մնացած զումարների պահանջման հարց, դրամների գործադրության հարցը):*

Ինչպես տեսնում ենք, համագումարն ըստ էության նաեւ Սահմանադիր ժողովի դեր էր կատարում, քանի որ քննության էին առնվելու մի շարք հիմնական պետական սկզբունքներ, մասնավորապես որոշվելու էր նաեւ երկրի պետական կառույցի խնդիրը:

Օրակարգի հաստատումից հետո համագումարն անցավ դրանց քննարկմանը:

Նիստերն անցնում էին գործարար մթնոլորտում: Պատգամավորներն իրենց ելույթներում անդրադառնում էին գավառի բնակչությանը թվի ընտրված պատգամավորներին, գավառն իրեն ենթարկելու այդ երկրի ղեկավարների ջանքերիին, միաժամանակ առաջարկում էին պատրաստ լինել նոր հարձակումները զենքով դիմավորելուն, արգելք հանդիսանալու ադրբեջանցի թուրքերի սկսեցողական նոր ձգտումներին:

Մյուս կողմից՝ պատգամավորներն այն տեսակետն էին արտահայտում, որ Խորհրդային Հայաստանի նորաստեղծ իշխանությունը տվյալ իրադրության մեջ ի վիճակի չէ պաշտպան կանգնելու Զանգեզուրին, առավել եւս՝ անգոր է գավառը ընդգրկելու հանրապետության կազմի մեջ:

Ելնելով դրանից պատգամավորներն առաջարկում էին Զանգեզուրն անջատված հանրապետ Խորհրդային Հայաստանից, գավառը հայտարարել անկախ երկրամաս եւ նրա ինքնավարությունը պահպանել այնքան ժամանակ, քանի դեռ ամուր երաշխիքներ չեն ստեղծված այն Հայաստանի կազմի մեջ մտցնելու համար:

Պատգամավորներն իրենց ելույթներում նկարագրում էին Զանգեզուրի տնտեսական ծանր վիճակը, ցավով նշում, որ վաղուց դադարել են աշխատելուց Ղափանի պղնձահանքերը եւ ձուլարանը, փակվել են Գորիս քաղաքի մանր ձեռնարկությունները:

Ծայրահեղ անկման էր հասել գավառի գյուղատնտեսությունը: Որոշակի օրինակներով պատգամավորները ցույց էին տալիս, որ տեւական կռիվները գյուղացիներին կտրում են առօրյա աշխատանքներից, խանգարում ժամանակին վար ու ցանք անել: Այդ պատճառով խոպան էին մնացել դաշտերը, բարձիթողի այգիները: Կեր չկար կովերի ու լծկանների համար, իսկ Որոտանի եւ Ողջիի ձորերում մաղաղած ոչխարների սակավաթիվ ու նոսրացած հոտերն ամռան ամիսներին չէին բարձրանում սարերը, որովհետեւ այնտեղ անվտանգ չէր հովիվների կյանքը:

Երեք երկար տարիներ մեկուսացած լինելով դրսի աշխարհից գավառի բնակչությունն իր գոյությունը պահպանում էր միայն ու միայն ներքին աղքատ միջոցներով ամեն ինչում տնտեսելով, հաճախ ուղղակի զրկելով իրեն: Շուկաներում չքացել էր կենսամթերքը: Լիովին դադարեցված էր ապրանքների փոխանակությունը գավառի սահմանակից շրջանների հետ: Փակվել էին Գորիսի հռչակավոր հարուստ խանութները, դատարկվել էին պահեստները: Արդյունաբերական ապրանքներ ընդհանրապես չկային: Գյուղացին մոռացել էր նավթի, օճառի, կտորեղենի մասին: Աղը ամենաթանկ եւ հազվագյուտ ապրանքներից էր, քանի որ Նախիջեւանից Զանգեզուր դրա տեղափոխելը կապված էր հսկայական դժվարությունների, հաճախ էլ կյանքը վտանգի ենթարկելու հետ: Շրջանառության մեջ գտնվող անդրկովկասյան բուն թղթադրամները եւ Հայաստանի Հանրապետության չեկերը արժեզուրկ էին, չէին եռաշխավորված որեւէ տարադրամով, ուստի առեւտուրը ոչ այլ ինչ էր, քան պարզ ապրանքափոխանակություն: Այդ ամենի մասին խոսում էին հանգամանքի պատգամավորները եւ առաջարկներ անում, թե ինչպես շտկել դրությունը:

Պատգամավորները երկար ու հանգամանալից քննարկեցին օրակարգի առաջին հարցը, ապա առաջարկվեց բանաձեւի նախագիծ, որը քվեարկության դրվեց եւ ընդունվեց միաձայն:

Բանաձեւի արձանագրությունը սկսվում էր նրանով, որ զանգեզուրցի «մի շարք տակաբնների ու ազգուրացների» հրավերով. «առանց ազգաբնակչության կամքը եւ ցանկությունը հարցնելու» գավառ են մտել խորհրդային զորամասերը, որոնք իրենց ավերիչ ու քայքայիչ գործունությունները աշխատավոր գյուղացիությանը ստիպել են ընդամենը հինգ ամսում մինչեւ վերջին կաթիլը դատարկել դառնության բաժակը: Խորհրդային զորքերի հրամանատարությունը «խլեց ձեր վերջին պատառ հացը, թողեց մեզ մերկ ու զուրկ ամեն ինչից: Խորհրդային կառավարությունը իրեն հատուկ արյան բաղնիքներ սարքեց մեր գիտակից երիտասարդների նկատմամբ եւ տասնյակներով կոտորեց նրանց, չխնայելով մեր գրական վաստակավոր գործիչներ Խորենուն եւ Շիրինյանին եւ տարիներ շարունակ բանտերում տառապած Սաքոներին: Առանց քննության եւ որոշ մեղադրանքների մեր ռանչպար գյուղական երիտասարդներից տասնյակները գլխատվեցին ու փոսերը թափվեցին եւ վերջում իր հայակործան հաղթանակը կամենալով առաջ տանել մեր գավառը մտցրեց 1000-ներով տաճկական ասկարներ»: Չկարողանալով տանել նման բարբարոսությունները, այնուհետեւ ասված էր բանաձեւում, Զանգեզուրի աշխատավոր գյուղացիությունը ստիպված ոտքի կանգնեց եւ զավթիչներին դուրս վռնդեց երկրից:

Չբավականանալով Զանգեզուրում կատարած հանցագործություններով ռուս եւ ադրբեջանցի բոլշեւիկները Քեմալի գլխավորած թուրքական հորդաներին «հրավիրեցին Հայաստան եւ Ալեքսանդրապոլի պատերի տակ ստիպեցին Հայաստանին ընդունելու այսպես կոչված «խորհրդային» իրավակարգը, մի ռեժիմ եւ ծրագիր, որոնց հետ չի կարող այլեւս հաշտվել թե մեր երկիրը եւ թե բովանդակ հայ ժողովուրդը»:

Նկատի առնելով այդ ամենը եւ այն, որ Զանգեզուրը երեք տարուց ի վեր ապրել էր իր ներքին ուրույն կյանքով եւ այսուհետեւ էլ շարունակելու էր ապրել նույն կյանքով, Համագանգեզուրյան համագումարն իր այդ բանաձեւով որոշեց.

«Զանգեզուրը հայտարարել ժամանակավորապես ինքնավար, մտցնելով հանրապետական իրավակարգեր, լինելով անկախ, մինչեւ քաղաքական հնարավորություն կունենա միանալու իր մայր երկրի՝ Հայաստանի հետ:

Ինքնավար Սյունիքի սահմաններ են Զանգեզուրի նախկին սահմանները»:

Այնուհետեւ համագումարը քննարկում է օրակարգի երկրորդ հարցը, լսում է շրջանային բոլոր խորհուրդների հանառու զեկուցումներն ու ելույթները, ի գիտություն է ընդունում կատարած աշխատանքը եւ հանձնարարում՝ համագումարի ավարտից հետո լարել բոլոր ուժերը՝ ընդունված որոշումները կատարելու համար:

Պատգամավորներն անցնում են Ինքնավար Սյունիքի կառավարման ձեւի որոշման խնդրին: Քանի որ հարցը արտակարգ կարեւոր նշանակություն ուներ, ուստի ծավալվեց մտքերի լայն փոխանակություն, որին մասնակցեցին երկու տասնյակից ավելի պատգամավորներ: Ելույթ ունեցողները շեշտում էին, որ Զանգեզուրի ազատաբաղձ ժողովրդի համար ընդունելի կարող է լինել միայն պառլամենտառական-սահմանադրական կարգը:

Մտքերի փոխանակությունից հետո համագումարը միաձայն որոշում է ընդունում, որով հաստատվում են Ինքնավար Սյունիքի կառավարման ձեւի գլխավոր գծերը, սահմանադրվում եւ կառավարման մարմինները, նրանց պարտականությունները ու իրավունքները:

Խորհրդարան: Որոշման համաձայն, համագումարը ճանաչվեց որպես Ինքնավար Սյունիքի բարձր օրենսդրական մարմին պառլամենտ-խորհրդարան, որին վերապահվում էր Սյունիքի բախտի լիակատար տնօրինությունը:

Որոշման մեջ արձանագրված էին Սյունիքի խորհրդարանի իրավասության շրջանակները, որը ցույց էր տալիս իսկական սահմանադրական, ժողովրդավարական, իրավական պետություն կառուցելու Զանգեզուրի ժողովրդի ներկայացուցիչների վճռականությունը:

Սահմանվեց, որ պառլամենտ-խորհրդարանը հրավիրվում է տարեկան երկու անգամ իր դիվանի պրեզիդիումի (նախագահության) կողմից: Բացառիկ պայմաններում պառլամենտը կարող էր նաեւ արտահերթ հրավիրվել, եթե նման պահանջով հանդես գար պատգամավորների առնվազն կեսը, կամ եթե պառլամենտ հրավիրելը պահանջեր նրա պրեզիդիումը:

Սահմանվեց, որ Խորհրդարանի անդամները Ինքնավար Սյունիքի ազգաքաղաքացության կողմից ընտրվում են ընդհանուր սկզբունքներով հետեւյալ համամասնությամբ, մինչեւ 100 ծուխ ունեցող գյուղական համայնքը Խորհրդարան է ուղարկում մեկ, 100-ից մինչեւ 200 ծուխ ունեցող համայնքները ուղարկում են երկու, իսկ 200-ից ավելի ծուխ ունեցողները՝ երեք ներկայացուցիչներ:

Խորհրդարանին վերապահված էր.

ա) զինվորական ընդհանուր հրամանատարի սպարապետի ընտրությունը,

բ) պատերազմ հայտարարելու եւ հաշտության բանակցություններ վարելու իրավունքը, իսկ արտակարգ դեպքերում դա վերապահվում էր նաեւ սպարապետին,

գ) երկրի թե քաղաքացիական եւ թե զինվորական կառավարչական ձեւի հաստատումը եւ օրենսդրությունը:

Կառավարություն: Իր պատգամավորների թվից կամ դրսի գործիչներից Խորհրդարանն ընտրում էր պրեզիդիում-դիվան, այսինքն Ինքնավար Սյունիքի կառավարություն: Պրեզիդիում-դիվանն ընտրվում էր 9

Շարունակությունը՝ էջ 62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԱՄՍԱԳԻՐ-ՊԱՏՄԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ ԵՎԱԿՈՒՄՆԵՐ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է 1913Թ. ՀՈՒՆՎԱՐԻՆ, 2003Ի
ՀԵՌԱԽՄՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 00 47 (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 10 229
28 ՄԱՅԻՍԻ 2010

ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ԳՈՅԱՄԱՐՏ

Զանգեզուրի հերոսամարտը եւ Արսէն Շահմազեան

Ստեմել (Ստեփան Ղազարի Մելիք-Փարսադանյան)

Ծնվել է 1888 թվականի ապրիլի 1-ին Ղափանի Բեխ գյուղում: Նախնական կրթությունը սովորել է գյուղում, ապա հավանաբար Հանքերում: 1909-1913թթ. սովորել է Կիեւի Սուրբ Վլադիմիրի կայսերական համալսարանի բժշկական ֆակուլտետում եւ ստացել ատամնաբույժի մասնագիտություն: Վերադարձել է Մայրակովկաս, սկզբնական շրջանում աշխատել է Ղարաքաղում, ապա տեղափոխվել Գորիս: Եղել է հայտնի ատամնաբույժ, փարվել է դաշնակցական գաղափարներով, եռանդուն հասարակական գործունեություն է ծավալել: Տպագրվել է Գորիսի «Գավառ», Թիֆլիսի «Ժամանակ» եւ այլ թերթերում:

1918-1921 թվականներին մասնակցել է Զանգեզուրի գոյամարտին, ճանաչել է զինվորական եւ քաղաքական առաջնորդներին:

1927թ. Գորիսում ՀՅԴ ընդհատակյա կազմակերպության 33 անդամների հետ միասին ձերբակալվել է եւ աքսորվել Տոբոլսկ:

1930-ին ազատ աքսոր է ուղարկվել Իրբիտ եւ աշխատել որպես ատամնաբույժ: 1936-ին ազատվել, վերադարձել է Մինվոր: Հայրենական պատերազմի ժամանակ գերեվարվել է ընդսմիջքը, ապա ազատվել ու վերադարձել Պյատիգորսկ: Սրտեփանը փարվել է համակենտրոնացման ճամբար եւ պատերազմի ավարտից հետո մնացել Գերմանիայում:

1949-ին անցել է Ֆրանսիա, ապա ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաք: Զբաղվել է գրական եւ թարգմանական գործունեությամբ, եղել է Ֆրեզնոյի Հայկական միության ղեկավարներից մեկը: Մահացել է 1964 թվականի դեկտեմբերի 15-ին Ֆրեզնոյում: Սրտեմելի կենսագրությունը տեղ է գտել Հ.Մինասյանի «111 բանաստեղծած հայ բժիշկներ» կենսագրական բառարանում (Երեւան, 2006թ.):

1919թ. Մարտ 10-ին, Զանգեզուր եկաւ Արսէն Շահմազեանը՝ իբրեւ Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչ:

Անդրանիկը, որը դեռ Զանգեզուրում էր, այդ ժամանակ պատրաստուում էր հեռանալու իր զօրամասով: Նրանից յետոյ տեղական ռազմական ոյժերի ղեկավարութիւնը պիտի անցնէր Հայաստանից ժամանած ներկայացուցչին:

Անդրանիկի մեկնելու առթիւ Գորիսի հայ հասարակութիւնը տուեց ողջերթի սեղան, եւ Անդրանիկը հեռացաւ Զանգեզուրից Մարտի 25-ին:

Գնդապետ Արսէն Շահմազեանը սկսեց կազմակերպել տեղական ոյժերը ըստ իր հայեցողութեան:

Գորիսի Ազգային Խորհուրդը, որ ներկայացնում էր տեղական իշխանութիւնը, չորս գաւառամասերում ունէր նոյնպէս ազգային խորհուրդներ, ընտրուած ժողովրդի կողմից՝ գաղտնի եւ հավասար քուէարկութեամբ: Բոլորն էլ կապ էին պահպանում կենտրոնական ազգային խորհրդի հետ՝ Գորիսում:

Ռազմական ոյժերը կարգի դնելու համար՝ զօրահաւաք կատարուեց:

Սիսիանի զինուորական ոյժերի հրամանատար նշանակուեց գնդապետ Պօղոս Տէր Դաւիթեանը, իսկ նրա օգնական՝ գնդ. Սմբատ Թորոսեանը:

Այս երկու հերոս զինուորականները Ղափանի շրջանի՝ Վերին Խոտանանի եւ Ղագարայ գիւղերի զաւակներն էին եւ իրենց կեանքը տուին իրենց պաշտած հայրենիքի ազատագրման գաղափարին: Առաջինը առաջնապահ դիրքերում ընկաւ հերոսական մահով, իսկ երկրորդը տարիներ յետոյ բոլշեւիկների օրով աքսորուեց Սիբիրի սառնամանիքները եւ այնուհետեւ կնքեց իր մահը:

Բուն Զանգեզուրի ռազմական ոյժերը դրուեցին գնդապետ Բուդրան Մելիք Հիւսէինեանի հրամանի տակ: Սա իրեն օժանդակ ուներ մի քանի փորձուած զինուորականներ, որոնց մէջ մեծ դեր կատարեց Գորսեցի Խաչատուր Մալիճցեանը:

Ղափանի շրջանը տրուեց Յ.Պետրոսեանին, իսկ Մեղրիի (Նրեւիքի) շրջանը՝ Շահսուարեանին եւ Անուշեանին:

Արսէն Շահմազեանը, որ ընդհանուր հրամանատարն էր, իր ուշադրութիւնը դարձրեց ամբողջ գաւառի արտաքին վիճակի վրայ, ուր չափազանց լուրջ ու գաղտնի քաղաքական խնդիրներ էին առաջացել դրացի թաքարների կողմից: Այդ մասին նա պէտք է իրազեկ պահէր երեւանի կառավարութիւնը: Ուստի դրա համար նա երկու վստահելի անձեր նշանակեց, – մէկը ռուսական աքսորյայրից վերադարձած Սաքօն (Եապոնն) էր, իսկ միւսը՝ Գասպար Գասպարեանը: Սրանք մասնաւորապէս պէտք է հետախուզէին գաւառի ներքին կեանքը եւ յայտնաբերեին գաղտնի երթեւեկութիւնները:

Տեղական թաքարները սերտ յարաբերութեան մէջ էին Ղարաքաղի եւ Նախիջեւանի թրքութեան հետ: Ինչ-որ անհասկանալի շարժումներ էին կատարւում նաեւ Սիսիանի շրջանի Բազարչայ գիւղի մալալանների միջոցով:

Այդ առթիւ Ա.Շահմազեանը յանձնարարեց Գասպարին անցնել Բազարչայ եւ մօտիկից իրազեկ դառնալ կացութեան: Բազարչայում նա ծանօթացել էր մի մալալական հետ, որը հայերի բարեկամ էր: Այդ մալալանը ցոյց էր տուել այն ճանապարհը, որով շարունակ երթեւեկուում էին իր կատարուում գիշեր ժամանակ: Գասպարը նաեւ իմացեր էր թէ ինչո՞ւ Բազարչայի մալալականները լաւ էին տրամադրուած դէպի թուրքերը, չնայած որ ապրում էին հայկական շրջանում:

Մեր բարեկամ մալալաքի ասելով՝ սարի վրայով կատարուող կապը շատ վաղուց էր սկսուած Նախիջեւանի եւ Ղարաբաղի թուրք բէկերի կողմից, որոնք ձգտում էին տեղական թրքութիւնը ապստամբեցնել հայ կառավարութեան դէմ, որպէսզի տիրէին Զանգեզուրին եւ ենթարկէին այն Ադրբէջանին: Եւ մալալականները փոքրամասնութիւն կազմելով, վախենում էին թուրքերի ուժից, որովհետեւ մտածում էին, որ եթէ հայերի կողմը բռնէին, մեծ վտանգի պիտի ենթարկուէին թուրքերի կողմից: Բացի դրանից, թուրքերը մեծ խոստումներ էին արել մալալաքներին, որ մեծ արտօնութիւններ պիտի ստանային, եթէ իրենց օգէնին ու իրենք յաջող դուրս գային:

Այդ տեղեկութիւնները ստանալուց յետոյ մերոնք տեղական ուժերի միջոցով սկսեցին հետեւել նոյն սարի գիշերուայ անցուդարձին: Եւ երբ թշնամին ընկել էր դարանի մտած պիսի փառաւոր ջարդ տուին երկրին ամենաօթ ասկեարներին, որ նրանք հագիւ կարողացան փախչիլ՝ թողնելով բազմաթիւ ռազմամթերք ու սպաներ:

Յաղթութեան լուրը հասաւ Գորիս: Արսէն Շահմազեանը յայտնեց այդ մասին քաղաքի հասարակութեան եւ շնորհակալութիւն յայտնեց գնդապետ Սմբատ Թորոսեանին՝ անուանելով նրան Թորոս իշխանի արժանաւոր ժառանգը:

Պատերազմական գործողութիւնները չդադարեցին Սիւնիքում: Եթէ մի շրջանում դադարում էին, սկսում էին մի ուրիշ հեռաւոր ծայրում: Տեղական թուրքերը մեղաւոր չէին, քանի որ կենտրոնն էր նրանց թելադրում: Նրանք նպատակ էին դրել Սիւնիքի ըմբոստութիւնը կոտրել եւ այն դնել Ադրբէջանի տրամադրութեան տակ: Սիւնեցիք այդ լաւ գիտէին եւ տալիս էին ուժեղ հակահարուած:

Վերին Ղափանի շրջանում կատարւում էին մեծ քանակութեամբ սոսկալի մարդասպանութիւններ: Թուրքերը Գոդաթից եւ Ագուլիսից դէպի Ղափան անցնող հայ գաղթականների շրջապատում եւ կոտորում էին կիրճերում եւ ձորերում: Եւ թշնամին յաջողում էր այդ անել Օխչի թրքաբնակ գիւղի շնորհիւ, որը գտնուում էր Ֆիրդաւանի տարածքում՝ առիթ տուեց թուրքերին յարձակելու մի քանի մեկուսացած հայ գիւղերի վրայ եւ գրաւեցին Ուժանիս, Մոդէս եւ Ղագարակ հայ գիւղերը՝ մեր դիրքի մէջտեղը, տեղի էր ունեցել գիշերային կռիւ, որը վերջացել էր հայերի յաջողութեամբ: Թուրքերը թողել էին ռազմամթերք եւ գրաւտեներ:

Շնորհիւ այդ գիշերային յարձակումի, թուրքերի կապն ու երթեւեկութիւնը ընդհատուեց այդ ճանապարհով:

Թէ շրջանային եւ թէ՝ հետախուզական աշխատակիցների աշխատանքները կատարւում էին լաւ ռազմական պայմաններում:

Աւարիի 15-ից սկսած տեղի ունեցաւ մի շարք լուրջ բախումներ հայերի եւ թուրքերի միջեւ Երիցաթուքի, Սիսեանի, Միքէնդի ու Խոզճավարի ուղղութեամբ, եւ ամեն անգամ կռիւներին մասնակցում էին մեծ քանակութեամբ զինուած ոյժեր: Ու ամեն անգամ թուրքերի նախայարձակումը յետ էր մղուում տեղական հայկական ոյժերի կողմից:

Մեր ամբողջ գաւառը օղակուած էր տաճկական ասկեարներով ու գործակալներով: Ուստի զարմանալի չէ, որ Ղափանի Ղագարայ գիւղի վրայ թուրքերի յարձակումը կատարուեց տաճիկ Քեազիմ փաշայի ասկեարներով:

Գարնան մի օր, լուսաբացին Կարեաղիճի կողմից թուրքերը յարձակուեցին Ղագարայ գիւղի վրայ եւ այնքան մօտեցան նրան, որ քիչ էր մնում թէ ներխուժէին:

Մի քանի տեղից սկսեց գործել նրանց բազմահարուած հրետանին: Գիւղի ծայրում վառելով նրանք հրդեհեցին մի տուն եւ վիրաւորեցին մի հայ կնոջ: Գիւղը արթընցնելով սկսեց դիմադրել անկանոն կերպով:

Յարձակման ճակատքեակին պատահմամբ այդ գիւղն էր եկել Սիսիանից գնդ. Սմբատ Թորոսեանը, որ նոյն գիւղիցն էր, բայց նրա ծառայութեան վայրը Սիսիանն էր: Որպէս փորձուած ու մարդուած զինուորական, սառնարիւն կերպով նա գլխաւորեց տեղական ոյժերը եւ այնպէս դասաւորեց նրանց, որ նրանք անցան թուրքերի թիկունքը, երկու կրակի մէջ առան թշնամուն եւ այնպիսի փառաւոր ջարդ տուին երկրին ամենաօթ ասկեարներին, որ նրանք հագիւ կարողացան փախչիլ՝ թողնելով բազմաթիւ ռազմամթերք ու սպաներ:

Յաղթութեան լուրը հասաւ Գորիս: Արսէն Շահմազեանը յայտնեց այդ մասին քաղաքի հասարակութեան եւ շնորհակալութիւն յայտնեց գնդապետ Սմբատ Թորոսեանին՝ անուանելով նրան Թորոս իշխանի արժանաւոր ժառանգը:

Պատերազմական գործողութիւնները չդադարեցին Սիւնիքում: Եթէ մի շրջանում դադարում էին, սկսում էին մի ուրիշ հեռաւոր ծայրում: Տեղական թուրքերը մեղաւոր չէին, քանի որ կենտրոնն էր նրանց թելադրում: Նրանք նպատակ էին դրել Սիւնիքի ըմբոստութիւնը կոտրել եւ այն դնել Ադրբէջանի տրամադրութեան տակ: Սիւնեցիք այդ լաւ գիտէին եւ տալիս էին ուժեղ հակահարուած:

Վերին Ղափանի շրջանում կատարւում էին մեծ քանակութեամբ սոսկալի մարդասպանութիւններ: Թուրքերը Գոդաթից եւ Ագուլիսից դէպի Ղափան անցնող հայ գաղթականների շրջապատում եւ կոտորում էին կիրճերում եւ ձորերում: Եւ թշնամին յաջողում էր այդ անել Օխչի թրքաբնակ գիւղի շնորհիւ, որը գտնուում էր Ֆիրդաւանի տարածքում՝ առիթ տուեց թուրքերին յարձակելու մի քանի մեկուսացած հայ գիւղերի վրայ եւ գրաւեցին Ուժանիս, Մոդէս եւ Ղագարակ հայ գիւղերը՝ հրդեհելով նաեւ Ղարաբաբա գիւղը: Սակայն բնակիչները, գիւղերից հեռանալով ու թաքաբար կռուելով, կասեցրին թրքական առաջխաղացումը եւ մեծ կորուստներ պատճառեցին թշնամուն:

Հայերը ունեցան միայն մի քանի զոհեր Ղարաբաբա գիւղից:

Թշնամին, հարաւ-արեւելեան մասում յաջողութիւն չունենալով, իր ուշադրութիւնը դարձրեց Նախիջեւանի եւ Գոդաթի վրայ:

Նախիջեւանի եւ Գոդաթի մի քանի գիւղերը բուրքերի ճնշման տակ անցան Գոդաթի լեռնային մասը: Ագուլիսը, որ Գոդաթի մշակութային գեղեցիկ կենտրոնն էր, եւ որի բնակիչները միշտ խաղաղ կեանք կը վարէին, փորձեց դիւանագիտական ճանապարհով փոկութեան մի ելք գտնել: Նրանք հաւատացին թուրքերի կեղծ խոստումներին, վայր դրին իրենց զէնքերը ու յանձնուեցին թուրքերին: Այնուհետեւ կատարուեց գազանային խրախճանք: Թուրքերը կոտորեցին բոլոր տղամարդկանց, իսկ հայ կանանց եւ աղջիկներին առեւանգեցին:

Գոդաթի կառավարիչ Աշոտ Մելիք-Մուսեան սոսկալի մանրամասնութիւններով նկարագրում էր Գոդաթի անտանելի վիճակը եւ Ագուլիսի կոտորածը: Հայաստանի կառավարութիւնից նա շուտափոյթ օգնութիւն էր ուզում:

Սակայն, սպասուած օգնութիւնը չեկաւ, որովհետեւ Հայաստանի կառավարութիւնը այդ ժամանակ զբաղուած էր Շարուրի եւ Վեդի-Բազարի կռիւներով:

Հայաստանի կառավարութիւնը թէեւ չկարողացաւ զօրք ուղարկել, բայց ուղարկեց կռիւների մէջ փորձուած երկու ղեկավար անձանց՝ Ղազարին դէպի Գոդաթ, իսկ փոխգնդապետ Գարեգին Նժդեհին Ղափան:

Այդ սոսկալի պայմանների մէջ էր, որ տեղի ունեցաւ Հայաստանի պալալամետի ընտրութիւնները Սիւնիքում 1919թ.:

Ամբողջ գաւառը բաժանուած էր չորս ընտրական շրջանների: Կենտրոնից ուղարկել էին բոլոր կուսակցութիւնների ցուցակները: Առաջին անգամն էր, որ Սիւնիքը կատարում էր գաղտնի, ընդհանուր եւ հաւասար քուէարկութեամբ ընտրութիւններ:

Ընտրութիւնները ամբողջ գաւառում ղեկավարելու համար, նշանակուած էին հետեւեալ անձերը. –

Ղափանի եւ Մեղրու շրջանի հրամանատարն գրողը Ս.Ս.Փ., Զանգեզուրի համար՝ Տիգրան Պարոնեանը, իսկ Սիսիանի համար՝ Գ.Ղազարեանը:

Ամբողջ նախապատրաստական եւ ընտրական աշխատանքը տեւեց երկու ամիս: Ընտրութիւններին մասնակցեց ամբողջ հայ բնակչութիւնը եւ ձայների մեծամասնութեամբ անցաւ թիւ 4-րդ ցուցակը, որ կը պատկանէր Հ.Ց.Դ.-եան:

Սիւնիքը ընտրեց իր լաւագոյն զաւակներին՝ Վահան Խորենուն, Արշակ Շիրինեանին եւ Գորիս գիւղացի Պօղոս Փարսեանին որպէս Հայաստանի պարլամենտի անդամներ: Սիւնեաց երկրի ձայնը գնաց միաձայն Հայաստանի ժողովուրդի ձայնին, տանելով իր հետ նաեւ Զանգեզուրի վճռական որոշումը, որ Սիւնեաց պալալամետի Հայաստանի անբաժան մասն է:

Ղարաբաղը չէր կարող մասնակցել պալալամենտական ընտրութիւններին, քանի որ այնտեղ տիրում էր թաքար Սուլթանովի իշխանութիւնը:

Այնտեղ էին եւ անգլիացիները:

Շուշուց՝ Գորիս եկան մի քանի հոգի, գլխաւորութեամբ անգլիացի մայոր Մաք Մեմդեանի: Նրանք ժողովի հրաւիրեցին Զանգեզուրի եւ Ղարաբաղի շրջանային խորհրդի անդամներին եւ դրին հետեւյալ պահանջները.

Ա) Ճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը՝ երկրում կարգ ստեղծելու, ճանապարհները բանալու եւ ժողովրդին պարէն հասցնելու համար:

բ) Յարմարութիւններ տալ թուրք քոչւորներին բարձրանալու Զանգեզուրի սարերը:

Շրջանային խորհուրդը Մայիսի 3-ին տուեց հետեւեալ գրաւոր պատասխանը.

«Զանգեզուրի առաջին գիւղացիական համագումարի որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետութեան երկրամաս Զանգեզուրի դէմ կատարուած իւրաքանչիւր յարձակողական գործողութիւն կը հանդիպի ամենայամառ եւ կատաղի դիմադրութեան Զանգեզուրի հայ ժողովրդի կողմից:

«Հայաստանի Հանրապետութեան երկրամասում չապրող քոչւորներին ոչ մի դէպքում չի թոյլատրում բարձրանալ Զանգեզուրի սարերը:

«Ինչ վերաբերում է իշխանութիւն հաստատելուն, պէտք է ասենք, որ ոչ միայն այժմ, այլեւ համատարած անիշխանութեան օրերին Զանգեզուրում միշտ թագաւորել է օրինակելի իշխանութիւն, եւ այժմ հարկ չկայ իշխանութիւն հաստատելու այնտեղ, ուր անիշխանութիւն չկայ:

«Ուղիղ երկու տարի է, որ Զանգեզուրը կտրուած է քաղաքաւիրաթ աշխարհից եւ նրա առաջ փակուած են եղել հաղորդակցութեան ճանապարհները: Զանգեզուրը հաշտուել է այդ հանգամանքի հետ, գտնելով որ իր ազատութիւնը վեր է ամէն տեսակի յարմարութիւններից եւ կուլտուրական բարիքներից»:

Այս յանդուգն պատասխանը ստանալուց յետոյ, անգլիական ներկայացուցիչը հեռացաւ Գորիսից:

Սակայն, նրա հեռանալով Զանգեզուրի ժողովուրդը զգաց, որ փոթորիկ է պատրաստւում իր գլխին եւ իր մշտարարու ու հայրենասէր ներկայացուցիչները սկսեցին բախել Հայաստանի կառավարութեան դռները, որպէսզի նա օգնութիւն հասցնէր մեկուսացած Զանգեզուրին:

Հայաստանի կառավարութիւնը, թէեւ ծանրաբեռնուած կենտրոնական Հայաստանի ինքնապաշտպանութեան դժուարին գործով, իր սահմանափակ միջոցներից բաժին հանեց Զանգեզուրին, ուղարկելով չորս թնդանօթ ու ռազմամթերք փորձուած սպաների հետ, ղեկավարութեամբ Սիմոն Տէր Սահակեանի:

Սիմոն Տէր Սահակեանը աւարտել էր Շուշուայ թեմական դպրոցը եւ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զինակոչուելեան էր ենթարկուած ու դարձած նշանաւոր թնդանօթաձիգ, ինչ որ նա ցոյց տուեց 1919թ. աշնան Զանգեզուրի հերոսամարտի ժամանակ:

Արսէն Շահմազեանը, իր տրամադրութեան տակ ունենալով չորս թնդանօթ, փորձուած սպաներ եւ զօրակոչի ենթարկուած երիտասարդներին, այլեւս աւելի մեծ վստահութեամբ իր պատասխանատուութեան տակ վերցրեց ամբողջ Սիւնիքի ինքնապաշտպանութեան գործը ու դուրս եկաւ յաղթակա:

Ադրբէջանը չէր դադրեցնում իր ոտնձգութիւնները: Նրա թիկունքը չափազանց ուժեղ էր, քանի որ անգլիական հրամանատարութիւնը յանձին զօր. Տամսընի նստած էր Բագուայ հարուստ նաւթաշխարհի գուրը կտրուած է քաղաքաւիրաթ աշխարհից եւ նրա առաջ փակուած են եղել հաղորդակցութեան ճանապարհները: Զանգեզուրը հաշտուել է այդ հանգամանքի հետ, գտնելով որ իր ազատութիւնը վեր է ամէն տեսակի յարմարութիւններից եւ կուլտուրական բարիքներից»:

Այս յանդուգն պատասխանը ստանալուց յետոյ, անգլիական ներկայացուցիչը հեռացաւ Գորիսից:

Սակայն, նրա հեռանալով Զանգեզուրի ժողովուրդը զգաց, որ փոթորիկ է պատրաստւում իր գլխին եւ իր մշտարարու ու հայրենասէր ներկայացուցիչները սկսեցին բախել Հայաստանի կառավարութեան դռները, որպէսզի նա օգնութիւն հասցնէր մեկուսացած Զանգեզուրին:

Հայաստանի կառավարութիւնը, թէեւ ծանրաբեռնուած կենտրոնական Հայաստանի ինքնապաշտպանութեան դժուարին գործով, իր սահմանափակ միջոցներից բաժին հանեց Զանգեզուրին, ուղարկելով չորս թնդանօթ ու ռազմամթերք փորձուած սպաների հետ, ղեկավարութեամբ Սիմոն Տէր Սահակեանի:

Սիմոն Տէր Սահակեանը աւարտել էր Շուշուայ թեմական դպրոցը եւ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զինակոչուելեան էր ենթարկուած ու դարձած նշանաւոր թնդանօթաձիգ, ինչ որ նա ցոյց տուեց 1919թ. աշնան Զանգեզուրի հերոսամարտի ժամանակ:

Արսէն Շահմազեանը, իր տրամադրութեան տակ ունենալով չորս թնդանօթ, փորձուած սպաներ եւ զօրակոչի ենթարկուած երիտասարդներին, այլեւս աւելի մեծ վստահութեամբ իր պատասխանատուութեան տակ վերցրեց ամբողջ Սիւնիքի ինքնապաշտպանութեան գործը ու դուրս եկաւ յաղթակա:

Ադրբէջանը չէր դադրեցնում իր ոտնձգութիւնները: Նրա թիկունքը չափազանց ուժեղ էր, քանի որ անգլիական հրամանատարութիւնը յանձին զօր. Տամսընի նստած էր Բագուայ հարուստ նաւթաշխարհի հսկայական հարստութեան կողքին: Եւ այս վերջինը սիրայօժար կերպով ընդ առաջ էր գնում Ադրբէջանցիներին եւ Բագուից աշխատում էր պարտադրել իր կամքը Ղարաբաղին եւ Զանգեզուրին:

Ու ահա նա կատարեց մի փորձ եւս: Զանգեզուր ուղարկեց իր տեղական զօր. Շատելվորդին: Սա եկաւ Գորիս իր շքախմբով եւ նոյն պահանջը դրեց, ինչ որ Մաք Մեգենը, այսինքն՝ Զանգեզուրը ենթարկել Ադրբէջանին:

Երբ ստացաւ բացասական պատասխան, ասաց.

«Ես ուզղակի զարմանում եմ ձեզ վրայ: Միթէ՞ չգիտէք, որ թուրք զանգաւոր տգէտ է: Եւ այդ տգէտները չէ որ պիտի կառավարեն երկիրը, այլ նրանց պարլամենտը: Իսկ այդ պարլամենտի մէջ դուք պիտի նստէք որպէս բանիմաց մարդիկ. ամբողջ դեկը ձեր ձեռքին կը լինի: Դուք էք, որ ընտրուելով կը բազմէք Ադրբէջանի պարլամենտի օթեակներում»:

Խաբուսիկ մի սիրաշահութիւն էր այդ՝ հայ մտաւորականութեան հասցէին: Բայց նա սխալուեց իր մտածումների եւ հաշիւների մէջ: Հայ մտաւորականութիւնը հայ ժողովրդի հարազատ զաւակն է: Եւ Զանգեզուրի հայ ժողովրդի կամքը մի գիշերուայ մէջ դարբնուեց ու իր ցաւումը արտայայտեց լուսաբացին ուժեղ ցոյցով:

Հետեւեալ առաւօտ, երբ զօր. Շատելվորդը արթնացաւ, իմքն իրեն գտաւ կազմակերպուած ցոյցի եւ ռազմական երգերի բարձրագոչ աղմուկի առջեւ:

Շրջակայ գիւղերի զինուորները, իրենց վաշտապետերով եւ զէնքերով, լոյսը դեռ չբացվուած, ռազմական քայլերգով մի չտեսնուած ուժեղ ցոյց էին կազմակերպեցին Գորիսի հրապարակում՝ շրջելով մի քանի անգամ զօր. Շատելվորդի բնակարանի շուրջը: Զօրավարը, քնից նոր արթնացած ու դեր չիագնուած, լուսամուտից դիտում էր այդ բոլորը, տեսնելով Սիւնեաց երկրի բոլորքն ու ուժգին ժողովրդական ցաւումը: Եւ, զգալով, որ չպիտի կարողանայ կոտրել ժողովրդի այսքան ուժեղ ըմբոստ կամքը, դիմեց իր ցեղի յատուկ դիւանագիտութեան, ասելով.

«Ես կը տաեմեմ ձեր ժողովրդի վճռական կամքը կենտրոն բանակցութիւնների համար: Սակայն, տուէք երկու բանիմաց ներկայացուցիչներ, որոնք բանաւոր կերպով պիտի հաստատեն իմ ասածները այնտեղ Բագուում հրամանատարութեան առջեւ»:

Այս ասելով՝ հանեց իր ծոցում պահած երկու ազդեցիկ անձանց՝ Արշակ Շիրինեանի եւ Նիկոլայ Յովսէփեանի անունները, հրաւիրեց նրանց, որ նստեն իր մեքենայի մէջ: Երբ սրանք տեղ բռնեցին իրենց-նշարժի մէջ, վրայ հասաւ Գորիսի վրդովուած ծերունիները, Ղազար Պարոնեանի գլխաւորութեամբ, եւ դուրս քաշեցին մեքենայում նստած հայ պատուիրակներին՝ ասելով. –

«Մենք մարդ չուզինք՝ Բագու ուղարկելու համար, եւ ոչ մի խորհրդակցութեան պէտք չուզինք: Մեր խօսքը վճռական է: Կը մեռնենք ամբողջ ժողովրդով, բայց չենք ենթարկուի ձեր բարեկամ ոչքիխտոնեայ ժողովրդի կամքին: Մենք ձեզ վրա նայել ենք, որպէս քրիստոնեայ ժողովրդի պաշտպան, բայց դուրս կեաս հակառակը ... կարող էք գնալ, որտեղից որ եկել էք»:

Զօրավար Շատելվորդը, տեսնելով եւ լսելով այդ ամէնը, առանց տատանուելու նստեց մեքենան ու իր շքախմբով հեռացաւ Գորիսից:

Բագվում նստած անգլիական հրամանատարութիւնը զգալով կացութեան լրջութիւնը, բարձր պահելու համար իր հեղինակութիւնը, տրամադրութիւն յայտնեց զէնքի ոյժով գրաւելու Զանգեզուրը:

Այնուհետեւ Ադրբէջանը գործի անցաւ, այն է՝ կազմակերպեց ուժեղ զօրք, որպէսզի զէնքի ոյժով գրաւէր ըմբոստ Զանգեզուրը:

Սակայն մի վերջին փորձ էլ կատարեցին խաղաղօրէն գրաւելու համար Զանգեզուրը: Խոսրով բէկ Սուլթանովի ստորագրութեամբ մի կոչ ուղղեցին Զանգեզուրի հայերին, որ նրանք չլսեն խռովարարներին եւ եթարկուեն Ադրբեջանի կառավարութեան: Խոստանում էին ներումն պարգեւել բոլոր զէնք վայր դնողներին: Ի հարկէ, այդ կոչն էլ մնաց անպատասխան ու անհետեւանք:

1919թ. Նոյեմբերի 1-ին սկսուեց թշնամու ընդհանուր յարձակումը Զանգեզուրի վրայ: Այդ յարձակումը հանձնայնեցրուած էր Նախիջեւանի եւ Կարեաղիճի յարձակումներին: Թշնամին ձգտում էր չորս կողմից օղակել Զանգեզուրը, շփոթութեան մէջ գցել այն, որպէսզի կարողանար իր զինուորական գլխաւոր ոյժերը կենտրոնացնել Շուշին եւ Գորիսը միացնող գծի վրայ, որտեղով հնարաւոր էր շարժել թէ թնդանօթներ եւ թէ ռազմամթերք մեծ քանակութեամբ: Սիւս շրջանցներում գործողութիւնները մեզ զբաղեցնելու փորձեր էին միայն:

Առաջին օրերում նրանք գրաւեցին հնեածախի, Խոզճավարի եւ Կոռիճ ձորի բարձունքները: Յաջողի ձորերից՝ անմկատելի գառիվարերով գաղտնագողի բարձրացան Գորիսի կաթսայանման հովտին ճայող ամենաբարձր «Բաչալ-Դաղը»:

Բաչալ-Դաղը բէք զառիվայրով նայում է Գորիսին: Երեկոյեան, արեւը մայր մտնելուց յետոյ թուրքերը նոյն սարի երկար լանջին չորացած խոտերից մի խարոյկ վառեցին կիսալուսնի ձեւով: Այդ արդէն ազդանշան էր հեռաւոր շրջանների համար, որ պատերազմի ահազանգն էր տրուած: Այդ կերպով նաեւ նրանք ուզում էին սարսափ տարածել Գորիսի հովտում ընկած քաղաքի ու ազգաբնակութեան վրայ: Եւ վստահ իրենց յաջողութեան վրայ՝ հաղորդեցին Բագուի հրենց ղեկավարներին, որ Զանգեզուրի գրաւումը մի քանի ժամուայ գործ է այլեւս:

Ինչպէս ասացի, թուրքերը իրենց գլխաւոր ոյժերը կենտրոնացրել էին Շուշին Գորիսի հետ միացնող խճուղիի վրայ՝ ղեկավարութեամբ զօր. Շիխլինսկու: Քանի որ այդ նոյն խճուղիի բլուրների վրայ թառած Ղարադաղլաց հայկական գիւղը ամայոց էին նենգութեամբ ոչնչացրած, նրանք, իրենց թիկունքը ապահով զգալով, իրենց կեդրոն դարձրին Ալդաճլար թրքական գիւղը, որ Սուվետների օրով դարձաւ Լաչին քաղաքը:

Այդ տեղից թուրքերը պիտի իջնէին Յաբուլի խոր ձորերը ու յետոյ ոլորապտոյտ խճուղիով պիտի բարձրանային բլրի վրայ գտնուող հարթ տարածութիւնը եւ ոմբակոծէին Զանգեզուրի նախադուռը՝ հայկական ՏէՂ գիւղը, ապա քսան վերստի վրայ գտնուող Գորիսը:

Այդ բնական ամրութիւնները եւ դժուարութիւնները յաղթահարելու համար՝ նրանք ստիպուած էին բաժանել Զանգեզուրը իր շրջանցներից՝ Սիսիանից եւ Ղափանից: Այդ նպատակով էին նրանք բարձրացել Քաչալ-Դաղը եւ դէպի Ուշ Թափան նայող բարձրութիւնները: Այս կերպով երեք մասի բաժանելով Զանգեզուրը՝ նրանք հաստատած էին, որ դիւրութեամբ պիտի գրաւէին այն: Սակայն, այդտեղ եւս սխալուեցին, որովհետեւ Ղափանում էր գտնուում Գարեգին Նժդեհը, որին թուրքերը տուել էին Ամդաճա Փաշա մակաւոնը: Իսկ Սիսիանը պաշտպանում էին ամվեներ գնդապետ Պօղոս Տէր Դաւթեանը եւ Սմբատ Թորոսեանը:

Այն երեկոյեան, երբ Գորիսի հայութիւնը տեսաւ իր սարի լանջին կիսալուսնի խարոյկը, զգաց, որ հաստատեցին թուրքերը եւ հեռաւոր շրջանների՝ որ պատերազմի ահազանգն էր տրուած: Այդ կերպով նաեւ նրանք ուզում էին սարսափ տարածել Գորիսի հովտում ընկած քաղաքի ու ազգաբնակութեան վրայ: Եւ վստահ իրենց յաջողութեան վրայ՝ հաղորդեցին Բագուի հրենց ղեկավարներին, որ Զանգեզուրի գրաւումը մի քանի ժամուայ գործ է այլեւս:

Ինչպէս ասացի, թուրքերը իրենց գլխաւոր ոյժերը կենտրոնացրել էին Շուշին Գորիսի հետ միացնող խճուղիի վրայ՝ ղեկավարութեամբ զօր. Շիխլինսկու: Քանի որ այդ նոյն խճուղիի բլուրների վրայ թառած Ղարադաղլաց հայկական գիւղը ամայոց էին նենգութեամբ ոչնչացրած, նրանք, իրենց թիկունքը ապահով զգալով, իրենց կեդրոն դարձրին Ալդաճլար թրքական գիւղը, որ Սովետների օրով դարձաւ Լաչին քաղաքը:

Այդ տեղից թուրքերը պիտի իջնէին Յաբուլի խոր ձորերը ու յետոյ ոլորապտոյտ խճուղիով պիտի բարձրանային բլրի վրայ գտնուող հարթ տարածութիւնը եւ ոմբակոծէին Զանգեզուրի նախադուռը՝ հայկական ՏէՂ գիւղը, ապա քսան վերստի վրայ գտնուող Գորիսը:

«Մենք մարդ չուզինք՝ Բագու ուղարկելու համար, եւ ոչ մի խորհրդակցութեան պէտք չուզինք: Մեր խօսքը վճռական է: Կը մեռնենք ամբողջ ժողովրդով, բայց չենք ենթարկուի ձեր բարեկամ ոչքիխտոնեայ ժողովրդի կամքին: Մենք ձեզ վրա նայել ենք, որպէս քրիստոնեայ ժողովրդի պաշտպան, բայց դուրս կեաս հակառակը ... կարող էք գնալ, որտեղից որ եկել էք»:

Զօրավար Շատելվորդը, տեսնելով եւ լսելով այդ ամէնը, առանց տատանուելու նստեց մեքենան ու իր շքախմբով հեռացաւ Գորիսից:

Բագվում նստած անգլիական հրամանատարութիւնը զգալով կացութեան լրջութիւնը, բարձր պահելու համար իր հեղինակութիւնը, տրամադրութիւն յայտնեց զէնքի ոյժով գրաւելու Զանգեզուրը:

Սակայն մի վերջին փորձ էլ կատարեցին խաղաղօրէն գրաւելու համար Զանգեզուրը: Խոսրով բէկ Սուլթանովի ստորագրութեամբ մի կոչ ուղղեցին Զանգեզուրի հ